To achieve the research goal, the following methods were used: analysis, synthesis, the principle of history and comparison.

**Keywords:** *Republic of Armenia, Republic of Artsakh, Constitution, parliamentary system of government, presidential system of government, National Assembly, President.*

## ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱՁԵՆՆԵԼՈՒ ԱՌԻԹՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՔԵՐԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ\*

### ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ,  
 ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[t.s.ghazaryan@gmail.com](mailto:t.s.ghazaryan@gmail.com)

Սույն հոդվածի նպատակը քրեական վարույթ նախաձեռնելու առիթների ու հիմքերի համակարգային վերլուծությունն է, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել առկա խնդիրների լուծումները մի կողմից՝ տուժողի, իսկ մյուս կողմից՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի սահմանադրական իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության և արդյունավետ հավասարակշռության ապահովման նպատակով:

Նշված նպատակին հասնելու համար նախևառաջ կարևոր է քրեական վարույթ նախաձեռնելու առիթի հասկացության ու հիմքերի բավարարության ճշգրիտ սահմանումը, որոնց միասնական ընկալումը կապահովի քրեական հետապնդման մարմինների բնականոն գործունեությունը՝ նպաստելով հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Հոդվածի նպատակի ու խնդիրների առանձնահատկություններով պայմանավորված՝ կիրառվել են համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդները:

Կարող ենք ելրակացնել, որ քրեական գործ հարուցելու առիթը ենթադրյալ հանցագործության վերաբերյալ տեղեկություններ պարունակող այնպիսի իրավաբանական փաստ է, որն իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար ստեղծում է պարտականություն՝ կայացնելու որոշում քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին:

Քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերը, ի տարբերություն քրեական իրավունքի, երբ հանցագործության հատկանիշներ ասելով հասկանում ենք ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի տարրերը, քրեադատավարական իրավունքի համատեքստում հանցանշանները պարտադիր չէ ուղղակիորեն նախատեսված լինեն քրեական օրենքով, այլ բավարար է, որ դրանք վկայեն առերևույթ կատարած հանցագործության մասին:

Հիմնաբառեր՝ քրեական վարույթ նախաձեռնել, քրեական գործ հարուցելու հիմքեր, քրեական գործ հարուցելու առիթներ, հանցագործության մասին հաղորդում, կյուբերի նախապատրաստման փուլ, հիմքերի բավարարություն, առիթի օրինականություն:

Քրեական գործի հարուցման փուլը ոչ միայն ինքնուրույն դատավարական փուլ է, այլ նաև սկզբնավորում է ամբողջ քրեական վարույթը: Ուստի առանցքային նշանակություն է ստանում այն հարցը, թե որ պահից է սկսվում քրեական գործի հարուցման փուլը:

\* Հոդվածը ներկայացվել է 24.02.2020թ., գրախոսվել՝ 25.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

Քրեական գործով վարույթի սկիզբը ճիշտ արձանագրելն էական նշանակություն ունի, քանի որ այդ պահից սկսված վարույթի մասնակիցների բոլոր գործողությունները կարգավորվում են քրեական դատավարության օրենսգրքով, որից ցանկացած շեղում կարող է հանգեցնել ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն ուղղակիորեն ամրագրում է, որ գործով վարույթը սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս:

Ի տարբերություն գործող իրավակարգավորումների՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն օգտագործում է առավել ընդունելի և պարզ սահմանում՝ զերծ մնալով տարընթերցումներից և հստակ արձանագրելով այն սահմանը, որից սկսվում է քրեական վարույթը՝ մասնավորապես սահմանելով, որ քրեական վարույթն սկսվում է առերևույթ հանցագործության մասին պատշաճ ձևով տեղեկանալու պահից:

Ինչպես նշում է Ն.Ա.Վլասովան, քրեական գործի հարուցման փուլը սկսվում է հանցագործության մասին տեղեկությունը իրավասու մարմնի կողմից ստացվելու և արձանագրվելու պահից<sup>63</sup>: Համանման կարծիքի է նաև Մ.Ն.Մելիկինը<sup>64</sup>:

Մինչդեռ Լ.Ն.Մալիկովայի կարծիքով՝ քրեադատավարական հարաբերությունները սկսվում են այն ժամանակ, երբ նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին հաղորդումը գրանցվում է օրենքով սահմանված կարգով և համարվում բավարար հիմք<sup>65</sup>: Այս կարծիքին համաձայնելը անհնար է, քանի որ հանցագործության մասին առիթի գրանցումն արդեն իսկ ենթադրում է դատավարական մի շարք գործողությունների իրականացման անհրաժեշտություն, որի կապակցությամբ քրեական դատավարության մասնակիցները մտնում քրեադատավարական իրավահարաբերությունների մեջ:

Կարևոր ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի քրեական գործ հարուցելու առիթի գրանցմանն ուղղված գործողությունները ևս իրենց բնույթով դատավարական են:

Մի շարք հեղինակներ խնդրո առարկա հարցի վերաբերյալ հիմնավոր կերպով նշում են, որ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ հանցագործության մասին հաղորդման գրանցումը չի հանդիսանում քրեական գործի հարուցման առիթի ձևավորման տարր: Ավաճծը հիմնավորվում է նաև նրանով, որ իրավակիրառ պրակտիկայում թույլատրվում է կատարել անհետաձգելի քննչական գործողություններ նաև մինչ հանցագործության մասին հաղորդման գրանցումը, եթե դրանց չկատարումը կարող է դժվարացնել հանցագործության բացահայտումը<sup>66</sup>:

Քրեական գործ հարուցելու առիթներն այն աղբյուրներն են, որոնցից առերևույթ հանցագործության մասին տեղեկանալը օրենսդիրը դիտարկում է պատշաճ: Այս հասկացությունն իրավագիտության մեջ բավարար չափով մշակված չէ, չնայած ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

Քրեական գործի հարուցման առիթներին վերաբերող իրավակարգավորումները գտնվում են ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրենսդրի ու տեսաբանների

<sup>63</sup> Տե՛ս Власова Н.А. Досудебное производство в уголовном процессе. – М., 2000, էջ 68:

<sup>64</sup> Տե՛ս Меликин М.Н., О специфике доказывания в ходе предварительной проверки информации о преступлениях // Государство и право. 1998. N 10, էջ 76:

<sup>65</sup> Տե՛ս Маликова Л.Н. Совершенствование уголовно-процессуального законодательства на стадии возбуждения уголовного дела // Общество и право. 2008. N 3, էջ 24:

<sup>66</sup> Տե՛ս Химичева Г.П., Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности. – М., 2003, էջ 127:

ուշադրության ներքո՝ փորձելով դրանց տալ այնպիսի ձևակերպումներ, որոնք կնպաստեն քրեական գործի քննության արդյունավետության բարձրացմանը:

Դեռևս 1950-ական թվականներին Ռ.Դ.Ռախունովը գրել է, որ քրեական գործ հարուցելու առիթն այն աղբյուրն է, որից ստացվում է հանցագործության մասին տեղեկատվությունը<sup>67</sup>: Իր հերթին Ս.Վ.Բորոդինը քրեական գործ հարուցելու առիթ է համարում այն աղբյուրը, որից համապատասխան պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք տեղեկանում են նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին<sup>68</sup>:

Քրեական գործի հարուցման առիթի սահմանումը, որն ընդունված է եղել խորհրդային քրեական դատավարությունում, փոքր-ինչ այլ է: Մասնավորապես Ա.Ս.Լարինը և Վ.Ս.Սավիցկին նշում են, որ քրեական գործի առիթները հանցագործության մասին սկզբնական տեղեկություններ պարունակող աղբյուրների դատավարական ձևերն են<sup>69</sup>: Որոշ հեղինակներ քրեական գործ հարուցելու առիթը դիտարկում են այնպիսի իրավաբանական փաստ, որից ծագում են քրեադատավարական իրավահարաբերությունները՝ պայմանավորելով իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց համապատասխան գործունեությունը: Մասնավորապես այդպիսի դիրքորոշում են արտահայտել Ֆ.Ն.Ֆատկովինը<sup>70</sup> և Վ.Յ.Չեկանովը<sup>71</sup>: Այս տեսակետը կիսում է նաև պրոֆեսոր Գ.Պ.Խիմիչևը, որ քրեական գործ հարուցելու առիթը համարում է այնպիսի քրեադատավարական փաստ, որի հետ օրենքը կապում է հետաքննության մարմնի, քննիչի ու դատախազի որոշակի պարտականությունների շրջանակ, այն է՝ կայացնել քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու մասին որոշում<sup>72</sup>:

Համանման դիրքորոշում են արտահայտել նաև Վ.Ն.Յաշինը և Ա.Վ.Պոբեդկինը, որոնք գտնում են, որ հանցագործության մասին հաղորդումը, մեղայականով ներկայանալը, որոնք ստացել են համապատասխան քրեադատավարական ձև, պետք է դիտել որպես իրավաբանական հետևանքներ առաջացնող փաստեր: Նրանց կարծիքով՝ քրեական գործ հարուցելու առիթի ի հայտ գալուն պես համապատասխան իրավասու մարմինների ու պաշտոնատար անձինք պարտավոր են գրանցել նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին ստացված տեղեկատվությունը, ուսումնասիրել այն, անհրաժեշտության դեպքում կատարել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված որոշակի դատավարական գործողություններ, որից հետո օրենքով սահմանված ժամկետներում ընդունել համապատասխան դատավարական որոշում և իրազեկել հաղորդումը ներկայացրած և այլ շահագրգիռ անձանց<sup>73</sup>:

Քրեական գործ հարուցելու առիթի հասկացության վերաբերյալ Մ.Ս.Ստրոգովիչը գրել է, որ դրանք օրենքով սահմանված այն աղբյուրներն են, որոնք հետաքննության մարմնին, քննիչին ու դատախազին տալիս են հանցագործությունների մասին տեղեկություններ և պարտավորեցնում նրանց որոշում կայացնել, թե արդյոք պետք է

<sup>67</sup> Տե՛ս **Рахунов Р.Д.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. М., 1954, էջ 31:

<sup>68</sup> Տե՛ս **Бородин С.В.**, Разрешение вопроса о возбуждении уголовного дела. – М., 1970, էջ 27:

<sup>69</sup> Տե՛ս **Савицкий В.М., Ларин А.М.** Уголовный процесс: Словарь-справочник. – М., 1999, էջ 28:

<sup>70</sup> Տե՛ս **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Возбуждение уголовного дела. – М., 1961, էջ 93:

<sup>71</sup> Տե՛ս **Чеканов В.Я.** Возбуждение уголовного дела в советском уголовном процессе. – Саратов, 1958, էջ 12:

<sup>72</sup> Տե՛ս **Химичева Г.П.** Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности: дис. д-ра юрид.наук.-М., 2003, էջ 116:

<sup>73</sup> Տե՛ս **Яшин В.Н., Победкин А.В.** Возбуждение уголовного дела. Теория, практика, перспективы. էջ 30-31:

հարուցել քրեական գործ, թե ոչ<sup>74</sup>: Քրեական գործ հարուցելու առիթի սահմանման վերաբերյալ համանման կարծիք է հայտնել նաև Օ.Պ.Տեմուշկինը՝ առաջարկելով կիրառել «իրավաբանական փաստ» եզրույթը<sup>75</sup>:

Հետաքրքիր մոտեցում է դրսևորել պրոֆեսոր Վ.Ս.Բիկովը՝ սահմանելով առիթի ձևավորման բանաձևում ներառված գործողությունները. ենթադրյալ հանցագործությունը, դրա մասին տեղեկատվությունը, այն տիրապետող անձի գործողությունները, դրանց դատավարական ձևակերպումը: Միայն այս բոլոր բաղադրատարրերի առկայության դեպքում է հանցագործության մասին տեղեկությունը դառնում քրեական գործ հարուցելու օրինական առիթ<sup>76</sup>:

Քրեադատավարական օրենքը ևս չի բացահայտում քրեական գործ հարուցելու առիթի հասկացությունը, այլ սահմանափակվում է միայն դրա առանձին տեսակների թվարկմամբ: Այդ մոտեցումը ցուցաբերվել է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հեղինակների կողմից:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու մասին որոշում ընդունելու համար<sup>77</sup>:

Վերոգրյալի համատեքստում կարող ենք եզրահանգել, որ քրեական գործ հարուցելու առիթը ենթադրյալ հանցագործության վերաբերյալ տեղեկություններ պարունակող այնպիսի իրավաբանական փաստ է, որը իրավասու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց համար ստեղծում է պարտականություն՝ համապատասխան դատավարական գործողությունների կատարման արդյունքում կայացնելու որոշում՝ քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին:

Այս տեսանկյունից առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը հնարավորություն է ընձեռում կատարելու գործողություններ և մտնելու քրեադատավարական հարաբերությունների մեջ: Այլ կերպ ասած՝ առիթը հանդես է գալիս որպես նախադրյալ, իսկ քրեադատավարական հարաբերությունները՝ դրա արդյունք:

Ակնհայտ է, որ քրեական դատավարության օրենսգրքը մի շարք իրավահարաբերությունների առաջացում պայմանավորում է հենց առիթի առկայության փաստով: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ սույն օրենսգրքի 181-րդ հոդվածն ամրագրում է այն դատավարական որոշումների շրջանակը, որոնք պետք է կայացվեն հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ քրեական գործի հարուցման առիթի հասկացության պատշաճ ձևակերպումն ինքնանպատակ չէ: Հետաքննության մարմինը,

<sup>74</sup> Տե՛ս **Строгович М.С.** Курс уголовного процесса. Т.II. Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. М., 1970, էջ 13:

<sup>75</sup> Տե՛ս **Уголовно-процессуальное право Российской Федерации /Отв. ред. П.А. Лупинская.** 3-е изд., перераб. и доп. – М., 2000, էջ 270:

<sup>76</sup> Տե՛ս **Уголовный процесс Российской Федерации / Отв.ред.А.П.Кругликов.** – М., 2010, էջ 337 (13-րդ գլխի հեղինակ՝ **В.М.Быков**):

<sup>77</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը:



քննիչը, դատախազը իրավասու չեն իրականացնելու քրեական դատավարությամբ սահմանված իրենց լիազորությունները՝ առանց ենթադրյալ հանցագործության մասին օրենքով սահմանված առիթից պատշաճ կարգով տեղեկանալու:

Մատնանշվածի կապակցությամբ կարևոր երաշխիք է սահմանել օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ամրագրելով, որ չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ, մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ: Դրա հիման վրա կարող են կատարվել համապատասխան դատավարական գործողություններ, որոնց արդյունքում եթե հաստատվի, որ առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա քրեական գործի հարուցման առիթ կդիտվի արդեն ոչ թե անանուն հաղորդումը, այլ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի՝ իրենց լիազորությունների շրջանակում կատարված գործողությունները:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ «քրեական գործի հարուցման համար առիթ» հասկացության իմաստն ուղղված է ոչ թե նրան, որ հանցագործության մասին այս կամ այն տեղեկատվությունը անորակ և անախտան համարվի դատավարական կիրառման համար, այլ նրան, որպեսզի պարտադիր կարգով անձնավորվի հնարավոր հանցագործության մասին տեղեկատվության ցանկացած աղբյուր: Այլ կերպ ասած՝ քրեադատավարական համակարգը պահանջում է, որ միշտ հայտնի լինեն հանցագործության կատարման մասին հաղորդում տվող անձի տվյալները՝ մասնավոր նախաձեռնությամբ կամ ելնելով պաշտոնական պարտավորություններից: Հակառակ դեպքում ի հայտ կգա լիարժեք անպատասխանատվության ռիսկ, և անհնար կլինի պարզել՝ երբ և որտեղից են ստացվել հանցագործության մասին տեղեկությունները, ինչի հիման վրա է քննարկվել քրեական գործ հարուցելու հարցը, ինչպես նաև սկսվել որևէ մեկի նկատմամբ քրեական հետապնդումը:

Վերոգրյալի հիմքով կարևոր է ընդգծել, որ քրեական գործ հարուցելու առիթն ըստ էության որևէ անձի կամքի արտահայտությունն է: Մի դեպքում այն արտացոլում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի, մյուս դեպքում՝ ենթադրյալ հանցագործության վերաբերյալ տեղեկատվության տիրապետող անձի, մեկ այլ դեպքում՝ տուժողի կամ հանրորեն վտանգավոր արարքում իրեն մեղավոր համարող անձի կամքը: Ընդ որում, այն առիթի կարևոր հատկանիշներից է, որով տարբերվում է այն հաղորդումներից (դիմումներից, բողոքներից), որոնց ժամանակ չի պահանջվում լուծել քրեական գործի հարուցման հարցը:

Քրեական գործ հարուցելու առիթներն ու հիմքերը թեև փոխկապակցված են, սակայն ինքնավար հասկացություններ են: Քրեական գործի հարուցման առիթի առկայությունն ինքնին չի վկայում քրեական գործի հարուցման հիմքի առկայության մասին և բավարար չէ քրեական գործ հարուցելու համար: Առիթն ըստ էության ուղղված է սկիզբ դնելու այնպիսի դատավարական գործունեության, որի նպատակն է հաստատելու կամ հերքելու քրեական գործի հարուցման հիմքերի առկայությունը: Գործող քրեադատավարական կարգավորումները, որոնք հնարավորություն են ընձեռում հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին՝ ստուգելու ստացված հաղորդմամբ ներկայացվող տվյալները, ուղղակիորեն վկայում են այն մասին, որ օրենսդիրն ի սկզբանե հնարավոր է համարել նաև իրավիճակներ, երբ քրեական գործ հարուցելու առիթն ամբողջությամբ չպարունակի հիմքերը, ուստի դրանց ձեռքբերման, ինչպես նաև առկա տեղեկատվության ստուգման ուղղությամբ նախատեսել է ընթացակարգեր:

Քրեական գործ հարուցելու հիմքերը կարող են արտացոլված լինել ինչպես քրեական գործ հարուցելու առիթներում, այնպես էլ ներկայացված հաղորդման ստուգման ընթացքում կատարված դատավարական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալներում (փաստաթղթերում և այլն):

Պետք է հաշվի առնել, որ որպես քրեական գործի հարուցման հիմք հանդես են գալիս միայն այն տեղեկությունները, փաստական տվյալները, որոնք արտացոլում են ամերևույթ հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը, որոնք էլ ինքնին հիմք են համապատասխան պաշտոնատար անձի կողմից քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին որոշման կայացման համար, ուստի դրանք կարող են ի սկզբանե առկա չլինել ներկայացված հանցագործության մասին հաղորդման մեջ:

Տեսության մեջ և պրակտիկայում վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե ինչ պետք է հասկանալ քրեական գործի հարուցման փուլում ամերևույթ հանցագործության հատկանիշների հասկացության ներքո, որն էլ հանդիսանում է քրեական գործ հարուցելու հիմքը:

Քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հատկանիշների առկայության մասին վկայող տվյալներն են: Ընդ որում, քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների բավարարության դեպքում:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ տեսության մեջ առկա չէ միասնական մոտեցում, թե ինչպիսի տվյալների համակցությունն է, որ կարող է վկայել ամերևույթ հանցագործության հատկանիշների մասին և հիմք դառնալ քրեական գործ հարուցելու համար: Որոշ հեղինակներ գտնում են, որ բավարար հիմքերը պետք է նախևառաջ մատնանշեն հանցակազմի այնպիսի հատկանիշների առկայության մասին, ինչպիսիք են՝ օբյեկտն ու օբյեկտիվ կողմը: Օրինակ, պրոֆեսոր Մ.Ս.Ստրոգովիչը նշում է, որ քրեական գործի հարուցման հիմքը ներառում է երկու անհրաժեշտ տարր՝ 1. հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին հայտնի դարձած փաստերում, իրադարձություններում քրեորեն պատժելի արարքի հատկանիշների առկայություն, 2. բավարար տվյալներ այն մասին, որ հանցագործությունը նախապատրաստվել է կամ կատարվել է<sup>78</sup>: Նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև Ն.Ս.Մանովան, որի կարծիքով քրեական գործ հարուցելու որոշում ընդունելու համար բավական է հաստատել հանցագործության օբյեկտիվ կողմի և հանցագործության երևույթի մասին վկայող տվյալների առկայությունը<sup>79</sup>:

Իր հերթին Օ.Վ.Տեմուշկինը նշում է, որ քրեական գործ հարուցելու համար չի պահանջվում հանցագործության բոլոր տարրերի առկայության վերաբերյալ ամբողջական տեղեկություն: Սովորաբար բավարար է միայն օբյեկտի և օբյեկտիվ կողմի մատնանշումը<sup>80</sup>: Իսկ ահա Օ.Պ.Տեմուշկինը նշում է, որ թեև ամերևույթ հանցագործության առկայության մասին հետևությունը պետք է հիմնված լինի բավարար տվյալների վրա, սակայն, որպես կանոն, կրում է հավանական բնույթ<sup>81</sup>:

Պ.Ա.Լուպինսկայայի կարծիքով՝ «Քրեական գործ հարուցելու որոշում ընդունող անձի տիրապետած տվյալները բավարար են, եթե դրանք կարող են հիմք հանդիսանալ կատարված կամ նախապատրաստվող հանցագործության առկայության մասին նախնական եզրահանգման համար»<sup>82</sup>:

Նշված հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ քրեական գործ հարուցելու հիմքերի

<sup>78</sup> Տե՛ս **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. Т. II. Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. – М., 1970, էջ 15:

<sup>79</sup> Տե՛ս **Манова Н.С.** Уголовный процесс: курс лекций. – М., 2010, էջ 182:

<sup>80</sup> Տե՛ս **Уголовно-процессуальное право Российской Федерации /Отв. ред. П.А.Лупинская.** 3-е изд., перераб. и доп. – М., 2000, էջ 272-273, (9-րդ գլխի հեղինակ՝ **О.П.Темущкин**):

<sup>81</sup> Տե՛ս **Уголовно-процессуальное право Российской Федерации /Отв. ред. П.А.Лупинская.** 3-е изд., перераб. и доп. – М., 2000, էջ 273 (9-րդ գլխի հեղինակ՝ **О.П.Темущкин**):

<sup>82</sup> Տե՛ս **Лупинская П.А.** Решения в уголовном судопроизводстве. Их виды, содержание и формы. – М., 1976, էջ 110:

բավարարությունը ենթադրում է հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների այնպիսի համակցություն, որն օբյեկտիվ դիտորդին հնարավորություն կտա ենթադրություն կատարել հանցագործության հավանական առկայության վերաբերյալ<sup>83</sup>: Միևնույն ժամանակ ընդգծում է, որ քրեական գործ հարուցելու մասին օրինական և հիմնավորված որոշում կայացնելու համար իրավասու պաշտոնատար անձի կամ մարմնի տրամադրության տակ պետք է առկա լինեն բավարար տվյալներ հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտի և օբյեկտիվ կողմի) առկայության մասին<sup>84</sup>:

Ակնհայտ է, որ քրեական գործի հարուցման փուլում սահմանափակ են ճանաչողական գործողություններ կատարելու լիազորությունները՝ ի տարբերություն քրեական դատավարության հետագա փուլերի: Ուստի հանցագործության մասին հաղորդման մեջ ներկայացված տվյալների ստուգմանն ուղղված աշխատանքների արդյունքների հավաստիությունն էականորեն նվազ է, ինչն էլ պայմանավորում է դրանց հիման վրա կայացված որոշումների հավանական բնույթը: Նման պայմաններում իրավասու պաշտոնատար անձի համար մեծ բարդություն է ներկայացնում առկա տվյալներին զնահատական տալը դրանց բավարարության տեսանկյունից, որը կարող է հիմք դառնալ այս կամ այն դատավարական որոշման կայացման համար:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ քրեական գործի հարուցման որոշման մեջ ներառված հետևությունը նախապատրաստվող կամ կատարված հանցագործության առկայության մասին կարող է սխալ լինել և, որպես լրիվ, օբյեկտիվ ու բազմակողմանի քննության արդյունք, կայացվի քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում: Բայց դա չի նշանակում, որ քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձը դրսևորել է ոչ պատշաճ պրոֆեսիոնալիզմ, կամ չարաշահել է պաշտոնական լիազորությունները, թերացել իր աշխատանքում: Անօրինական կհամարվի քրեական գործի հարուցումը միայն այդպիսի որոշում ընդունելու պահին ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու համար հիմքերի ակնհայտ առկայության դեպքում:

Գոյություն ունի նաև այնպիսի տեսակետ, որ բացի հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայության բացահայտումից, պետք է անդրադառնալ նաև արարքի հանրային վտանգավորությանը: Ն.Վ.Վլասովան նշում է, որ քրեական գործ հարուցելու փուլում չի կարելի պահանջել հանցակազմի բոլոր հատկանիշների՝ օբյեկտի, օբյեկտիվ կողմի, սուբյեկտի, սուբյեկտիվ կողմի հաստատում, քանի որ դրանք պետք է հաստատվեն նախաքննության ընթացքում: Ըստ վերջինիս՝ հանցագործության հատկանիշներ են համարվում հասարակական վտանգավորությունը, հակաօրինականությունը և կատարվածի պատժելիությունը, որոնք անհրաժեշտ է ընդգրկել հանցագործությունների մասին հաղորդումների քննության ժամանակ ստուգման ենթակա հանցանշանների ցանկում<sup>85</sup>:

Կարծում ենք, որ հիշյալ մոտեցումն արդարացված չէ, քանի որ առանց հանցակազմի բոլոր հատկանիշների բացահայտման հնարավոր չէ հետևություն անել դրա հանրային վտանգավորության մասին, իսկ նշված հանգամանքին կարելի է անդրադառնալ միայն գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության դեպքում, որոնց հասնելը քրեական գործի հարուցման փուլում օբյեկտիվորեն անհնար է:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ի տարբերություն քրեական իրավունքի, երբ հանցագործության հատկանիշներ ասելով հասկանում ենք միայն ՅՅ քրեական

<sup>83</sup> Տե՛ս Սիրվարդ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ LՂ/0018/11/16 որոշման 12-րդ կետը:

<sup>84</sup> Տե՛ս ՅՅ վճռաբեկ դատարանի Ս.ԱՆտոնյանի վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումը:

<sup>85</sup> Տե՛ս **Власова Н.А.** Досудебное производство в уголовном процессе. – М., 2000, էջ 71:

օրենսգրքով նախատեսված հանցակազմի տարրերը, քրեական դատավարության իրավունքի համատեքստում սույն հասկացությունն ունի այլ բովանդակություն: Հանցանշանները պարտադիր չէ ուղղակիորեն նախատեսված լինեն քրեական օրենքով որպես հանցագործությանը բնորոշ հատկանիշներ, այլ բավարար է՝ դրանք հիմք տան ենթադրելու, որ առերևույթ կատարվել է հանցագործություն: Այս իմաստով առերևույթ հանցագործության հատկանիշներ կարող են լինել դիակի վրա առկա վնասվածքները, կասկածելի հանգամանքներում մարդու անհայտ բացակայելը և այլն: Հանցագործության մասին կարող են վկայել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ առանց որևէ պատճառի մարդու երկարատև բացակայությունն այն պայմաններում, երբ առկա չեն օբյեկտիվ տվյալներ նրա կողմից բնակության վայրը փոխելու վերաբերյալ, հանկարծամահությունն այն դեպքում, երբ բացակայում է հիվանդությունը, որը կարող էր պատճառ դառնալ, անհայտ կորած անձի այնպիսի փաստաթղթերի հայտնաբերումը, առանց որոնց վերջինս չէր կարող երկարատև բացակայել (օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթերը), անհայտ կորած անձի մոտ զգալի դրամական միջոցների կամ այլ թանկարժեք իրերի առկայությունը, որը կարող էր գրավել հանցագործների ուշադրությունը, բռնության հետքերով դիակի հայտնաբերումը և այլն:

Հակառակ դեպքում քրեական գործի հարուցման փուլի առջև կբարձրացվեն այնպիսի հարցեր, որոնք ըստ էության իրենցից ներկայացնում են հետաքննության, նախաքննության, ինչու չէ նաև դատական քննության ընթացքում պարզման ենթակա հանգամանքներ, և որոնց հաստատման հնարավորությունն օբյեկտիվորեն առկա չէ ինդրո առարկա փուլի ընթացքում:

Ինչ վերաբերում է հանցակազմի սուբյեկտին և սուբյեկտիվ կողմին, ապա կարևոր ենք համարում ընդգծել, որ հնարավորության դեպքում անհրաժեշտ է պարզել նաև այդ տվյալները: Ասվածը պայմանավորված է հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված այնպիսի հանցակազմերի առկայությամբ, որոնք միմյանցից տարբերվում են ըստ էության հանցանք կատարած անձի առանձնահատկություններով: Այդ դեպքում հանցագործության մասին հաղորդման քննության արդյունքում համապատասխան որոշում կայացնելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի համար օբյեկտիվորեն անհնար կլինի կողմորոշվել, թե ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված ո՞ր հանցակազմի հատկանիշներով է հարուցելու քրեական գործ, ինչն էլ կարող է վնասել հետագա քննության արդյունավետությանն ու լիարժեքությանը:

Այս առիթով Վ.Մ. Կորնուկովը նշում է, որ այն դեպքերում, երբ քրեական գործ հարուցելու մասին հարցը լուծվում է կոնկրետ անձի վերաբերյալ, ապա հանցագործության սուբյեկտին և սուբյեկտիվ կողմին վերաբերող տեղեկությունների բացահայտումը պարտադիր է<sup>86</sup>: Համաձայնելով հիշյալ դիրքորոշմանը՝ կարծում ենք, որ չնայած քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ, իսկ անձի նկատմամբ միայն քրեական հետապնդումն է հարուցվում, այնուհանդերձ որոշ դեպքերում քրեական գործի հարուցման որոշման մեջ արդեն իսկ կանխորոշված է ենթադրյալ հանցանք կատարած անձը՝ պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված որոշ հանցակազմերի առանձնահատկություններով, օրինակ՝ կաշառք ստանալը, պաշտոնական լիազորությունների չարաշահումը և այլն:

<sup>86</sup> Ст'я Корнуков В.М. Российский уголовный процесс. Вопросы Особенной части. Ё2 11:

# RELATIONSHIP BETWEEN THE REASONS AND GROUNDS FOR INITIATING CRIMINAL PROCEEDINGS

**TIGRAN GHAZARYAN**

*PhD student at Criminal Proceedings and Criminalistics at  
YSU Faculty of Law, Attorney  
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this scientific article is to conduct a systematic investigation of the grounds for initiating criminal proceedings, as a result of which it will be possible to provide scientific solutions to the existing problems on one hand, and on the other hand, for the purpose of safeguarding the constitutional rights and legitimate interests of the person who has allegedly committed the offense in order to ensure an effective balance.

To achieve the abovementioned purpose, first and foremost it is important to define accurately the concept and grounds for initiating criminal proceedings, a common understanding of which will ensure the normal functioning of the criminal prosecution authorities, thereby enhancing the effectiveness of the fight against crime.

Based on the specifics of the purpose and issues of this article, systematic-comparative-legal methods were applied.

We can conclude that the reasoning for initiating a criminal case is a legal fact containing information on the alleged crime that creates a duty on the part of the competent state authorities and officials to decide whether or not to initiate a criminal case as a result of the appropriate judicial action.

As to the grounds for initiating criminal proceedings, that is, the evidence of the existence of the characteristics of the crime, then unlike the criminal law, where by the nature of the crime we mean only the elements of the crime envisaged by the RA Criminal Code, in the context of the right of criminal proceedings, *corpora delicti* do not necessarily have to be explicitly provided for by criminal law as being characteristic of the crime, but rather, they are sufficient to provide a basis for assuming that a crime apparently may have been committed.

**Key words:** *Initiate a criminal proceeding, grounds for initiating a criminal case, reasons for initiating a criminal case, a report about crime, materials preparation phase, satisfaction of the grounds, legality of the reason.*

## СООТНОШЕНИЕ ОСНОВАНИЙ И ПОВОДОВ ИНИЦИАЦИИ УГОЛОВНОГО ДЕЛА

ТИГРАН КАЗАРЯН

*Аспирант кафедры уголовного процесса и  
криминалистики юридического факультета ЕГУ,  
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является системное изучение поводов и оснований инициации уголовного процесса, в результате которого будет возможно обеспечить научное решение проблем обеспечения защиты и эффективный баланс конституционных прав и законных интересов, с одной стороны, для потерпевшего, а с другой стороны, для лица, предположительно совершившего преступление.

Для достижения этой цели прежде всего важно правильное определение понятия оснований инициации уголовного процесса и достаточности оснований, единое восприятие которых обеспечит естественную деятельность правоохранительных органов, способствуя повышению эффективности борьбы с преступностью.

Ввиду специфики цели и задач данной научной статьи были применены системно-структурные и сравнительно-правовые методы.

Анализируя ситуацию, можем сделать вывод, что основание для возбуждения уголовного дела является юридическим фактом, содержащим информацию о предполагаемом преступлении, что создает обязанность со стороны компетентных государственных органов и должностных лиц принять в результате соответствующих процессуальных действий решение о возбуждении уголовного дела или об отказе в возбуждении уголовного дела.

Что касается оснований для инициации уголовного процесса, то есть сведений наличия признаков преступления, то, в отличие от уголовного права, где под характеристикой преступления мы подразумеваем только элементы преступления, предусмотренные Уголовным кодексом РА, в контексте уголовно-процессуального права не является обязательным, чтобы признаки преступления были прямо предусмотрены уголовным законодательством как характеристики преступления, но достаточно и того, чтобы они дали основу для предположения, что преступление, очевидно, было совершено.

**Ключевые слова:** *инициировать уголовный процесс, основы возбуждения уголовного дела, поводы возбуждения уголовного дела, заявление о преступлении, стадия приготовления материалов, достаточность основ, законность повода.*

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ****ՀԱՅՐԵՆԻԷ-ՍՓՅՈՒՌԷ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 1980-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ\*****ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱԼ**

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, ԱԵԳՄՄ անդամ,  
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[anixach-94@mail.ru](mailto:anixach-94@mail.ru)*

**Հոդվածի նպատակն է ներկայացնել և լուսաբանել 1980-ական թվականներին հայրենիքի և սփյուռքի մեջ ծավալված փոխառնչությունները արվեստի բնագավառում: Մեր խնդիրն է ուսումնասիրել արվեստի բնագավառում հայրենիք-սփյուռք փոխառնչությունների հիմնական ուղղությունները, կատարված փոխայցելությունները, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի իրականացրած գործունեությունը և ցույց տալ այդ ամենի անմիջական ազդեցությունը հայրենիք-սփյուռք հարաբերությունների որակի վրա:**

**Հետազոտության իրականացման ընթացքում կիրառել ենք արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի համադրման, վերլուծության, համեմատության և պատմականության մեթոդները:**

**Ուսումնասիրելով թեման՝ եկել ենք այն եզրակացությանը, որ 1980-ական թվականներին արվեստի բնագավառում մեծապես ամրապնդվում ու ընդլայնվում էին հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները: Ծավալված ակտիվ փոխգործակցության արդյունքում տարագիր հայ արվեստագետները համախմբվում էին հայրենիքի շուրջ, պատմական ժառանգություն հանդիսացող արժեքներ և արվեստի նշանավոր գործեր փոխադրվում էին հայրենիք, ինչպես նաև այդ փոխառնչությունները հնարավորություն էին ընձեռում սփյուռքահայ արվեստը հասու դարձնելու հայրենիքում, իսկ խորհրդահայ արվեստը տարածելու ոչ միայն հայկական համայնքներում, այլև օտար հանդիսականների շրջանակներում: Վերջինիս վկայությունն է 1980թ.-ին ԱՄՆ-ում ցուցադրված «Անուշ» օպերան և 1981թ.-ին Անգլիայում կայացած հայկական ֆիլմերի փառատոնը, որոնք ստանում են լայն արձագանքներ օտարազգի հանդիսականների շրջանում:**

**Հիմնաբառեր՝** Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե, հայրենիք-սփյուռք մշակութային փոխհարաբերություններ, արվեստ, սփյուռք, հայապահպանություն, հայկական ֆիլմերի փառատոն:

1980-ական թվականներին մեծապես ամրապնդվում ու ընդլայնվում էին Հայրենիք-Սփյուռք փոխառնչություններն արվեստի բնագավառում: Արվեստը, լինելով մշակույթի կարևոր ճյուղերից մեկը, մշտապես հսկայական դեր է խաղացել հայ ազգի

\* Հոդվածը ներկայացվել է 05.03.2020թ., գրախոսվել՝ 10.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

կյանքում, նպաստել է հայոց արժեհամակարգի, ազգային յուրօրինակ հոգեկերտվածքի պահպանմանն ու վերարտադրմանը:

1980-ական թվականներին լուրջ քաղաքական իրադարձություններ էին տեղի ունենում հորհրդային Հայաստանում և սփյուռքում, որոնց անմիջական ազդեցությամբ էլ զարգանում էին հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները: Այս առումով առանձնանում էր հատկապես 1980-ականների երկրորդ կեսը, երբ սփյուռքում տեղի էին ունենում մեծ տեղաշարժեր: Պայմանավորված քաղաքական բարդ իրադրությամբ՝ շարունակվում էր դատարկվել Մերձավոր Արևելքի ամենամեծ՝ լիբանանահայ համայնքը, իսկ հորհրդային Հայաստանը հայտնվել էր հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում: Իրավիճակը չի փոխում անգամ Միխայիլ Գորբաչովի մշակած «վերակառուցման» քաղաքականությունը: Այս ժամանակաշրջանում կոմիտեում նույնպես տեղի ունեցավ փոփոխություն. 1985թ.-ին առաջին և երկարամյա ղեկավար Վարդգես Համազասայանի փոխարեն նոր ղեկավար է ընտրվում Կարլեն Դալլաթյանը<sup>87</sup>:

Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածում արվեստի բնագավառում ծավալվող փոխհարաբերությունները հիմնականում կազմակերպվում և կարգավորվում էին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) միջոցով: Դեռևս 1964թ.-ի հունիսի 25-ին Երևանի Արվեստի աշխատողների տանը կայացած կոմիտեի հիմնադիր ժողովում<sup>88</sup>, ի թիվս այլ բաժինների, ստեղծվում է նաև արվեստի բաժանմունքը, որի նախագահ է ընտրվում արվեստագիտության դոկտոր, Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Չարյանը: Արվեստի բաժանմունքի կազմում ձևավորվում են հետևյալ ենթաբաժանմունքները՝ երաժշտության (Նախագահ՝ կոմպոզիտոր Էդգար Յովհաննիսյան), ճարտարապետության (Նախագահ՝ Վարազդատ Հարությունյան), թատրոն-կինոյի (Նախագահ՝ Սարգիս Մելիքսեթյան) և կերպարվեստի (Նախագահ՝ Նկարիչ Միեր Աբեղյան)<sup>89</sup>:

1980-ական թվականներին արվեստի բնագավառում հայրենիքի և սփյուռքի միջև ծավալված փոխառնչություններն ավելի համակարգված ներկայացնելու նպատակով կանենք ենթախմբային առանձնացումներ:

**Թատրոնի և կինոյի բնագավառ:** 1980թ.-ին կոմիտեի իրավերով հայրենիք է ժամանում անգլիահայ ռեժիսոր Յովհաննես Փիլիկյանը, ծանոթանում ՀԽՍՀ թատերական կյանքին, հանդիպումներ է ունենում թատերական և կինոգործիչների հետ, կարդում դասախոսություններ՝ ներկայացնելով Շեքսպիրի ստեղծագործությունների ժամանակակից մեկնաբանությունները: Նույն թվականին կոմիտեի իրավերով երկարատև այցով Հայաստան է գալիս լիբանանահայ վաստակավոր ռեժիսոր ու դերասան Վարուժան Խաչյանը, որ հայրենիքում իրականացնում է երկու բեմադրություն. մեկը՝ Երևանի դրամատիկական թատրոնում, որտեղ ներկայացնում է Ն. Սայմոնի «Ուտաբոբիկ զբոսայգում» կատակերգությունը, իսկ մյուսը՝ Լենինականի (ներկայիս Գյումրի) Ա. Մռավյանի անվան դրամատիկական թատրոնում, որտեղ հանդես է գալիս Հ. Պարոնյանի «Ալաֆրանկա» ներկայացմամբ: Վերջինիս գլխավոր դերակատարը հենց Վ. Խաչյանն էր<sup>90</sup>:

<sup>87</sup> Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Է. Յովհաննիսյան, Մ. Անանյան, և ուրիշներ, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան 2017թ., էջ 119:

<sup>88</sup> Տե՛ս **Միրզախանյան Ռ. Կ.**, հորհրդահայ մշակույթը 1956-1990-ական թթ., Երևան 2009, էջ 152 նաև նաև **Մելիքսեթյան Հ. Ու.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920–1980 թթ.), Երևան, 1985, էջ 366:

<sup>89</sup> Տե՛ս **Հայաստանի ազգային արխիվ** (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 875, ց. 1, գ. 11, թ. 2:

<sup>90</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 12:



Կոմիտեի հրավերով 1980թ.-ին առաջին անգամ հայրենիք է գալիս նաև ֆրանսահայ նշանավոր կինոռեժիսոր Անրի Վեռնոյը (Աշոտ Մալաթյանը): Տպավորությունների մասին նա նշում է. «Երեսուն տարի ի վեր կսպասեի այս հանդիպմանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի Կոմիտեն իր հրավերով հայրենիքս տեսնելու բացառիկ երջանկություն պարզևեց ինձի: Կմեկնեմ աչքերս լեցուն, հոգիս ու սիրտս լեցուն»<sup>91</sup>:

Նույն թվականի ապրիլին կոմիտեն հյուրընկալում է արգենտինահայ հասարակական գործիչ, կինոռեժիսոր-օպերատոր Յակոբ Թուբանյանին: Նա հայրենիքում նկարահանում է երեքժամյա տևողությամբ վավերագրական կինոնկար, որը պատմում էր Խորհրդային Չայաստանի 60-ամյա ուղու մասին<sup>92</sup>:

1981 թվականի տարեսկզբին ԱՄՆ են մեկնում ՅԽՍՀ կինոարվեստի կոմիտեի նախագահ Ռաֆայել Սամսոնովը և հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների կամիտեի նախագահի տեղակալ Շահե Տատուրյանը՝ տանելով «Հայֆիլմի» մի քանի կինոնկարներ<sup>93</sup>: Նոյեմբերին Խորհրդային Չայաստանին նվիրված վավերագրական ֆիլմեր նկարահանելու նպատակով Երևան է այցելում Անդրանիկ Խաչիկյանը<sup>94</sup>: Դեկտեմբերի սկզբին խոշոր իրադարձություն է տեղի ունենում Անգլիայի հայկական համայնքում: Անգլիահայ ռեժիսոր Յովհաննես Փիլիկյանի ջանքերով կազմակերպվում է հայկական ֆիլմերի փառատոն, որին մասնակցելու համար Անգլիա են մեկնում ՅԽՍՀ կինոարվեստի կոմիտեի նախագահ Ռ. Սամսոնովը և կինոմատոգրաֆիստների վարչության քարտուղար, ՅԽՍՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Յենրիկ Մայյանը: Այդ օրերին Լոնդոնում ցուցադրվում են «Շոր և Շորշոր», «Կարինե», «Երևանյան օրերի խրոնիկա», «Նահապետ», «Ապրեցեք երկար», «Տղամարդիկ», «Սկիզբ», «Տարվա եղանակներ», «Բնակիչներ» հայկական կինոնկարները: Կինոփառատոնն անցնում է բացառիկ հաջողությամբ<sup>95</sup>:

1985թ.-ին նախատեսվում էր անցկացնել Երևանյան մեծ փառատոն հայրենիքի և սփյուռքի մշակութային գործիչների մասնակցությամբ: Այդ կապակցությամբ 1984թ.-ի նոյեմբերին Ֆրանսիա են գործուղվում կոմիտեի նախագահության անդամ, արվեստաբան Վահան Յարությունյանը, ինչպես նաև ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիրներ Միեր Մկրտչյանն ու դերասանուհի Թամար Յովհաննիսյանը: Նրանց գլխավոր նպատակն էր օժանդակել տեղի հայ համայնքին՝ նախապատրաստվելու Երևանյան փառատոնին<sup>96</sup>:

1985թ.-ի փետրվար-մարտ ամիսներին անձնական հրավերով Սիրիա են մեկնում ԽՍՀՄ ժողովրդական դերասանուհի Տաթևիկ Սազանդարյանը և ՅԽՍՀ ժողովրդական դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը: Տ. Սազանդարյանի այցի գլխավոր նպատակն էր համայնքի ստեղծագործական խմբերին նախապատրաստել Երևանում կայանալիք Սփյուռքահայ արվեստի փառատոնին: Իսկ Վ. Վարդերեսյանը, բացի այս աշխատանքներից, «Պետրոս Ադամյան» թատերախմբի հետ հանդես է գալիս ներկայացումներով, որոնք անցնում են մեծ հաջողությամբ<sup>97</sup>:

1986թ.-ի ապրիլին հայրենիք է հրավիրվում ԱՄՆ կինոգործիչների խումբ՝ ԶԲԸՄ փոխնախագահ Լուիզ Սիմոն-Մանուկյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Մասաչուսեթս նահանգի հեռուստատեսության չորս աշխատակիցներ և կինոռեժիսոր Սեդա Պողոսյանը: Խմբի այցելության հիմնական նպատակն էր ստեղծել

<sup>91</sup> Նույն տեղում, թ. 13:

<sup>92</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 14-15:

<sup>93</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 16, թ. 23:

<sup>94</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 28:

<sup>95</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 16, թ. 25:

<sup>96</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 56, թ. 15-16:

<sup>97</sup> Տե՛ս, նույն տեղում, ց. 13, գ. 41, թ. 12-13:

կինոնկար հորհրդային Հայաստանի վերաբերյալ, որը ամերիկահայերին կպատմեր Հայաստանի 66-ամյա ուղու մասին<sup>98</sup>:

1989թ.-ի հունվարի 31-ից մինչև փետրվարի 18-ը Երևան է այցելում արգենտինահայերի մի խումբ՝ Կարլոս Չոլակյանի գլխավորությամբ, որ ակտիվ գործունեություն էր ծավալում ագենտինահայ գաղութում: Խումբը «Հայֆիլմ» կինոստուդիայում հետաքրքիր հանդիպում է ունենում ռեժիսոր Ֆրոնզե Դովաթյանի և հայ մշակույթի նշանավոր այլ գործիչների հետ<sup>99</sup>:

1989թ.-ի մարտին կոմիտեի աջակցությամբ Ֆրանսիայում կազմակերպվում է հայկական ֆիլմերի փառատոն, որի նախաձեռնողը Փարիզի աուդիո-վիզուո կենտրոնն էր<sup>100</sup>:

**Երգարվեստի բնագավառ:** 1980թ.-ին հայրենի բեմահարթակներում մեծ հաջողությամբ են անցում ամերիկահայ աշխարհահռչակ երգեհոնահար Պերո ժամկոչյանի, ֆրանսահայ դիրիժոր Ալեքսանդր Սիրանույանի համերգները<sup>101</sup>: ՀԲԸՄ նախագահ Ալեք Մանուկյանի և Նույն հաստատության ատենապետ Երվանդ Ազատյանի խնդրանքով ամերիկահայ համայնք է ուղարկվում հայ ականավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի պարտիտուրան, ինչպես և առանձին գործիքների պարտիտուրաները՝ Միչիգանի օպերային թատրոնում բեմադրելու համար: «Անուշ»-ի բեմադրությունն իրականացվում է 1981թ.-ի հոկտեմբերի 30-ին՝ անգլերեն լեզվով<sup>102</sup>:

1981թ.-ին Կանադայի հայկական համայնք են այցելում ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, միջազգային մրցանակի դափնեկիր Հարություն Փափազյանը և ԽՍՀՄ Գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ Գրիգոր Խանջյանը: Կանադահայ համայնքի հետ առաջին հանդիպումը տեղի է ունենում հունվարի 6-ին՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ: Կազմակերպված հանդիսության ժամանակ 700 հայերի ներկայությամբ ելույթ է ունենում Գոհար Գասպարյանը՝ առաջացնելով ներկաների հիացմունքը: Հաջորդ օրը մշակութային գործիչները հանդիպում են տեղի 25-ամյա գործունեություն ծավալած շաբաթօրյա դպրոցի սաների և դպրոցի տնօրեն Էլրա Աբրիպիրիջյանի հետ<sup>103</sup>: Հունվարի 15-ին պատվիրակությունը հանդիսավոր արարողությամբ Թեբեյան մշակութային միության ատենապետ Արշավիր Կոնճյանին է հանձնում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից տրված «Ներսես Շնորհալի» շքանշանը: Տորոնտոյում կայացած համերգի ժամանակ ներկաներին իր ելույթներով հիացնում է Գ. Գասպարյանը, որ կատարում է մի շարք մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործություններ, այդ թվում՝ Շոպեն, Ռախմանինով, Մոցարտ, Բեթովեն, Կոմիտաս, Տիգրան Մանսուրյան, Արմեն Տիգրանյան և այլն<sup>104</sup>:

Մեներգչուհի Լուսինե Չաբարյանի գլխավորությամբ Կոմիտասի անվան քառյակը 1981թ.-ին համերգային շրջագայության է մեկնում Ֆրանսիա և Արևմտյան Գերմանիայի Մյունխեն քաղաք: Խումբը գլխավորում էր Հայաստանի Կոմպոզիտորների միության նախահահ Էդվարդ Միրզոյանը: Կոմիտասի անվան քառյակի ելույթները Լ. Չաբարյանի մասնակցությամբ անցնում են մեծ հաջողությամբ<sup>105</sup>:

<sup>98</sup> Տե՛ս, Նույն տեղում, ց. 16, գ. 19, թ. 4:

<sup>99</sup> Տե՛ս, **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 16, գ. 29, թ. 28:

<sup>100</sup> Տե՛ս, Նույն տեղում, գ. 29, թ. 22:

<sup>101</sup> Տե՛ս, Նույն տեղում, ց. 9, գ. 40, թ. 12:

<sup>102</sup> Տե՛ս Նույն տեղում, ց. 14, գ. 16, թ. 23:

<sup>103</sup> Տե՛ս, Նույն տեղում, թ. 62:

<sup>104</sup> Տե՛ս, Նույն տեղում, թ. 64-65:

<sup>105</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 16, թ. 24:

Ապրիլին ու սեպտեմբերին կոմիտեի հրավերով Երևան է այցելում Բոստոնի հայ Հայ երաժշտասերների միության տնօրեն, նշանավոր երգեհոնահար Պերո ժամկոչյանը: 1979-1981թթ.-ին ժամկոչյանը իտալահայ բարերար Հայկ Ղազարոյանի հատկացրած գումարով մոտ 50 հազար դոլարի արժողությամբ երաժշտական գործիքներ է բերում Երևանի ֆիլիարմոնիկ նվագախմբի համար<sup>106</sup>: Մայիսին Երևան է այցելում «Կոմիտաս» երգչախմբի խմբավար, «Նոր Սերունդ» մշակութային միության փոխատենապետ, կանադահայ երգիչ Դավիթ Վարժապետյանը: Նա հանդես է գալիս երկու համերգով և ձայնագրվում Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի հետ<sup>107</sup>:

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանն էլ այցելում է Անգլիա, որտեղ հանդիպումներ է ունենում անգլիահայ համայնքի և մասնավորապես հայ երաժիշտների հետ<sup>108</sup>:

1982թ.-ի փետրվարին լիբանանահայ կազմակերպությունների խնդրանքով Բեյրութ են ուղարկվում ՀԽՍՀ վաստակավոր արտիստներ երգչուհի Բելա Դարբինյանը և ասմունքող Վերա Հակոբյանը: Նրանց համերգային ելույթները Լիբանանի ճգնաժամային օրերին Նոր շունչ են հաղորդում բեյրութահայերին<sup>109</sup>: Ապրիլի վերջերին Երևան է ժամանում ֆրանսահայ երգչուհի, Երևանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտ Աստղիկ Դեղեյանը: Թեև նա ժամանում է անհատական հրավերով, բայց կոմիտեի միջամտությամբ կազմակերպվում է նրա մենահամերգը հայրենի բեմում<sup>110</sup>: Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ մայիսին Հորդանան և Քուվեյթ են մեկնում ասմունքող Վլադիմիր Աբաջյանը, երգչուհի Ֆլորա Մարտիրոսյանը և դուդուկահար Ջիվան Գասպարյանը: Նրանք հանդես են գալիս համերգային ծրագրերով: Պետք է նշել, որ քուվեյթահայությունն առաջին անգամ էր հյուրըկալում հայ արվեստի գործիչների<sup>111</sup>: Նույն ամսին համերգային ծրագրով Բելգիա և Նիդերլանդներ է մեկնում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մեներգչուհի Էլարա Չախոյանը<sup>112</sup>:

Արդեն սեպտեմբերին հայրենիք է գալիս Բուլղարիայի «Երևան» մշակութային կազմակերպության Վառնայի մասնաճյուղի երգի-պարի համույթը, որը ելույթներով հանդես է գալիս Աշտարակի շրջանում: Ռուստ քաղաքի «Կոմիտաս» երգչախումբն էլ հիմնադրման 50-ամյակի կապակցության այցելում է Երևան:

Հայաստանի երգչախմբային ընկերության աջակցությամբ 1982թ.-ի դեկտեմբերի 19-ին կոմիտեն կազմակերպում է ամերիկահայ անվանի կոմպոզիտոր, Կոմիտասի անվան դափնեկիր Համբարձում Բերբերյանի հեղինակային համերգը<sup>113</sup>:

1983թ.-ին Հայաստան է ժամանում Բուլղարիայի Վառնա քաղաքի օպերային թատրոնի մեներգչուհի Մարի Գրիգորյանը, որ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում հանդես է գալիս Աիդայի դերերգով<sup>114</sup>:

«Կեսարիո» հայրենակցական միության խմբի կազմում 1984թ.-ի սեպտեմբերին դաշնակահարուհի Հյուզետ Աճեղեյանն այցելում է հայրենիք: Նա համերգներով հանդես է գալիս կամերային երաժշտության տան դահիլճում<sup>115</sup>:

<sup>106</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 27:

<sup>107</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 27:

<sup>108</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 24:

<sup>109</sup> Տե՛ս, նույն տեղում, ց. 14, գ. 41, թ. 30:

<sup>110</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 37:

<sup>111</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 31:

<sup>112</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 32

<sup>113</sup> Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 41, թ. 38-39:

<sup>114</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 11:

<sup>115</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 7, թ. 12:

Լոնդոնի Թեթյան մշակութային միության հրավերով նոյեմբերին Անգլիա են մեկնում ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Էդգար Յովհաննիսյանը և ժողովրդական արտիստուհի, նշանավոր դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը: 1984թ.-ին հայրենիք են ժամանում նաև դաշնակահար Շահան Արծրունին և ջութակահարուհի Անի Գաֆաֆյանը: Երևանը համերգային ծրագրով հանդես են գալիս Երևանում ու Գյումրիում<sup>116</sup>:

Ինչպես նշվեց, 1985թ.-ին նախատեսվում էր անցկացնել Երևանյան մեծ փառատոն: Նախապատրաստական աշխատանքներին օգնելու նպատակով անհատական հրավերով Անգլիա, Բելգիա և Յուլանդիա են մեկնում ժողովրդական արտիստ, երգիչ Յովհաննես Բաղայանը և դաշնակահարուհի Նաթելա Պողոսյանը<sup>117</sup>: Ֆրանսիա են այցելում կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը, երգիչներ Գեորգի Մինայանն ու Գրետա Աստուխյանը<sup>118</sup>:

Կոմիտեի նախագահի տեղակալ Կարլեն Միքայելյանի գլխավորությամբ 1985թ.-ի նոյեմբերին Կանադա և ԱՄՆ են մեկնում ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մեներգիչներ Էլվիրա Ուզունյանը, Արշավիր Կարապետյանը, դաշնակահարուհի Կարինե Օզանյանը և դուդուկահար Սարո Դանիելյանը<sup>119</sup>:

1986թ.-ին ԱՄՆ-ի հայկական միջազգային քոլեջի հրավերով կոմիտեի նախագահ Կարլեն Դալլաթյանն այցելում է ԱՄՆ և Կանադա, իսկ նոյեմբերին՝ Ֆրանսիա և Շվեյցարիա, որպեսզի մասնակցի Խորհրդային Յայաստանի 66-ամյակի արարողություններին և ՀԲԸՄ ստեղծման 80-ամյա հոբելյանին: Երա հետ Ֆրանսիա են մեկնում նաև երգիչ Բարսեղ Թումանյանը, դաշնակահարուհի Չարուհի Խանջյանը, ջութակահար Մովսես Պողոսյանը և թավջութակահար Սուրեն Բաղդասարյանը: Ֆրանսիա է ժամանում նաև ԽՍՀՄ հանրաճանաչ խմբավար Յովհաննես Զեքիջյանը<sup>120</sup>: Նույն թվականին հայրենիքում կազմակերպվում է կանադահայ երգիչ Դավիթ Վարժապետյանի համերգը<sup>121</sup>:

**Կերպարվեստի և քանդակագործության բնագավառ:** Այս բնագավառում նույնպես 1980-ական թվականներին ծավալվում էին ակտիվ փոխառնչություններ: Ինչպես արդեն նշեցինք, 1981թ.-ին Կանադայի հայկական համայնք են մեկնում արվեստի նշանավոր գործիչներ Գ. Գասպարյանը, Յ. Փափազյանը և Գ. Խանջյանը: Վերջինս հունվարի 8-ին «Հրաչ Երվանդ» սրահում հանդիպում է կանադահայերի հետ և հանդես է գալիս «Հայ կերպարվեստի անցյալը և այսօրը» խորագրով զեկուցումով: Նշանավոր նկարչի զեկուցումը ուղեկցվում է շուրջ 100 սլայդի ցուցադրումով<sup>122</sup>:

1981թ.-ի մայիսին Երևանից ոչ հեռու՝ Աշտարակ տանող խճուղու վրա, բացվում է 1915թ.-ի Վասպուրականի հերոսամարտին նվիրված հուշակոթող, որի բացման արարողությանը ներկա գտնվելու համար հայրենիք են ժամանում մեծ թվով սփյուռքահայեր: Օգոստոսին Երևան է այցելում ամերիկահայ հայտնի քանդակագործ Խորեն Տեր-Հարությունյանը տիկնոջ հետ: Երա նպատակն էր ստեղծել հայրենիքի վերածնունդը խորհրդանշող մոնումենտալ քանդակ: Խ. Տեր-Հարությունյանն իր հետ հայրենիք է բերում չորս քանդակ և 32 ջրաներկ կտավ, որոնք նվիրում է Հայաստանի

<sup>116</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 12:

<sup>117</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 15-16:

<sup>118</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 13, գ. 41, թ. 14:

<sup>119</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 13, գ. 41, թ. 14:

<sup>120</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 8:

<sup>121</sup> Տե՛ս, նույն տեղում, ց. 16, գ. 19, թ. 5:

<sup>122</sup> Տե՛ս, նույն տեղում, ց. 14, գ. 16, թ. 62:

պետական պատկերասրահին<sup>123</sup>: Արդեն տարեվերջին կոմիտեի օժանդակությամբ Երևանում բացվում է լիաբանանահայ շուրջ 12 գեղանկարիչների, այդ թվում՝ Պոլ Կիրակոսյանի, Սեդա Մանուկյանի, Գրիգոր Հակոբյանի, Վերա Երեմյանի և այլոց ստեղծագործությունների ցուցահանդեսները<sup>124</sup>:

1982թ.-ին Երևանում հետմահու բացվում է ֆրանսահայ գեղանկարիչ Չարեհ Մուրաֆյանի ցուցահանդեսը: Կոմիտեի հրավերով ցուցահանդեսի բացմանը ներկա էին նկարչի հարազատները և որդին՝ մաթեմատիկոս, պրոֆեսոր Արմեն Մուրաֆյանը, իսկ հոկտեմբերին Երևանի ժուռնալիստների տանը բացվում է մեկ այլ հետաքրքիր ցուցահանդես, որտեղ ներկայացվում են կանադահայ նշանավոր լուսանկարիչ Հարոլդին Գավիլայանի գործերը<sup>125</sup>:

1983թ.-ի ամռանը Երևանում բացվում է Ֆրանսահայ աշխարհահռչակ նկարիչ, ֆրանսիական գեղարվեստի ակադեմիայի անդամ Գառզուի (Գառնիկ Չուլումյանի) անհատական ցուցահանդեսը՝ բաղկացած մոտ 300 կտավից, որոնք հեղինակը նվիրում է հայրենիքին: Ցավոք, ընտանեկան խնդիրների պատճառով նկարիչն անձամբ ներկա չի գտնվում իր ցուցահանդեսին: Նույն տարում անհատական ցուցահանդեսով հայրենիք են այցելում Բյուզանդ Կաջմանյանը և ԱՄՆ-ի հայ նկարիչների միության նախագահ Հովհաննես Բալաբեկյանը<sup>126</sup>:

1983թ.-ին տեղի ունեցած ցուցահանդեսների շարքում նշանավոր էր նաև Հայաստանի պետական պետկերասրահի Էջմիածնի մասնաճյուղում բացված ամերիկահայ մեծանուն քանդակագործ Խորեն Տեր-Հարությունյանի քանդակների ու ջրաներկ կտավների ցուցահանդեսը: Վերջինս ցուցահանդեսի 85 քանդակները և 200-ից ավելի ջրաներկ կտավներն ամբողջովին նվիրում է հայրենիքին<sup>127</sup>:

1984թ.-ի ամռանը Երևան է ժամանում աշխարհահռչակ գեղանկարիչ Գառզու: Նա ժամանում է՝ ստանալու հայրենիքի պարգևը՝ Մարտիրոս Սարյանի անվան մեդալը, որին արժանացել էր դեռևս 1981թ.-ին: Հանրաճանաչ գեղանկարիչը, որ արժանացել էր բազմաթիվ շքանշանների ու մրցանակների, հուզված հայտարարում է. «Ես սրբությամբ պիտի պահեմ հայրենիքիս կողմե ինձի շնորհված այս պարգևը, որն իր մեջ մեծ խորհուրդ մը կպարունակի՝ Հայրենիք-Սփյուռք կապերը խորհրդանշող մեկ նոր օղակի մը հաստատումով»<sup>128</sup>:

Սեպտեմբերի վերջերին կոմիտեի հրավերով բուլղարահայ նկարչուհի Նվարդ Աբգարյանը մայրիկի՝ Արշալույս Աբգարյանի հետ այցելում է հայրենիք: Նկարչուհին բերում է վերջին տարիների իր ստեղծագործությունները, իսկ մայրը՝ ձեռագործ արժեքավոր աշխատանքներ, որոնք ցուցադրվում են կոմիտեի սրահում: Հայաստան են ժամանում նաև դաշնակահար Շահան Արծրունին և ջութակահարուհի Անի Գաֆաֆյանը: Կոմիտեն Երևանում և Գյումրիում կազմակերպել է նրանց համերգ-երլայթները<sup>129</sup>:

1986թ.-ին կերպարվեստի բնագավառը նշանավորվում է կարևոր իրադարձությամբ: ԱՄՆ-ի «Հայ նկարիչների միության» խնդրանքով Երևանում կազմակերպվում և անցկացվում են նկարիչներ Ռիչարդ Թաչյանի, Մարկոս Գրիգորյանի, Պերճուհի Կախյանի, Մարտին Բարաշյանի, Մարտին Մուզարի, Պիտեր Էլյանի և Էդուարդ Վարդանյանի ցուցահանդեսները: Ցուցադրված 40 գեղանկարները

<sup>123</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 28:

<sup>124</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 30:

<sup>125</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 41, թ. 35-36:

<sup>126</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 56, թ. 11:

<sup>127</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 41, թ. 19:

<sup>128</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 41, գ. 56, թ. 10:

<sup>129</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 7, թ. 12:

Նկարիչները նվիրաբերում են հայրենիքին, բացի այդ, միության նախագահ Ռ. Թաշչյանը Երևանի ժամանակակից արվեստի թանգարանին է նվիրում ամերիկացի նկարիչ Գեորգի Կեպելչի «Կոմպոզիցիա» նկարը և Ջին Տոկի երկու գրաֆիկական աշխատանքները: Կոմիտեն կազմակերպում է նաև լիբանանահայ լուսանկարիչ Յովհաննես Շիրազի աշխատանքների ցուցահանդեսը<sup>130</sup>:

1986թ.-ին մեկ ամսով Հայաստան է ժամանում Կանադայի գեղարվեստի ակադեմիայի անդամ Արմանո Թաթոյանը: Այդ ընթացքում նրան հաջողվում է ստեղծել 19 գեղանկար, որոնք նախատեսում էր ցուցադրել Կանադայում<sup>131</sup>: Նույն շրջանում տեղի է ունենում նաև Իոլանտ Տեր-Հարությունյանի «Հայաստանի ծաղիկներ» խորագրով ցուցահանդեսը: Հետևելով ամուսնու՝ հորեն Տեր-Հարությունյանի օրինակին՝ նա ցուցադրված բոլոր գեղանկարները նվիրաբերում է հայրենիքին<sup>132</sup>:

**Պարարվեստի բնագավառ:** 1981թ.-ին Ֆրանսահայ երիտասարդական միության պարախմբին հայկական պարեր սովորեցնելու նպատակով ֆրանսիա է գործուղվում Հայաստանի պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավար, հանրապետության ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանը<sup>133</sup>: Հաջորդ տարվա ընթացքում նշանավոր պարուսույցն այցելում է Ֆրանսիա՝ Մարսելի հայկական պարի ինքնագործ խմբերին հայկական-ժողովրդական նոր պարեր սովորեցնելու նպատակով: Նույն նպատակով Կանադա է գործուղվում Ազատ Ղարիբյանը<sup>134</sup>:

1982թ.-ի սեպտեմբերին հայրենիք է ժամանում Բուլղարիայի «Երևան» մշակութային կազմակերպության Վառնայի մասնաճյուղի երգի-պարի անսամբլը և Աշտարակի շրջանում հանդես գալիս հյուրախաղերով<sup>135</sup>:

Խորհրդային Հայաստանի 62-րդ տարեդարձի հանդիսությանը մասնակցելու նպատակով 1982թ.-ի նոյեմբերի վերջերին Փարիզ են մեկնում ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստր Ջոն Կիրակոսյանը և պարի պետական համույթը, որը ելույթներ է ունենում նաև Բելգիայում, Շվեյցարիայում և Անգլիայում<sup>136</sup>:

1983թ.-ին հայրենիք է այցելում Սյունիսենի «Բավարիո» հայ հայրենակցական միության «Էրեբունի» պարախումբը<sup>137</sup>, հոկտեմբերին Ֆրանսիա է մեկնում պարուսույց Ալբերտ Կիզիդյանը, իսկ դեկտեմբերին՝ բալետ պարողների խումբ՝ բաղկացած 40 անդամից<sup>138</sup>:

1985թ.-ին Սոնրեայի հայկական հեռուստաժամի տնօրեն Անդրանիկ Խաչիկյանի հրավերով Կանադա հյուրախաղերի է մեկնում Թաթուլ Ալթունյանի անվան հայկական երգի-պարի պետական անսամբլը<sup>139</sup>:

1986թ.-ին Կիպրոսի Մելթոնյան վարժարան են գործուղվում հայտնի բալետմայստեր Նորայր Մեհրաբյանը և բանաստեղծ Վահագն Դավթյանը<sup>140</sup>, իսկ Մարսելի «Արաքս-Սասուն» պարի համույթի հետ պարապմունքներ անցկացնելու նպատակով Ֆրանսիայի հայկական երիտասարդական միության հրավերով Ֆրանսիա է մեկնում խորեոգրաֆ Փայլակ Սարկիսյանը<sup>141</sup>:

<sup>130</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 13, գ. 41, թ. 6-7:

<sup>131</sup> Տե՛ս, նույն տեղում, ց. 16, գ. 19, թ. 5:

<sup>132</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 6:

<sup>133</sup> Տե՛ս, նույն տեղում, ց. 14, գ. 16, թ. 24:

<sup>134</sup> Տե՛ս, ց. 14, գ. 41, թ. 32-33:

<sup>135</sup> Տե՛ս, նույն տեղում, թ. 39:

<sup>136</sup> Տե՛ս, **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 41, թ. 31:

<sup>137</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 56, թ. 11:

<sup>138</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 13:

<sup>139</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 15-16:

<sup>140</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 13, գ. 41, թ. 6-7:

<sup>141</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 8:

1989թ.-ի հունվարի 31-ից մինչև փետրվարի 18-ը, ինչպես արդեն նշվեց, երևան է այցելում արգենտինահայերի մի խումբ՝ Կարլոս Չոլակյանի գլխավորությամբ: Խումբը հետաքրքիր հանդիպում է ունենում Նաև Վ. Խանամիրյանի և հայ մշակույթի նշանավոր այլ գործիչների հետ<sup>142</sup>: Կոմիտեի երիտասարդական բաժնի կողմից Հայաստանում անցկացվում են Նաև ԱՄՆ-ի «Անդրանիկ» պարային համույթի համերգները: Խումբը մեծ հաջողությամբ ելույթներ է ունենում Ուջանում, Աբովյանում, Գյումրիում և Արմավիրում: Հատկապես նշանակալից էր համույթի երևանյան համերգը Ա. Խաչատրյանի անվան համերգասրահում, որ վերածվում է իսկական արվեստի տոնի<sup>143</sup>:

**Այլ աշխատանքներ:** Արվեստի բնագավառում բացի ակտիվ փոխայցելություններից կարևոր էր սփյուռքահայերի կողմից հոգևոր ու նյութական արժեք ներկայացնող հազվագյուտ իրերի, հայ մեծանուն արվեստագետների արխիվների, գեղանկար-կտավների, հին դրամների և այլ գանձերի տեղափոխումը հայրենիք, որոնք հանձնվում էին Հայաստանի թանգարաններին ու գրադարաններին<sup>144</sup>:

Այսպես, 1982թ.-ին մի շարք պատմական ու գեղարվեստական արժեք ներկայացնող նյութեր հայրենիքին են նվիրաբերում սիրիահայեր Վարուժան Սալաթյանը, Անդրանիկ Այվազյանը, Գրիգոր Բարսեղյանը, Արսիսե Չորյանը, Ռուբեն Պարսամյանը, Գրիգոր Մեծլումյանը, բեյրութահայ Հարություն Թորոսյանը: 1983թ.-ին ամերիկահայ նկարիչ, հասարակական գործիչ Քերո Անթոնյանը Հայաստանի պետական պատկերասրահին է նվիրում հուլանդացի նկարիչ Վան Դեյգի նշանավոր կտավներից մեկը, որն ընդօրինակել էր երիտասարդ Մոնեն: Նկարն անգլահատելի է նրանով, որ համատեղում է երկու մեծ նկարիչների ստեղծագործական միտքը<sup>145</sup>: 1984թ.-ի ապրիլին հայրենիք է ժամանում հունահայ Հակոբ Ճելայանը տիկնոջ հետ և ազգագրական ու կենցաղային իրերի իր հարուստ հավաքածուն նվիրում Սարդարապատի ազգագրական թանգարանին: Ցուցահանդեսի բացման արարողության ժամանակ Հ. Ճելայանը հայտարարում է. «Իմ երազս էր, կյանքիս նպատակը այս բոլոր իրերդնները հավաքել ու Հայաստան առաքել՝ իրեն ծնող վարպետներու և անոնց սերունդներին կենդանի երկիրը, ուր միայն կրնան այս մասուքները ապահով ըլլալ»<sup>146</sup>:

1985 թ.-ին Աղասի Դարբինյանի ջանքերով տարիների ընթացքում հայրենիք են տեղափոխվում գեղանկարներ, քանդակներ, ձեռագիր մատյաններ, արխիվային նյութեր և այլ արժեքներ: Նա իր հետ բերում է Արամ Խաչատրյանի՝ իրեն ու իր տիկնոջը հասցեագրված ձեռագիր նամակները և հանձնում կոմպոզիտորի տուն-թանգարանին: Լիբանանում խորհրդային դեսպանատան միջնորդությամբ կոմիտեին հաջողվում է Նաև հայրենիք տեղափոխել Բենիամին ժամկոչյանի գրադարանը՝ բաղկացած 20.000 կտոր պատմական ու գեղարվեստական մեծարժեք գրքերից, որը հատկացվում է ՀԽՍՀ ԳԱ գրադարանին<sup>147</sup>: Նույն շրջանում հայրենիք է ժամանում «Թեթեյան մշակութային միության» դպրոցի հիմնադիր, ամերիկահայ բարերար Արշակ Տիգրանյանը, որն իր հետ բերում է 5 արժեքավոր ձեռագրեր և 6 հնատիպ գրքեր, որոնք փոխանցում է Մատենադարանին<sup>148</sup>:

Արվեստի բնագավառում ծավալված փոխառնչությունների մեջ կարևոր դեր ունեն Նաև արվեստին նվիրված գիտաժողովների կազմակերպումը: Այսպես, 1981թ.-ին Իտալիայում բացվում է հայ արվեստին նվիրված միջազգային երրորդ գիտաժողովը, որը

<sup>142</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 29, թ. 28:

<sup>143</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 41, թ. 26:

<sup>144</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 41, թ. 29:

<sup>145</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 56, թ. 13:

<sup>146</sup> Նույն տեղում, թ. 9:

<sup>147</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 13, գ. 41, թ. 14:

<sup>148</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 16:

մեծ դեր ու նշանակություն է ունենում հայ արվեստը տարածելու գործում<sup>149</sup>: 1982 թվականին միլանահայության նախաձեռնությամբ Ֆրեզկոյի համալսարանի տարածքում գտնվող Ֆիբի Կանգի արվեստի թանգարանում բացվում է 4-18-րդ դարերի հայ ճարտարապետությանը նվիրված ցուցահանդեսը, իսկ Մարսելում կազմակերպվում է հայկական մանրանկարչության և խաչքարերի ցուցահանդես<sup>150</sup>: 1985թ.-ի սեպտեմբերին տեղի է ունենում հայ արվեստին նվիրված միջազգային 4-րդ գիտաժողովը, որին մասնակցելու նպատակով հայրենիք են ժամանում նշանավոր արվեստագետներ ու գիտնականներ: Մասնակիցների համար «Արևմտյան Հայաստանի հուշարձանները» թեմայով հետաքրքիր զեկուցում է ներկայացնում Արմեն Հախնազարյանը<sup>151</sup>:

Հայրենիք-սփյուռք փոխառնչությունների մեջ մի առանձին շրջան է սկսվում 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո: Փոխվում է համագործակցության ուղղությունը, և սփյուռքահայերի համար գլխավոր նպատակ է դառնում երկրաշարժից տուժածներին օգնության տրամադրումը: Այդ օրերին մեծ արձագանք են ստանում կոմիտեի կազմակերպած բարեգործական համերգները Երևանում (Մարթեն Յորգանց, Հարութ Փամբուկյան) և նկարչական ցուցահանդես-վաճառքները (Լ. Ժամկոչյան, Մառլեն), ինչպես նաև նմանատիպ միջոցառումները սփյուռքի մի շարք գաղթօջայիներում, որոնց ողջ հասույթը տրամադրվում է աղետյալների օգնության ֆոնդին<sup>152</sup>:

Սփյուռքահայ արվեստի գործիչների կատարած աշխատանքը հայրենիքում ստանում էր բարձր գնահատական և այս առումով կարևոր էին 1980թ.-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի սահմանած մրցանակները: 1980-ական թվականների ընթացքում հայրենիքի սահմանած մրցանակներին են արժանանում մի շարք սփյուռքահայեր: ՀԽՍՀ Կոմպոզիտորների միության Կոմիտասի անվան մրցանակին է արժանանում ամերիկահայ անվանի կոմպոզիտոր-խմբավար Համբարձում Բերբերյանը<sup>153</sup>, արգենտինահայ դիրիժոր, դաշնակահարուհի, կոմպոզիտոր Ալիսա Թերզյանը<sup>154</sup>, ամերիկահայ երաժշտագետ, կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը<sup>155</sup>, արգենտինահայ կոմպոզիտոր-խմբավար Ժան Ալմուխյանը<sup>156</sup>: Հայաստանի նկարիչների միության Մարտիրոս Սարյանի անվան մրցանակին են արժանանում համաշխարհային կերպարվեստի խոշորագույն դեմքերից ֆրանսահայ գեղանկարիչ, ֆրանսիական գեղարվեստաց ակադեմիայի անդամ Գառնիկ Չուկումյանը<sup>157</sup>, ամերիկահայ մեծանուն քանդակագործ Խորեն Տեր-Հարությունյանը<sup>158</sup>, լիբանանահայ նկարիչ Պոլ Կիրակոսյանը<sup>159</sup>, ֆրանսահայ անվանի նկարիչ Ռիժար Ժերանյանը<sup>160</sup>, իսկ ՀԽՍՀ Կուլտուրայի մինիստրության սահմանած Պետրոս Ադամյանի անվան մրցանակը տրվում է Նյու Յորքի Մետրոպոլիտենի օպերայի աստղերից երգչուհի Լիլի Չուբասզյանին<sup>161</sup>,

<sup>149</sup> Տե՛ս **Սելիքսթյան Յ. Ու.**, նշվ. աշխ., էջ 415:

<sup>150</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 41, թ. 30:

<sup>151</sup> Տե՛ս Նույն տեղում, թ. 16-17:

<sup>152</sup> Տե՛ս Նույն տեղում, ց. 16, գ. 28, թ. 1-2:

<sup>153</sup> Տե՛ս **Համազասպյան Վ. Ե.**, նշվ. աշխ., էջ 19:

<sup>154</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 41, թ. 20:

<sup>155</sup> Տե՛ս Նույն տեղում, ց. 13, գ. 41, թ. 20:

<sup>156</sup> Տե՛ս Նույն տեղում, ց. 16, գ. 24, թ. 1:

<sup>157</sup> Տե՛ս **Համազասպյան Վ. Ե.**, նշվ. աշխ., էջ 20:

<sup>158</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 14, գ. 41, թ. 20:

<sup>159</sup> Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 875, ց. 13, գ. 41, թ. 21:

<sup>160</sup> Տե՛ս Նույն տեղում, թ. 6:

<sup>161</sup> Տե՛ս **Համազասպյան Վ. Ե.**, նշվ. աշխ., էջ 20:



ամերիկահայ երաժիշտ, երգեհոնահար Պերճ Ժամկոչյանին<sup>162</sup>, անգլիահայ բեմադրիչ, թատերագետ, հասարակական գործիչ Յովհաննես Փիլիկյանին<sup>163</sup>, լիբանանահայ բեմադրիչ և դերասան Վարուժան Խաչյանին<sup>164</sup>:

Այսպիսով, ուսումնասիրելով թեման՝ կարող ենք եզրակացնել.

ա) Չնայած 1980-ական թվականներն աչքի էին ընկնում միջազգային քաղաքական լարված իրադրության և Խորհրդային Միությունում ներքաղաքական խնդիրներով, այնուամենայնիվ անգամ այս պայմաններում արվեստի գործիչներին հաջողվում էր ակտիվ պահել հայրենիք-սփյուռք կապերը: Անգամ 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժին հաջորդող շրջանում սփյուռքահայ արվեստի գործիչներին հաջողվում է համախմբվել և ներդնել ջանքերն աղետի հետևանքների հաղթահարման գործում:

բ) Արվեստի բնագավառում ծավալված փոխառնչություններն ավելի ակտիվ էին ընթանում կերպարվեստի, երգ-երաժշտության, թատրոնի և կինոյի բնագավառներում: Ժամանակաշրջանի առումով կարող ենք առանձնացնել 1980-1983թթ.-ի շրջափուլը, երբ նկատվում էր փոխադաստիարակների ակտիվություն, իրականացվում էին տարաբնույթ միջոցառումներ, ինչն անմիջական կապ ուներ այդ շրջանում համեմատաբար կայուն քաղաքական իրադրության հետ:

գ) 1980-ական թվականներին արվեստի բնագավառում ծավալված ակտիվ փոխառնչությունների շնորհիվ հնարավոր եղավ Հայաստան տեղափոխել արվեստի նշանավոր գործեր և հարուստ գրականություն, որոնք մինչ օրս էլ գտնվում են Մատենադարանում, թանգարաններում և գրադարաններում:

դ) 1980-ական թվականներին կարևոր էր նաև սփյուռքահայ արվեստի գործիչների համար մրցանակների սահմանումը, որը հայրենիքի կողմից պարզև եր սփյուռքահայ արվեստագետների կատարած աշխատանքի դիմաց:

ե) Ի վերջո, 1980-ական թթ.-ի ակտիվ փոխառնչությունների շնորհիվ սփյուռքահայ արվեստի գործիչները ճանաչում էին ձեռք բերում հայրենիքում, իսկ արվեստը հասու էր դառնում հայրենի հանդիսականներին, միարժամանակ լայն հնարավորություն էր ստեղծվում խորհրդահայ արվեստը հասու դարձնելու և տարածելու հայկական համայնքներում, ինչպես նաև օտար հանդիսականների լայն շրջանակներում: Անվաճի լավագույն օրինակներն էին 1981թ.-ին Միչիգանի օպերային թատրոնում անգլերենով ցուցադրված «Անուշ» օպերան, Անգլիայում կայացած հայկական ֆիլմերի փառատոնը, հայ արվեստին նվիրված գիտաժողովների անցկացումը և այլն:

<sup>162</sup> ՏԵՍ ԳԱՍ, ֆ. 875, ց. 14, գ. 41, , թ. 20:

<sup>163</sup> ՏԵՍ Նույն տեղում, ց. 13, գ. 41, թ. 21:

<sup>164</sup> ՏԵՍ Նույն տեղում, թ. 5:

## DIASPORA- HOMELAND CULTURAL RELATIONS IN THE FIELD OF ART IN THE 1980S

**ANI KHACHATRYAN**

*PhD student at the Chair of the History of Armenia, Armenian State Pedagogical  
University after Kh. Abovyan, Member of UYSSA,  
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present and illustrate the interactions between the Homeland and the Diaspora in the 1980s in the field of art. To achieve this goal, we set the following tasks: to explore the main areas of the relations between the Homeland and Diaspora in the field of art, to reveal mutual visits, to explore activity of The Committee for Cultural Relations with the Diaspora and to show the direct impact of all this on the quality of the Homeland-Diaspora relations.

During the research process various methods were used, such as analysis, synthesis, the principle of history, comparison and juxtapose of archival documents and other materials. Exploring the subject-matter theme, we may conclude that in the 1980s, Diaspora-Homeland cultural relations got enhanced and expanded in the field of art. The active relations in this direction contributed to three important aims: consolidating Diaspora Armenian artists around Homeland, transferring valuable works of art and a number of historical heritages to the Homeland, and finally disseminating Armenian works of art of the Soviet Union not only in Armenian communities, but also in the broad spectrum of foreign audiences. The bright examples of the above mentioned were "Anoush" opera show in the United States in 1980 and the Armenian Films Festival in England in 1981, which received good reviews from foreign audiences.

**Keywords:** *The Committee for Cultural Relations with the Diaspora, Homeland-Diaspora cultural relations, Diaspora, preservation of the Armenian identity, art, Armenian Films Festival.*

## КУЛЬТУРНОЕ ВЗАИМОДЕЙСТВИЕ РОДИНЫ И ДИАСПОРЫ В 1980-Х ГГ. В ОБЛАСТИ ИСКУССТВА

**АНИ ХАЧАТРЯН**

*Аспирантка кафедры армянской истории Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, член ОМУСА,  
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – представить и проиллюстрировать взаимодействие между Родиной и Диаспорой в области искусства в 1980-ые годы. Для достижения этой цели мы поставили перед собой задачу изучить основные направления взаимоотношений Родина – Диаспора в области искусства, взаимные визиты, деятельность Комитета по культурным связям с армянами диаспоры и показать их прямое влияние на качество отношений между Родиной и Диаспорой.

В ходе исследования мы применяли много методов (анализ, синтез, принцип истории, сравнение и сопоставление архивных документов и других материалов).

Итак, мы можем сделать выводы, что в 1980-ые годы взаимоотношения Родины и Диаспоры были укреплены и расширены в области искусства. Проведенные активные работы в этом направлении способствовали достижению трех важных целей: консолидации проживающих в диаспоре армян вокруг родины, передачи ценных произведений искусства и ряда исторических ценностей родине, и, наконец, появилась хорошая возможность распространить советско-армянское искусство в армянских общинах и широком спектре зарубежной аудитории. Яркими примерами последних были представленная в 1980-м году в США опера «Ануш» и фестиваль армянских фильмов в Англии в 1981-м году, которые получили положительные отзывы от зарубежного зрителя.

**Ключевые слова:** *Комитет по культурным связям с армянами диаспоры, культурные отношения между родиной и диаспорой, Диаспора, сохранение армянской идентичности, искусство, фестиваль армянских фильмов.*

**ԵՒԻԶԱԿԵՏՊՈՒԼԻ ՆԱՅԱՆԳԸ  
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾԵԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ  
(1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ - 1918 Թ.ՅՈՒՆՎԱՐ)\***

**ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ,  
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[gayane.s.hovhannisyan.1994@mail.ru](mailto:gayane.s.hovhannisyan.1994@mail.ru)

Հոդվածի նպատակն է լուսաբանել 1917 թ.-ի ռուսական երկու հեղափոխություններից հետո Ելիզավետպոլի նահանգի վարչատարածքային բաժանման հիմնախնդիրները, նահանգի կարևորությունն ու նշանակությունը հայկական կողմի առաջ քաշած սահմանաբաժանումների տեսանկյունից: Հետապոտության խնդիրներն են՝ ներկայացնել անդրկովկասյան տարածաշրջանի վարչական փոփոխությունների վերաբերյալ ի հայտ եկած հակասությունները, դրանց վերաբերյալ հայ հասարակական-քաղաքական շրջանակների մոտեցումներն ու առաջարկները, բացահայտել անդրկովկասյան ժողովուրդների Էթնիկ սահմանաբաժանման խնդիրները, ի մասնավորի՝ սահմանաբաժանման հայկական և թյուրք-թաթարական տարբերակները, դրանք պայմանավորող գործոնները:

Հետապոտությունը կատարվել է տարբեր փաստաթղթերի, կյուրթերի և գրականության հետապոտությունների հիմնա վրա, պատմահամեմատական և պատմաբնական մեթոդների կիրառմամբ, ինչը ենթադրում է իրադարձությունների բազմակողմանի վերլուծություն և դրանից բխող համապատասխան եկրակացություններ:

Հետապոտության ընթացքում հանգել ենք այն եկրակացության, որ հայկական կողմն առաջ էր քաշում նահանգի հայաբնակ հատվածների (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի և Չանգեպուրի) միավորումը մեկ միասնական վարչամիավորի սահմաններում՝ հիմք ընդունելով Էթնիկական ու պատմաաշխարհագրական գործոնները, մինչդեռ մահմեդական կողմը կարևորում էր զուտ տնտեսական ու քաղաքական գործոնները: Հարկ է նկատել նաև, որ հենց տարածաշրջանի վարչատարածքային չլուծված հիմնախնդիրներն էին, որ անդրկովկասյան երկրների անկախության հռչակումից հետո հիմք հանդիսացան միջէթնիկ բախումների և ադրբեջանական կողմի Էթնիկ պտումների քաղաքականության համար ինչպես այլ հայաբնակ նահանգների, այնպես էլ Ելիզավետպոլի նահանգի տարբեր հատվածներում:

**Հիմնաբառեր՝** ռուսական հեղափոխություններ, անդրկովկասյան տարածաշրջան, վարչատարածքային բաժանում, վեմստվո, Ելիզավետպոլի նահանգ, սահմանաբաժանում, Էթնիկական սկզբունք, պատմաաշխարհագրական գործոն:

1917 թ.-ի փետրվարին ցարական ինքնակալության տապալումը քաղաքական նոր իրադրություն առաջացրեց ինչպես Ռուսաստանում, այնպես էլ անդրկովկասյան տարածաշրջանում: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն, որը լուծարեց տեղական կառավարման մարմինները: Մարտի 9-ին լուծարվեց նաև Կովկասի փոխարքայությունը և ստեղծվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե՝ Օզակոմ (Особый

\* Հոդվածը ներկայացվել է 12.02.2020թ., գրախոսվել՝ 30.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

Закавказский Комитет), որի կազմի մեջ մտան երկրամասի հիմնական ազգությունները ներկայացնող Պետական դումայի հինգ անդամներ: Ժամանակավոր կառավարության հռչակած ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքն Անդրկովկասի քաղաքական կուսակցություններին հնարավորություն տվեց քննարկելու երկրամասի ազգություններին հուզող մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ ազգային, ագրարային, սոցիալական և հատկապես վարչատարածքային: Վերջինը տարածաշրջանի համար չափազանց մեծ կարևորություն ուներ, ուստի պատահական չէր, որ ժամանակակիցների բնութագրմամբ՝ «1917 թ.-ին այն կազմում էր Այսրկովկասի ժողովուրդների կենտրոնական մտահոգությունը»<sup>165</sup>:

Հարկ է նկատել, որ քննարկվող ժամանակաշրջանում երկրամասի վարչատարածքային բաժանման խնդիրը կապվում էր հիմնականում տեղական ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոների ստեղծման ու կայացման հիմնահարցի հետ: Խնդիրը լուծելու նպատակով 1917 թ.-ի գարնանը Պետրոգրադում Ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվում է տեղական ինքնավարությունների մի հանձնախումբ՝ Բ. Վեսելովսկու նախագահությամբ: Հանձնախմբի քննարկած ենթարկված հայկական նախագիծը կազմվել էր Հ.Յ.Դաշնակցության կողմից (հեղինակներ Ա. Շահխաթունյան և Ա. Խատիսյան), և չնայած վրաց և մահմեդական կողմերի առարկություններին՝ այն, այնուամենայնիվ, որոշակի փոփոխություններով հավանության արժանացավ և ընդունվեց որպես կառավարական օրինագիծ<sup>166</sup>: Այդ օրինագիծն իր հերթին ուղարկվեց Թիֆլիս՝ Օգակովին՝ մեկ ամսվա ընթացքում վերջնական որոշմամբ հետ վերադարձնելու նպատակով: Այդտեղ նախագծի քննությունը տրվեց մեկ այլ հանձնախմբի, որը, թեև, երկարատև խորհրդակցություններ անցկացրեց, սակայն, վրացական և կովկասյան թյուրք-թաթարների համատեղ դիմադրության հետևանքով վերջնական նոր իրադրության՝ Յոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով, որից հետո առավել ակնհայտությամբ դրսևորվեցին երկրամասի երեք ազգությունների և նրանց ներկայացնող հիմնական քաղաքական կուսակցությունների միջև առկա հակասություններն ու խնդիրները:

Հեղաշրջումից հետո՝ 1917 թ.-ի նոյեմբերի 15-ին, Անդրկովկասի ամենաազդեցիկ երեք կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, հայ դաշնակցականները և մահմեդական մուսաֆաթականները, ստեղծեցին իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ: Թեև այն երկրամասի ժողովուրդներին հղած իր առաջին դեկրետում հայտարարում էր, որ տարածաշրջանի ազգային խնդիրները պետք է վճռվեն ազգությունների ինքնորոշման իրավունքի հիման վրա<sup>168</sup>, սակայն ակնհայտ էր որ այդ խնդրի լուծումը գործնականում ոչուրին չէր՝ պայմանավորված առաջին հերթին երկրամասի ժողովուրդների տարբեր քաղաքական կողմնորոշումներով և տարածքային-սահմանային խնդիրներով:

Վերջապես նոյեմբերի 24-ին Ներքին գործերի նախարարությանը կից հանձնաժողովի խորհրդակցությունը երկարատև քննարկումներից հետո որոշում է ընդունում տեղական ինքնակառավարման նոր մարմիններ հաստատել Անդրկովկասի

<sup>165</sup> Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր 3-րդ (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 613:

<sup>166</sup> Մանրամասն տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 1, թ. 19-20, **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 23-24:

<sup>167</sup> Տե՛ս **Մելիքյան Վ.**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917թ. նոյեմբեր-1918 թ. փետրվար), Երևան, 2010, էջ 132-133:

<sup>168</sup> Տե՛ս «Հորիզոն», 19 նոյեմբերի 1917 թ.:

այն նահանգներում, որտեղ չկային սահմանների վերանայման խնդիրներ: Իսկ որպես այդպիսի տարածքներ ճանաչվեցին Բաթումի ու Ղաղստանի շրջանները, Բաքվի, Քուբայիսի և Սևծովյան նահանգները, Սուխումի ու Չաբաթալայի օկրուգները, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի, Սոլախի, Թելավի, Թիանթթի, Ղուշեթի, Գորիի և Ախալցխայի գավառները, Կարսի շրջանի Արդահանի և Օլթիի օկրուգները<sup>169</sup>:

Ինչպես կարելի է հասկանալ այս ցանկից, անդրկովկասյան հայահոծ մի շարք գավառներ սահմանների տեսակետից համարվում էին վիճելի, այդ թվում՝ Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի, Գանձակի նահանգի Գանձակի, Ղազախի, Ջևանշիրի, Շուշիի, Չանգեզուրի և Կարյազխոյի, Կարսի շրջանի Կարսի ու Կաղզվանի գավառները, ինչպես նաև Երևանի նահանգը: Նոյեմբերի 24-ի հրամանագրում ամրագրված էր նաև, որ մեկ ամսվա ընթացքում վիճելի նահանգներում ու գավառներում պետք է իրականացվեին նոր վարչատարածքային փոփոխություններ<sup>170</sup>:

Վերոնշյալ հռչակագրի ընդունումից հետո Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից ձևավորվում է հատուկ հանձնաժողով, որն իր աշխատանքներն ավարտում է 1918 թ.-ի հունվարին՝ ընդունելով «Անդրկովկասի զեմստվային հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը»<sup>171</sup>: Ըստ Եռլթյան, գործնականում զեմստվուներ մտցվեցին երկրամասի վրացական և մահմեդական շրջաններում՝ այդպիսով կարծես վերջնականապես լուծելով այդ տարածքների էթնիկ սահմանաբաժանման խնդիրը, մինչդեռ հայկական շրջանները հայտարարվեցին վիճելի՝ անորոշ սահմանային խնդիրներով: Այդ հանգամանքն ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները՝ անդրկովկասյան երեք ժողովուրդների միջև ի հայտ եկած տարածքային-սահմանային խնդիրներում:

Այժմ քննության ամենք Անդրկովկասի վարչական բաժանման հայկական նախագիծը՝ Նախևառաջ Նշենք, որ հայ հասարակական-քաղաքական շրջանակները տարածաշրջանի վարչատարածքային բաժանումների հիմքում ի սկզբանե դրել էին ազգային-էթնիկական սկզբունքը՝ հաշվի առնելով նաև պատմական, տնտեսական և աշխարհագրական գործոնները: Այդ սկզբունքները գոնե առերևույթ ընդունելի էին նաև վրաց-մահմեդական կողմի և կենտրոնական իշխանությունների համար: Անդրադառնալով այս խնդրին՝ անհրաժեշտ է նկատել, որ հատկապես բարդ էր ազգային-էթնիկական սկզբունքի խնդիրը, քանզի տարածաշրջանի ազգային կազմը ամենևին միատարր չէր, ինչը մեծապես պայմանավորված էր տասնամյակներ շարունակ ցարական իշխանությունների վարած էթնիկ «համահարթեցման» քաղաքականությամբ:

Ըստ այդմ հայկական կողմի նախագիծը տարածվում էր Անդրկովկասի առավել հայաբնակ հատվածների՝ ամբողջ Երևանի նահանգի, Թիֆլիսի նահանգի հարավային և Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան հատվածների վրա: Համաձայն դրա Հայաստանը պետք է բաղկացած լիներ երեք՝ Երևանի, Ալեքսանդրապոլի ու Գանձակի նահանգներից: Դրանցից Երևանի նահանգը պետք է բաժանվեր վեց (Էջմիածին, Երևան, Նոր-Բայազետ, Շարուր, Նախիջևան և Սուրմալու), Ալեքսանդրապոլի նահանգը՝ հինգ (Ալեքսանդրապոլ, Ախալքալաք, Լոռի, Կարս և Կաղզվան) և Գանձակի նահանգը՝ չորս (Քարվանսարա, Գանձակ, Շուշի ու Չանգեզուր) գավառների<sup>172</sup>:

1867 թ.-ին Ալեքսանդր II-ի հրամանագրով կազմավորված Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ մտնում էին Բաքվի նահանգի Նուխիի և Շուշիի, Թիֆլիսի

<sup>169</sup> Տե՛ս **Մելիքյան Վ.**, նշվ. աշխ., էջ 137:

<sup>170</sup> Տե՛ս «Աշխատավոր», 2 դեկտեմբերի 1917 թ.:

<sup>171</sup> Մանրամասն տե՛ս **Մելիքյան Վ.**, նշվ. աշխ., էջ 138-142:

<sup>172</sup> Տե՛ս **Աբեղեան Ա.**, Մենք եւ մեր հարեւանները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», 1928, N 4, թ. 96-97:

Նահանգի Ելիզավետպոլի և Երևանի նահանգի Օրդուբադի գավառի մի մասը: Հյուսիսում նահանգը սահմանակցում էր Թիֆլիսի նահանգին, Չաքաթայայի օկրուգին և Դաղստանի մարզին, արևելքում Բաքվի նահանգին, իսկ հարավում Արաքս գետով Պարսկաստանին: Նահանգը բաժանված էր ութ գավառի՝ Արեշի, Ելիզավետպոլի, Չանգեզուրի, Կարյագինոյի (Չեբրայիի), Ղազախի, Նուխիի, Շուշիի և Ջևանշիրի<sup>173</sup>: Նկատելի է նաև, որ նահանգի կազմում էին Լեռնային Ղարաբաղն ու Չանգեզուրը, որոնց հոծ հայ բնակչությանը հակակշռելու համար նպատակ ունեին Միլլի ու Մուղանի հարթավայրերի մի մասը միացնել Ղարաբաղին և դրանք ներառել նորաստեղծ նահանգի կազմում<sup>174</sup>:

Երկրամասի հիմնական կրոնական և էթնիկ խմբերն էին մահմեդականներն ու հայերը, առավել փոքրաթիվ էին ռուսները, քրդերը, եզդիները, վրացիները, կովկասյան լեռնականները, հրեաները, գերմանացիները: 1914 թ.-ին դրությամբ նահանգի ամբողջ բնակչության (1175836 մարդ) 59.6%-ը կամ 700387-ը կազմում էին մահմեդականները, 33.7%-ը կամ 396815-ը հայեր էին, 3.1%-ը կամ 36647-ը՝ ռուսներ<sup>175</sup>:

Նահանգի էթնիկ կազմը պայմանականորեն բաժանվում էր երկու հիմնական հատվածի՝ լեռնային կամ հարավարևմտյան և Կուրի ու Արաքսի հարթավայրային հատվածների: Ընդ որում, դրանցից առաջինն իրենից ներկայացնում էր գերազանցապես հայերով, իսկ երկրորդը՝ մահմեդականներով բնակեցված տարածքներ: Այդ է պատճառը, որ հայ հասարակական-քաղաքական շրջանակներն առաջարկում էին երկրամասի վարչական բաժանման հիմքում դնել Նրա երկու՝ լեռնային ու հարթավայրային հատվածների բաժանումը<sup>176</sup>: Այդպիսի տարանջատումը պայմանավորված էր ազգությունների ինչպես էթնիկական և պատմաաշխարհագրական, այնպես էլ տնտեսավարման կացութաձևերի առանձնահատկություններով: Բանն այն է, որ թյուրք-թաթարական ցեղերի տարածաշրջան ներթափանցելուց հետո հայերն աստիճանաբար տեղափոխվել ու կենտրոնացել էին նահանգի լեռնային հատվածներում: Այդ հանգամանքն ուներ նաև իր կարևոր բնատնտեսական հիմքը. թյուրք-թաթարները իրենց գոյության ամբողջ ընթացքում վարել էին գերազանցապես քոչվոր կենցաղավարություն՝ զբաղվելով հիմնականում անասնապահությամբ: Բարձր լեռնային գոտիները թողնելով հայերին՝ եկվորները հիմնականում կենտրոնացել էին հարթավայրային շրջաններում: Իհարկե, հայկական լեռնային գոտիները նրանց համար ևս ունեին կարևոր նշանակություն՝ որպես ամառային արոտավայրեր, և այս հանգամանքը երկրամասի վարչատարածքային բաժանումների խնդրում մշտապես արծարծվում էր մահմեդականների կողմից:

Այսպիսով, ըստ հայկական կողմի ներկայացրած վարչատարածքային փոփոխությունների ծրագրի, Ելիզավետպոլի նահանգի բաժանումից հետո պետք է ստեղծվեին երկու նոր նահանգներ՝ լեռնային կամ հայկական և հարթավայրային կամ մահմեդական: Ելիզավետպոլ (Գանձակ) քաղաքը ընկած էր այդ երկու շրջանների միջև և Գանձակ գետով բաժանվելու էր հայկական ու մահմեդական հատվածների:

Հայկական Գանձակ նահանգը բաղկացած էր լինելու հետևյալ շրջաններից.

- Զարվանսարայի գավառ, որի կազմում պետք է մտնեին Ղազախի գավառի հետևյալ գյուղական հասարակությունները (I, II, III, IV գավառամասերի որոշ

<sup>173</sup> Ст'ю Обзор Елизаветпольской губернии за 1913 год, Тифлис, 1915, ст. 11.

<sup>174</sup> Ст'ю **Ռուբեն**, Գանձակ-Ղարաբաղի վեճը, «Դրօշակ», 1926, N 2, թ. 46:

<sup>175</sup> Հաշվարկները կատարված են ըստ "Кавказский календарь на 1915 год" տարեգրքի, տե՛ս Кавказский календарь на 1915 год, Пространство и население Кавказского края к 1-му января 1914 г. (коренное и вр. проживающее), Тифлис, 1914, ст. 226-233.

<sup>176</sup> Ст'ю **Шахатунян А.**, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, ст. 126.

հատվածներ)՝ Բարանայի, Բաշքենդի, Ղուլայի, Հախումի (Թաթիքենդ), Տավուշի (Թովուզի), Հին Դիլիջանի, Նոր Դիլիջանի, Ղարաղոյունլի, Կոթիգեդի (Կոթքենդ), Ոսկեպարի (Աբսիբարա), Միխայլովկայի, Ճամբարակի, Ուզունթալայի, Զարվանսարայի և Սևբարի (Ղարադաշ):

- Գանձակի գավառ, որը ներառելու էր Ելիզավետպոլի գավառի հետևյալ գյուղական հասարակությունները՝ (III գավառամասը առանց Գյորանբոյ Ախմեդլիի, Չեյվայի և Մինգեչաուրի գյուղական հասարակությունների, Ֆրեզևոյի գյուղական հասարակությունը՝ IV գավառամասից) Ելենենդորֆի, Միխայլովկայի, Բանանցի (Բայան), Դամջալուի, Փիփի (Չագլիկ), Դաստափորի, Աղջաքենդի (Արցախի Վերին շեն և Ներքին շեն գյուղերի թրթրական անվանումը), Պարիսի, Էրթեջի, Չարդախլուի, Գետաբեկի, Սլավյանկայի, Մեքսիսլիի, Ղարամուրադի (Այրում), Նովոսարատովկայի, ինչպես նաև Գանձակ քաղաքի հայկական հատվածը:
- Շուշիի գավառ, որի կազմի մեջ էին մտնելու Շուշիի գավառի I գավառամասը՝ առանց Գյուլափուլի գյուղական համայնքի, II գավառամասը՝ առանց Սկրբելևկայի գյուղական հասարակության և Արբադուզ գյուղի, Ջանաշիրի գավառի հետևյալ հատվածները՝ III գավառամասն առանց Մարաղայի գյուղական հասարակության, Թալիշի գյուղական հասարակությունը՝ II գավառամասից, Չանգեզուրի գավառից հետևյալ հատվածը II գավառամասից. Ջիջիմուլի մի մասը (Ղուշչիլար, Մազուբլի, Սաֆյան, Մելիքփայասի, Բաղըրբեկի գյուղերը), Բերդաձորի (Ղալադարասի) և Հաջիսամուլի գյուղական հասարակությունները, Կարյազինոյի գավառից երեք գյուղական հասարակություններ՝ Հադրութի, Իտելեցիքի (Էդիլլու) և Առաքյուլի:
- Չանգեզուրի գավառ, որի կազմի մեջ կմտնեն այդ գավառի մնացած մասերն առանց հետևյալ գյուղական հասարակությունների՝ Թեմուր-Մուսկանլի, Դոնդորի, Շիվեն, Խոջաղա, Մոլլաբուրունի և Ռաբանդ<sup>177</sup>:

Այսպիսով հայկական այս նոր նահանգը պիտի կազմված լիներ չորս գավառներից՝ Զարվանսարայի, Գանձակի, Շուշիի և Չանգեզուրի: Նախագծի համաձայն նոր նահանգի վարչական կենտրոնը պիտի լիներ նախկին Ելիզավետպոլ քաղաքի հայկական մասը՝ Գանձակ անվամբ:

Հարկ է ընդգծել, որ Անդրկովկասի վարչատարածքային բաժանման ինդրում հայկական կողմը մեծապես կարևորում էր նաև տնտեսական զարգացման հեռանկար ունեցող ազգային տարածքի ստեղծումը: Հայկական կողմի տնտեսական ծրագիրն առավելապես գյուղատնտեսական էր՝ նկատի ունենալով հատկապես նրա երկու գլխավոր ճյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը: Այս առումով հայկական նախագիծը կարևորում էր Ելիզավետպոլի նահանգի տնտեսական դերը. մասնավորապես նահանգի կազմում գտնվող Լեռնային Գանձակը, Ղարաբաղն ու Գետաբեկը հայտնի էին իրենց պղնձահանքերով: Նահանգի տարածքում զարգացած էր նաև շերամապահությունը (հատկապես Շուշի և Չանգեզուրի գավառներում): Նահանգն արգասաբեր էր նաև հացահատիկային մշակաբույսերի աճեցման տեսանկյունից: Ինչ վերաբերում է քաղաքային կյանքին ու մշակույթին, ապա այս ինդիորը հայության համար պիտի փորձեին լուծել Երևան քաղաքը և Գանձակի (Ելիզավետպոլ) հայկական մասը<sup>178</sup>:

Նահանգի մահմեդական հատվածը, ըստ հայկական ծրագրի, պետք է բաղկացած լիներ հետևյալ գավառներից.

- Նուխիի գավառ, որին պետք է միացվեին Արեշի գավառից հետևյալ գյուղական համայնքները՝ Հաջալի, Բեգլարքենդ, Ղայաբաշի և Բոյուբ-Սոգուբլի:

<sup>177</sup> Տե՛ս «Кавказское слово», 1917, NN 227, 229, նաև՝ Шахатунян А., указ. соч., ст. 128-130,

Ասանուն Դ., Վարչական բաժանումը Անդրկովկասում, «Գործ», 1917, N 9-10, թ. 172-173:

<sup>178</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 104, թ. 71:



- Ելիզավետպոլի գավառ, որի մեջ պետք է մտնեին այն գյուղական համայնքները, որոնք դուրս էին մնացել հայկական Գանձակ գավառից:
  - Բարդայի գավառ, որի մեջ պետք է լինեին Շուշիի գավառից դուրս մնացած գյուղական համայնքները (Աղղամ, Գեոթթալա (Գեոթթափա), Ջանգիշալ, Բիասլի, Ղարախանլի, Սարիջալի-Ղուզուլի, Շիխյար-Քարվենդ, Նովրուզլի, Հինդարի, Լեմբարան և Գյուլափիլի), Ջևանշիրի գավառի I գավառամասն ամբողջությամբ, II գավառամասը՝ առանց Թալիշ համայնքի և III գավառամասից Մարաղայի համայնքը:
  - Արեշի գավառ՝ կազմված Արեշի գավառի չհիշատակված գյուղական համայնքերից:
  - Կարյազինոյի գավառ՝ առանց Շուշիի գավառին միացված Կարյազինոյի երեք գյուղական համայնքների, Գանձակի նահանգին չմիացված Չանգեզուրի գավառի վեց գյուղական համայնքները, ինչպես նաև Շուշիի գավառից դուրս մնացած գյուղական համայնքները (Սկորբեյլկայի, Աֆաթիի, Խոջավենդի, Խալֆարադի, Կարադողլի, Ղաջար):
  - Ղազախի գավառ, որի մեջ պետք է մտնեին Քարվանսարայի գավառի կազմում չմտած Ղազախի գավառի գյուղական համայնքները<sup>179</sup>:
- Ելիզավետպոլի նահանգի նմանատիպ վարչատարածքային բաժանման դեպքում նոր նահանգները կունենային հետևյալ էթնիկ պատկերը<sup>180</sup>.

**Գանձակի նահանգ (աղյուսակ 1)**

Գավառներ	Ամբողջ բնակչ.	Հայեր	Տոկոս. հարաբ.	Մահմեդակ.	Տոկոս. հարաբ.	Այլ ազգություն	Տոկոս. հարաբ.
Քարվանսարա	74000	61000	83	9000	11	4000	5
Գանձակ	114000	67000	59	29000	25	18000	16
Շուշի	213000	150000	70	58000	27	5000	3
Չանգեզուրի	127000	88000	69	38000	30	1000	1
Շնդհանուր	528000	366000	70	134000	25	28000	6

**Ելիզավետպոլի նահանգ (աղյուսակ 2)**

Գավառներ	Ամբողջ բնակչ.	Հայեր	Տոկոս. հարաբ.	Մահմեդակ.	Տոկոս. հարաբ.	Այլ ազգություն	Տոկոս. հարաբ.
Նուխի	220000	40000	18	163000	74	17000	8
Ելիզավետպոլ	171000	6000	4	156000	91	9000	5
Բարդա	95000	3000	3	92000	97	-	-
Կարյազինո	123000	-	-	119000	97	4000	3
Արեշի	74000	4000	5	70000	95	1000	2
Ղազախի	64000	-	-	63000	98	-	-
Շնդհանուր	747000	53000	7	663000	89	31000	4

Ինչպես նկատելի է աղյուսակներից, նոր կազմավորվող նահանգներում հայերն ու մահմեդականները լինելու էին բնակչության գլխավոր էթնիկ խմբերը (համապատասխանաբար 70 և 89%)՝ զգալի գերակշռություն ունենալով այլ ազգությունների նկատմամբ: Վիճակագրական այս տվյալների կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ նահանգի լեռնային հատվածներում հայերը միակ նստակյաց ժողովուրդն էին և նրանց թիվը առավել արժանահավատ էր, ի

<sup>179</sup> Տե՛ս «Кавказское слово», նույն տեղում, նաև՝ Шахатунян А., նույն տեղում, Անանուն Դ., Վարչական բաժանումը Անդրկովկասում, նույն տեղում:  
<sup>180</sup> Տե՛ս Шахатунян А., указ. соч., ст. 131.

տարբերություն մահմեդական բնակչության, որոնց թիվը զգալիորեն փոփոխական էր՝ շնորհիվ պարբերաբար տեղի ունեցող քոչվորական տեղաշարժերի<sup>181</sup>:

Իսկ ինչպիսի՞ մոտեցումներ ունեռ մահմեդական կողմը նահանգի վարչատարածքային բաժանումների առկայությամբ: Երկրամասի վարչական բաժանման մահմեդական կողմի նախագիծը կազմվել էր Օզակոմին կից վարչական բաժանման հանձնաժողովի ներկայացուցիչ Ա. Շեյխ ու Իսլամովի կողմից: Ըստ այդ ծրագրի<sup>182</sup> Ելիզավետպոլի նահանգը պետք է բաժանվեր տասներկու գավառների (կանտոնների) այնպես, որ երեք գավառներ (Քարվանսարա, Գանձակ և Շուշի) ունենային հայկական մեծամասնություն, մեկ գավառ (Չանգեզուր) պետք է մնար անփոփոխ, իսկ ութ գավառներ (Կարյազինո, Ղազախ, Ելիզավետպոլ, Ադրամ, Արեշ, Նուխի, Վերին Ղազախ և Ջևանշիր) լինեին թյուրք-թաթարական մեծամասնությամբ: Եթե համեմատելու լինենք այդ ծրագիրը հայկական նախագծի հետ, ապա ի հայտ կգան մի շարք էական տարբերություններ.

- Նախ Գանձակ քաղաքի հայկական մասը, որը, ըստ հայկական կողմի, պետք է դառնար համանուն գավառի և նահանգի կետրոն մնում էր մահմեդական Ելիզավետպոլի գավառում:
- Ջևանշիրի գավառը, որը հայկական ծրագրի համաձայն, բաժանման ենթարկվելով այլևս դադարում էր գոյություն ունենալ այդ անունով (նրա մի մասը միացվելու էր Շուշիի գավառին, իսկ մյուս մասից պիտի կազմակերպվեր Բարդայի գավառը), մահմեդական ծրագրով շարունակելու էր պահպանել իր անունն ու գոյությունը՝ որպես մի շրջան, որն ընդգրկելու էր III գավառամասի բարձր լեռնային հատվածը (ամառային արոտատեղիները) և Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի հարևան մասը (Բասարգեչարի և Մազրայի գյուղական համայնքերը):
- Կազմվելու էր Նոր Վերին Ղազախի գավառը, որն ընդգրկելու էր Ղազախի ու Գանձակի գավառների բարձր լեռնային մասերը (ամառային արոտատեղիները) և Նոր Բայազետի գավառի Ջիլի գյուղական համայնքը:
- Մահմեդական ծրագրով համաձայնեցված էր, որ Կարյազինոյի գավառի երեք գյուղական համայնքեր (Յադրութ, Էդիլու և Արաթյու) միացվեն Շուշիի գավառին: Մահմեդական ծրագրով Նուխիի և Արեշի գավառները մնում էին անփոփոխ, այն դեպքում, երբ հայկական ծրագիրը պահանջում էր, որ Արեշի գավառի հայ գյուղերից մի քանիսը կցվեն Նուխիի գավառին<sup>183</sup>:

Ինչպես կարելի է նկատել, մահմեդական ծրագիրը շեշտադրել էր հատկապես տնտեսական խնդիրները. ծրագրի համաձայն երկու գավառներ՝ Վերին Ղազառը և Ջևանշիրը, պետք է ստեղծվեին գերազանցապես ամառային արոտատեղիներից: Ընդ որում, դրանց տարածքը պետք է ընդարձակվեր ի հաշիվ Նոր Բայազետի գավառի: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ապացուցում է, որ մահմեդական կողմի համար չափազանց կարևոր էր ամառային արոտատեղիների խնդիրը և այդ նահանգների ստեղծման ծրագիրը մեծապես պայմանավորված էր հարթավայրերի անասնապահ մահմեդական բնակչությանն ամառային արոտատեղիներով ապահովելու մտայնությամբ՝ դրանք դիտելով որպես հարթավայրային անասնապահության հետագա զարգացման գրավական:

Անհրաժեշտ է նկատել սակայն, որ մահմեդական ծրագրում ամենևին էլ երկրորդական չէր քաղաքական ենթատեքստը. այն պարզապես շղարշված էր

<sup>181</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 443, թ. 47:

<sup>182</sup> Տե՛ս **Անանուն Դ.**, Դարձեալ Անդրկովկասի վարչական բաժանումը, «Գործ», 1917, N 11-12, թ. 202:

<sup>183</sup> Տե՛ս «Кавказское слово», Նույն տեղում, նաև՝ **Шахатунян А.**, Նույն տեղում, **Անանուն Դ.**, Վարչական բաժանումը Անդրկովկասում, Նույն տեղում:

տնտեսական «հիմնավորումներով»: Մահմեդական վարչատարածքային փոփոխությունների ծրագիրը նպատակ էր հետապնդում անխախտ պահել արևելյան Անդրկովկասի մահմեդական բնույթը և արգելք հանդիսանալ հայկական կենտրոնաձիգ նպատակների իրագործմանը: Այդ ծրագիրը հայերին դիտում էր ոչ համախումբ միասնություն՝ առանձին-առանձին շրջաններում: Այն չէր տարրորոշում նահանգի հայկական ու մահմեդական հատվածները, այլ այդ երկու էթնիկ խմբերին ներկայացնում էր «միախառնված» վարչատարածքային միավորներով: Ինչպես իրավմամբ նկատում է Ժամանակի ճանաչված հասարակական գործիչ, պատմաբան Դ. Անանունը (Դ. Տեր-Դանիելյան) «նրանք (մահմեդականները) կամենում էին բաժան-բաժան վիճակի մեջ պահել հայերին և էթե մեզ համար ճանաչում էին հարազատ մի անկյուն, ապա դա գավառական նեղ շրջանն է»<sup>184</sup>:

Մինչդեռ հայկական կողմը հստակ գիտակցելով նահանգի լեռնային հատվածների պատմաաշխարհագրական նշանակությունը՝ որպես պատվար Հայկական բարձրավանդակի և նրա կենտրոն Արարատյան դաշտի պաշտպանության համար Անդրկովկասի վարչաքաղաքական բաժանումներում կարևորագույն դերակատարում էր տալիս այդ երկրամասին՝ ամեն կերպ փորձելով ապահովել նրա գոյությունը հայկական պետության սահմաններում:

Տարածաշրջանի չլուծված վարչատարածքային հիմնախնդիրներն իրենց ամբողջ սրությամբ արտահայտվեցին հատկապես անդրկովկասյան երկրների անկախության հռչակումից հետո: Այդ հակասությունների բարձրակետը Ելիզավետպոլի նահանգի տարբեր հատվածներում 1918-1920 թթ.-ին տեղի ունեցած միջէթնիկ բախումներն էին և թուրք-թաթարական կողմի էթնիկ զտումների քաղաքականությունը, որը հանգեցրեց հայ բնակչության թվաքանակի կտրուկ նվազմանը Նախկին Ելիզավետպոլի նահանգի հայաբնակ շրջաններում: Ինչ վերաբերում է տարածքային-սահմանային խնդիրներին, ապա դրանք այդպես էլ չլուծվեցին ըստ հայկական կողմի նախագծերի կամ առաջարկների: Երկրամասի սահմանային խնդիրները վերջնական լուծումներ գտան ավելի ուշ՝ տարածաշրջանում ռուսական գործոնի վերադարձից հետո միայն՝ իրենց հիմքում ունենալով ոչ թե հայկական, այլ օտար պետությունների քաղաքական առաջնահերթությունները՝ զոհաբերվելով և ծառայելով վերջիններիս շահերի պաշտպանության խնդրին:

## **ELIZAVETPOL GOVERNORATE IN THE TRANSCAUCASIAN ADMINISTRATIVE DIVISION (FEBRUARY 1917-JANUARY 1918)**

**GAYANE HOVHANNISYAN**

*PhD student, Faculty of History, YSU,  
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to explore the problems of administrative division of Elizavethpol governorate after the two Russian revolutions, importance and significance of the region from the point of view of the Armenian side. The objectives of the study are to present the contradictions regarding the administrative changes in the Transcaucasian region, the approaches and proposals of the Armenian public and political circles, to identify the problems of ethnic division of the Transcaucasian nations, in particular the, the variants of the Armenian and Turk-Tatar administrative division, and the factors that determine them.

<sup>184</sup> Տե՛ս Անանուն Դ, Դարձեալ Անդրկովկասի վարչական բաժանումը, Երևան տեղում:

The study was conducted on the basis of various documents, materials and literature studies using historical-comparative and historical-critical methods, which involved a comprehensive analysis and relevant conclusions.

The study concluded that the Armenian side promoted the unification of the Armenian-populated parts of the governorate (including Nagorno-Karabakh and Zangezur) into one administrative border, based on ethnic and historical-geographical factors, while the Muslim side considered only the economic and political factors. It should also be noted that the unresolved administrative-territorial problems of the region gained special importance after the independence of the Transcaucasian countries, which led to ethnic clashes in other Armenian-populated provinces and in various parts of the Elizavetpol governorate.

**Key words:** *Russian revolutions, Transcaucasian region, administrative-territorial division, Zemstvo, Elizavetpol governorate, border division, ethnic principle, historical-geographical factor.*

## ЕЛИЗАВЕТПОЛЬСКАЯ ГУБЕРНИЯ В ЗАКАВКАЗСКОМ АДМИНИСТРАТИВНОМ ДЕЛЕНИИ (ФЕВРАЛЬ 1917 Г. - ЯНВАРЬ 1918 Г.)

ГАЯНЕ ОГАННИСЯН

*Факультет истории ЕГУ, аспирант,  
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение проблем административного деления Elizavetpolskoy gubernii после двух русских революций, важность и значимость края с точки зрения армянской стороны. Задачи исследования - представить противоречия относительно административных изменений в Закавказском регионе, подходов и предложений армянских общественных и политических кругов, выявить проблемы этнического разделения закавказских народов, в частности, вариантов армянского и тюрко-татарского административного деления и факторы, их определяющие.

Исследование проводилось на основе различных документов, материалов и литературных исследований с использованием историко-сравнительных и историко-критических методов, что предполагало всесторонний анализ и соответствующие выводы.

В исследовании сделан вывод о том, что армянская сторона способствовала объединению населенных армянами частей губернии (включая Нагорный Карабах и Зангезур) в одну административную границу, основанную на этнических и историко-географических факторах, в то время как мусульманская сторона рассматривала только экономические и политические факторы. Следует также отметить, что нерешенные административно-территориальные проблемы региона приобрели особую актуальность после обретения закавказскими странами независимости, что привело к этническим столкновениям в других армянонаселенных провинциях и в различных частях Elizavetpolskoy gubernii.

**Ключевые слова:** *русские революции, Закавказский регион, административно-территориальное деление, земство, Elizavetpolskaya guberniya, пограничное деление, этнический принцип, историко-географический фактор.*



**ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԴԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ  
ԱՐԴԻՎԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԴՅՈՒՄ\***

**ԱՐՄԱՆ ԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան,  
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[arman.asryan@yahoo.com](mailto:arman.asryan@yahoo.com)*

**Հոդվածի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքների ֆինանսավորման մեխանիզմների բարելավմանը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ բնակարանային ֆոնդի վերարտադրության համատեքստում բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքները լիարժեք և արդյունավետ ֆինանսավորելու կարևորությամբ: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ վերհանել բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքների ֆինանսավորմանն առնչվող խնդիրները ՀՀ-ում, ուսումնասիրել դրանց պատճառները, հետազոտել այս ասպարեզում միջազգային փորձը, առաջադրել համապատասխան լուծումներ:**

**Համակարգային մեթոդով սահմանվում է բնակարանային ֆոնդը՝ որպես երկրի տարածքում գտնվող բոլոր բնակելի շինությունների ամբողջություն: ՀՀ բնակարանային ֆոնդի վերարտադրության համատեքստում բացահայտվում են երկրում բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքների ֆինանսավորման հետ կապված խոչընդոտները, վերլուծական մեթոդի կիրառությամբ ուսումնասիրվում են դրանց պատճառները: Համեմատական մեթոդի օգնությամբ հետազոտվում է այլ երկրների ունեցած փորձն այս ասպարեզում: Առաջարկվում են ՀՀ-ում բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքների լիարժեք ու արդյունավետ ֆինանսավորում պահանջող համակարգային լուծումներ:**

**Հիմնաբառեր՝** բնակարանային ֆոնդի վերարտադրություն, բազմաբնակարան շենք, բնակելի շինության սեփականատեր, համատիրություն, հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքներ, համաֆինանսավորում, բյուջետային հատկացումներ:


Բնակարանային ֆոնդը տվյալ երկրի տարածքում գտնվող բոլոր բնակելի շինությունների (անկախ դրանց սեփականության ձևից) ամբողջությունն<sup>185</sup> է: Այն իր մեջ ներառում է բազմաբնակարան շենքերի բնակարաններն ու բնակելի տները (առաձևատներ), մասնագիտացված կացարանները (տարեցների, հաշմանդամների,

\* Հոդվածը ներկայացվել է 06.03.2020թ., գրախոսվել՝ 10.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

<sup>185</sup> Ст'ю Пасечнюк, Н. Ю., "Воспроизводство жилищного фонда и улучшение жилищных условий граждан." Сборник научных трудов Sworld 39, no. 4, 2013, с. 75.

վետերանների կեցության համար նախատեսված հատուկ հաստատություններ, հանրակացարաններ և այլն), ծառայողական բնակարանները, ինչպես նաև հասարակական ու արտադրական նպատակային նշանակություն չենքերում առկա բնակելի շինությունները<sup>186</sup>: Բնակարանային ֆոնդի շահագործումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել դրա շարունակական վերարտադրությունը, որն իրականացվում է նոր բնակարանային շենքերի (կամ բնակելի տների) շինարարության, հիմնանորոգման և/կամ արդիականացման աշխատանքների իրականացման միջոցով:

Ներկայումս հիմնանորոգումների և/կամ արդիականացման աշխատանքների իրականացումը (ներառյալ վերակառուցման աշխատանքները) համարվում է բնակարանային ֆոնդի ու հատկապես բազմաբնակարան շենքերի վերարտադրության ամենանախընտրելի ու հեռանկարային տարբերակը<sup>187</sup>: Այս եղանակի հիմքում ընկած է առկա օբյեկտների/կառույցների ֆիզիկական մաշվածության նվազեցման և ամրացման աշխատանքների միջոցով դրանց շահագործման հատկանիշների բարելավումը: Վերարտադրության այս եղանակի նվազ կապիտալատարրությամբ ու ժամանակատարրությամբ (նոր բնակարանային շենքերի կառուցման եղանակի համեմատ) է պայմանավորված թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում բնակարանային ֆոնդերի վերարտադրության նպատակով հիմնային վերանորոգման/արդիականացման աշխատանքների ծավալների նշանակալի աճը բնակարանաշինության ծավալների նկատմամբ<sup>188</sup>:



**Գծապատկեր 1. Բազմաբնակարան շենքերն ըստ շահագործման տարեթվի և կառավարող մարմնի, ՀՀ (աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ)**

<sup>186</sup> Տե՛ս Сироткин, В. А., Руткаускас, Т. К., "Развитие управления воспроизводством жилищного фонда в муниципалитетах." Экономика и предпринимательство (4-1), 2014, с. 334-338.


<sup>187</sup> Տե՛ս Бузырев В. В., "Реновация жилых домов как важный фактор увеличения жизненного цикла жилищного фонда в регионе", Проблемы современной экономики, № 4, 2012, с. 285-288.

<sup>188</sup> Տե՛ս Блех Е.М., Павленков Ю. В., "Альтернативная модель управления капитальным ремонтом многоквартирных домов", Экономика строительства, № 2, 2013, с. 54-62.

**Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը:** ՀՀ բնակարանային տնտեսության ընդհանուր մակերեսը 2018 թվականի վերջին կազմում էր 93.7 մլն քմ, որից 52.7 մլն քմ (56.2%) գտնվում էր քաղաքներում, իսկ 41 մլն քմ-ն (43.8%)՝ գյուղերում: Նույն ժամանակահատվածի դրությամբ բազմաբնակարան շենքերի թիվը ՀՀ-ում 19,174 էր (444,095 բնակարան և 28,487,819 քմ զուամրային մակերես): Գծապատկեր 1, 2, 3-ից պարզ է դառնում, որ ինչպես ողջ ՀՀ-ում, այնպես էլ Երևանում ու մարզերում առկա բազմաբնակարան շենքերի մեջ, անկախ դրանց կառավարման ձևից (համատիրություններ, լիազորագրային/հավատարմագրային կառավարիչներ կամ վերջինների բացակայության դեպքում տեղական ինքնակառավարման մարմին), գերակշիռ մաս են կազմում 1951-1970թթ., 1971-1980թթ. և 1981-1990թթ. շահագործման հանձնված շենքերը: Սա ևս մեկ անգամ ընդգծում է բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման և/կամ արդիականացման աշխատանքների լիարժեք ու արդյունավետ իրականացման կարևորությունը:

ՀՀ-ում վերջին տարիներին հիմնանորոգված և/կամ արդիականացված բազմաբնակարան շենքերի դինամիկան (տե՛ս գծապատկեր 4) ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ չնայած մարզերում հին շենքերի առկայությանը՝ հիմնանորոգման և/կամ արդիականացման աշխատանքները հիմնականում կենտրոնացված են մայրաքաղաքում:


Հարկ է սակայն, հավելել, որ 2017-2018թթ. բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման հարցում զգալի առաջընթաց է նկատվել ինչպես Երևանում, այնպես էլ



**Գծապատկեր 2. Բազմաբնակարան շենքերն ըստ շահագործման տարեթվի և կառավարող մարմնի, Երևան (աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ)**

որոշ մարզերում (Շիրակ, Տավուշ, Կոտայք, Գեղարքունիք և այլն): Նույն պատկերն է արտացոլված առյուսակ 1-ում, որում երևում է, որ 2017-2018թթ. բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման և/կամ արդիականացման ուղղությամբ կատարված ծախսերը մեծացել են թե՛ Երևանում, թե՛ որոշ մարզերում: Բացառություն է միայն Սյունիքի մարզը, որտեղ 2014-2018թթ. բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ուղղությամբ ծախսեր չեն իրականացվել: Սա մի կողմից պայմանավորված է մարզի բնակարանային ֆոնդի մեջ բնակելի տների (առանձնատների) մեծ կշռով, մյուս կողմից՝ համատիրությունների (լիազորագրային/հավատարմագրային կառավարիչների)

բացակայությամբ (ք. Գորիս) կամ փոքր քանակով, ինչը հանգեցրել է բազմաբնակարան շենքերի՝ համայնքապետարանների կառավարման ներքո հայտնվելուն և դրանց հիմնանորոգման աշխատանքների հետին պլան մղվելուն:




**Գծապատկեր 3. Բազմաբնակարան շենքերն ըստ շահագործման տարեթվի և կառավարող մարմնի, ՀՀ մարզեր (աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ)**

**Հետապոտության արդյունքում հանգել ենք երկակացության, որ Հայաստանի Հանրապետությունը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում պետք է առաջնահերթ հենվի հենց գիտելիքի վրա, քանի որ գիտելիքն է գերարժեքի գերարտադրողականության աղբյուրը, որի արդյունքում մեր հանրապետության անցումը գիտելիքահենք հասարակության ենթադրում է քաղաքական, տնտեսական ու կրթական ոլորտի արմատական վերափոխում:**

**Հիմնաբառեր՝** տնտեսություն, տնտեսական աճ, գիտելիք, ազգային նորարարական համակարգ, ինովացիաներ, ՀՆԱ, պետական բյուջե:

Ներկայումս երկարաժամկետ տնտեսական ապահովման գործում կարևորվում է գիտելիքի գործոնը: Գիտելիքը գերարժեքի և գերարտադրողականության աղբյուր է, հետևաբար կարևորվում է այն հանգամանքը, թե ներկայումս ինչպիսին է Հայաստանի պատրաստվածության աստիճանը՝ տնտեսական երկարատև զարգացման խնդիրները լուծելու և գիտելիքի հեղափոխության առաջացրած մարտահրավերներին պատասխանելու համար<sup>213</sup>:

Գիտելիքահենք տնտեսության անցումը ենթադրում է ազգային նորարարական համակարգի ստեղծում, իսկ Հայաստանի տնտեսության անցումը նոր որակական վիճակի՝ ինովացիոն գործունեության ակտիվացում, ինչն իր հերթին պահանջում է հիմնարար փոփոխություններ հասարակական արտադրության, կրթության և աշխատուժի կազմի կառուցվածքում: ՀՀ ինովացիոն համակարգի ձևավորման հիմնադրույթները են:

\* Հոդվածը ներկայացվել է 04.02.2020թ., գրախոսվել՝ 30.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

<sup>213</sup> Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն հնարավորություններ և մարտահրավերներ, Ե., 2008, էջ 178:

- Մարդկային կապիտալը կենտրոնական դեր ունի գիտելիքահեռք տնտեսության կառուցման գործում,
- Հայաստանի համար առավել իրատեսական դիրքավորումը զլորբալ տեխնոլոգիական ընկերությունների հետազոտությունների և մշակումների կենտրոն դառնալն է:

Մեր հանրապետությունում անցումը գիտելիքահեռք հասարակության ենթադրում է քաղաքական, տնտեսական և կրթական ոլորտի արմատական վերափոխում կազմակերպություններից սկսած: Գիտելիքահեռք տնտեսության ձևավորման առաջնահերթ նախապայմանը գիտելիքի հասարակության ու դրան միտված գաղափարախոսության ձևավորումն է:

Գիտատեխնիկական գործունեության արդյունքների գնահատման կարևոր ցուցանիշ է գրանցված արտոնագրերի քանակը: 2017 թվականին մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 110 գյուտի և 40 օգտակար մոդելի հայտ, որից 146-ը՝ ազգային հայտատուներից, 4-ը՝ օտարերկրյա հայտատուներից, իսկ 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4478<sup>214</sup>:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ համակարգիչները, էլեկտրոնիկան և հեռահաղորդակցման պարագաները կազմում են Հայաստան ներմուծվող բարձր տեխնոլոգիական ապրանքների 70-80 տոկոսը, մինչդեռ բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումների բաժինը շատ քիչ է՝ մոտ 2 տոկոս:

Հայաստանի Հանրապետությունում գիտությունը կարևորվում է որպես երկրի անվտանգության ապահովման, կրթության, տնտեսության, մշակույթի և հասարակության առաջընթացի զարգացման բացառիկ գործոն: Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության և տեխնիկայի վաճառման նպատակով տնտեսության մեջ ներդրման խրախուսումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրումը, գիտության ժամանակակից և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը, հայազգիության զարգացմանը նպաստելը:

Վերջին տարիներին էականորեն ընդլայնվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցության շրջանակները:

Ավաճի վառ ապացույցը ՀՀ-ում փայլուն գործունեություն ծավալող «ՍԻՆՈՓՍԻՍ» - «ՄԱՅԶԸՐՈՍՈՖԹ» վերազգային կորպորացիաներն են:

Սինոփսիս ընկերությունը համաշխարհային էլեկտրոնային շուկան համալրում է ծրագրային ապահովման, համակարգերի, կիսահաղորդչային մտավոր սեփականության (ՄՍ) և ծառայությունների նորարարություններով՝ ի պատասխան նախագծման, ստուգման և արտադրության ոլորտում առկա լուրջ մարտահրավերների: Սինոփսիսի՝ իրագործման, ստուգման, մտավոր սեփականության, արտադրության և ծրագրավորվող մատրիցային բյուրեղների (FPGA) լուծումների բազմակողմանի և ինտեգրացված համալիրն ուղղված է նախագծողներին ու արտադրողներին այսօր հանդիպող այնպիսի կարևոր խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ հոսանքի սպառման և արտադրողականության ղեկավարումը, ինչպես նաև արտադրանքի շուկա դուրս բերման ժամկետը: Սինոփսիսը Հայաստանում իր գործունեությունը սկսել է 2004թ.-ին՝ տեղեկատվական տեխնոլոգիաները (SS) երկրի զարգացման գերակա ուղղություն ճանաչելուց հետո: Այդ շրջանից «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն դարձել է «Սինոփսիս» ընկերության կարևորագույն մասնաճյուղերից մեկը: Ներկայումս ընկերությունում աշխատում են հարյուրավոր որակյալ ճարտարագետներ, և այն հանդիսանում է մեր

<sup>214</sup> [https://www.aipa.am/u\\_files/file/AnnualRep/Rep\\_h\\_%202017.pdf](https://www.aipa.am/u_files/file/AnnualRep/Rep_h_%202017.pdf)

երկրում SS ոլորտի խոշորագույն գործատուներից մեկը: Հայաստանը SS ոլորտի՝ բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու նպատակով ընկերությունը ներդրումներ է կատարում SS բնագավառի կրթության ոլորտում և առաջատար ու հաջողված համագործակցության ծրագրեր է իրականացնում հանրապետության մի շարք առաջատար բուհերի՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի (ՌՍՀ) և Մոսկվայի Էլեկտրոնային տեխնիկայի ինստիտուտի (ՄԵՏԻ) հետ<sup>215</sup>:

Ինչ վերաբերում է Մայքրոսոֆթին, ապա պետք է նշել, որ ընկերության հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 2006 թվականին: Ընկերության գործունեության հիմնական ուղղություններից են՝ համագործակցությունը ՀՀ Կառավարության հետ՝ կրթության, առողջապահության, սոցիալական, էլ. կառավարման, մտավոր սեփականության պահպանման և այլ բնագավառներում, տեղական SS արդյունաբերությանը արդի տեխնոլոգիաների և հմտությունների փոխանցման միջոցով աջակցության ցուցաբերումը, գործընկերների էկոհամակարգի ստեղծումը, աջակցությունը տեղական մասնավոր և հասարակական ընկերություններին՝ Հայաստանում SS ենթակառուցվածքի զարգացման գործում, Նոր կատարելագործված բիզնես լուծումների մշակումը, վերապատրաստումն ու սերտիֆիկացումը:<sup>216</sup>

Օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերը նպաստում են հանրապետության գիտնականների ինտեգրմանը միջազգային գիտական ու գիտակրթական տարածք և ստեղծում բարենպաստ պայմաններ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու համար, ինչի արդյունքում զգալիորեն ավելանում են միջազգային կազմակերպությունների կողմից հանրապետություն ուղղված ֆինանսական միջոցները:

Գիտության ոլորտում միասնական բաղաբանականության մշակման և արդյունավետ իրականացման գործում առաջնային լուծում պահանջող հիմնական խնդիրներն են՝

- Գիտության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման նպատակով գիտության ոլորտի պետական կառավարման միասնական մարմնին համապատասխան լիազորությունների տրամադրման հարցը,

- Գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացումը,

- Գիտական ներուժի նպատակային վերարտադրության ապահովումը, գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման, ծրագրային ֆինանսավորման ձևերի հստակեցման, ծրագրերի ընտրությունն իրապես մրցույթով ապահովելը,

- Գիտական հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության ավելացման ապահովումը,

- Գիտական արդյունքի ապրանքայնացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, գիտատեխնիկական գործունեության ասպարեզում միջազգային համագործակցության ընդլայնումը:

Գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումն է: Այդ գործընթացում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը:

Բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից՝ գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, գիտության ոլորտի

<sup>215</sup> <http://itguide.eif.am/index.php?id=77&lang=1#top>

<sup>216</sup> <https://www.microsoft.com/hy-am/about>

ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպման, գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման, նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղություններով:

ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը ենթադրում է պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում. 2017-2018 թվականներին գիտության բյուջեն կազմել է 11.433.1 մլն. դրամ՝ ՀՆԱ-ի 0.25%-ը:

Գիտությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու և դրա առաջանցիկ զարգացման համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման անհրաժեշտությամբ: Բացի այդ, գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը (ինչպես պետական բյուջեից, այնպես էլ տնտեսության մասնավոր հատվածից) զգալիորեն կավելացնի գիտական արդյունքների առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի այդ արդյունքների ներդրմանը տնտեսության մեջ, հնարավորություն կտա զարգացնելու ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ընդ որում, պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտությանը հատկացվող ֆինանսավորման ծավալների մեծացումը պետք է նպատակաուղղված լինի 2020 թվականին եվրոպական միջին չափանիշներին մոտենալուն:

Լշենք, որ տնտեսական աճի նախադրյալների տեսանկյունից կարևորում ենք պետական քաղաքականության իրականացումը: Այս առումով ՀՀ կառավարության գործունեության 2019 թվականի ծրագրով տնտեսական զարգացմանն ուղղված հիմնական ուղեկիշները հետևյալն են՝

- Տնտեսական բնագավառում պետությունը պարտավոր է ստեղծել պայմաններ համախառն ազգային արդյունքի ձևավորման, տնտեսական գործունեության ոլորտում առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար:<sup>217</sup>

- Տնտեսական, բիզնես դաշտը պետք է ձևավորվի ազատորեն՝ անաչառ մրցակցության, հովանավորչության բացառման պայմաններում: Սա նաև աղքատության հաղթահարման առանցքային պայման է. գործարար հմտություններ ունեցող յուրաքանչյուր ոք պետք է բիզնես արդյունք ստեղծելու, ինքն իր և շրջապատի բարեկեցությունն ապահովելու հնարավորություն ստանա հավասար, մրցակցային պայմաններում: Կարևոր է ձևավորել օրենսդրական ու գործնական միջանցք՝ Հայաստանում «գրոյից» տնտեսական գործունեության իրական հնարավորություններ ձևավորելու համար:

Տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձերի բարձրացումը: Համապատասխանաբար, Կառավարության առաջիկա տնտեսական քաղաքականության հիմնական առանձնահատկությունը լինելու է ներառական տնտեսական աճի խթանումը:

Տնտեսությունը պետք է աճի բարձր տեմպերով, ծրագրային ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճի միջին տեմպը պետք է կազմի առնվազն 5 տոկոս: Միաժամանակ տնտեսական զարգացմանը պետք է մասնակցեն զգալիորեն ավելի մեծ թվով քաղաքացիներ, իսկ նրանց աշխատանքի շնորհիվ ստեղծվող տնտեսական

<sup>217</sup> ՀՀ Կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N65-Ա որոշում

արդյունքը պետք է բաշխվի առավել հավասարաչափ: Տնտեսության զարգացումը պետք է ստեղծի քաղաքացիներին արժանավայել աշխատանքով ապահովելու նոր հնարավորություններ: Որակապես նոր մրցունակ աշխատատեղերի ստեղծումը պետք է դառնա մասնավոր հատվածի գործարար ծրագրերին Կառավարության աջակցության հիմնական չափորոշիչներից մեկը: Զբաղվածությունը քաղաքացուն պետք է ապահովի արժանապատիվ եկամուտներով:

Տնտեսության Եական աճի ապահովման կարևորագույն գրավականն է տնտեսական մրցակցությունը և արհեստական մենաշնորհների բացառումը: Ըստ այդմ, Կառավարությունն ապահովելու է տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով:

Ապրանքների և ծառայությունների արտահանման զգալի աճը պետք է դառնա Հայաստանի տնտեսական առաջընթացի հիմնական շարժիչը: Ծրագրային ժամանակահատվածի ավարտին ապրանքների ու ծառայությունների արտահանումը 45 տոկոս ՅԱԿ-ի նկատմամբ պետք է հասնի 43-45 տոկոսի: Միաժամանակ արտահանման կառուցվածքում պետք է զգալիորեն աճի տեխնոլոգիատար ապրանքների դերը:

Ձեռնարկատիրական ակտիվներում մասնավոր ներդրումները կայուն զարգացման կարևոր նախաայման են: Արտադրության միջոցները պետք է շարունակաբար նորացվեն: Նշված գործընթացն անհրաժեշտ ծավալով սպասարկելու հարցում Եական նշանակություն կունենան ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա ներդրումները: Համապատասխանաբար պետք է զարգացվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կխրախուսեն ներքին խնայողությունների ավելացումը և դրանց ներդրումների համար այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը: Հատուկ ուշադրություն կդարձվի օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացման հարցերին:

Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր: Այս նպատակին հասնելու և բարձր տեխնոլոգիաների զարգացումն ապահովելու համար կիրականացվեն նպատակային քայլեր, մասնավորապես՝ ստեղծել ազգային վենչուրային ներդրումային հիմնադրամ, որն ի վիճակի կլինի Հայաստանում գործունեություն ծավալող ստարտափներում կատարելու անհրաժեշտ ներդրումներ՝ դրանց հետագա զարգացումն ու դեպի համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով, դրամաշնորհային ծրագրերի միջոցով նպաստելու ստարտափերի ստեղծմանն ու զարգացմանը, ստեղծելու ձեռներեցության, գործարարական, վաճառքի և մարքեթինգի գիտելիքների զարգացման մեխանիզմներ՝ օգտագործելով միջազգային աթետերատորների հետ համագործակցելու հնարավորությունները, նպաստելու Հայաստանում աթետերատորների ստեղծմանն ու զարգացմանը և մշակելու համատեղ ծրագրեր՝ ստարտափների ինտենսիվ զարգացումն ապահովելու նպատակով և այլն:

Բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման համար Կառավարությունը նախատեսում է՝

- Մշակել և իրագործել բարձր տեխնոլոգիական հայկական ապրանքների ու ծառայությունների՝ արտերկրում առաջխաղացման ու վաճառքի ծրագիր,
- Երևանում ու մարզերում ստեղծել ու զարգացնել տեխնոլոգիական կենտրոններ, ինչպես նաև ապահովել արդեն գոյություն ունեցող կենտրոնների արդյունավետ գործունեությունը՝ այդպիսով ստեղծելով բավարար տեխնոլոգիական և արտադրական հնարավորություններ՝ որպես պլատֆորմ հետագա զարգացման համար,
- Նոր տեխնոլոգիաների և գիտելիքի զարգացման, ինչպես նաև Հայաստանի՝ որպես տեխնոլոգիական կենտրոնի, վարկանիշի բարձրացման նպատակով ապահովել

պայմաններ և ձեռնարկել ակտիվ քայլեր՝ միջազգային բարձր տեխնոլոգիական կազմակերպություններին Հայաստանում ներգրավելու նպատակով,

➤ Նպաստել տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցությանը՝ կադրերի պատրաստման նպատակով:

Կարևորելով տնտեսական աճի ապահովման գործում օրենսդրական դաշտի ամրապայությունը՝ նշենք, որ դեռևս 2016թ.-ին ընդունվել է «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին օրենքը», որը սահմանում է ՀՀ պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման ու իրականացման իրավական ու տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության ձևերը:<sup>218</sup> Ինովացիոն գործունեությանն են վերաբերում գործունեության հետևյալ տեսակները՝

• Տնտեսական շրջանառության մեջ իրացվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված արտադրանքի ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների իրականացում,

• Մարքեթինգային հետազոտությունների իրականացում՝ ինովացիոն արտադրանքի իրացման շուկաների կազմակերպման նպատակով,

• Նոր կամ կատարելագործված ծառայության կամ արտադրանքի ստեղծման նպատակով տեխնոլոգիական վերազինման իրականացում և արտադրության նախապատրաստում,

• Նոր տեխնոլոգիական գործընթացների, արտադրանքի և ապրանքների փորձարկման, ստանդարտացման ու հավաստագրման իրականացում,

• Տեխնոլոգիաների փոխանցում,

• Նոր կամ կատարելագործված տեխնոլոգիայի կիրառման սկզբնական ժամանակահատվածում մինչև ինովացիոն նախագծի հետզնման նորմատիվային ժամկետի լրանալը նոր կամ կատարելագործված արդյունքի, նմուշի արտադրություն,

• Ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծում և զարգացում,

• Մտավոր սեփականության օբյեկտների, գաղտնի գիտական, գիտատեխնիկական և տեխնոլոգիական տեղեկատվության նկատմամբ իրավունքների ձեռքբերում և փոխանցում, ինովացիոն ծրագրերում ու նախագծերում ներդրումների իրականացում:

Պետական ինովացիոն քաղաքականության նպատակն է ինովացիոն գործունեության համար տնտեսական, իրավական ու կազմակերպական պայմանների ապահովումը: Պետական ինովացիոն քաղաքականության ինդիկատորն են՝

• Պետական ինովացիոն քաղաքականության գերակայությունների սահմանումը,

• Տնտեսության տեխնոլոգիական վերազինմանը և ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը,

• Ինովացիոն գործունեության ոլորտում գիտության, կրթության, արտադրության և ֆինանսավարկային կառույցների համագործակցության իրավական հիմքերի ստեղծումը:

Պետական ինովացիոն քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրով (այսուհետ՝ ծրագիր): Ծրագրի իրականացման ֆինանսավորումն արտացոլվում է պետական բյուջեում առանձին տողով: Ծրագիրը ներառում է միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

<sup>218</sup> Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին 2016թ. N 30-63-Ն օրենք

- ✓ Ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում,
- ✓ Ինովացիոն նախագծերի իրականացում,
- ✓ Կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- ✓ Տեխնոլոգիաների փոխանցում և առևտրայնացում,
- ✓ Միջազգային ստանդարտների ներդրում:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի կառավարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ: Ծրագրում ընդգրկվելու նպատակով ներկայացված ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի ներկայացմամբ: Ինովացիոն գործունեության ֆինանսավորումը կամ համաֆինանսավորումը կարող են իրականացվել հետևյալ աղբյուրներից՝ պետական բյուջեից, ինովացիոն գործունեության սուբյեկտների միջոցներից, այդ թվում՝ այլ աղբյուրներից ստացվող միջոցներից, տեղական, օտարերկրյա ներդրողների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներից, վենչուրային հիմնադրամներից:

## **OPPORTUNITIES FOR IMPROVING THE RA NATIONAL INNOVATION SYSTEM AS A SOURCE OF LONG-TERM ECONOMIC GROWTH**

**HOVIK GRIGORYAN**

*Lecturer at the Department of Finance of the  
Armenian State University of Economics, PhD in Economics, Associate Professor,  
Yerevan, Republic of Armenia*

The aim of this article is to propound and substantiate the approach according to which the national innovation system of the Republic of Armenia provides wide opportunities for our state in the context of ensuring economic growth, where the Republic of Armenia, having huge intellectual resources, can use them most effectively in the creation and application of innovative technologies.

Both sociological (analysis, synthesis) and special (formal-logical, comparative-legal) methods were used for the implementation of the research.

Studying the results of our research we concluded that the Republic of Armenia should primarily take into account the knowledge-based opportunities for ensuring long-term economic growth, since the knowledge is the source for the overrun of supreme values, in the result of which our country's transition to a knowledge-based society implies a radical transformation in political, economic and educational sectors.

**Keywords:** *economy, economic growth, knowledge, innovation system, innovations, GDP, state budget.*



# ВОЗМОЖНОСТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ РА КАК ИСТОЧНИК ОБЕСПЕЧЕНИЯ ДОЛГОСРОЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

**ОВИК ГРИГОРЯН**

*Преподаватель кафедры финансов Армянского государственного экономического университета, кандидат экономических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является предложение и обоснование подхода, по которому национальная инновационная система РА предоставляет широкие возможности для государства в контексте обеспечения экономического роста, где РА, имея большие интеллектуальные ресурсы, может наиболее эффективно использовать их в создании и применении инновационных технологий.

В ходе исследования использовались как исследовательские (анализ, синтез), так и специальные (формально-логический, сравнительно-правовой) методы.

В результате исследования мы пришли к выводу, что для обеспечения долгосрочного экономического роста Республика Армения должна опираться именно на знания, поскольку само знание является источником перепроизводства самого ценного. Переход общества нашей республики в общество, основанное на знании, предполагает радикальную трансформацию в политических, экономических и образовательных сферах.

**Ключевые слова:** экономика, экономический рост, знание, инновационная система, инновации, ВВП, государственный бюджет.

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ՌԻՍԿԱՅԼՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԶՅՈՒՄ\***

**ՀՐԱՆՏ ՀԱՅՐԱԴԵՏՅԱՆ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսներ, հաշվապահական հաշվառում ամբիոնի ասպիրանտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն [hrant.hayrapetyan@inbox.ru](mailto:hrant.hayrapetyan@inbox.ru)*

**Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտներից է, որ բացառիկ կարևոր նշանակություն ունի երկրի պարենային անվտանգության ապահովման գործում: Նշվածի հետ մեկտեղ՝ գյուղատնտեսությունը առանձնակի կարևորվում է գյուղական բնակավայրերում եկամուտների ձևավորման, կենսամակարդակի ապահովման, ինչպես նաև գյուղական բնակավայրերի պարզացման համար:**

**Ուսումնասիրության հիմնական նպատակն է բացահայտել գյուղատնտեսության դերն ու նշանակությունը, հիմնախնդիրները, առկա խնդրահարույց իրավիճակները ԶԳ-ում:**

**Ուսումնասիրության առջև դրված խնդիրներն են՝**

**- բացահայտել ոլորտի բարձր ռիսկայնության պատճառները,  
- գնահատել տարերային երևույթների ազդեցությունը և բաշխվածությունը ԶԳ մարզերի կտրվածքով,**

**- ներկայացնել հնարավոր լուծումներ արդի հիմնախնդիրների լուծման համար:**

**Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են վերլուծական, անալիտիկ, սինթետիկ, դիալեկտիկական, համակարգակառուցվածքային, համեմատական մեթոդները:**

**Հայաստանի աշխարհագրական դիրքի, տարածքի արտահայտված ուղղաձիգ գոտիականության, լեռնային ռելիեֆի կտրտվածության, սակավահողության և հողի ոչ բավարար խոնավության պատճառով Հայաստանը դասվում է երկրագործության տեսանկյունից ծայրահեղ ռիսկային երկրների շարքին: Ընդ որում, հողերի ավելի քան 70%-ը բնութագրվում է անապատացման հատկանիշերով և հողերի դեգրադացիայի տարբեր աստիճաններով:**

**Ոլորտի առաջնահերթ խնդիրն ենք համարում մի շարք միջոցառումների իրականացմամբ բարելավել գյուղատնտեսությունը ԶԳ-ում:**

**Հիմնաբառեր՝** *գյուղատնտեսություն, արդի իրավիճակ, հիմնախնդիրներ, պարզացման հեռանկարներ, հող, վտանգավոր երևույթներ:*

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում մեծ տեղ է հատկացվում գյուղատնտեսության զարգացմանը: Գյուղատնտեսությունը ոչ միայն ագրոպարենային համալիրի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ ու աշխատատար ճյուղն է և վճռական դեր ունի հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման գործում:

\* Հոդվածը ներկայացվել է 12.02.2020թ., գրախոսվել՝ 24.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

Գյուղատնտեսության ոլորտը տնտեսությունում ամենառիսկայիններից է: Այստեղ երկարաժամկետ կապիտալ ներդրումները (ջրանցքի ու ջրամբարի կառուցում, պտղատու ու խաղողի այգու հիմնում, թեթև լանջերի դարավանդում, աղոտ հողերի յուրացում, ջրեան կայանի կառուցում, արոտների ստեղծում) կարող են չփոխհատուցվել նախագծային ժամկետում, կամ առհասարակ չփոխհատուցվել, ինչը կարող է հանգեցնել ֆինանսատնտեսական սպառնալից հետևանքների: Վտանգից զերծ չեն նաև ամենամյա արտադրական ծախսումները: Դա պահանջում է ռեսուրսների (հողի, ջրի, աշխատանքի, սերմի ու տնկանյութի, պարարտանյութի ու թունանյութի, բնական ռեսուրսի) բազմակողմանի իմացություն, դրանց օգտագործման արդյունավետության գնահատման ունակություն: Բարձրորակ ռեսուրսները, դրանց տնտեսական ճիշտ գնահատումն ու օգտագործումը ցանկալի արդյունք չեն տա արտադրության ոչ ռացիոնալ մասնագիտացման, շուկայի անբավարար իմացության պարագայում:<sup>219</sup>

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական բարեփոխումները շարունակվում են և նախադրյալներ են ստեղծում գյուղատնտեսության արտադրությունը գիտական հիմունքներով զարգացնելու ուղղությամբ: Կարևորագույն խնդիր է՝ հնարավորինս նվազեցնել բնակչության սննդամթերքով ապահովումը ներկրումների հաշվին և ավելացնել արտահանման ծավալները:

Ագրարային ոլորտում ստեղծված նոր տնտեսական հարաբերություններն առաջ են բերել լուծման ենթակա մի շարք արմատական հիմնահարցեր, որոնք տնտեսական բարեփոխումների իրագործման գործընթացում պահանջում են տնտեսագիտական խոր ուսումնասիրություններ և դրանցից բխող գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումը պահանջում է այնպիսի միջոցառումներ, որոնց իրագործումը կխթանի գյուղացիական և այլ տնտեսությունների շահագրգռվածությունը՝ հողօգտագործման բարձր արդյունավետության հասնելու գործում:

Եթե 2016 թվականին Հայաստանում արտադրվել է 6 217 03 տոննա ցորեն, ապա 2018 թվականին բերքի ծավալը կազմել է ընդամենը 3 376 50 տոննա, որը կազմում է 2016-ի ցուցանիշի գրեթե կեսը: 2018 թվականին բանջարեղենի ցուցանիշերի ուղղությամբ 2017 թ.-ի համեմատ կրկին ցուցանիշերի անկում է գրանցվել: 2017թ.-ին բանջարեղենի ցուցանիշը կազմել է 8 610 02 տոննա, իսկ 2018թ.-ին՝ 6 281 59 տոննա:<sup>220</sup>

Վերջին տարիներին իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են հանրապետության գյուղատնտեսական հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանը և հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Առատ ու բարձր բերքի ստացման երաշխիքը վտանգավոր, տարերային աղետների կողմից պատճառված վնասների ուղղությամբ միջոցառումների ու ծրագրերի իրականացումն է, որոնց համար նախ պետք է ուսումնասիրել տարերային, վտանգավոր երևույթների հաճախականությունը, քանակը և տեսակները ՀՀ-ում:

ՀՀ գյուղատնտեսությունը մեծ վնաս են հասցնում հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթները (երաշտ, խորշակ, կարկտահարություն, ցրտահարություն), որոնց հաճախականությունն ու տևողությունը վերջին տասնամյակներում կլիմայի փոփոխության հետ կապված աճման միտում ունի (տես՝ աղյուսակ 1):

<sup>219</sup> **Գրիգորյան Կ.Ա., Սանասարյան Ա.Ա., Գրիգորյան Ն.Կ.,** Ագրարային տնտեսագիտություն, Երևան ՀԱԱՀ, 2013թ., էջ 9:

<sup>220</sup> Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_17a\\_122.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf):

## Աղյուսակ 1.

Գրանցված տարերային վտանգավոր երևույթների քանակն ըստ տեսակի, 2016-2018թ.<sup>221</sup>

Դեպքերն ըստ տեսակի	Դեպքերի քանակը, միավորը		
	2016	2017	2018
Ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, պտտահողմ, փոշեփոթորիկ	28	32	34
Կայծակնահարում	1	4	6
Կարկուտ	24	39	46
Տեղատարափ անձրև	4	7	12
Սողանք, հողասահք	2	2	4
Սելավ	1	1	1
Բուք, ձյունահողմ	3	2	5
Սառցամածություն	14	18	21
Ձևահյուս	0	1	1
Անտառային հրդեհ	17	15	21
Ցրտահարություն	2	4	4
Չեղեղում, գետերի վարարումներ	11	8	10
Քարաթափվածք	4	6	43
Ընդամենը	83	107	175

Համաձայն աղյուսակ 1-ի տվյալների՝ 2016-2018 թվականների ընթացքում հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթները տարեցտարի ավելացել են: Երաշտները և ուշ գարնանային ցրտահարություններն ավելի շատ սպառնում են Արարատի ու Արմավիրի մարզերին, իսկ կարկուտն առավել վտանգավոր է Շիրակի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի համար:

2018 թվականի ընթացքում ռիսկային աղետները ավելացել են 2017 թվականի նկատմամբ մոտավորապես 70%-ով: Այսպիսով՝ պետք են լուծումներ, որոնք կնվազեցնեն ռիսկային աղետների քանակն այն գոտիներում, որտեղ ունենք մշակաբույսերի համար նախատեսված արտեր: Ամեն տարի ավելացող հակակարկուտային կայանները չեն արդարացնում սպասելիքները և չեն կարողանում բավարար չափով պաշտպանել կարկուտից: Կարկուտի տեղումների քանակը ամեն տարի ավելի ու ավելի է աճում:

<sup>221</sup> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, տարեկան հաշվետվություններ, <http://mes.am/hy/vichakagrutyun/>

Կլիմայի կանխատեսվող փոփոխության հետ կապված՝ գյուղատնտեսության վրա հիմնականում բացասական ազդեցություն են ունենում հունիսի կեսերից դիտվող երաշտները: Իրավիճակն ավելի շատ կարող են սրել երաշտների հետ ժամանակի առումով համընկնող խորշակները (առավելապես 5-10 մ/վրկ արագության հարավային քամիները): Այդ երևույթը պարբերաբար նկատվում է Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի, Արարատի ու Արագածոտնի մարզերում: Գյուղատնտեսությունում ջրի ամենամեծ պահանջարկը սովորաբար նկատվում է ապրիլ-մայիս ամիսներին, ինչն էլ գարնանային երաշտները դարձնում է ամենավնասակարը, քանի որ դրանք համընկնում են մշակաբույսերի աճի առաջին փուլի հետ: Գործնականում երաշտների ու խորշակների առումով հարաբերական բարենպաստ պայմաններ ունի միայն Արարատյան դաշտը, որտեղ գյուղատնտեսական հողերի շուրջ 95%-ը ոռոգվող են:

## Աղյուսակ 2.

### Գրանցված տարերային վտանգավոր երևույթների քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2016-2018թ.<sup>222</sup>

Մարզեր	Դեպքերի քանակը, միավոր		
	2016	2017	2018
ք.Երևան	20	22	24
Արագածոտն	9	11	15
Արարատ	2	2	4
Արմավիր	3	5	5
Գեղարքունիք	12	16	20
Լոռի	21	24	27
Կոտայք	10	15	18
Շիրակ	22	24	26
Սյունիք	17	19	22
Վայոց ձոր	42	45	50
Տավուշ	8	11	14
<b>ընդամենը</b>	<b>166</b>	<b>194</b>	<b>225</b>

Համաձայն աղյուսակ 2-ի՝ մարզերում տարերային վտանգավոր երևույթները մեծամասամբ տեղի են ունենում Վայոց ձորում, որին հաջորդում է Շիրակի մարզը և Լոռու մարզը:

<sup>222</sup> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, տարեկան հաշվետվություններ, <http://mes.am/hy/vichakagrutyun/>

Վերջին տարիներին երաշտից, կարկուտից, հեղեղումներից, գարնանային ցրտահարություններից ու սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը գնահատվում է շուրջ 15-30 մլրդ դրամ: Ընդ որում, վնասի մեծ մասը բաժին է ընկնում կարկուտահարությանը: Կլիմայի փոփոխության համաձայն՝ հնարավոր է գարնանը և ամռանը ամպրոպների ու կարկուտի ուղեկցությամբ անկայուն եղանակների հաճախականության աճ: Այդ դեպքում առավել խոցելի կլինեն Հայաստանի հյուսիսային ու հարավային մարզերի միջին լեռնային գոտու գյուղատնտեսական հանդակները: Ներկայումս Հայաստանում մշակվող հողերի գրեթե կեսը ոռոգվում են և նրանց բաժին է ընկնում բուսաբուծության արտադրանքի մոտ 70%-ը: Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15%-ը, որոշ դեպքերում կարկուտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100%: Կարկուտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվարանում է դրա իրացումը, զգալիորեն նվազում են տնտեսվարողների եկամուտները: Ուժեղ կարկուտահարված այգիների վերականգնման համար պահանջվում է առնվազն մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ՝ այգիներում լրացուցիչ ետի, պարարտացման և ազոտեխնիկական այլ միջոցառումների իրականացման համար<sup>223</sup>:

Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է ընդարձակ տարածքների վրա բազմաբնույթ ուղղություններով, որը լրացուցիչ ծախսեր ու ջանքեր է պահանջում բնակլիմայական աղետների կառավարման համար:

2018 թվականին Արմավիրի մարզում կարկուտահարության առաջին դեպքը գրանցվել է մայիսի 8-ին և շարունակաբար մարզում կարկուտաբեր պրոցեսներ են եղել: Մինչև հունիսի 20-ը տեղացած կարկուտահարության հետևանքով վնասվել են մարզի 25 համայնքների շուրջ 1100 հա հողատարածքներ:

Արմավիրի մարզի 7 համայնքներում տուժած պտղատու այգիների տարածքը կազմում է շուրջ 539.5 հեկտար, իսկ խաղողի այգիներինը՝ 122 հեկտար: Ընդ որում, պտղատու և խաղողի այգիների բերքի կորուստը կազմում է 20-90%:

Արմավիրի մարզի Արգիևա, Զարակերտ, Շենիկ, Արտամետ, Բաղրամյան, Կողբավան, Դուշակերտ, Արագածոտնի մարզի Արագածավան ու Արտենի, Վայոց ձորի Ռինդ, Աղավաճոր ու Զիվա, Արարատի մարզի հիմնականում Կանաչուտ ու Այգեստան համայնքներում տուժել են շուրջ 1454 հեկտար տարածքներ, այդ թվում՝ շուրջ 1059 հեկտար պտղատու այգիներ և 395 հեկտար խաղողի այգիներ: Նշված մարզերում տուժած 1059 հեկտար պտղատու այգիներում վնասը կազմում է շուրջ 3700 տոննա, իսկ խաղողի այգիներինը՝ 1650 տոննա: Ընդհանուր գումարային արտահայտությամբ վնասի նախնական չափը կազմել է շուրջ 1 մլրդ 142 մլն դրամ, որից 836 մլն դրամը պտղատու այգիներինն է, իսկ շուրջ 306 մլն դրամը՝ խաղողի այգիներինը:

Արագածոտնի մարզի երկու համայնքներում 2018 թվականին տուժել են 329 հեկտար պտղատու այգիներ (վնասը՝ մոտ 20-60%) և 50 հեկտար խաղողի այգիներ (30-60%): Վայոց ձորի 3 համայնքներում տուժել են շուրջ 190.4 հեկտար պտղատու այգիներ (30-75%) և շուրջ 223 հեկտար խաղողի այգիներ (50-75%): Տարեկան հանրապետությունում կարկուտահարությունների արդյունքում տարբեր աստիճանի վնասներ են կրում 150-200 համայնքներ:<sup>224</sup>

Գյուղատնտեսությանը մշտապես բնորոշ բազմաթիվ ու բազմապիսի ռիսկերը բացասական ազդեցությունն են ունենում ոլորտի կայունության ու զարգացման վրա՝

<sup>223</sup> Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ, կետ 3:

<sup>224</sup> ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, հարցազրույցներ, <http://minagro.am/2018/08/%d5%b8%d5%9e%d6%80-%d5%b4%d5%a1%d6%80%d5%>:

պայմանավորված ինչպես բնակլիմայական (կարկուտ, ջրհեղեղ, ցրտահարություն, երաշտ, փոթորիկ և այլն), այնպես էլ դրանից տարբեր մարդածին ու տնտեսական գործոններով: Ռիսկերի առկայությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է ստեղծում դրանք կառավարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար, որոնց իրականացման նպատակով նախևառաջ կարևոր է իրականացնել գյուղատնտեսության բնագավառին հատուկ ռիսկերի դասակարգում՝ ըստ դրանց առաջացման պատճառների: Սովորաբար, գոյություն ունեն գյուղատնտեսությանը հատուկ ռիսկերի տարբեր դասակարգումներ, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ խմբերում.<sup>225</sup>

1. Բնության բացասական ազդեցությամբ պայմանավորված բնակլիմայական ռիսկեր, որոնք հանդես են գալիս տարբերային աղետների, կենդանիների, բույսերի հիվանդությունների, կլիմայական փոփոխությունների և այլնի տեսքով,
2. Սանիտարական ռիսկեր՝ կրծողներ, վնասատուներ, համաճարակ, զանազան հիվանդություններ և այլն,
3. Շուկայական ռիսկեր՝ կապված գյուղատնտեսական ապրանքների տեղական կամ միջազգային շուկաների գնային տատանումների, ապրանքների նկատմամբ սահմանված որակական պահանջների փոփոխությունների և այլնի հետ,
4. Օրենսդրական ռիսկեր, որոնք ի հայտ են գալիս օրենսդրությամբ սահմանված նորմերի չպահպանման կամ դրանց փոփոխության դեպքում նոր օրենքների հնարավոր բացասական ազդեցությամբ,
5. Արտադրության գործոնների քանակական ու որակական փոփոխություններ, որոնք արտահայտվում են բույսերի սերմերի, պարարտանյութերի որակի վատացմամբ, օգտագործվող տեխնիկական միջոցների անսարքությամբ, արտադրողականության կրճատումով և նմանատիպ այլ գործոններով,
6. Մարդկային գործոնով պայմանավորված և նախորդ խմբերում չընդգրկված այլ ռիսկեր՝ հակամարտություններ, ֆինանսատնտեսական ճգնաժամեր, գյուղատնտեսական կենդանիների սպանդ և կորուստ, գյուղատնտեսական գույքի կողոպուտ, վնասում և այլն:

Նշված խմբերից ամենաառանձնահատուկը բնակլիմայական ռիսկերն են (կարկուտ, ցրտահարություն, երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ, սելավ, կայծակ, գերխոնավություն և այլն), որոնք աչքի են ընկնում ինչպես մեծ անորոշությամբ, այնպես էլ քանակական ու ծավալային մեծությամբ: Այս խմբի ռիսկերի պարագայում մարդկային գործոնը կամ մարդու ազդեցությունը շատ ավելի փոքր է, իսկ երբեմն էլ՝ անհնար: Բնակլիմայական ռիսկերից Հայաստանի Հանրապետությանն առավել բնութագրական են կարկտահարությունը, ցրտահարությունը, երաշտն ու հեղեղումները:

**Ջրհեղեղներ:** Հայաստանում ջրհեղեղները զարնանային վարարումների տեսքով հիմնականում ձևավորվում են զարնան ամիսներին ձյան ինտենսիվ հալոցքի և առատ տեղումների զուգորդման հետևանքով: Գետերի ծավալը նորմայից երբեմն ավելանում է մինչև տասն անգամ: Ջրհեղեղների ավելի հակված են Արաքս, Հրազդան և Աղսուև գետերի ավազանները: Մեղրիի, Վեդու և Գորիսի գետերի ավազաններում վարարումները միջինում տեղի են ունենում երկու տարին մեկ անգամ: Երկրի շատ մասերում տեղատարափ անձրևներն ու հալվող ձյունն ավելացնում են ջրհեղեղային ու սելավային ռիսկերը: Հայաստանում դիտվում է հեղեղումների և դրանց հետ կապված հետևանքների աստիճանական աճ: 1994 թվականից մինչև 2018 թվականն ընկած ժամանակահատվածում հեղեղումների տնտեսական վնասը կազմել է 74 մլն ԱՄՆ դոլար,

<sup>225</sup> Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2015/01/15\\_0039\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/01/15_0039_1.pdf):

այդ թվում՝ Լոռու մարզում՝ 32 մլն ԱՄՆ դոլար, Շիրակում՝ 27 մլն ԱՄՆ դոլար, Տավուշում՝ 12 մլն ԱՄՆ դոլար, Գեղարքունիքում՝ 4,8 մլն ԱՄՆ դոլար:

**Երաշտներ:** Երաշտային պայմանները առաջանում են անձրևների երկարատև բացակայության և բարձր ջերմաստիճանի պայմաններում: Այդ պայմաններն ավելի են խորանում և ինտենսիվանում բարձր ջերմաստիճանի և քամու առկայության պայմաններում, որն առաջ է բերում բույսերի տրանսպիրացիայի մեծացում, հարաբերական խոնավության նվազեցում, հողի մակերեսից գոլորշիացման ինտենսիվացում, խոնավության պակասորդի ավելացում: Արդյունավետ խոնավության պաշարները արագ ծախսվում են և չեն կոմպենսացվում մթնոլորտային տեղումներով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության ցածրադիր հովտային գոտիներում երաշտները դիտվում են 92-94%, Նախալեռնային գոտիներում՝ 52-57% հաճախականությամբ, իսկ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում հասնում են 40-50%-ի: Արարատյան դաշտում և ցածրադիր այլ գոտիներում բարձր ջերմաստիճանով և տաք քամիներով օրերի թիվը տարեկան կազմում է 120-ից 160, ինչն այդ շրջանները դարձնում է առավել խոցելի երաշտի նկատմամբ: Հայաստանում երաշտ սովորաբար արձանագրվում է հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում, սակայն կարող է տեղի ունենալ նաև գարնանն ու աշնանը: Ընդհանուր առմամբ, երևույթը հատուկ է Արարատյան դաշտավայրին և երբեմն՝ Արարատյան հարթավայրի Նախալեռնային հատվածին, Տավուշին և Սյունիքի հովիտներին: Երաշտի հաճախականությունը մոտավոր հաշվարկներով կարող է լինել 2-4 տարին մեկ անգամ: Երաշտները բացասաբար են ազդում բնական էկոհամակարգերի վրա՝ խորացնելով անապատացման գործընթացները և նպաստելով երկրորդային աղակալմանը: Ենթակառուցվածքների վատթարացման, էլեկտրաէներգիայի գնի աճի, Ներդրումների բացակայության և այլ գործոնների պատճառով մշակվող ոռոգելի տարածքների մակերեսը 1991 թվականի 314.0 հազ. հեկտարից կրճատվել է մինչև 154.0 հազ. հեկտարի (առանց բնակավայրերի հողերի): Երկարատև օդերևութաբանական երաշտների հետևանքով ջրային ռեսուրսները կրճատվում են 20-ից մինչև 45%-ով:

**Կարկուտ:** Գյուղատնտեսության ոլորտում բնական վտանգների թվում կարկուտն առավել ծանրն է: Կարկուտի առաջացումը և զարգացումը պայմանավորված է մինչև 30 մ/վրկ արագության հասնող ուժեղ վերընթաց հոսանքներով: Հայաստանի Հանրապետության տարածքում այն դիտվում է ճակատային ու ներզանգվածային գործընթացների ժամանակ: Ներզանգվածային կարկուտային գործընթացները դիտվում են գարնանը և ամռան առաջին կեսում, երբ մեծ են լինում կոնվեկտիվ հոսանքներն ու խոնավությունը: Ամենակտիվ կարկուտային գործընթացները դիտվում են, երբ երկրորդ կարգի ցուրտ ճակատը անցնում է հանրապետության տարածքով ցերեկվա երկրորդ կեսին, որին զուգարվում են նաև կոնվեկտիվ հոսանքները: ՀՀ տարածքի ռելիեֆային պայմանների բազմազանությունը պայմանավորում է կարկուտի հաճախականության մեծ տարբերություններ: Դրա պատճառած միջին տարեկան վնասը կազմում է 30-40 մլն ԱՄՆ դոլար: Կարկուտավտանգավորության առումով խոցելի տարածքներում գտնվում է մոտ 370 գյուղական համայնք: Կարկուտից տուժում է երկրի գյուղական բնակավայրերի 15-ից 17 տոկոսը: Հայաստանում կարկուտահարությունները տեղի են ունենում շոգ սեզոնին՝ մարտից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Կարկուտ առավել հաճախ լինում է ապրիլ-հունիս ամիսներին, իսկ խոշոր հատիկներով՝ հուլիս-օգոստոսին: Կարկուտներն առավել հաճախակի են տեղում Արարատյան դաշտում, Շիրակում, Լոռիում, Տավուշում, Արագածոտնի բարձրադիր գոտիներում, Գեղարքունիքում և Կոտայքի լեռնային գոտիներում, միջինը՝ տարեկան 4-5 դեպք: Հովտային գոտիներում կարկուտի հաճախականությունն ավելի ցածր է՝ տարեկան 1-2 անգամ:

**Սողանքներ և սելավներ:** Սողանքը պարբերական բնույթ ունեցող ֆենոմեն է, որը կարող է տարիներով թաքնվել և արթնանալ մեկ ակնթարթում: Հայաստանում այս



Ֆենոմենը երկրաշարժից հետո երկրորդն է բնական աղետների շարքում: Հայաստանում շուրջ 122.0 հազ. հեկտար հողեր խոցելի են սողանքներից, որոնց պատճառների թվում են հորդառատ անձրևները: Սողանքների առաջացմանը նպաստում են խմելու ջրի և ոռոգման համակարգերի արտահոսքերը, ինչպես նաև լեռնալանջերի անտառահատումները: Սելավները ևս լուրջ սպառնալիք են միջին բարձրության վրա գտնվող լեռնային շրջաններում: Ըստ ուսումնասիրությունների՝ մինչև 2009 թվականը Հայաստանում տեղի են ունեցել տարբեր չափի ավելի քան 3500 սողանքներ: Դրանց 90 տոկոսը գտնվել է 2000-1500 մ և ցածր բարձրությունների վրա, մյուսներն արձանագրված են 2200-2400 մ բարձրությունների վրա և հազվադեպ են հանդիպում 2500-2600 մ ավելի բարձրությունների վրա: Ըստ Համաշխարհային բանկի ուսումնասիրության՝ Հայաստանում սողանքների հետևանքով առաջացած վնասը գնահատվում է մոտ 11.5-13.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ սելավների վնասը՝ 5.7-ից մինչև 7.1 մլն ԱՄՆ դոլար:

**Ցրտահարություն:** Հայաստանում մեծ վտանգ են ներկայացնում ուշ գարնանային ցրտահարությունները, երբ մատղաշ մշակաբույսերի սածիլները, ծիլերը, բույսերի ծաղիկները վնասվում են բացասական ջերմաստիճաններից: Վաղ աշնանային ցրտահարությունները վնասակար են չհավաքված բերքի, ջերմասեր բանաջարաբոստանային կուլտուրաների, խաղողի համար: Ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարությունները հանրապետության տարածքում հիմնականում պայմանավորված են հյուսիսային շրջաններից ցուրտ օդային զանգվածների ներխուժումով: Դիտվում են աղվեկտիվ, ռադիացիոն և աղվեկտիվ-ռադիացիոն ցրտահարություններ: Դրանք ավելի հաճախ դիտվում են տեղանքի ցածրադիր մասերում, երբ սառը ու տաք օդը իջնում է ռելիեֆի գոգավոր մասերը: Ցրտահարությունների բաշխման առանձնահատկությունն այլ օդերևութաբանական էլեմենտների համեմատությամբ այն է,, որ ցրտահարությունները տարբեր բարձրության կլիմայական գոտիներում օրերի քանակով էապես չեն տարբերվում, քանի որ դրանց առաջացումն ըստ բարձրությունների ուշանում կամ չուտ է սկսվում պայմանավորված տվյալ բարձրության վրա բույսերի վեգետացիայի սկսվելու և վերջանալու հետ: Վերջին տարիներին նկատվում է ցրտահարությունների հաճախականության և ինտենսիվության աճ: Ցրտահարություններն առավել հաճախ դիտարկվում են հանրապետության հովտային գոտիներում, մասնավորապես՝ Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռնային մասում, Տավուշում և Սյունիքի հովիտներում, միջինը՝ տարեկան երեք անգամ: Լեռնային գոտիներում ցրտահարության դեպքերն այնքան էլ բնորոշ չեն և գործնականում մեծ վնաս չեն հասցնում գյուղատնտեսությանը<sup>226</sup>:

Կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը:

1. Արդյունավետության բարձրացման համար պետք է կատարել մի քանի բարելավում, որի մեջ կմտնի գյուղտեխնիկայի անտոկոս վարկավորումը գյուղացիների գնման համար: Տեխնիկական կոզնի ստանալ ավելի էժան և ավելի մեծ քանակով գյուղմթերք:

<sup>226</sup> Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ, կետ 34, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89460>:

2. Պետության կողմից ներդրվի ծրագիր, որի միջոցով ստեղծվի պահանջարկ կոնկրետ մշակաբույսերի նկատմամբ, որոնք գյուղացիների կողմից արտադրվելուց հետո վաճառվեն որոշակիորեն տեղակայված հարթակներում:

3. Արտահանման համար պետք են մեքենաներ: Այդ մեքենաները արժեն մեծ գումարներ, և դրանց գնումը գյուղացիների կողմից համարյա թե անհնարին է: Կան որոշ կազմակերպություններ, որոնք զբաղվում են գյուղվթերքի արտահանմամբ, բայց դրանք քիչ են և վարում են մոնոպոլիստական քաղաքականություն: Պետք է օգնել նոր սուբյեկտներին. փոքր մասշտաբներով գնել մեքենաներ, և ստեղծել մրցակցություն՝ խուսափելով մոնոպոլիստներից:

Կառավարությունն անթույլատրելի է համարում, որ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 1/3-ը մնացել է անմշակ: Հայաստանում ոռոգման ջուրը նույնքան հասանելի և տարածված պետք է լինի, ինչպես էլեկտրամատակարարումն է տարածված ու հասանելի: Նոր տեխնոլոգիաների կիրառումը պետք է լայնորեն տարածվի գյուղատնտեսության ոլորտում: Կաթիլային և անձրևացման համակարգերի ներդրումը հնարավորություն կտա էապես խնայելու ջրային ռեսուրսները, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման պետական աջակցության ծրագիրը՝ հողային ռեսուրսները: Գյուղատնտեսության զարգացման համար լրջագույն խնդիր է արդյունավետ հակակարկտային համակարգի բացակայությունը, որին հասնելու համար կառավարությունը պարտավորվում է բարձրացնել սուբսիդավորման մեխանիզմների հասցեականությունը՝ ապահովելով շահառու համայնքների կարիքների բավարարման հստակ մեխանիզմներ: Կառավարությունը նաև գործուն քայլեր է ձեռնարկելու մեքենատրակտորային համակազմի թարմացման և Հայաստանի գյուղատնտեսության կարիքներն առավելագույնս բավարարելու ուղղությամբ: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների ավելացման ներուժն օգտագործելու գործում կառավարությունը նախատեսում է մշակել դեպի նոր շուկաներ արտահանմանն աջակցող մեխանիզմներ: Նոր տեխնոլոգիաների և գիտական հենքի վրա հիմնված մրցունակ ու արդյունավետ գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին կառավարությունը խնդիրներ է դրել:<sup>227</sup> Այդ խնդիրներից առանձնացնենք այս պահին մեզ հետաքրքրողները.

- ✓ ապահովել գյուղատնտեսական արտադրողների շրջանում գյուղատնտեսությանն առնչվող գիտելիքների, նորարարությունների ներդրման փորձի տարածման և տեղեկատվության հասանելիության համակարգի ներդրումը,
- ✓ ապահովել գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության համակարգի ներդրումը,
- ✓ սահմանել գյուղատնտեսությանն աջակցության հիմնական սկզբունքները, մեթոդաբանությունը և ռազմավարությունը:

Գյուղատնտեսության բազմաթիվ փոքր տնտեսությունների ապահովագրումը բարդ գործընթաց է, որը զգալի գործառնական ծախսեր է պահանջում, իսկ ամենակարևորը՝ ոլորտի ռիսկերը մեծ են, և ապահովագրական կառույցները խուսափում են այստեղ գործունեություն իրականացնելուց: Բացի այդ, շուրջ 340000 փոքր գյուղացիական տնտեսությունների վճարունակությունը դեռևս ցածր է, և հիմնական ռիսկերից պաշտպանության համակարգերը զարգացած չեն: Ոլորտի և հանրապետության առանձնահատկություններով պայմանավորված՝ ռիսկերի կառավարման դժվարությունները բազմազան են, սակայն փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, ռիսկերի կանխարգելման հնարավորությունների ընդլայնումը, միավոր տարածության հաշվով

<sup>227</sup> ՀՀ կառավարության ծրագիր, 8 փետրվարի 2019թ. N 65 - Ա, էջ 50  
<https://www.gov.am/files/docs/3133.pdf>:

ստացվող եկամտի ավելացումը և պետության մասնակցությամբ ապահովագրական համակարգի ներդրումը հնարավորություն են ընձեռում հարթահարելու այդ դժվարությունները:

Պարտադիր կերպով նորարարությունների ներդրման ծրագրի մշակում է հարկավոր գյուղատնտեսության ոլորտում: Բացակայում են իսպառ ցանցապատ այգիները, որոնք կլինեն պաշտպանված կարկուտից, և կապահովեն պարենի անվտանգությունը: Ցանցերի գնման ու ներդրման գործնառնքալը պետք է ամբողջովին լինի պետության կողմից սուբսիդավորմամբ կամ բանկերի կողմից շատ փոքր տոկոսներով վարկերի տրամադրմամբ: Նորարարություններից մեկը պետք է լինի նաև գյուղատնտեսական վարկերի դեպքում պարտադիր ապահովագրությունը: Թեև այսօր աշխատանքներ են տարվում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ուղղությամբ, բայց, այնուամենայնիվ, չունենք գյուղատնտեսության ապահովագրություն:

Բանկերի կողմից պետք է գյուղմթերքի վերամշակման գործարանների բացման համար տրամադրվեն վարկեր, որոնք նախատեսված լինեն փոքր ու միջին բիզնես կառուցելու համար և ոչ մի դեպքում չխթանեն մեծ բիզնես վարողներին: Այս քայլը կխթանի գյուղերում գյուղացիների կողմից վերամշակման կամ փաթեթավորման փոքր գործարանների կառուցումը, որոնք կտան բավականին էժան և որակյալ պրոդուկտներ: Այդ պրոդուկտները կունենան պիտանելության ավելի երկար ժամկետ, չեն վնասվի տեղափոխման ժամանակ, որի շնորհիվ թափոնի չափը կնվազի: Պրոդուկտները կունենան ավելի ներկայանալի տեսք և կլինեն ավելի հեշտ տեղափոխելի: Այսպիսով՝ ստացված պրոդուկտները ավելի հեշտ կմրցակցեն թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում:

Գյուղատնտեսությունը, որպես ինքնակառավարվող և ինքնազարգացող օղակ, պարտադիր չէ ֆինանսավորվի պետության կողմից, ինչպես նաև ամեն տարի օգնի գյուղացիներին գումարով կամ սառեցնի, հետաձգի գյուղվարկերը, որոնք գյուղացիները ծախսել են բերքի ստացման վրա և բնական աղետների պատճառով վնասներ կրել: Այդ ամենի փոխարեն պետք է օգնել գյուղացուն՝ ստեղծելու բնական աղետներից հնարավորինս պաշտպանված հողատարածքներ, ջրամատակարարում, տալու նրան բերքի ու վարկի ապահովագրման հնարավորություն, ստեղծելու հարթակներ գյուղմթերքի վաճառքի համար, որտեղ գյուղացին մրցակցային պայմաններում միանշանակ կհաղթի բոլոր ներմուծողներին և վերավաճառողներին, քանի որ կլինի պաշտպանված, ուժեղ և կտա բոլորից ավելի էժան վերջնական պրոդուկտ:

Առաջարկվում է անպայման ներդնել ծրագիր, որի միջոցով Հայաստան կներմուծվեն հակակարկտային ցանցեր: Այդ ցանցերը ապահովում են աշխարհում ամենաբարձր պաշտպանելության տոկոսը: Այսպիսով՝ գյուղատնտեսության համար նախատեսված պաշտպանիչ ցանցերի օգտագործման ժամկետը կազմում է 18-ից 25 տարի: Ցանցի լայնությունը կազմում է 2-ից մինչև 5 մետր: Ռուսաստանում 1 մետր քառակուսի ցանցի գինը կազմում է ընդհամենը 20-23 ռուբլի, որի մեջ արդեն իսկ ներառված են հարկերը: Հայաստան ներմուծելու դեպքում կամ ՀՀ-ում հակակարկտային ցանցերի արտադրությունը կտա մեզ ավելի ցածր գին:

Ցանցի ընտրության հարցում կարևոր է հաշվի առնել պարտեզի վիճակը՝ ամրացումների համար տարածքի առկայությունը, գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրությունը, տեղադրման գինը:

Հակակարկտային ցանցերի տեխնիկական բնութագրերն են՝

Բաղադրությունը.

Հատուկ հավելանյութերով կայունացնող բարձր խտության պոլիէթիլենի (HDPE ԱՐՏ տեսակի) արտադրություն, որի հիմնական նպատակն է կանխել

ցանցի վատթարացումը (ուլտրամանուշակագույն, ծառերի քիմիական բուժում, անձրև և այլն):

Հակակարկտային ցանցերի տեղադրման տեսակը.

Անցքերի և տեղադրման տեսակը կախված է մի շարք գործոններից՝ հողի և մրգերի հատկություններից, կլիմայական պայմաններից, տնկման ուրվագծերից և այլն:

Կան երկու տեսակի տեղադրման կառուցվածքներ՝

- Թեք ցանցեր, որոնց տեղադրումը ապահովում է ավելի մեծ տարածք ծառերի և մշակաբույսերի համար, միանգամից հեռացվում է կարկուտը ցանցի վրայից. տեսակը տարածված է պրոֆեսիոնալ ֆերմերների շրջանում:

Կողմ

- տարածված ձև է (պրոֆեսիոնալ այգեպանների ընտրությունն է),
- բարձր հուսալիություն,
- օգտագործման հեշտություն,
- ցանցի օգտագործման ավելի մեծ ժամկետ:

Դեմ

-տեղադրման համեմատաբար բարձր գին

- Հորիզոնական ցանցերը այսօր ամենատարածվածն են տեղադրման հեշտության պատճառով: Ամենից հաճախ օգտագործվում են տանձի և խնձորի այգիներում:

Կողմ

- տարածքի խնայողություն,
- տեղադրման հեշտությունը՝ առանց լրացուցիչ կյուլթերի,
- պաշտպանություն արևից (օգտակար մթնեցում) և կարկուտից:

Դեմ

- տարեկան ավելի բարձր խնամքի ծախսեր,

- կոնստրուկցիան պահանջում է անընդհատ հետևողական աշխատանքներ,
- ցանցի վնասվելու ավելի մեծ հավանականություն:

Զանի որ գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար և համարվում է տնտեսության ամենակարևոր ճյուղերից մեկը, այն արտադրում է սննդամթերք երկրի բնակչության համար և հումք՝ վերամշակող արդյունաբերության համար, ապահովում է ՀՆԱ-ի 21,9 %-ը և արդյունաբերության շատ ճյուղերի արտադրած արտադրանքի խոշոր սպառողներից մեկն է (մեքենաշինություն, քիմիական արդյունաբերություն և այլն), ապա էական ենք համարում վերականգնել գյուղատնտեսության նախարարությունը որպես առանձին գերատեսչություն, որը կկարողանա կատարել այս փոփոխությունները և չի ծախսի ահռելի գումարներ, քանի որ այս փոփոխությունները մեծամասամբ իրենցից ենթադրում են գյուղական տարածքների զարգացման ծրագրի կազմում, և ստեղծում են ուղղակիորեն հնարավորություն գյուղացուն ինքնազարգանալու հնարավորություն, առանց որևէ ռիսկեր կրելու:

# FINANCIAL PROBLEMS OF REDUCING RISK OF AGRICULTURAL PLANTS IN ARMENIA

HRANT HAYRAPETYAN

*Armenian State University of Economics,  
PhD student in the Department of Finances, Accounting,  
Yerevan, Republic of Armenia*

Agriculture is one of the key sectors of Armenia's economy. The sector is of extreme importance in ensuring the country's food security. Furthermore, agriculture is particularly important for income generation and provision of living standards in rural areas, as well as for the development of the rural settlements.

The primary aim of the study is to identify the role and significance of agriculture, its current state, issues and the present problematic situation in the Republic of Armenia.

The objectives of the study are:

- to identify the causes of high risk in the sector,
- to estimate the impact and distribution of natural phenomena across the RA regions,
- to introduce possible solutions to the current issues.

During the study of the topic analytical, analysis, synthesis, dialectical, systematic and comparative methods were used.

Due to the geographical location of Armenia, the pronounced vertical zoning of the area, the mountainous terrain, the scarcity of soil and insufficient soil moisture, Armenia is classified as one of the most risky countries in terms of agriculture. Moreover, more than 70% of the land is characterized by desertification features and varying degrees of land degradation.

The priority task of the sector is to improve agriculture in the Republic of Armenia through implementation of a number of measures.

**Keywords:** *agriculture, current state, issues, development perspectives, soil, hazardous phenomena .*

# ФИНАНСОВЫЕ ПРОБЛЕМЫ СНИЖЕНИЯ РИСКА ВЫРАЩИВАНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ РАСТЕНИЙ В АРМЕНИИ

ГРАНТ АЙРАПЕТЯН

*Государственный экономический университет Армении,  
аспирант кафедры финансов и бухгалтерского учета,  
г.Ереван, Республика Армения*

Сельское хозяйство является одним из ключевых направлений экономики Армении. Данное направление играет важную роль в обеспечении продовольственной безопасности страны. Помимо вышесказанного, сельское хозяйство занимает важное место в вопросах обеспечения поступлений и определенного уровня жизни в населенных пунктах, их развития.

Целью данной работы является выявление основной роли сельского хозяйства, оценки текущего состояния, определение основных задач и проблемных ситуаций в РА.

Перед исследованием поставлены следующие задачи:

- выявление высокого уровня риска данной сферы,
- оценка уровня влияния стихийных явлений и их разделение по регионам РА,
- представление возможных решений для выявленных задач.

В процессе исследования были использованы методы диалектического анализа и синтеза, систематические, сравнительные методы.

В связи с географическим расположением, выраженным вертикальным уклоном и расколом горного рельефа, дефицитом и недостаточной влажностью земли, Армения относится к странам высокого риска с точки зрения сельского хозяйства. Также важно отметить, что более 70% земель в республике имеют пустынные признаки, с разными уровнями деградации.

Первостепенной задачей данной сферы считается осуществление мероприятий, направленных на совершенствование сельского хозяйства РА.

**Ключевые слова:** *сельское хозяйство, текущая ситуация, основные задачи, тенденции развития, земля, опасные явления.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (ՀՆԱ-Ի) ԿԱՌՈՒՑՎԱԾ ԶԵՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ\*

### ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[ashotmarkos@rambler.ru](mailto:ashotmarkos@rambler.ru)*

### ԵԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,  
տնտեսագիտության թեկնածու,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[meleonora06@rambler.ru](mailto:meleonora06@rambler.ru)*

**Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության տնտեսության (ՀՆԱ-ի ցուցանիշի միջոցով) կառուցվածքային տեղաշարժերն ու դրանց վարձագման միտումները վերջին 20 տարվա ժամանակահատվածում: Միայն այդ կերպ կարելի է գնահատել տնտեսության նոր կառուցվածքի առաջադիմականությունը և տնտեսության նոր ավելացված արժեք ստեղծելու հնարավորությունը:**

**Ելնելով առաջադրված նպատակից՝ հոդվածում լուծվել են հետևյալ խնդիրները՝ հետազոտվել է երկարատև ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ի արտադրության հաշիվն ու դրա կառուցվածքը, ըստ եկամուտների հաշվարկված ՀՆԱ-ի սկզբնական եկամուտների ձևավորման ու բաշխման հաշիվը, ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքը, աշխատավարձի ու խնայողությունների փոխադարձ կապն ու օրինաչափությունները, ինչպես նաև գնահատվել են երկարատև ժամանակահատվածում ՀՆԱ-ի տարբեր մեթոդներով հաշվարկված մեծությունների միտումները, դրանց սոցիալ-տնտեսական արդյունքներն ու հետևանքները:**

**Աշխատանքում կիրառվել են վիճակագրական, համեմատական վերլուծությունների, մասնակիից դեպի ընդհանուր ամփոփումների, ինչպես նաև վիճակագրական տվյալների միջինացման և դինամիկայի շարքերի ուսումնասիրության մեթոդները:**

**ՀՆԱ-ի արտադրության և օգտագործման կառուցվածքների դիտարկումը թույլ է տվել նկատելու մի շարք օրինաչափություններ՝ տնտեսության տարբեր ճյուղերի համամասնությունների փոփոխման, մասնավորապես՝ արդյունաբերության մասնաբաժնի կրճատման, շինարարության ու ծառայությունների տեսակարար կշռի**

\* Հոդվածը ներկայացվել է 03.07.2019թ., գրախոսվել՝ 20.07.2019թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

**ավելացման, ինչպես նաև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Յոգվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի կառուցվածքում նվազել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինը՝ ի հակադրություն համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժնի աճի, ինչը վկայում է ՀՀ-ում աշխատանքի թերարժևորման մասին:**

**Հիմնաբառեր՝** համախառն ներքին արդյունք, ՀՆԱ-ի արտադրություն, հիմնական կապիտալ, սկզբնական եկամուտ, տնօրինվող եկամուտ, եկամուտների ձևավորման հաշիվ, եկամուտների օգտագործման հաշիվ, համախառն կուտակում, ինսայդություններ:

Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար օգտագործվող ռեսուրսների (արտադրական, բնական, մարդկային կապիտալների և արտաքին զուտ ակտիվների) ամբողջությունը, որն անհրաժեշտ է հասարակության նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարման համար, հանդես է գալիս որպես ՀՆԱ-ի ստեղծման գործընթաց: Ըստ որում, այդ ռեսուրսների մի մասն օգտագործվում է թողարկվող ապրանքների և ծառայությունների միջանկյալ սպառման համար, իսկ թողարկման և միջանկյալ սպառման տարբերությունը հանդես է գալիս որպես ավելացված արժեք, որն իրենից ներկայացնում է հասարակության մասշտաբով աշխատավարձի ֆոնդը և շահույթը: Իսկ եթե ավելացված արժեքին գումարենք արտադրության հարկերը (հանած սուբսիդիաները), ապա կստանանք համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) մեծությունը: ՀՆԱ-ն, որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ, առաջին հերթին բնորոշում է հասարակության տնտեսական ներուժը, կամ, այլ կերպ ասած, ամեն երկրի տնտեսական հզորության խորհրդանիշն է: Այս տեսանկյունից կարևորվում է նաև ՀՆԱ-ի ձևավորման արդյունավետության գործընթացն ու դրա մակարդակը, որը կարելի է դիտարկել որպես ՀՆԱ-ի (որպես զարգացման տնտեսական արդյունքի) և դրա ստացման համար ծախսված, որպես կանոն մեկ տարվա կտրվածքով կատարված, թողարկման ծավալը (որպես կատարված ծախսերի մեծություն): Ըստ այդմ էլ ՀՆԱ-ի և թողարկման ծավալների մեծությունը կարելի է դիտարկել որպես երկրի մասշտաբով տնտեսական արդյունավետության ցուցանիշ և, որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան հաջողված և արդյունավետ կարելի է համարել ՀՆԱ-ի ստեղծման գործընթացը: Մյուս կողմից, ՀՆԱ-ն բացի ավելացված արժեքից ներառում է նաև արտադրության հարկերը (հանած սուբսիդիաները)՝ դրանով իսկ բնորոշելով նոր ստեղծված արդյունքի մեջ պետությանը բաժին ընկած արժեքի մեծությունը: Այդուհանդերձ 1-ում բերված է ՀՀ արտադրության հաշիվը՝ ըստ թողարկման, միջանկյալ սպառման, ՀՆԱ-ի, այդ թվում՝ ավելացված արժեքի և արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) և դրանց կառուցվածքը 1997-2017 թթ.-ին:



## Աղյուսակ 1

**ՀՀ արտադրության հաշիվը ըստ թողարկման, միջանկյալ սպառման, ՀՆԱ-ի, այդ թվում՝ ավելացված արժեքի և արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) և դրանց կառուցվածքը 1997-2017 թթ.<sup>228</sup>**

Տարի	Թողարկում (հիմնական գներով)	Միջանկյալ սպառում	Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	Այդ թվում՝ ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)
1997	1390998.2	650957.4	804335.6	740040.8	64294.8
	100.0	46.8	57.8	53.2	4.6
2000	1672235.3	735133.7	1031338.3	937101.6	94236.7
	100.0	44.0	61.7	56.0	5.6
2002	2219599.8	989002.0	1362471.1	1230597.2	131874.5
	100.0	44.6	61.4	55.4	5.9
2007	4720075.7	1886340.4	3149283.4	2833735.3	315548.1
	100.0	40.0	66.7	60.0	6.7
2008	5198641.0	2035695.7	3568227.6	3162945.3	405282.3
	100.0	39.2	68.6	60.8	7.8
2009	4422761.2	1613664.1	3141651.0	2809097.1	332553.9
	100.0	36.5	71.0	63.5	7.5
2010	4891551.4	1820474.2	3460202.7	3071077.2	389125.5
	100.0	37.2	70.7	62.8	8.0
2012	5989851.8	2181625.6	4266460.5	3808226.0	458234.0
	100.0	36.4	71.2	63.6	7.7
2013	6380782.2	2331572.1	4555638.2	4049210.0	506428.0
	100.0	36.5	71.4	63.5	7.9
2014	6754005.6	2471214.2	4828626.3	4282291.0	546335.0
	100.0	36.6	71.5	63.4	8.1
2015	7046631.8	2550238.8	5043633.2	4507832.1	535801.1
	100.0	36.2	71.6	64.0	7.6
2016	7135172.5	2598900.2	5052300.3	4536272.3	516028.0
	100.0	36.4	70.8	63.6	7.2
2017	7737676.6	2851045.9	5446794.3	4886630.7	560163.6
	100.0	36.8	70.4	63.2	7.2

Համարիչում մին ՀՀ դրամ, հայտարարում %-ով թողարկման նկատմամբ:


Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ 1997-2017թթ. ընթացքում ՀՀ-ում ՀՆԱ-ի թողարկման ծավալների ավելացմանը զուգընթաց բարձրացել է դրա ստեղծման

<sup>228</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

արդյունավետությունը: Այսպես, եթե 1997թ.-ին ՀՆԱ-ի մեծությունը թողարկման մեջ կազմել է 57.8%, ապա 2017թ.-ին՝ 70.4%, իսկ արտադրանքի հարկերի (հասնած սուբսիդիաների) հարաբերակցությունը թողարկման ծավալին փոփոխվել է՝ համապատասխանաբար 4.6%-ից հասնելով 7.2%-ի:

Ինչպես հայտնի է, ՀՆԱ-ն որպես երկրի տնտեսության բոլոր ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների հանրագումար, միևնույն ժամանակ նաև դրանց ստեղծմանը մասնակցող ինստիտուցիոնալ հատվածների եկամուտների ամբողջությունն է: Այդ տեսանկյունից տնտեսությունում կատարվող փոփոխությունների կարևոր բնութագրիչներ են ՀՆԱ-ի ստեղծմանը մասնակցած այդ հատվածների միջև եկամտի բաշխման հարաբերակցությունը և դրա շարժը:

Ստորև բերված գծանկար 1-ում ներկայացված է ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի 1990-2008թթ.-ին (մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ընդգծված դրսևորվեց 2009թ.-ին), ՀՆԱ-ի կառուցվածքի շարժն ըստ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության, արտադրության և ներմուծման գուտ հարկերի, համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների: ՀՆԱ-ի եկամտային այդպիսի կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, թե երկրում ստեղծված ավելացված արժեքը կամ սկզբնական եկամուտները ինչ հարաբերակցությամբ են բաժանվում դրանց ստեղծմանը մասնակցած վարձու աշխատողների, պետության և գործարարների միջև:



**Գծանկար 1. ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի 1990-2008թթ.<sup>229</sup>**

Գծանկար 1-ում բերված տվյալներն ու դրանց շարժը ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինն էականորեն կրճատվել է՝ 57.4%-ից հասնելով 37.2%-ի՝ նվազելով ավելի քան 20 տոկոսային կետով: Փոխարենը նույն չափով ավելացել է տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների

<sup>229</sup> Աղբյուրը՝ համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը («Ազգային հաշվիների համակարգ» բաժին), ([www.armstat.am](http://www.armstat.am)):

մասնաբաժինը ՀՆԱ-ում հասնելով 50 տոկոսի: Սա նշանակում է, որ նոր ստեղծված եկամտի կեսը բաժին է հասնում գործարարներին կամ այս դեպքում տեղին է ասել՝ ձեռարկատերերին, և միայն 1/3-ից փոքր-ինչ ավելին՝ վարձու աշխատողներին: Պետության մասնաբաժինը՝ արտադրության և ներմուծման զուտ հարկերի տեսքով, կազմում է ընդամենը 12.8%, որը մոտ երկու տոկոսային կետով բարձր է 1990թ.-ի մակարդակից:

Ստացվում է, որ արտադրության և ներմուծման նկատմամբ կիրառվող անուղղակի հարկային եկամուտները կազմում են ավելացված արժեքի ընդամենը 12.8%-ն այն դեպքում, երբ ԱԱՀ դրույթաչափը շատ ավելի բարձր է: Սա կարելի է համարել անուղղակի հարկերի և մասնավորապես՝ ԱԱՀ կիրառման անարդյունավետության և տնտեսությունում մեծ ծավալի ստվերայնության առկայության վկայություն:

Հարկ է նկատել, որ զարգացած տնտեսությամբ երկրներում գործում է «սուրբ երրորդության» մոտեցումը, երբ վարձու աշխատողների, պետության և ձեռնարկատերերի մասնաբաժինը ստեղծված ավելացված արժեքում գրեթե հավասար է, այսինքն վերը դիտարկվող ինստիտուցիոնալ հատվածներից յուրաքանչյուրի մասնաբաժինը գտնվում է 1/3-ի շրջակայքում: Այս առումով պետք է արձանագրել, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում ՀՀ-ում տեղի է ունեցել եկամտի ձևավորման կառուցվածքային անհամամասնությունների խորացում՝ ի վնաս վարձու աշխատողների և իրենց ձեռնարկատերերի:

Աղյուսակ 2-ում բերված է ՀՀ սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը 1997-2016թթ.-ին:

Տնտեսության վերարտադրողական ունակությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե տնտեսությունում ստեղծված ձեռնարկատիրական շահույթի որ մասն է վերաներդրվում տնտեսական գործունեության մեջ կամ էլ ինչ չափով է իրականացվում արտադրական հզորությունների նորացում կամ արդիականացում: Այս առումով ուշագրավ կարող է լինել տնտեսության համախառն շահույթի և խառը եկամուտների կառուցվածքի դիտարկումը: Այս ցուցանիշն ունի երկու հիմնական բաղկացուցիչ՝ հիմնական կապիտալի սպառում և տնտեսության զուտ շահույթ, զուտ խառը եկամուտներ:

Դիտարկվող ցուցանիշը 1990թ.-ից սկսած կտրուկ անկում է ունեցել ընդհուպ մինչև 1995թ.-ը՝ 46,9%-ից հասնելով 25,7%-ի: 1995թ.-ից սկսած որոշակի կայունացում և աճ է նկատվել մինչև 2000թ.-ը, երբ այդ հարաբերակցությունը հասավ 31,2%-ի, որից հետո նորից նվազման միտումները սկսեցին գերակայել՝ ընդհուպ մինչև դիտարկվող ժամանակահատվածի վերջը, ինչի արդյունքում ցուցանիշը 2008թ.-ին հասավ 21,0%-ի սահմանին: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունում կապիտալատար ճյուղերի մասնաբաժինը աստիճանաբար նվազում է: Եվ բացի այդ, ձեռնարկատերերը տարեցտարի նախընտրում են կամ ստացված շահույթը հանել տնտեսական գործունեությունից, կամ էլ վերաներդնել հատույցի փոքր ժամկետով և կապիտալատարության ցածր աստիճանով գործունեության ոլորտներում, ինչպիսին է, օրինակ, առևտուրը կամ հանրային սնունդը:

Աղյուսակ 3-ում բերված է հետձգնաժամային ժամանակահատվածում ՀՀ եկամուտների ձևավորման հաշիվն ու դրա կառուցվածքը: Բերված տվյալներից երևում է, որ տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները 2008թ.-ին կազմել են ՀՆԱ-ի 50%-ը, իսկ 2016թ.-ին՝ 54%-ը: Ընդ որում, հիմնական կապիտալի սպառումը 2008 թ.-ին կազմել է 10.5%-ը, իսկ տնտեսության զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները՝ 39.5%-ը: Այդ ցուցանիշները 2016թ.-ին կազմել են համապատասխանաբար 13.9% և 40.1%:

**ՀՀ սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը 1997-2016թթ.**

	1997	1999	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1. Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	336.1 41.7	423.7 42.7	1202.5 35.1	1328.4 34.3	1207.7 35.5	1284.4 33.6	1383.9 32.6	1471.4 30.7	1547 30.5	1629.6 30.6	1734.2 31.7	1763.1 32.2
2. Տնտեսության համախառն շահույթ և համախառն եկամուտներ	396.8 49.2	461.6 46.5	1585.7 46.3	1784.8 46.1	1550.7 45.6	1734.4 45.4	1928 45.4	2264.7 47.2	2418.9 47.7	2584.6 48.5	2710 49.6	2735.2 49.9
3. Արտադրության և ներմուծման հարկեր	74.3 9.2	116.1 11.7	369.8 10.8	463.3 12.0	386.3 11.4	444.1 11.6	469.7 11.1	534.3 11.1	594.9 11.7	620.4 11.6	607.7 11.1	578.7 10.6
4. Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ (-)	2.9 0.4	14 1.4	8.7 0.3	8.3 0.2	3 0.1	2.7 0.1	3.7 0.1	3.9 0.1	5.2 0.1	6 0.1	8.2 0.1	9.7 0.2
5. Սկզբնական եկամուտներ՝ ստացված «արտերկրից»	2.1 0.3	5.0 0.5	277.3 8.1	304.3 7.9	259.8 7.6	358.6 9.4	470.1 11.1	531.8 11.1	515.8 10.2	504.5 9.5	423.4 7.7	408.9 7.5
<b>6. Ընդամենը</b>	<b>806.4 100.0</b>	<b>992.4 100.0</b>	<b>3426.6 100.0</b>	<b>3872.5 100.0</b>	<b>3401.5 100.0</b>	<b>3818.8 100.0</b>	<b>4248.0 100.0</b>	<b>4798.3 100.0</b>	<b>5071.4 100.0</b>	<b>5333.1 100.0</b>	<b>5467.0 100.0</b>	<b>5476.2 100.0</b>

Համարիչում ընթացիկ գներով, մյուս դրամ, հայտարարում %-ով ընդամենի նկատմամբ:

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, 2018, էջ 235, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 226-227, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 230-231, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 230-231, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 205-206:

Արտադրության և տեխնոլոգիաների արդիականացման տեսանկյունից ակներև է, որ անհրաժեշտ է ավելացնել տնտեսության զուտ շահույթի և զուտ խառը եկամուտների բաժինը ՀՆԱ-ում՝ արդյունավետ ընդլայնված վերատրադրություն կազմակերպելու համար:

Երկրի տնտեսությունում ձևավորված կառուցվածքային համամասնությունների վերլուծության կարևոր ուղղություններից է ՀՆԱ օգտագործման կառուցվածքի դիտարկումը: ՀՆԱ օգտագործման կառուցվածքի հիմնական բաղկացուցիչներն են վերջնական սպառմանն ուղղված ծախսերը, համախառն կուտակումը և ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանումը: Տվյալների վերլուծությունից հետևում է, որ ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերը 1990-1995թթ.-ին աճել են՝ 66.3%-ից հասնելով մինչև 117.4%-ի, ինչը նշանակում է սպառման ծավալների աճ՝ նախկինում կուտակված խնայողությունների հաշվին: 1996թ.-ից սկսած իրավիճակն այս մասով որոշակիորեն շտկվել է, սակայն դեռևս հեռու է բավարար համարվելուց, քանի որ երկրում ստեղծված եկամտի 80 տոկոսից ավելիի սպառումը նշանակում է տնտեսության վերարտադրական հնարավորությունների խիստ ցածր մակարդակի անկայություն (տե՛ս աղյուսակ 4-ը):

**ՀՀ եկամուտների ձևավորման հաշիվը և դրա կառուցվածքը 2008-2016թթ.**

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1. Ներքին արդյունք (համախառն շուկայական գներով)	3568.2	3141.7	3460.2	3777.9	4266.5	4555.6	4828.6	5043.6	5067.3
	100	100	100	100	100	100	100	100	100
2. Տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ	1784.8	1550.7	1734.4	1928	2264.7	2418.9	2584.5	2710	2735.2
	50.0*	49.4	50.1	51.0	53.1	53.1	53.5	53.7	54.0
3. Հիմնական կապիտալի սպառում	375	341	389.5	404.1	539.2	580.5	614	697.2	704.9
	10.5*	10.9	11.3	10.7	12.6	12.7	12.7	13.8	13.9
	21.0**	22.0	22.5	21.0	23.8	24.0	23.8	25.7	25.8
4. Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ	1409.8	1209.7	1344.9	1523.9	1725.5	1838.4	1970.6	2012.7	2030.3
	39.5*	38.5	38.9	40.3	40.4	40.4	40.8	39.9	40.1
	79.0**	78.0	77.5	79.0	76.2	76.0	76.2	74.3	74.2

Համարիչում ընթացիկ գներով, մյուս դրամ, հայտարարում՝ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ, \*\*%-ով տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների նկատմամբ:

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, 2018, էջ 233-234, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 225-226, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 229-230 տվյալների հիման վրա:

Համախառն կուտակման մասնաբաժինը, որը բնութագրում է երկրի վերարտադրողական ներուժը, ՀՆԱ-ում 1992թ.-ին հասնելով գրեթե զրոյական մակարդակի, հետագա 1-2 տարիների ընթացքում նույն տեմպերով վերականգնվեց, իսկ 1999-2008թթ.-ի ժամանակահատվածում կայուն աճի տեմպեր արձանագրելով՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջում անցավ 40 տոկոսի սահմանագծից՝ այդ կերպ հավասարվելով 1991թ.-ի մակարդակին:

Ընդ որում, գրեթե համանման դինամիկա է դրսևորել նաև համախառն խնայողությունների մասնաբաժինը համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում (1990-2015թթ.-ի համար՝ գծանկար 2-ը և 2007-2015թթ.-ի համար՝ աղյուսակ 5-ը): Այսպես, 1990թ.-ի 33.7%-ից համախառն խնայողությունների մասնաբաժինը տնօրինվող եկամտի կառուցվածքում 1992թ.-ին նվազեց մինչև -12.0%: Հետագա երեք տարիներին ցուցանիշը որոշակիորեն բարելավվեց, սակայն 1994-1995թթ.-ին 15 տոկոսային կետով արձանագրված անկման արդյունքում, որը պայմանավորված էր անսահադեպ բարձր գնաճով (1994թ.-ին ՍԳԻ աճը նախորդ տարվա համեմատ կազմեց շուրջ 50 անգամ), ցուցանիշը կրկին դարձավ բացասական, ինչը շարունակվեց ընդհուպ մինչև 2000թ.-ը:

**ՀՀ ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքը 2001-2017թթ.**

	2001	2003	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
1. ՀՆԱ, ընթացիկ գներով	1175.9	1624.6	2242.9	2656.2	3149.3	3568.2	3141.7	3460.2	3777.9	4000.7	4555.6	4828.6	5043.6	5067.3	5568.9
	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
2. Վերջնական սպառման ծախսեր	1233.7	1518.9	1930	2187.1	2576.3	2918.8	2944	3289.6	3649.4	4047.9	4514.9	4714.3	4599.4	4598.6	5113.0
	104.9	93.5	86.0	82.3	81.8	81.8	93.7	95.1	96.6	101.2	99.1	97.6	91.2	90.8	91.8
3. Համախառն կուտակում	232.3	394.1	683.3	953.7	1189.9	1458.4	1089.2	1137.3	1030.6	1016.5	1014.2	1007.8	1045.6	912.9	1059.6
	19.8	24.3	30.5	35.9	37.8	40.9	34.7	32.9	27.3	25.4	22.3	20.9	20.7	18.0	19.0


Համարիչում ընթացիկ գներով, մլրդ դրամ, հայտարարում %-ով ՀՆԱ-ի նկատմամբ:  
 Աղբյուրը. կազմվել է հաշվարկվել է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, 2018, էջ 16, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 15, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 16, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008, Եր., ՀՀ ԱՎԾ, 2008, էջ 16, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 15:

Աղյուսակ 5

**ՀՀ տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվը 2007-2016թթ.**

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2015
1. Համախառն տնօրինվող եկամուտ, ընդամենը	3567.8	4060.5	3497.9	3797.1	4255.4	4809.6	5173.4	5363.5	5526.1	5440.9
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<b>Օգտագործում</b>										
2. Վերջնական սպառման ծախսեր	2576.3	2918.8	2944.0	3289.0	3649.4	4184.3	4514.9	4714.3	4599.4	4598.6
	72.2	71.9	84.2	86.6	85.8	87.0	87.3	87.9	83.2	84.5
3. Համախառն խնայողություն	991.5	1147.1	553.9	507.5	606.0	625.3	599.9	649.1	926.7	842.4
	27.8	28.3	15.8	13.4	14.2	13.0	11.6	12.1	16.8	15.5

Համարիչում ընթացիկ գներով, մլրդ դրամ, հայտարարում %-ով ընդամենի նկատմամբ:  
 Աղբյուրը. կազմվել է հաշվարկվել է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, 2018, էջ 236, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 228, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 228, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 232:



**Գծանկար 2. Համախառն խնայողության տեսակարար կշիռը համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում, տոկոսներով<sup>233</sup>**

Աննախադեպ տնտեսական աշխուժացմամբ պայմանավորված (որն, իր հերթին, նշանակալի չափով պայմանավորված էր օտարերկրյա տրանսֆերտների աննախադեպ ներհոսքով և, որպես հետևանք վճարունակ պահանջարկի ընդլայնմամբ) համախառն խնայողությունների հարաբերական ցուցանիշը 2001թ-ից սկսած կտրուկ վերելք արձանագրեց և 2006-2008թթ-ի ժամանակահատվածում կայունացավ 28 տոկոսի շրջանում, ինչը մի կողմից՝ նախորդ տարիների համեմատությամբ բավականաչափ բարձր արդյունք է, մյուս կողմից՝ դեռևս ցածր է, եթե համեմատենք ներկայումս զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներում ակտիվ կառուցվածքային վերափոխումների ժամանակաշրջանում արձանագրված խնայողությունների խիստ բարձր մակարդակի (միջինում 40%) հետ<sup>234</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ կառուցվածքում դիտարկվող ժամանակահատվածում ևս լուրջ վայրիվերումներ է գրանցել և խիստ մտահոգիչ է: Այսպես, 1997թ.-ին հասնելով իր նվազագույն մակարդակին՝ -38,0% ցուցանիշը հետագա մի քանի տարիների ընթացքում աստիճանաբար բարելավվեց՝ 2005թ.-ին հասնելով -14,4%-ի: Սակայն հիմնականում ՀՀ դրամի արժևորմամբ պայմանավորված, ապրանքների ու ծառայությունների ներմուծումը սկսեց աճել ավելի մեծ տեմպերով, քան արտահանումը, ինչի արդյունքում 2008-ին ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանումը ՀՆԱ օգտագործման կառուցվածքում կազմեց արդեն -25,6%:

<sup>233</sup> Աղբյուրը՝ համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը («Ազգային հաշվիների համակարգ» բաժին), ([www.armstat.am](http://www.armstat.am)):

<sup>234</sup> Տե՛ս [www.worldbank.org](http://www.worldbank.org) (World Development Indicators):

Մեր կողմից կատարված մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսությունում ածանաքվել են ակտիվ կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում՝

- ՀՆԱ կառուցվածքում էականորեն կրճատվել է արդյունաբերության մասնաբաժինը և ավելացել է շինարարության ու ծառայությունների տեսակարար կշիռը,
- արդյունաբերության կառուցվածքում կրճատվել է մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը և ավելացել է էներգետիկայի մասնաբաժինը,
- մշակող արդյունաբերության կառուցվածքում էականորեն նվազել է մեքենաշինության մասնաբաժինը և ավելացել է սննդի արդյունաբերության կշիռը,
- համախառն թողարկման կառուցվածքում ավելացել է ՀՆԱ կամ համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը,

➤ ՀՆԱ կառուցվածքում նվազել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինը՝ ի հակադրություն համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժնի աճի,

➤ համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների կառուցվածքում էականորեն նվազել է հիմնական կապիտալի սպառման մասնաբաժինը,

➤ ՀՆԱ օգտագործման կառուցվածքում 1990թ.-ի համեմատությամբ աճել է վերջնական սպառման տեսակարար կշիռը և նվազել համախառն կուտակման կշիռը,

➤ ՀՆԱ կառուցվածքում արտահանման տեսակարար կշիռը դիտարկվող ժամանակահատվածում էականորեն նվազել է, ինչի արդյունքում ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման բացասական հաշվեկշռի հարաբերական մեծությունն աճել է,

➤ արտահանման կառուցվածքում բարձրտեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը նվազել է (վերջին տարիների ընթացքում այս ցուցանիշը չի գերազանցել 2%-ի սահմանագիծը, իսկ 2017թ.-ի տվյալներով տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 0.19%՝ Հայաստանի համար ապահովելով 87-րդ տեղը 119 երկրների մեջ<sup>235</sup>),

➤ համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում համախառն ինայողությունների մասնաբաժինը չնայած վերջին տարիների ընթացքում անշեղորեն աճել է, սակայն դեռևս ցածր է 1990թ.-ի, ինչպես նաև միջազգային փորձի արդյունքների հիման վրա դուրս բերված և առավել ընդունելի համարվող միջին մակարդակից:

Հատկանշական է այն, որ տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերը ոչ թե նպատակային քաղաքականության արդյունք են, այլ խորհրդային տնտեսական կարգից ժառանգած կառուցվածքային ու տեխնոլոգիական անհամամասնությունների հետևանք, ինչպես նաև զլոբալ տնտեսական համակարգին հայաստանյան տնտեսության արագացված ներկառուցման արդյունք:

Վերջին շուրջ երկու տասնամյակների ընթացքում տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերի օբյեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ այդ տեղաշարժերը ցանկալի են և օպտիմալ՝ հասարակության, պետության և երկրի երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության նոր կառուցվածքի ձևավորումը և գործարկումը, որպես կանոն, տեղի է ունենում ցածր տեխնոլոգիական հենքի վրա, որը բավականաչափ հեռու է զարգացած երկրներում ներկայումս առկա մակարդակից, ինչը ՀՀ տնտեսության ներկայիս մրցակցային առավելությունները

<sup>235</sup> Արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական ապրանքների ամենամեծ մասնաբաժինն ունեն Հոնկոնգը (51.67%), Ֆիլիպինները (35.87%) և Սինգապուրը (32.02%): Աղբյուրը՝ [https://www.theglobaleconomy.com/rankings/Information\\_technology\\_exports/](https://www.theglobaleconomy.com/rankings/Information_technology_exports/):



դարձնում է ոչ վստահելի և ժամանակավոր: Բացի այդ, արտահանման կառուցվածքը, որում էական մասնաբաժին ունի հանքահումքային արտադրանքը, խիստ խոցելի է միջազգային հումքային շուկաներում իրավիճակի տատանումների նկատմամբ, ինչը հստակորեն ի ցույց դրեց ներկայիս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Տնտեսության արդի կառուցվածքի ոչ արդյունավետ բնույթը դրսևորվում է նաև այն հանգամանքում, որ վերջին տարիների առաջանցիկ տեմպերով զարգացում են ապրել տնտեսության այն ճյուղերը, որոնք որակյալ աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկ ներկայացնել չեն կարող, հետևաբար տեղի է ունենում աշխատուժի կառուցվածքային փոփոխություն՝ դրա որակական հատկանիշների վատացման ուղղությամբ:

Վերը նշվածի հետ մեկտեղ, տնտեսությունում ամկա են ոլորտներ և գործունեության տեսակներ, որոնք ներկայումս թեև բարձր տեմպերով չեն զարգանում, սակայն համաշխարհային շուկաներում կարող են ակտիվ մրցակցության մեջ մտնել: Այդ ասպարեզներում մրցակցային առավելություններ են հանդիսանում մասնավորապես թերբեռնված տեխնոլոգիական հզորությունների, որակյալ կադրային ներուժի, հեռանկարային գիտատեխնիկական մշակումների ամկայությունը:

Այս համատեքստում, չափազանց կարևոր նշանակություն է ստանում տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանն ուղղված համապատասխան պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը, որի առանցքում պետք է լինի տնտեսության կառուցվածքային գերակայությունների հստակեցումը և նպատակաուղղված կերպով կենսագործումը, տնտեսության մրցունակության բարձրացումը:

Այս տեսանկյունից հանրապետության տնտեսության կառուցվածքային քաղաքականության հիմնական նպատակը պետք է դառնալ ներքին և համաշխարհային շուկաներում հայրենական ապրանքների ու ծառայությունների մրցունակության բարձրացմանն աջակցությունը, վերամշակման բարձր աստիճանով արտադրանք թողարկող ճյուղերի, ինչպես նաև ծառայությունների ոլորտի ճյուղերի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ տնտեսական քաղաքականության ապահովումը:

Այս նպատակի իրականացման գործնական հնարավորությունները սերտորեն կապված են տնտեսության ներսում տեղաշարժերի օպտիմալ ռազմավարության որոշման, ինչպես նաև այն գործիքների և մեխանիզմների հետ, որոնք պետությունը պետք է կիրառի արդյունավետ տնտեսական քաղաքականության իրագործման ընթացքում, երբ զգալիորեն կավելանան արտահանման ծավալները, ինչի հետևանքով կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը, հետևաբար, կավելանան եկամուտները, և կբարձրանա նաև կենսամակարդակը:

**ASHOT MARKOSYAN**

*Yerevan State University, Head of the Chair of Innovative Economics  
Faculty of Economics and Management, Doctor of Economics, Professor,  
Yerevan, Republic of Armenia*

**ELYANORA MATEVOSYAN**

*Yerevan State University, Ph.D. in Economics,  
Lecturer of the Chair of Innovative Economics  
Faculty of Economics and Management,  
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to study the structural changes in the economy of the Republic of Armenia (through the study of GDP) and their trends over the past 20 years, because this way you can evaluate the prospects of the new structure of the economy and the ability to create added value.

Based on the mentioned goal, the authors solved the following tasks: they studied the GDP production account and its structure over a long period of time, through the formation of primary incomes and distribution, the use of GDP, as well as interdependencies and patterns that exist between wage and savings; in the long term, an assessment is made of trends in GDP values calculated by various methods, as well as their socio-economic results.

The studies were carried out using the methods of statistical, comparative analysis, the method of generalization from the particular to the general, as well as studies of statistical averages and time series.

Monitoring of production and use of GDP revealed a number of patterns in changing the proportions of various sectors of the economy, in particular, reducing the share of industry, increasing the share of construction and services, as well as changes in the sectorial structure of GDP. The analysis carried out in the article also shows that over the period under review, the share of wages of employees in the GDP structure decreased, while the share of gross profit and gross mixed income increased, which indicates the underestimation of labor in Armenia.

**Keywords:** *gross domestic product, GDP production, fixed capital, initial income, disposable income, income generation account, income distribution account, gross accumulation, savings.*

## СТРУКТУРНЫЕ ИЗМЕНЕНИЯ В ЭКОНОМИКЕ (ВВП) РЕСПУБЛИКИ АРМЕНИИ И ИХ ТЕНДЕНЦИИ

**АШОТ МАРКОСЯН**

*Заведующий кафедрой Инновационной экономики  
Факультета экономики и управления  
Ереванского государственного университета,  
доктор экономических наук, профессор,  
г.Ереван, Республика Армения*

**ЭЛЯНОРА МАТЕВОСЯН**

*Ассистент кафедры Инновационной экономики  
Факультета экономики и управления  
Ереванского государственного университета,  
кандидат экономических наук,  
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является изучение структурных сдвигов в экономике Республики Армения (посредством изучения ВВП) и их тенденций за последние 20 лет, поскольку таким образом можно оценить перспективность новой структуры экономики и способность создания добавленной стоимости.

Исходя из поставленной цели, авторами решены следующие задачи: изучены счет производства ВВП и его структура за длительный период времени, счет образования первичных доходов и распределения, использования ВВП, а также взаимозависимости и закономерности, существующие между величиной заработной платы и сбережениями; в долгосрочной перспективе дана оценка тенденций величин ВВП, рассчитанных различными методами, а также их социально-экономических результатов.

Исследования проведены с использованием методов статистического, сравнительного анализа, метода обобщения от частного к общему, а также исследования средних статистических величин и рядов динамики.

Мониторинг производства и использования ВВП позволил выявить ряд закономерностей в изменении пропорций различных секторов экономики, в частности о сокращении доли промышленности, увеличении доли строительства и услуг, а также об изменениях в отраслевой структуре ВВП. Анализ, проведенный в статье, показывает также, что за рассматриваемый период доля оплаты труда наемных работников в структуре ВВП уменьшилась, в то время как увеличилась доля валовой прибыли и валовых смешанных доходов, что свидетельствует о недооцененности труда в Армении.

**Ключевые слова:** *валовой внутренний продукт, производство ВВП, основной капитал, первоначальный доход, располагаемый доход, счет образования доходов, счет распределения доходов, валовое накопление, сбережения.*

**ԿԱՐԻՆԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս,  
տնտեսագիտության թեկնածու,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[karine.mnacakanyan.1984@mail.ru](mailto:karine.mnacakanyan.1984@mail.ru)*

**ՄԱՐԳՈ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[mag198824@rambler.ru](mailto:mag198824@rambler.ru)*

**Հոդվածի նպատակն է առաջ քաշել և հիմնավորել այն մոտեցումը, որ ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացում առկա բացերը կարելի է մեղմել գյուղացիական տնտեսությունների կոոպերացման միջոցով, որը հիմնվում է բնակչության անձնական, կոլեկտիվ և հասարակական հետաքրքրությունների վրա: Խնդիր ենք դրել վեր հանել կոոպերացիոն համագործակցության առավելությունները և առաջարկել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման ու զարգացման համար նպաստավոր պայմաններ:**

**Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել է վերլուծական, տրամաբանական, համեմատական և այլ մեթոդներ:**

**Հանգել ենք այն եզրակացության, որ գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրների զգալի մասը կարող է լուծվել, եթե մշակվում ու կիրառվում է կոոպերացմանն աջակցող գործուն քաղաքականություն, և արդյունքում խթանվում է գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը: Գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության բարելավումն անհրաժեշտ է իրականացնել ինչպես գործող օրենսդրության կատարելագործմամբ, այնպես էլ գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության կարգավորման ու կանոնակարգման միջազգային փորձի տեղայնացմամբ:**

**ՀՀ-ում կարելի է կիրառել կոոպերացման առաջավոր փորձը և պետական կառավարման լիազորված մարմնի կառուցվածքում ստեղծել ստորաբաժանում, որին կտրվի առավելագույն անկախ գործելու հնարավորություն, օրենքով ամրագրված իրավունքներ՝ մշակելու գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման պետական ծրագրեր և աջակցության ուղղություններ:**

**Հիմնաբառեր՝** գյուղատնտեսություն, գյուղացիական տնտեսություններ, կոոպերացիա, գյուղատնտեսական կոոպերատիվներ, արտադրանքի իրացում, պետական լիազորված մարմին, կառուցվածքային ստորաբաժանում:

Գյուղատնտեսությունը յուրաքանչյուր պետության համար ունի առանցքային դերակատարություն, քանի որ այն ապահովում է բնակչության աճող պահանջմունքները սննդամթերքով, իսկ թեթև ու մանրի արդյունաբերությանը՝ համապատասխան հումքով:

\* Հոդվածը ներկայացվել է 13.02.2020թ., գրախոսվել՝ 21.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

Հիմնավորված ագրարային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ճյուղում առկա խնդիրների լուծմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Այնուհանդերձ, ՀՀ ագրարային ոլորտում ծագած խնդիրներին պատշաճ լուծումներ չտալը բերել է ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշռի կրճատմանը:

Վերջին տարիներին նկատված գյուղատնտեսական մթերքի համախառն բերքի ծավալների կրճատումը պայմանավորված է ինչպես ցանքատարածությունների կրճատմամբ, այնպես էլ իրացման հետ կապված դժվարություններով:

**Աղյուսակ 1<sup>236</sup>**

**Բուսաբուծական մշակաբույսերի համախառն բերքը 2015-2019թթ.**

**հազ. տոննա**

Մշակաբույսեր	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.
Կարտոֆիլ	607.7	606.3	547.4	415.1	404.1
Բանջարեղեն	1007.6	968.6	861.0	628.2	621.6
Բոստանային մշակաբույսեր	286.8	236.1	215.8	126.8	128.0
Պտուղ և հատապլուղ	377.1	242.6	361.6	343.4	290.1

Կարտոֆիլի համախառն բերքը 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ կրճատվել է 11 հազ. տոննայով կամ 2.6 տոկոսով, բանջարեղենինը՝ 6.6 հազ. տոննայով կամ 1.1 տոկոսով, բոստանային մշակաբույսերինը՝ 1.2 հազ. տոննայով կամ 0.9 տոկոսով, ինչպես նաև պտղի ու հատապտղի բերքը՝ 53.3 հազ. տոննայով կամ 15.5 տոկոսով: Իսկ 2019թ.-ին 2017թ.-ի համեմատ կարտոֆիլի համախառն բերքը կրճատվել է 143.3 հազ. տոննայով կամ 26.2 տոկոսով, բանջարեղենինը՝ 239.4 հազ. տոննայով կամ 27.8 տոկոսով, բոստանային մշակաբույսերինը՝ 87.8 հազ. տոննայով կամ 40.7 տոկոսով և պտղինն ու հատապտղինը՝ 71.5 հազ. տոննայով կամ 19.8 տոկոսով:

Շուկայական տնտեսության պայմաններում գյուղացիական տնտեսությունների համար առավել արդիական են դարձել գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրները: Դրանք բազմազան են, որոնցից հիմնականը ագրոպարենային համակարգի ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունն է, շուկայի մասին տեղեկատվության պակասը, արտադրող-սպառող թույլ կապը և այլն:

Գյուղացիական տնտեսությունների արտադրած արտադրանքի իրացման դժվարությունների մասին վկայում են ՀՀՎԿ-ի հրապարակած բուսաբուծական մթերքի վաճառքի և տնտեսությունում մնացորդի տվյալները:

**Աղյուսակ 2**

**Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտադրանքների իրացման կառուցվածքը 2014-2018թթ.**

**տվյալներով<sup>237</sup>**

**(հազ. տոննա)**

Բուսաբուծական մթերքների անվանումը	2014	2015	2016	2017	2018

<sup>236</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ [www.armstat.am](http://www.armstat.am):

<sup>237</sup> Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2014-2018 թթ., Վիճակագրական ժողովածու, ՀՀՎԿ:

Վաճառվել է					
Կարտոֆիլ	249.9	265.6	264.3	286.3	162.7
Բանջարանոցային մշակաբույսեր	700.7	810.1	757.4	673.3	493.1
Բոստանային մշակաբույսեր	201.1	258.9	261.0	189.3	116.1
Պտուղ և հատապտուղ	150.7	198.7	142.2	212.6	225.9
Մնացորդը տնտեսությունում					
Կարտոֆիլ	202.5	156.2	177.6	128.1	135.7
Բանջարանոցային մշակաբույսեր	43.9	41.3	54.2	44.7	28.9
Բոստանային մշակաբույսեր	-	-	-	-	0.1
Պտուղ և հատապտուղ	25.3	41.8	16.3	22.8	31.9

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2018թ.-ին կարտոֆիլի ապրանքայնության մակարդակը կազմել է 47.8 %, բանջարեղենինը՝ 81.6 %, պտղինն ու հատապտղինը՝ 70.2 %, բոստանային մշակաբույսերինը՝ 92.4 %:<sup>238</sup>

Չնայած 2018թ.-ին գյուղատնտեսական որոշակի արտադրանքների ապրանքայնության մակարդակը միջինից բարձր է, սակայն գյուղացիական տնտեսություններն ունեն իրացման հետ կապված որոշակի բարդություններ, ինչը կարելի է մեղմել գյուղացիական տնտեսությունների կոոպերացմամբ:

Կոոպերացման գործընթացը գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործում հրատապ է, քանի որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 97 %-ը ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսություններ: Բնականաբար, նրանց համար իրացման դժվարությունների հաղթահարման և ֆինանսական ծառայությունների մատչելիության կարելի է հասնել նաև կոոպերացման միջոցով, որի հիմքում դրված է բնակչության անձնական, կոլեկտիվ ու հասարակական հետաքրքրությունները:

«Շուկայամետ բարեփոխումների, սեփականաշնորհման և ապակենտրոնացման ներկայիս միտումների ազդեցության ներքո կոոպերատիվը իրավացիորեն դիտվում է որպես գյուղացիների տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչող, կայուն զարգացում և արդյունավետ կառավարում իրականացնելու ամենահարմար կազմակերպական ձևը»<sup>239</sup>:

Կոոպերացիան ունի որոշակի առավելություններ.

«- կոոպերատիվն իր անդամների համար գյուղներդրանքներ և նյութատեխնիկական մատակարարումներ է ապահովում ցածր գներով և բարձր որակով, դա կարող է հնարավոր լինել մեծածախ գնումների և սակարկությունների հաշվին, ինչը անհատ ֆերմերն անել չի կարող,

<sup>238</sup> Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2018 թվականին, Վիճակագրական ժողովածու, ՀՀԿԿ, Երևան, 2018, էջ 6:

<sup>239</sup> Կոոպերատիվների գործունեությունը կարգավորող ՀՀ-ում գործող իրավական դաշտի ուսումնասիրություն, Երևան, 2014, էջ 6:

- արտադրանքը կոոպերատիվի միջոցով վաճառելու դեպքում կոոպերատիվին անդամ ֆերմերին կարող է լավագույն մեծածախ գին առաջարկել՝ դրանով իսկ ավելացնելով նրա եկամուտները,


- անդամները կարող են համատեղ ձեռնարկել գործունեության նոր ուղղություններ՝ արտադրության ամբողջ շղթայում շարունակաբար ապահովելով արտադրանքի հավելյալ արժեք,

- կոոպերատիվի անդամ ֆերմերներին կարող է մատուցվել նոր ծառայություններ, որոնք դեռևս հասանելի կամ մատչելի չեն անդամների համար,

- ֆերմերները կարող են խուսափել կապակցված շուկաներից, օրինակ՝ երբ ներդրանքի ձեռքբերումը կամ արտադրանքի իրացումը կապված է վարկի տրամադրման հետ»:<sup>240</sup>

Նշված առավելությունները հնարավորություն են տալիս կոոպերատիվի անդամներին վարելու արդյունավետ արտադրություն, որն էլ նպաստում է որոշ խնդիրների լուծմանը:

Գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով իրացման ուղիները կարող են լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքը կոոպերատիվների միջոցով կարող է իրացվել հետևյալ ուղիներով՝



**Գծ. 1. Կոոպերատիվների միջոցով երկրի ներսում իրականացվող իրացման ուղիները**

<sup>240</sup> Գյուղատնտեսական կոոպերացիա. ուղեցույց ֆերմերների համար, էջ 19:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով իրացումը իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- մեծածախ շուկաներ,
- սուպերմարկետների ցանց,
- վերամշակող ձեռնարկություններ,
- միջևորդներ,
- գյուղատնտեսական մթերքի շուկաներ ու խանութներ:

Գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության բարելավումն (ինչը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի իրացման մակարդակի բարձրացմանը) անհրաժեշտ է իրականացնել ինչպես գործող իրավական հիմքերի կատարելագործմամբ, այնպես էլ գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության կարգավորման և կանոնակարգման նպատակով միջազգային փորձի տեղայնացմամբ:

Դիտարկելով միջազգային փորձը՝ օրինակելի ենք համարում Կրաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունը, որի հիմնական գործառույթը կոոպերատիվներին «գյուղատնտեսական կոոպերատիվ» կարգավիճակի տրամադրման, մոնիթորինգի և վերահսկողության իրականացումն է: Գործակալության գործունեությունը ամրագրված է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Կրաստանի օրենքում, որում տրված են ինչպես գործակալության գործառույթները, այնպես էլ ֆինանսավորման աղբյուրները:<sup>241</sup>

Մենք այն կարծիքին ենք, որ ՀՀ պայմաններում ևս զգացվում է նմանատիպ կառույցի ձևավորման անհրաժեշտություն, ուստի առաջարկում ենք ստեղծել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում, որը կունենա նաև առավելագույն անկախ գործելու հնարավորություն և կիրականացնի հետևյալ գործառույթները.

1. «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում սահմանված գործառույթները դնել ստորաբաժանման վրա, մասնավորապես.
  - գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի մշակում և իրականացում,
  - կոոպերատիվների արտադրանքի մրցունակության բարձրացման, արտահանման խթանման նպատակով գործարար համաժողովների, ցուցահանդեսների և տոնավաճառների մասնակցության աջակցություն,
  - խորհրդատվության, ուսուցման և արժանահավատ տեղեկատվության տրամադրման աջակցություն:
2. Էլեկտրոնային հարթակի վարում, որում ներկայացված կլինեն գյուղատնտեսական կոոպերատիվների ինչպես իրականացված, այնպես էլ իրականացվող գործունեության վերաբերյալ տվյալներ, մասնավորապես՝ համախառն բերքի իրացման, մատուցված ծառայությունների և այլնի վերաբերյալ: Հարթակը հնարավորություն կտա առկա գյուղատնտեսական արտադրանքի համար ֆորվորդային պայմանագրերի կնքման պայմաններ ապահովել:
3. Մոնիթորինգի իրականացում, կոոպերատիվների գործունեության վերաբերյալ տեղեկույթի հավաքագրում: «Գյուղատնտեսական կոոպերատիվ» գործունեության սկզբունքներին համապատասխան հավաստագրի տրամադրում և զրկում:

<sup>241</sup> Закон Грузии «О сельскохозяйственном кооперативе, N 816-BC, 2013 г.



## **THE NEED TO DEVELOP AGRICULTURAL COOPERATIVES IN THE RA**

**KARINE MNATSAKANYAN**

*National Agricultural University of Armenia,  
PhD in Economics,  
Yerevan, Republic of Armenia*

**MARGO GHAZARYAN**

*National Agricultural University of Armenia,  
PhD student,  
Yerevan, Republic of Armenia*

The main objective of the article is to substantiate the creation of agricultural cooperatives as a way to address the problems of selling agricultural products. Agricultural cooperatives are based on the personal, collective and public interests of the population. Within the framework of the article, a task has been set to highlight the benefits of cooperative cooperation and to propose favorable conditions for the formation and development of agricultural cooperatives.

During the research analytical, logical, comparative and other methods were used.

As a result of the study, we have come to the conclusion that a significant part of the issues of the sale of agricultural produce can be solved, if an effective support policy for cooperative is processed and applied, which will stimulate the development of agricultural cooperatives. Improvement of the activities of agricultural cooperatives is a must as well as the improvement of the current legislation and the from localization of international experience in regulating and managing the activities of agricultural cooperatives.

The advanced cooperation experience can be applied in Armenia and in the structure of the authorized body of the public administration, a subdivision could be created, which will be given the opportunity to exercise maximum independence with the rights envisaged by law, to elaborate state programs for the development of agricultural cooperatives and directions of assistance.

**Key words:** *Agriculture, farming, cooperatives, agricultural cooperatives, sale of products, state authorized body, structural subdivision.*

## НЕОБХОДИМОСТЬ РАЗВИТИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ КООПЕРАТИВОВ В РА

**КАРИНЕ МНАЦАКАНЯН**

*Национальный аграрный университет Армении, к.э.н.,  
г.Ереван, Республика Армения*

**МАРГО КАЗАРЯН**

*Национальный аграрный университет Армении, аспирант,  
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – выдвинуть и обосновать основанный на личных, коллективных и общественных интересах населения подход, согласно которому существующие проблемы в процессе реализации сельскохозяйственной продукции в РА можно смягчить с помощью кооперации фермерских хозяйств. Наша задача – выявить преимущества кооперации и предложить благоприятные условия для формирования и развития сельскохозяйственных кооперативов.

В ходе исследования использовались аналитические, логические, сравнительные и другие методы.

Было сформировано следующее заключение: значительная часть проблем реализации сельскохозяйственной продукции может быть решена в случае разработки и применения эффективной политики, поддерживающей кооперацию, и, как следствие, стимулирующей развитие сельскохозяйственных кооперативов. Для улучшения деятельности сельскохозяйственных кооперативов необходимо как усовершенствование существующего законодательства, так и применение международного опыта по регулированию и упорядочению их деятельности.

Передовой опыт кооперации можно использовать в РА и создать подразделение в структуре уполномоченного органа государственного управления, которому будет предоставлена возможность действовать максимально независимо, разрабатывать государственные программы развития кооперативов и направления их поддержки.

**Ключевые слова:** *сельское хозяйство, фермерские хозяйства, кооперация, сельскохозяйственные кооперативы, реализация продукции, государственный уполномоченный орган, структурное подразделение.*

**ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային  
քաղաքականության և տնտեսագիտության հետապոտական կենտրոնի տնօրեն,  
ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[ashot.voskan@gmail.com](mailto:ashot.voskan@gmail.com)*

**ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային  
քաղաքականության և տնտեսագիտության հետապոտական կենտրոնի ավագ  
գիտաշխատող, տնտեսագիտական գիտությունների թեկնածու,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[sargis\\_hovhannisyan@yahoo.com](mailto:sargis_hovhannisyan@yahoo.com)*

**Հետապոտության նպատակը** ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման ասպարեպում ձևավորված խնդիրների լուծման հնարավորությունների և ուղիների առաջադրումն է:

Հետապոտության նպատակին հասնելու համար խնդիր է դրվել ուսումնասիրել գյուղատնտեսական արտադրանքների (հատկապես բուսաբուծական) իրացման ապրանքային շղթաներում ծառայած խոչընդոտները, ապրանքարտադրող և իրացնող կառույցների տնտեսական փոխահարաբերությունները, մեծածախ իրացման ասպարեպում միջազգային փորձը, պետության կարգավորիչ դերակատարության նշանակությունն ու պահանջը:

Հետապոտությունն իրականացվել է գործնական դիտարկումների, հարցումների, վիճակագրական, SWOT վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Հետապոտության արդյունքում հանգել ենք եպրահանգման, որ ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման կառուցակարգերի և գործընթացների կանոնակարգումն արդիական խնդիր է, որը կարող է լուծվել իրավա-օրենսդրական հիմքերի ստեղծման ճանապարհով: Կարևորել ենք գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկաների մասին ՀՀ օրենքի ընդունումը ներկայացված դրույթներով: Որպես գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման և ագրարային ոլորտի կազմակերպման ու վարման առանձնահատկություններին համապատասխանող ձև՝ առաջարկվել է մեծածախ բաշխման կենտրոնների գաղափարը, ներկայացվել դրանց պայմանական կառուցվածքը և շահառուների վրա հետապոտությունը:

**Հիմնաբառեր՝** գյուղատնտեսական արտադրանքներ, մեծածախ իրացում, գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ շուկա, մեծածախ բաշխման կենտրոն, իրավա-օրենսդրական կարգավորում, ապրանքային շղթա, ապրանքաշրջանառություն:

\* Հոդվածը ներկայացվել է 12.02.2020թ., գրախոսվել՝ 24.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման համար ստեղծված տնտեսական միջավայրն ու պայմանները մինչև օրս չեն ապահովել ապրանքային շղթաների մեջ ընդգրկված սուբյեկտների շահերի համարժեքությունը, մթերքների որակի անվտանգության նկատմամբ կայուն վերահսկողությունն ու վստահությունը, սպառողների և արտադրողների (գյուղացիական տնտեսություններ) միջև կապի հարակայունությունը, ոլորտում ձևավորվող ավելացված արժեքի բաշխման արդարացի մեխանիզմների կիրառումը և այլն: Գյուղատնտեսական արտադրանքների իրացումը մեծամասամբ տեղի է ունենում կանոնակարգվածության շատ ցածր մակարդակով, երբեմն էլ՝ հախուռն կերպով: Իրացման գործընթացի բարելավման էպիզոտիկ ու տեղային միջոցառումները չեն կարող բերել ցանկալի արդյունքի՝ գոյություն ունեցող խնդիրների փոխկապվածության և հաճախ փոխապայմանավորվածության հետևանքով: Ըստ այդմ, կատարելագործման հավանական լուծումները պետք է ունենան համակարգայնության բավարար աստիճան՝ փոխադարձ ու հետապայմանավորված՝ բարեփոխիչ ազդանքներ թողնելու համար: Անհրաժեշտություն է զգացվում ներդնել իրացման կազմակերպական առաջավոր համակարգեր, որոնցում տեսանելի լինեն դերակատարները, գործակալների միջև շղթայված և արդյունավետ գործելակերպը: Գյուղատնտեսական արտադրանքների իրացման հաջողված տարաբնույթ եղանակները հաշվի առնելով՝ ՀՀ-ի համար հատկապես թարմ պտուղ-բանջարեղենի, բոստանային կուլտուրաների, կարտոֆիլի և հատիկաընդեղենի իրացման գործընթացի բարելավման ուղիներ ենք դիտարկում մեծածախ շուկաների կազմավորումն ու գործունեության իրավասորենսդրական հիմքի ապահովումը: Այն կնպաստի արտահանման աճին, գյուղատնտեսական ներքին շուկաներով շրջանառության ծավալների էական ավելացմանն ու դրանց հաշվառման համակարգի բարելավմանը: Ըստ նախորդ տարիների դինամիկայի՝ ՀՀ-ում նկատվում է գյուղատնտեսական շուկաների թվի և շրջանառության ծավալների նվազման միտում՝ համաձայն աղյուսակ 1-ում բերված տվյալների: Մեծածախ ու մանրամեծածախ շուկայական համակարգի թույլ զարգացվածության արդյունքում ՀՀ-ում գյուղատնտեսական մթերքների շուկաներով արտադրանքի շրջանառությունը ներկայումս այնքան էլ մեծ չէ՝ հաշվի առնելով գյուղմթերքների իրացման ընդհանուր ծավալները: Ապրանքաշրջանառության 2/3-ից ավելին բաժին է ընկնում Երևան քաղաքին և Շիրակի ու Տավուշի մարզերին, ինչը պայմանավորված է արտադրության ու սպառման գոտիների մերձավորությամբ, տրանսպորտային հանգուցային դիրքավորությամբ ու ցանցերով (աղյուսակ 1): Մանրածախ խոշոր առևտրային կազմակերպությունների (իրականացնում են նաև գյուղատնտեսական ծագման ապրանքների առևտուր) և վերջիններիս ցանցերի (սուպերմարկետների ցանցեր) աճի ու զարգացման հետևանքով նախորդ տասը տարիների ընթացքում գյուղատնտեսական մթերքների շուկաներով ապրանքաշրջանառությունը նվազել է 2.9 մլրդ դրամով կամ 12.4%-ով, այսինքն՝ վերջիններս կլանում են շրջանառության ծավալների մի զգալի մասը: Այս առևտրային ձեռնարկությունների տրանսպորտային, պահեստային, սառնարանային կարողություններն ու սպառողների կայուն հատվածի ամկայությունը հնարավորություն է ընձեռում վարել արտադրանքների ձեռքբերման ու իրացման ուրույն քաղաքականություն: Գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման գործընթացների կարգավորման օրենսդրության ամկայության դեպքում կարող են կարգավորվել նաև այսօրինակ սուբյեկտների, առաջնային ապրանքարտադրողների և շուկաների տնտեսական փոխհարաբերությունները: Օրենսդրորեն կարգավորումը կարող է վերաբերել մեծածախ շուկաների գործունեության շրջակայքում խոշոր պարենային կամ նմանատիպ խանութների/ցանցերի տարածման սահմանափակմանը կամ գնումների գործընթացը մեծածախ շուկայից կազմակերպելու պահանջին:

**Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների թիվն ու  
ապրանքաշրջանառությունը<sup>242243244</sup>**

Ցուցանիշներ	Չափի միավոր	2008	2012	2017
<b>Շուկաների թիվը ՀՀ-ում</b>	հատ	<b>34</b>	<b>24</b>	<b>19</b>
<b>Ապրանքաշրջանառությունը ՀՀ-ում, որից՝</b>	մլրդ. դրամ	<b>23.4</b>	<b>19.6</b>	<b>20.5</b>
<b>Երևանում</b>		<b>12</b>	<b>11.2</b>	<b>7.6</b>
տեսակարար կշիռը	%	51.3	57.1	30.1
<b>Տավուշում</b>	մլրդ. դրամ	<b>1.7</b>	<b>1.8</b>	<b>6.5</b>
Տեսակարար կշիռը	%	7.2	9.2	31.7
<b>Շիրակում</b>	մլրդ. դրամ	<b>5.2</b>	<b>3.2</b>	<b>3.4</b>
տեսակարար կշիռը	%	22.2	16.3	16.6

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրենսդրական կարգավորման բաց պայմաններում գյուղատնտեսական մթերքների իրացման մեծածախ գործառույթներով զբաղվում են որոշ սուբյեկտներ (օրինակ՝ Հովտաշատի գյուղատնտեսական շուկան)<sup>242</sup> որպես այլընտրանք մեծածախ շուկաների: Թեև գործունեության որոշ հատկություններով դրանք նման են գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ շուկաներին (ԳԱՄՇ), սակայն մեծածախ շուկան իր կազմակերպական, իրավական կանոնակարգվածությամբ ավելի առաջավոր է, քանի որ ապահովում է.

- գործունեության թափանցիկություն (գյուղմթերքների գներ, շրջանառության ծավալներ),
- արտադրանքի որակի և անվտանգության հսկողության համապատասխան մակարդակ,
- արտադրանքների տեսակասորտավորման կարողությունների առկայություն, պահեստավորման, սառնարանային, լոգիստիկ ծառայությունների մատուցում և այլն:

Գյուղատնտեսական արտադրանքների մեծածախ իրացման ոլորտի կանոնակարգման համար առաջնային է իրացումային գործընթացների, տնտեսական փոխհարաբերությունների և մեծածախ շուկաների գործունեության իրավա-օրենսդրական կարգավորումը: Կանոնակարգման սպեկտրը բավականին լայն է և տարակարգված՝ կախված գյուղատնտեսական մթերքների իրացման ներքին

<sup>242</sup> ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2004-2008, վիճակագրական ժողովածու, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 56:

<sup>243</sup> ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012, վիճակագրական ժողովածու, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 58:

<sup>244</sup> ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2013-2017, վիճակագրական ժողովածու, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2018, էջ 86:

համակարգի զարգացվածության, ներքին ու արտաքին ֆինանսական աղբյուրների հասանելիության, տնտեսավարող սուբյեկտների կայացվածության, սպառողների շահերի պաշտպանության և այլ հարցերից: Ներկայումս ՀՀ հարթավայրային տարածաշրջաններում (Արարատ, Արմավիր) իրականացվում են նախապատրաստական ու շինարարական աշխատանքներ ԳԱՄՀ կազմակերպման ու ենթակառուցվածքների ձևավորման ուղղությամբ, ուստի հրատապ ենք համարում մեծածախ շուկաների վերաբերյալ ՀՀ օրենքի մշակումն ու ընդունումը կամ գործունեության իրավական որևիցե այլ հիմքի ներդրումը: Օրենքի նպատակը կհանդիսանա ինչպես գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողների իրավունքների պաշտպանությունը, որոնք իրացնում են սեփական արտադրանքը մեծածախ վաճառքով, այնպես էլ սպառողների: Օրենքը պետք է կարգավորի գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շրջանառությունում ծագող հարաբերությունները գյուղացիական տնտեսությունների, իրավաբանական անձանց, պետական կառավարման կենտրոնական ու տարածքային մարմինների միջև: Այն սահմանում է մեծածախ շուկաների տեղաբաշխման, մասնագիտացման հարցեր, գործունեության խթանման ու սահմանափակման միջոցառումներ: ԳԱՄՀ-ների գործունեության ծավալման և կանոնակարգման տեսանկյունից կարևորում ենք ներքոհիշյալ դրույթների իրավա-օրենսդրական ամրագրումը.

- ԳԱՄՀ սահմանումը, գործունեության սկզբունքները, սեփականատիրական կարգավիճակը, ձևավորման ու գործունեության ապահովման պետական աջակցության ուղղություններն ու ձևերը,
- ԳԱՄՀ գործունեության նկատմամբ պահանջները (կարող է ներառել կազմակերպակա-իրավական, տեխնիկո-տնտեսական և այլ պահանջներ),
- ԳԱՄՀ-ում գործառնող և նրա հետ համագործակցող սուբյեկտներ,
- ԳԱՄՀ-ում իրացվող գյուղատնտեսական արտադրանքի անվտանգությունը,
- ԳԱՄՀ հարկումը (կարող է ներառել դրոշակի արտոնությունների ձևերը, հարկման կարգը, ժամկետները և այլն),
- ԳԱՄՀ գործունեության նկատմամբ հսկողության կարգը և այն իրականացնող լիազոր մարմնի իրավասությունները,
- ԳԱՄՀ-ի հետ իրավական փոխհարաբերություններ (պայմանագրերի ձև, սուբյեկտներ և այլն), իրավահարաբերություններում ծագած վեճերի լուծման կարգը և այլն:

Ըստ մեր գնահատականների՝ օրենքի ընդունման և կանոնակարգվածության պարագայում գործող մեծածախ շուկաներում գյուղատնտեսական արտադրանքի գնազոյացման ձևախեղումները նվազագույնի կհասնեն, և գները անհիմն չեն բարձրանա: Միաժամանակ իրացման արժեշղթայի մասնակիցների միջև իրացման գործընթացում ձևավորված եկամուտները կբաշխվեն առավել արդարացի (ներկայումս հիմնական արժեք ստեղծող արտադրողին բաժին է ընկնում շուրջ 30%): Վերջապես կստեղծվեն նպաստավոր պայմաններ՝ «արտադրող – միջնորդ - մեծածախ շուկա - մանրածախ շուկա - սպառող» արդյունավետ արժեշղթայի կայացման համար: ՀՀ պայմաններում գյուղատնտեսական արտադրանքի իրացման արդյունավետ կազմակերպական մոդել կհանդիսանա մեծածախ շուկաների համակարգի ներդրումը և գործարկումը: Ուստի առաջարկել ենք ստեղծել մասնակցողական բնույթի «Երևանի մեծածախ շուկա» ԲԲԸ, որի կանոնադրական կապիտալում մասնակցություն կունենան ՀՀ կառավարությունը՝ 26%, Երևանի քաղաքապետարանը՝ 25%, «Մեծածախ շուկա» ընկերությունը՝ 20% մասնաբաժին, իսկ մնացած բաժնեմասը բաշխվում է ներդրումներ

կատարող առևտրային բանկերի, ֆինանսական կազմակերպությունների և այլ մասնավոր բաժնետերերի միջև:

Ներդրումների ծավալը կկազմի 25-27 մլն ԱՄՆ դոլար, կապիտալի վերադարձ կարելի է ակնկալել 12-15 տարի հետո:

Մեծածախ շուկայի միջոցով հնարավոր կլինի իրացնել Երևան քաղաքում վաճառվող թարմ մթերքի շուրջ 50 %-ը՝ 40-45 հազ. տ կարտոֆիլ, 100 հազ. տ բանջարեղեն, 25-30 հազ. տ բոստանային մշակաբույսեր, 55-60 հազ. տ պտուղ և 2-3 հազ. տ խաղող, և արտահանել ավելի քան 80 հազ. տ կարտոֆիլ, 100 հազ. տ բանջարեղեն, 70 հազ. տ պտուղ, 35 հազ. տ խաղող, 7 հազ. տ բոստանային մշակաբույսեր և այլն<sup>245</sup>:

Գյուղատնտեսական արտադրանքների իրացման արդյունավետ մոդել են նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի մեծածախ բաշխման կենտրոնները (ՄԲԿ): Դրանք գյուղատնտեսության արտադրության բոլոր ուղղություններով վաճառքի հարթակներ են, որոնք հրապուրելի են տարբեր կարգի արտադրողների, իրացնողների, լոգիստիկայով զբաղվողների համար:

Ներկայումս տարբեր երկրներում գործում են նմանօրինակ գործառույթներ ապահովող մեծածախ կենտրոններ, (օրինակ «LEON CORBAS», Mercaban և այլ), որոնց հատուկ է գործունեության բարձր համակարգվածությունն ու արդյունավետությունը: Գյուղատնտեսական արտադրանքի իրացման միջազգային փորձի, արժեշղթաների եռամակարդակ ու քառամակարդակ մոդելների ուսումնասիրությունները, առավելությունների և թույլ կողմերի վերհանումը ուղղորդում են եզրակացնելու, որ մեծածախ բաշխման կենտրոնների աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները կարող են տեղայնացվել ՀՀ պայմաններում<sup>246</sup>:

ՄԲԿ-ների արտադրաիրացումային (վաճառքի) ողջ շղթան մի կողմից՝ գյուղատնտեսական արտադրանքի ընդունման լոգիստիկ կենտրոն է՝ առաջնային վերամշակմամբ, պահպանմամբ, մյուս կողմից՝ երաշխավորված բազա, հումքային պահուստ վերամշակողների և մանրածախ առևտրով զբաղվողների համար:

ՄԲԿ-երի կառուցվածքային առանձնահատկությունները տրվում են գծապատկեր 1-ում:

ՄԲԿ-երի ներդրումն ունի դրական հետազդեցություն բոլոր շահառու կողմերի համար, մասնավորապես.

- արտադրանքի միջտարածաշրջանային տեղաբաշխման արդյունավետություն,
- ԱՀԿ-ի պահանջներին համապատասխան նոր աջակցության գործիքների օգտագործում,
- զբաղվածության մակարդակի բարձրացում,
- պարենային ապրանքների վերամշակման ու պահպանման ազգային տեխնոլոգիաների, ներառյալ անհրաժեշտ սարքավորումների և ագրեգատների արտադրության պայմանների բարելավում,
- հարկային վճարների աճ,

<sup>245</sup> **Ոսկանյան Ա.Ե.**, Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի զնման (մթերման) արժեշղթայի կազմակերպման մոդել, ՀԱՄՀ Ագրոգիտություն և տեխնոլոգիա, N (66), 2/2019, էջ 54-58:


<sup>246</sup> **Ոսկանյան Ա. Ե., Հովհաննիսյան Ս. Վ.**, Գյուղատնտեսական արտադրանքի իրացման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում՝ պտուղ բանջարեղենի օրինակով, Материалы международной конференции по актуальным проблемам развития сельского хозяйства в Республике Армения, Армянский Национальный Аграрный Университет / Ереван, НАУА, 2018, с. 366-370:

- գյուղատնտեսական արտադրանքի հոսքերի հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում, կանխատեսում և ստվերային հատվածի կրճատում:

Համաձայն մեր ուսումնասիրությունների՝ ՄԲԿ-ների տեղաբաշխումը նպատակահարմար է Տավուշի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Սյունիքի մարզերում, որոնք կապահովեն հարակից տարածաշրջաններում ապրանքայնության ցուցանիշների բարելավում և իրացման ծավալների ավելացում: Պտղի, բանջարեղենի, հացահատիկի ու կարտոֆիլի մասով իրացվող արտադրանքի հավելածը կհասնի շուրջ 166.7 հազ. տոննայի: Ապրանքային արտադրանքի ծավալների այսպիսի աճը հնարավոր է ապահովել համապատասխան պահեստասառնարանային կարողությունների ձևավորման դեպքում, որի համար, ըստ հաշվարկների, կպահանջվի շուրջ 22.9 մլրդ դրամի ներդրում:

Մեծածախ շուկայի և բաշխման կենտրոնների ձևավորումն ու լիարժեք գործարկումը մուլտիպլիկատիվ էֆեկտի ազդեցություն կունենա փոքրածավալ արտադրանք արտադրող գյուղացիական տնտեսությունների և Երևան քաղաքում գործող սուպերմարկետների հետ անհավասար մրցակցության մեջ գտնվող փոքրածավալ մանրածախ առևտրային կետերի վրա: Որոշակի գործոններով պայմանավորված՝ կիսով չափ կկրճատվեն պտղաբանջարեղենի, կարտոֆիլի և մյուս ապրանքների պահպանման, փաթեթավորման, տեղափոխման և այլ անհարմարությունների պատճառով արժեշղթայում առկա շուրջ 30-35% կորուստները, անցում կկատարվի գյուղատնտեսական ապրանքների քաղաքակիրթ իրացման և առևտրի կազմակերպման սկզբունքներին, միջազգայնորեն ընդունված ստանդարտերի կիրառմանը և պարենային անվտանգության կանոնների պահպանմանը:





Գծապատկեր 1. Մեծածախ բաշխման կենտրոնների պայմանական (առաջարկվող) կառուցվածքը

# **OPPORTUNITIES AND PROSPECTS OF WHOLESALE TRADE OF AGRICULTURAL PRODUCTS IN ARMENIA**

**ASHOT VOSKANYAN**

*Director of the Research Centre “Agrarian Policy and Economics” of the Armenian National Agrarian University, Head of the Department of Agrarian Policy and Consulting, Ph.D. in Economics, Associate Professor  
Yerevan, Republic of Armenia (RA)*

**SARGIS HOVHANNISYAN**

*Senior researcher of the Research Centre “Agrarian Policy and Economics” of the Armenian National Agrarian University, Ph.D. in Economics,  
Yerevan, Republic of Armenia (RA)*

The research aims at proposing opportunities and ways of solving problems in the field of wholesale trading of agricultural products in the Republic of Armenia.

To achieve the goal of the research, the task was set to study the problems existing in the production chains of agricultural products (especially crop production), the economic interrelationships of producers and sales organizations, international experience in the field of wholesale trade, the importance and necessity of the regulatory role of the state.

The research was conducted with the help of practical observations, surveys, by using statistical, SWOT analysis methods.

As a result of the research, we came to the conclusion that the regulation of the wholesale trade of agricultural products in Armenia is a significant issue that can be solved through the creation of legal framework. We outline the importance of adoption of the RA Law on wholesale markets of agricultural products with the provisions presented. As an effective form of agricultural products wholesale trading which meets the peculiarities of the agrarian sector, the idea of wholesale distributing centres was proposed with their provisory structure and impact on beneficiaries.

**Key words:** *agricultural product, wholesale trade, wholesale market, wholesale distribution centre, legislative regulation, commodity chain, commodity turnover.*

**АШОТ ВОСКАНЯН**

*Директор исследовательского центра “Аграрной политики и экономики”  
Национального аграрного университета Армении, заведующий кафедрой Аграрной  
политики и консалтинга, кандидат экономических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

**САРГИС ОГАННИСЯН**

*Старший научный сотрудник исследовательского центра “Аграрной политики и  
экономики” Национального аграрного университета Армении,  
кандидат экономических наук,  
г. Ереван, Республика Армения*

Цель исследования – предложить возможности и пути решения проблем в сфере оптовой торговли сельскохозяйственной продукцией в Республике Армения.

Для достижения цели исследования была поставлена задача изучить проблемы, существующие в производственных цепочках сельскохозяйственной продукции (особенно растениеводства), экономические взаимосвязи производителей и сбытовых организаций, международный опыт в сфере оптовой торговли, важность и необходимость регулирующей роли государства.

Исследование проводилось с помощью практических наблюдений, опросов, с использованием статистических методов SWOT-анализа.

В результате исследования мы пришли к выводу, что регулирование оптовой торговли сельскохозяйственной продукцией в Армении является важной проблемой, которая может быть решена путем создания правовой базы. Мы подчеркиваем важность принятия Закона РА об оптовых рынках сельскохозяйственной продукции с представленными положениями. Как эффективная форма оптовой торговли сельскохозяйственной продукцией, соответствующей организационным особенностям и системе ведения аграрного сектора, была предложена идея оптовых распределительных центров, их условная структура и влияние на бенефициаров.

**Ключевые слова:** *сельскохозяйственная продукция, оптовая торговля, оптовый рынок, оптовый распределительный центр, законодательное регулирование, товарная цепочка, товарооборот.*

**ԿԵՆՍԱԹՅՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ\***

**ԱՐՄԻՆԵ ՍՉԱՆՅԱՆ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն [am-80@mail.ru](mailto:am-80@mail.ru)*

*Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական բաղաբաղկանության գերակայություններից է: Կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում նպատակ է դրվել ներկայացնել այնպիսի համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, որ յուրաքանչյուր տարեց կամ ծեր մարդու համար կապահովի որևէ տեսակի եկամուտ, նվազագույն՝ աղքատության շեմը գերազանցող նպաստից մինչև կենսաթոշակային տարիքն ունեցած աշխատավարձի կամ եկամտի փոխհատուցում:*

*Հոդվածում մեկնաբանվել են այդ գործընթացի հիմնական առանձնահատկությունները և վեր են հանվել նախկինում գործող ու ինքնաֆինանսավորվող կենսաթոշակային համակարգերի չլուծակցման ու կատարելագործման հիմնախնդիրները, առկա բացթողումները: Ներկայացվել են ՀՀ և այլ երկրների կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ընթացքը և գործուն մեխանիզմների ստեղծման շրջանակը, նաև վերլուծվել է բաշխողական և կուտակային կենսաթոշակային համակարգը բնութագրող պետական բյուջեի ցուցանիշների դինամիկան:*

*Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են համեմատական, ֆինանսական վերլուծության և այլ մեթոդներ:*

*Հոդվածը ներառում է ապահովագրական և ոչ ապահովագրական հիմքի վրա սոցիալական աջակցության հաշվարկման մեխանիզմի մեթոդաբանությունը, իսկ եկրահանգումներն ու առաջարկությունները հիմնականում ընդգրկում են օրենսդրական դրույթների սահմանման հետ կապված հարցադրումները, որոնց վերանայման պարագայում կարող ենք ունենալ հասարակություն-պետություն փոխվստահելի հարաբերությունների ավելի բարձր մակարդակի ձևավորման ակնկալիքներ:*

*Հիմնաբառեր՝ կենսաթոշակ, սոցիալական նպաստ, կուտակային կենսաթոշակային բաղադրիչ, աղքատություն, սոցիալական պաշտպանություն, ֆինանսական հնարավորություններ, կենսամակարդակ:*

*Կենսաթոշակային հարաբերությունների ձևավորման ու կարգավորման հիմնահարցերի պարզաբանման տեսանկյունից նպատակահարմար է անդրադարձ կատարել արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման ու զարգացման պատմական ընթացքին: Ըստ նպատակային նշանակության՝ արտաբյուջետային ֆոնդերը դասակարգվում են տնտեսական, սոցիալական և գիտական ֆոնդերի<sup>244</sup>: Մի շարք*

\* Հոդվածը ներկայացվել է 13.02.2020թ., գրախոսվել՝ 21.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

<sup>244</sup> Довгая О. В., Государственные внебюджетные фонды: учебное пособие для бакалавриата и магистратуры.-М.-Берлин: Директ-Медия, 2015, էջ 11.

երկրներում սոցիալական նշանակության ֆոնդերին են վերաբերում կենսաթոշակային, սոցիալական ապահովագրության, պարտադիր բժշկական ապահովագրության ֆեդերալ կամ տարածքային և զբաղվածության պետական ֆոնդերը<sup>245</sup>:

Բաշխողական կենսաթոշակային համակարգում կենսաթոշակային հարաբերությունների կարգավորման գործընթացը ՀՀ-ում իրականացվում է բյուջետային համակարգի շրջանակներում, բայց չենք կարող չփաստել այն հանգամանքը, որ ավելի քան մեկ տասնամյակ կենսաթոշակների, մասնավորապես աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորման հիմնական աղբյուրը ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամն է եղել: Այն 2005 թվականին ընդգրկվեց բյուջետային համակարգի առաջին մակարդակում, իսկ 2008 թվականին արդեն պարտադիր սոցիալական ապահովության վճարները դարձան պետական բյուջեի եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր: Գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարի սանդղակը ռեգրեսիվ էր, իսկ վարձու աշխատողները սոցիալական վճարումները կատարում էին 3-8% պրոգրեսիվ դրույթաչափով<sup>246</sup>:

Ստորև ներկայացվող աղյուսակում կուտակային բաղադրիչի շրջանակում նպատակային սոցիալական վճարներին ավելացվում են նաև պետության կողմից վճարվող գումարները: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնակցի կենսաթոշակային հաշվին կուտակային հատկացումների կատարումը 2020 թվականին կանխատեսվում է 70,0 մլրդ դրամի չափով<sup>247</sup>: Համեմատության համար նշենք, որ 2019 թվականին այդ հատկացումները նախատեսվել էին 56,8 մլրդ դրամի չափով<sup>248</sup>:

**Աղյուսակ 1.**

**Կենսաթոշակների ֆինանսավորման բյուջետային ռեսուրսներն ըստ եկամտատեսակների<sup>249</sup> (մլրդ դրամ)**

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Պետ. բյուջեի ընդամենը եկամուտներ	780.4	880.8	946.2	1071.4	1144.8	1167.7	1171.1	1237.2	1340.9
Հարկեր և տուրքեր	699.4	777.4	878.4	1000.9	1064.1	1087.9	1079.7	1158.1	1257.9

<sup>245</sup> **Բաղակյան Լ. Հ. և ուրիշներ**, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան, «ՄՈԱ» ՍՊԸ, 2010թ., էջ 167:

<sup>246</sup> «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ օրենք, 29 նոյեմբերի 2011թ.:

<sup>247</sup> ՀՀ կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ, էջ 198:

<sup>248</sup> «Կենսաթոշակային ապահովություն» 1102 ծրագիր, 12005 միջոցառում, 2019թ.:

<sup>249</sup> www.minfin.am

Եկամտա- հարկ	73.9	81.2	91.7	x	x	x	x	x	x
Պարտ. սոց. ապ. վճարներ	105.3	123.4	129.1	x	x	x	x	x	x
Եկամտա- յին հարկ	x	x	x	251.1	289.2	311.7	332.7	341.3	356.6
Նպատ. սոց վճարներ	x	x	x	x	x	10.9	13.4	15.8	17.4

Ինչպես տեսնում ենք, 2015-2018թթ. կտրվածքով ոչ միայն սոցիալական վճարների գումարն է կայուն աճում, այլ նաև եկամտային հարկի գծով հավաքագրումների մակարդակը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտների աճով (սվազագույն աշխատավարձի փոփոխություն, միջին ամսական աշխատավարձի աճ, աշխատողների թվաքանակի ավելացում և այլն): Վերջին տարիներին առանձին եկամտատեսակների գծով եկամտային հարկի հավաքագրումների փոփոխություններն ունեցել են ոչ միայն ավելացման, այլ նաև նվազման միտումներ՝ պայմանավորված ոչ միայն օրենսդրական փոփոխություններով, այլ նաև տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված անկման միտումներով: Վերոնշյալ գործոնների դրական և բացասական ազդեցությունը շարունակվելու է նաև առաջիկա տարիներին, բայց ընդհանուր հարկի գումարն աճելու է նաև 2020 թվականին, իսկ 2019 թվականի իննամսյա հաշվետվության տվյալներով եկամտային հարկի մուտքերը կազմել են 335,2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 29,2%-ով կամ 75,7 մլրդ դրամով: Ներկայում կենսաթոշակների ֆինանսավորման մասով դիտարկվում է եկամտային հարկի գումարը, իսկ ապագայում կուտակային բաղադրիչի կիրարկմամբ՝ նաև սոցիալական վճարները: Կենսաթոշակների գծով ծախսերի աճը վերջին տարիներին հիմնականում պայմանավորված է եղել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով<sup>250</sup>:

Սոցիալական պաշտպանությունն իրականացվում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության և ապահովագրության քաղաքականությունների միջոցով, ինչպես օրինակ՝ ապահովության դեպքում, անկախ ծառայություններ ստացողների անհատական վճարումներից, ՀՀ-ում շահառուները ծեռք են բերում սոցիալական նպաստ ստանալու իրավունք՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և օրենքով սահմանված այլ դեպքերում: Սոցիալական նպաստները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից (նախկինում՝ նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից): Ի տարբերություն կենսաթոշակների չափի՝ ծերության նպաստը հաստատուն է, և ցանկացած քաղաքացի որպես ծերության նպաստ ամեն ամիս ստանում է կայուն եկամուտ, որը մինչև 2019 թվականը կազմում էր ընդամենը 16 հազար դրամ (հիմնական կենսաթոշակի չափով)<sup>251</sup>: Ծայրահեղ աղքատության հարթահարման նպատակով սոցիալական նպաստառուներին տրամադրվող գումարը 2019 թվականից այլևս պարենային գծից ներքև չի լինի: Այն սահմանվել է 25500 դրամ և տարեցտարի ավելացման միտում կունենա: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով պարենային (ծայրահեղ)

<sup>250</sup> ՀՀ 2015-2018 թվականների պետական բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվություններ:

<sup>251</sup> ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 32-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1491-Ն որոշում:

աղբատության գիծը, որը 2016 թվականին կազմել է 23313 դրամ<sup>252</sup>, կիրառելով 3% գնաճ յուրաքանչյուր տարվա համար: Այս փոփոխությունը վերաբերում է շուրջ 64000 նպաստառուների և սոցիալապես անապահով քաղաքացիների որոշ շրջանակի, որոնց համար 25500 դրամը սահմանվում է որպես նվազագույն աշխատանքային կենսաթոշակ:

Աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորումը 2020 թվականին կկազմի 246,5 մլրդ դրամ՝ 2019 թվականի 222,9 մլրդ դրամ հաստատված ցուցանիշի համեմատությամբ: Նշենք, որ վերջին տարիներին այս ցուցանիշի գծով նույնպես արձանագրվել է կայուն աճ՝ պայմանավորված կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխությամբ (հիմնականում թվաքանակն աճում է, բայց օրինակ հասցեականության ապահովման նպատակով վարչարարության ուժեղացման պայմաններում այն կարող է նվազել), «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի լիարժեք ներդրմամբ, կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխությամբ<sup>253</sup>: 2020 թվականից կենսաթոշակների չափը 10%-ով բարձրացնելու համար անհրաժեշտ կլինի մոտավորապես 25 մլրդ դրամի չափով լրացուցիչ ֆինանսավորում:

Յուրաքանչյուր պետության տնտեսական զարգացման մակարդակով և ֆինանսական հնարավորություններով պայմանավորված՝ սոցիալական ապահովությունը և ապահովագրությունը իրականացվում են տարբեր կառույցների ու մեխանիզմների միջոցով: Լավագույն միջազգային փորձի համատեքստում ներկայացնենք աշխարհի բնակչության 63%-ից ավելին ընդգրկող երկրների միջև համեմատությունը՝ ըստ Մեքսիկոյի Մեքսիկոյի Գլոբալ Կենսաթոշակային Ինդեքս 2019 զեկույցի, որտեղ ընդգրկված չեն ԱՊՀ երկրները: 2019 թվականին ամփոփ գնահատականով Նիդերլանդները և Դանիան եղել են առաջատար՝ համապատասխանաբար 81,0 և 80,3 ինդեքսով և ճանաչվել են A աստիճանի կենսաթոշակային համակարգ ունեցող երկրներ: Առաջին եռյակը լրացնում է Ավստրալիան՝ (B+) 75,3 ինդեքսով: 70-ի սահմանագիծը հատում են Ֆինլանդիան (73,6), Շվեդիան (72,3), Նորվեգիան (71,2), Սինգապուրը (70,8) և Նոր Զելանդիան (70,1): Բացի ամփոփ գնահատականից, նույն հետազոտության շրջանակներում ներկայացվել են հետևյալ ենթացուցանիշները՝ համարժեքություն, կայունություն և ամբողջականություն: Համարժեքության ցուցանիշով առաջատար երեք տեղերում են Իռլանդիան (81,5) Ֆրանսիան (79,1) և Նիդերլանդները (78,5), կայունության ցուցանիշով՝ Դանիան (79,8), Նիդերլանդները (78,3) և Ավստրալիան (73,5), իսկ ամբողջականության ցուցանիշով՝ Ֆինլանդիան (92,3), Նորվեգիան (90,6) և Նիդերլանդները (88,9)<sup>254</sup>:

Միջազգայնորեն ընդունված չափանիշների համաձայն՝ եթե աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում գերազանցում է 9%-ը, ապա այդ ազգը համարվում է ծերացող<sup>255</sup>: 2025-2030 թվականներին հատելով 10% սահմանագիծը՝ այդ ցուցանիշը աշխարհում հետագայում նույնպես կունենա բարձրացման միտում<sup>256</sup>: Հայաստանում նման իրավիճակը պայմանավորված է ինչպես միգրացիոն ակտիվ հոսքերով, այնպես էլ ծնելիության մակարդակի անկմամբ: Բաշխողական կենսաթոշակային համակարգը կենսունակ է, եթե համակարգի բեռնվածության գործակիցը 3 է: Ինչպես բազմաթիվ

<sup>252</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, 2017թ., էջ 40:

<sup>253</sup> ՀՀ կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ, էջ 198:

<sup>254</sup> Melbourne Mercer Global Pension Index 2019, 7p.

<sup>255</sup> **Հովհաննիսյան Ռ.**, «ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի ռիսկերը և VAR-ի գնահատման ներքո պահուստավորման նվազագույն շեմի սահմանումը», Ֆինանսներ և Էկոնոմիկա -12 (#11207-208), 2017թ., էջ 135:

<sup>256</sup> International Patterns of Pension Provision II, A Worldwide Overview of Facts and Figures, The World Bank

երկրներում, Հայաստանում նույնպես այս ցուցանիշը մտահոգիչ է, և անհատական հաշվառման համակարգի ներդրումը ինքնանպատակ չպետք է լինի, քանի որ աշխատավարձերի փոփոխության, տղամի ու տնտեսական զարգացման նման տեմպերն ապագայում կպահանջեն ավելի մեծ գումարներ:

Բնակչության ծերացման հիմնախնդրի նշանակալիությունը տարբեր երկրներում արդեն իսկ ամրագրված փաստ է, և սոցիալ-տնտեսական, քաղաքական, պատմական ազդեցությունների ներքո ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում այս մարտահրավերը մի կողմից, պետության՝ այդ ծավալով կենսաթոշակների ֆինանսավորման պարտավորությունը ստանձնելու անհնարինությունը մյուս կողմից, հրատապ են դարձնում կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը մեր երկրում: Հայաստանի ներկա բազմաստիճան կենսաթոշակային համակարգը բաղկացած է երկու բաղադրիչից՝ բաշխողական և կուտակային: Կուտակային համակարգն ունի մի շարք «առավելություններ», մասնավորապես կուտակային բաղադրիչի շրջանակներում մասնակցի կողմից կատարված սոցիալական վճարները ճշգրտվում են գնաճով<sup>257</sup>, ՀՀ կենտրոնական բանկը պետական կառավարման այլ մարմինների հետ համատեղ կարող է հաստատել մասնակիցների իրավունքների, օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ մեխանիզմներ ու երաշխիքներ<sup>258</sup>, բացի արժույթային սահմանափակումից գոյություն ունի նաև կուտակային կենսաթոշակային միջոցներով ներդրումների աշխարհագրական սահմանափակում, ընձեռվել է ժառանգման հնարավորություն մասնակցի ժառանգների կողմից և այլն:

Կարևոր է նաև, որ հստակ տարանջատվեն այն աղբյուրները, որոնք ծառայելու են ապահովագրական և ոչ ապահովագրական հիմքի վրա տրվող կենսաթոշակներին ու նպաստներին: Այն միջոցները, որոնք ուղղվում են կենսաթոշակային ապահովագրության հատվածին, հստակ կապի մեջ պետք է լինեն այդ միջոցների գոյացման աղբյուրների և ֆինանսավորման ծավալների հետ: Կարևորելով 40-50% փոխհատուցման գործակցի ապահովումը՝ նշենք նաև, որ հետագայում անհրաժեշտ պայման պետք է դիտվի նաև կենսաթոշակի մեծության պարտադիր համադրումը նվազագույն կենսապայմանների ապահովման սահմանագծի հետ: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում նշվում է, որ 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձանց աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները: Այս օրենսդրական դրույթը չի ապահովում արդարության, հավասարության սկզբունքը, և միաժամանակ խզվում է սերունդների համերաշխության ապահովման սկզբունքի հետ կապը: Փաստորեն, կուտակային ինքնաֆինանսավորման կենսաթոշակային համակարգը, ի լրումն բաշխողական կենսաթոշակային համակարգի, չի ձևավորել այդ երկու զուգակցված համակարգերի ամբողջական միասնական մոդելը: Պետք է կարևորել նաև կուտակային կենսաթոշակային համակարգում կամավոր վճարման բաղադրիչի ընդգրկումը՝ պայմանավորված ժամկետային սահմանափակությամբ (օրինակ՝ որոշ ժամանակ անց վճարումների դադարեցումը կամ միջոցների սառեցումը, այդ միջոցների ուղղումն այլ նպատակների և այլն):

Առաջարկությունները կարելի է ամփոփել հետևյալ եզրահանգումների տեսքով.

- Օրենսդրաիրավական դաշտում սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն հասկացությունների հստակ սահմանազատում, ինչը ենթադրում է, որ ապահովագրական տարր

<sup>257</sup> «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հավելված, 22 դեկտեմբերի 2010թ.:

<sup>258</sup> «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենք, 21 հունիսի 2014թ.:



պարունակող հասկացությունները չպետք է ներկայացվեն սոցիալական ապահովություն հասկացության ներքո,

- Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում միայն ի լրումն բաշխողական կենսաթոշակային համակարգի, այսինքն՝ եթե ներկա կենսաթոշակային համակարգը ապահովում է կենսաթոշակների ֆինանսավորումը՝ հաշվի առնելով սոցիալական վճարներ կատարելու ողջ ժամանակաշրջանը, ապա եկամտային հարկի գործարկմամբ ապագայում կենսաթոշակի մեծության ձևավորման վրա այդ գործոնի ազդեցությունը չի պահպանվում,
- Սպառողական զամբյուղի և եկամուտների բևեռացման մեղմանն ուղղված դիֆերենցված փոխհատուցման գործակցի սահմանում հիմք ընդունելով ավելի ցածր եկամուտներ ունեցողների դեպքում ավելի բարձր փոխհատուցման գործակից ձևավորելու հանգամանքը՝ ի համեմատություն ավելի բարձր եկամուտ ստացողների,
- Պարտադիր սկզբունքով կենսաթոշակային համակարգի ամբողջական ներդրման ժամկետային սահմանափակումների կիրառում, ինչը նշանակում է աշխատողի աշխատանքային պայմանների վատթարացման պայմաններում կամավորության սկզբունքով վճարման հնարավորությունը ողջ դեպքերում և ժամկետներում:

ՀՀ կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը Էապես նվազեցնել աղքատությունը և վերացնել ծայրահեղ աղքատությունը: Պարբերաբար բարձրացվելու են պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ՝ գնաճի նկատմամբ: Բարեփոխվելու է նաև կուտակային բաղադրիչը՝ խրախուսելով կուտակային միջոցների ներդրումը ՀՀ-ում<sup>259</sup>: Կենսաթոշակառուների շրջանում ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությամբ ամրագրված է, որ ակտիվ կենսակերպի խրախուսման նպատակով նաև աշխատանքն է դիտարկվում որպես կարևորագույն մարտավարական գործիք:

Ամփոփելով նշենք, որ արժանապատվության ու երջանկության զգացողության մեջ առաջնային նշանակություն ունի սոցիալական պաշտպանությունը, և այս առումով ՀՀ կառավարության համար իրապես գերակա պետք է լինի բնակչության կենսամակարդակի Էական բարելավումը, զբաղվածության շարունակական աճը, կենսաթոշակների և աշխատավարձերի իրական աճը, բևեռացման մեղմումը, աղքատություն ծնող ռիսկերի դեմ կանխարգելիչ գործունեությունը, քանի որ սոցիալական հասարակության ձևավորման անհրաժեշտ պահանջներից մեկն էլ սոցիալական արդարության և սոցիալ-տնտեսական հավասարակշռության ապահովումն է:

<sup>259</sup> ՀՀ կառավարության ծրագիր, փետրվար 2019թ., էջ 29:

## THE NECESSITY, IMPORTANCE AND DYNAMICS OF PENSION REFORMS IN THE RA

**ARMINE SCHANYAN**

*Associate Professor of the Chair of Finance of the Faculty of Finance of  
Armenian State University of Economics,  
PhD in Economics, Associate Professor,  
Yerevan, Republic of Armenia*

Social protection is one of the priorities of the RA state policy. In the context of pension reform, the aim is to highlight the need to create a system that would provide any elderly or aged person with any kind of income, from the minimum allowance exceeding poverty threshold to compensation of the pension age salary and income. In the article the existing shortcomings, the main features of this process were commented and the main problems of improvement and combination in previously existing and self-funded pension systems were derived.

The article presents the process of implementation of pension reforms in Armenia and other countries and the framework for creating effective mechanisms, also the dynamics of indicators of the state budget is analyzed, which characterize the administrative and accumulative pension system. Comparative, financial analysis and other methods were used during the study.

The article includes the methodology of the mechanism for calculating social assistance on insurance and non-insurance basis, and the conclusions and proposals mainly include issues related to the definition of legislative provisions, in case of revision of which the expectations of forming a higher level of mutually reliable relations between society and the state can be realized.

**Key words:** *pension, social allowance, accumulative pension component, poverty, social protection, financial opportunities, living standard.*

## НЕОБХОДИМОСТЬ, ВАЖНОСТЬ И ДИНАМИКА ПЕНСИОННЫХ РЕФОРМ В РА

**АРМИНЕ СЧАНЯН**

*Доцент кафедры финансов Финансового факультета  
Армянского государственного экономического университета,  
кандидат экономических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

Социальная защита является одним из приоритетов государственной политики РА. В контексте пенсионной реформы необходимо создание системы, подходящей для каждого пожилого человека, обеспечение человека пенсионного возраста соответствующим видом

дохода, от минимального пособия, которое превышает порог бедности, до компенсации зарплаты или дохода.

В статье прокомментированы имеющиеся недостатки, характерные особенности данного процесса и выведены основные проблемы совершенствования и сочетания пенсионных систем. Представлены процесс осуществления пенсионных реформ в РА и в иных странах, а также рамки создания действенных механизмов. Проанализирована динамика показателей государственного бюджета, характеризующая распорядительную и накопительную пенсионную систему. Во время исследования использовались методы сравнительного, финансового анализа и др.

Статья включает в себя методологию механизма расчета социальной помощи на страховой и нестраховой основе, а выводы и предложения в основном включают вопросы, связанные с определением законодательных положений, в случае пересмотра которых можно будет сформировать более высокий уровень взаимонадежных отношений между обществом и государством.

**Ключевые слова:** *пенсия, социальное пособие, накопительная пенсионная составляющая, бедность, социальная защита, финансовые возможности, уровень жизни.*



## ПРИМЕНЕНИЕ СОВРЕМЕННЫХ МЕТОДОВ ВОСПИТАНИЯ В СЕМЬЯХ С РАЗЛИЧНЫМИ ПОДХОДАМИ К ПРОЦЕССУ СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ РЕБЕНКА\*

МЕРИ АВЕТИСЯН

*Ереванский государственный университет,  
Центр педагогики и развития образования,  
преподаватель кафедры педагогики, канд. пед. наук, ассистент,  
г.Ереван, Республика Армения  
[mavetisyan@ysu.am](mailto:mavetisyan@ysu.am)*

*В данной статье рассматриваются некоторые понятия, касающиеся семьи, воспитания детей в семье, а также представлены различные конструктивные подходы к семейному воспитанию детей и ряд современных методов семейного воспитания. Целью статьи является исследование различных конструктивных подходов к семейному воспитанию детей, их значения при социализации личности ребенка и выявление соответствующих им современных методов семейного воспитания в виде игровых технологий, социально-педагогических тренингов, педагогического консультирования и др.*

*Для достижения названных целей автором были решены задачи по исследованию различных конструктивных подходов к семейному воспитанию и выявлению соответствующих им современных методов семейного воспитания.*

*При проведении исследования использовались следующие методы: описание, сопоставление, научный анализ, обобщение.*

*В результате исследования мы пришли к выводу, что современные методы семейного воспитания, способствуя развитию у ребенка сознания, чувства и воли, активно стимулируют формирование опыта в поведении как родителя, так и ребенка, детскую жизнедеятельность, а также полноценное моральное и духовное развитие личности ребенка. Выбирая современные методы семейного воспитания, необходимо учитывать взаимоотношения членов семьи, родственные связи, эмоции в семье. Наряду с возрастными, психологическими и физиологическими особенностями ребенка, при совместном применении современных и традиционных методов семейного воспитания важную роль играют также индивидуальные особенности родителей, их способность оценивать нравственные и духовные ценности, опыт и желание излишне идеализировать и преувеличивать способности своих детей и т.д.*

**Ключевые слова:** *семья, современные методы семейного воспитания, модели семейного воспитания, конструктивные семейные подходы, родительская рефлексия, игровые технологии, социально-педагогический тренинг, педагогическое консультирование, арт-технология.*

---

\* Հոդվածը ներկայացվել է 17.03.2020թ., գրախոսվել՝ 23.03.2020թ., տպագրութայան ընդունվել՝ 10.04.2020թ.:

Семья, представляющая собой социально-педагогическую группу людей, позволяет продолжать самосохранение своего рода. Семья также является основой для самоутверждения каждого его члена.

Совокупность социально-культурных и эмоциональных связей семьи помогают сделать воспитание ребенка процессом любви, счастья, так как именно в семье формируются чувства, эмоции ребенка, здесь он чувствует себя долгожданным, любимым, понимаемым и защищенным. Семья обеспечивает продолжение традиций. Благодаря ей у ребенка впервые формируются индивидуальные и социально-психологические особенности характера.

Судьбоносное значение семьи в процессе развития подрастающей личности особенно проявляется в результатах семейного воспитания. Успешность процесса семейного воспитания зависит от взаимоотношений между мужчиной и женщиной в семье и выполняемых ими функций, их знаний и отношения к различным ценностям<sup>260</sup>.

Семья – это социокультурный феномен, играющий особую роль в социальной подготовке подрастающего поколения к жизни в обществе. В ней человек рождается и формируется как личность, принимая культуру этой семьи и через нее – и общества (среды жизнедеятельности)<sup>261</sup>. Благодаря семье дом, в котором проживает ребенок, представляет собой важнейшее место для формирования, развития и социализации его личности.

Целью семейного воспитания является развитие таких личностных качеств в ребенке, которые помогут ему достойно встретить любые жизненные вызовы и препятствия.

На протяжении тысячелетий семья, являясь источником самосохранения нации, выполняет ряд основных функций – репродуктивную, экономическую, социальную, воспитательную, каждая из которых оказывает свое социально-педагогическое влияние на процесс формирования и развития личности ребенка<sup>262</sup>.

Таким образом, семья, осуществляя социализацию личности ребенка, обеспечивает преемственность традиций. Воспитание гражданина, патриота, будущего семьянина, а также законопослушного члена общества – все это является важнейшей социальной функцией современной семьи. Семья оказывает также определенное влияние на выбор профессии ребенка.

В обязанности семьи входит формирование физически и психически здорового индивидуума, личности, нравственно-интеллектуально развитой и готовой к дальнейшей трудовой, семейной жизни в обществе.

Одной из основных целей демократического общества является постановка семейного воспитания. Семейное воспитание – сложная система, в которой при активном содействии членов семьи формируется и развивается личность ребенка. Семейное воспитание неразрывно связано с социальным и школьным воспитанием, триединство которых помогает ребенку в его всестороннем и гармоничном развитии. Тесно взаимосвязанные формы воспитания отличаются однако содержанием, средствами и способами осуществления.

В настоящее время постоянного внимания заслуживает изучение широкого спектра актуальных проблем воспитания детей в современной семье: тип семьи, моральный облик родителей, авторитет родителей для ребенка и изучение интересов ребенка родителями, приводящие к позитивному воспитанию в здоровой морально-психологической атмосфере семьи, с выбором правильных традиционных и современных методов семейного воспитания.

В процессе семейного воспитания, выбирая методы, необходимо учитывать

<sup>260</sup> Соловьева Е.А. Психология семьи и семейное воспитание, М., ЮРАЙТ, 2017, стр. 25.

<sup>261</sup> Мардахасев Л.В. Социальная педагогика, Москва, Гардарики, 2005, стр. 149.

<sup>262</sup> Հարությունյան Ն.Կ., Ղազարյան Ա.Փ., Ղուկասյան Լ.Յ. Սոցիալական մանկավարժություն, Երևան, ԵՊՀ, 2017, էջ 111:

«элементы» содержания воспитания ребенка, которыми и являются физическое, нравственное, умственное, эстетическое, трудовое и другие. Игнорирование каждого из этих «элементов» в содержании семейного воспитания может сыграть важную роль в жизни каждого ребенка. Поэтому при организации семейного воспитания применяют ряд современных методов и технологий, направленных на их соразмерное развитие, что помогает составить целостную картину эффективности воспитания и способствует перевоплощению родителя из наблюдателя в сопровождающего.

Выбор метода семейного воспитания родителем в вопросе воспитания ребенка – это в какой-то мере результат осознанного им выбора, частично выбор автоматического способа преодоления ситуации или же предпосылка формирования его образцового поведения.

В современных семьях в процессе воспитания ребенка существует ряд конструктивных подходов. Рассмотрим некоторые из них, проанализировав соответствующие им современные методы и технологии семейного воспитания.

*Подход 1.* Назовем этот подход «Другой, а не я».

В настоящее время при сложных социально-экономических отношениях человек иногда неправильно распределяет время, отведенное семье и работе. Эта ситуация родителей работают. В результате рабочая нагрузка родителей не позволяет им активно участвовать в процессе воспитания ребенка, вследствие чего большинство родителей уход за ребенком доверяют воспитателю, учителю или другим ответственным за воспитание ребенка лицам. В данной ситуации родители успокаивают себя мыслью, что таким образом не только воспитание, но и обучение ребенка идет «систематичным и разумным» образом, основываясь на «грамотное управление» специалиста. Однако следует отметить, что в таких случаях эмоциональные взаимоотношения между родителем и ребенком не развиваются, а проблема формирования социального поведения ребенка не всегда решается в его пользу.

В данных ситуациях, одним из наиболее продуктивных современных методов семейного воспитания является использование игровых технологий «родитель – ребенок», с помощью которых может сформироваться и укрепиться слабо выраженная эмоциональная связь между ними. Разнообразие игровых технологий создает хорошую возможность для родителей, которые могут проводимое по выходным время с ребенком сделать интересным, таким образом сблизиться с ним, слушая его, понимая, как и каким образом решает он проблемы, с которыми сталкивается.

С помощью игровых технологий может быть реализован ряд функций:

- развлекательная (доставляет удовольствие, воодушевляет, вызывает интерес),
- самоутверждающая,
- терапевтическая (преодоление игровых трудностей, которые совпадают также с жизненными трудностями),
- предсказывающая (в процессе игры можно познать себя, показать свои скрытые силы),
- коррекционно-реабилитационная (в игровой практике меняются личностные качества, происходит социализация личности).<sup>263</sup>

Таким образом, игровые интерактивные технологии полезны для укрепления связи родитель – ребенок.

*Подход 2.* Этот подход назовем «Ребенок должен».

В семьях с таким подходом ребенок является исполнителем мечты и воли родителя. В течение дня он должен посещать ряд секций, добросовестно выполнять все домашние задания, а также участвовать во всех мероприятиях, независимо от своего желания. В этом

<sup>263</sup> Գևորգյան Լ.Վ. Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների առանձնահատկությունները, [http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf/](http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf) (Հասանելիության ամսաթիվ՝ 23.02.2020, ժ. 16.00)

случае отношения между родителями и детьми становятся чрезвычайно напряженными. При этом похвала родителей в отношении ребенка во многом зависит от того, каким образом ребенок выполнил поставленные перед собой задачи. При таком подходе многие формы деятельности, характерные для возрастных особенностей ребенка в семье, отвергаются, и основным критерием становится школьная успеваемость. По этой причине в отношениях со сверстниками у ребенка возникают социальные затруднения.

В данной ситуации для родителя внешний мир интерпретируется не как среда новых возможностей, а как опасное место, единственным же местом для безопасности ребенка является семья. В результате воспитания в страхе ребенок сталкивается с трудными для своего возраста задачами, излишней загруженностью, вследствие чего он практически лишается возможности общения со сверстниками вне школы.

Родитель превращает ребенка в конкурирующую, а не в сотрудничающую личность, он как бы «покоряет» личное пространство ребенка. Накопленные усилиями многих лет достижения часто не помогают ребенку преодолеть в своей жизни личные затруднения, находить пути выхода из кризисных ситуаций, вследствие чего появляются проблемы в самом себе и в общении с обществом.

Фактически, самое важное в отношениях ребенка и родителя – безоговорочная любовь к нему, однако родитель всегда должен ощущать чувство личного пространства между собой и ребенком, выступая в качестве посредника между ребенком и окружающим миром.

В таких ситуациях вызывают большой интерес развивающие родительскую рефлексию социально-педагогические тренинги, которые учат более эффективным родительским стратегиям и тактикам процесса воспитания.

Социально-психологический тренинг – активный групповой метод, прямо ориентированный на вмешательство в развитие группы или личности с целью оказать определенное воздействие, вызвать те или иные изменения, и направленный на усовершенствование и развитие установок, навыков и знаний межличностного общения. Социально-психологический тренинг это средство развития компетентности в общении<sup>264</sup>.

Социально-психологический тренинг обеспечивает развитие у родителей специальных умений, с приобретением диагностических знаний и навыков. Этот метод развивает у родителей самодиагностику по отношению к особенностям восприятия самого себя, личности ребенка и всей ситуации общения, одновременно осуществляя личностное развитие, развитие коммуникативных и интерактивных аспектов.

Таким образом, социально-психологический тренинг направлен на использование активных методов групповой работы в семье с целью облегчения преодоления дальнейших трудностей в жизни ребенка.

Социально-педагогические тренинги в наши дни не очень распространены, однако они могут оказать качественное влияние на родителя-организатора процесса семейного воспитания, выводя взаимоотношения ребенка с родителями на новый качественный уровень, а также регулируя процесс активной социализации личности ребенка.

*Подход 3.* Этот подход назовем «Исключительно духовным...».

Согласно данному подходу, родители принимают такие идеи о воспитании, которые как бы «стерильны», направлены на защиту ребенка от опасности и безвкусицы внешнего мира. Они заставляют ребенка посещать с ними театры, выставки, не носить рваные джинсы, ограничивают доступ к компьютерным играм и многое другое.

Безусловно приветствуется желание семьи приложить все усилия для духовного развития ребенка. У каждой семьи должны быть свои правила, традиции и т.д. Очевидно, что такая более богатая культурная среда действительно необходима для пробуждения

---

<sup>264</sup> Мардахаев Л.В. Социальная педагогика, Москва, Гардарики, 2005, стр. 149.

творческого потенциала ребенка и порождения новых устремлений. Тем не менее при экстремальном подходе часто может возникнуть противоположный эффект – в дальнейшем иметь и приобрести запрещенное.

В этом случае большое значение имеет проведение педагогических консультаций, связанных с организацией встреч между несколькими семьями, с представлением семейных обрядов и традиций, что может быть полезным с точки зрения приобретения новых навыков совместного использования ценностей. Большое значение имеет также организация выступлений и докладов о традиционных ритуалах, ценностях разных семей, при которых родители и дети совместно показывают свой опыт, уча других и обучаясь.

Важную роль в процессе социализации личности ребенка в семье с данным подходом играет также проведение групповых дискуссий. Метод групповой дискуссии является базовым для реализации и освоения общения-диалога. Проведение общения-диалога без предварительной подготовки к групповой дискуссии вызывает большие затруднения. С помощью дискуссии устанавливается собственная позиция, проясняется многообразие подходов, точек зрения по тому или иному вопросу, обмен которыми помогает прийти к общему представлению и решению данной проблемы. Она развивает у родителей умения импровизировать, действовать за рамками предусмотренного, преодолевая приверженность старым образцам, страх перед неизвестностью, недоверие к себе, боязнь быть застигнутым врасплох и т. д.<sup>265</sup>

Таким образом, проведение подобных групповых семейных мероприятий играет важную роль при семейном воспитании с точки зрения регулирования процессов формирования, развития и социализации личности ребенка.

#### *Подход 4. «Правил нет. Вседозволенность».*

Пожалуй, этот подход к семейному воспитанию мы называем наиболее болезненным. В этом случае родители рассматривают ребенка как сокровище и разрешают ему все, без воспитательной ориентации, без указаний. Необходимо признать, что жизнь ребенка психологически не проста, так как в будущем он может оказаться в различных общественных ситуациях.

В семьях с этим подходом к воспитанию родитель является исполнителем желания и воли ребенка. Ребенок, который не знаком со словом «нельзя», имеет беспрепятственное воображение, дающее впоследствии свободу в действиях. Свобода является важным источником счастья ребенка, однако неправильное использование ее в социальных отношениях может привести к серьезным проблемам и даже к правонарушениям.

В случае подобного семейного воспитания ребенок не готов к сотрудничеству с другими в обществе, не может приспособливаться и существовать в конкурентных условиях, подвергаясь различным бытовым опасностям. Это приводит к агрессии, а затем к бессилию в построении отношений с окружающей средой.

Такое содержание семейного воспитания нуждается в пересмотре. Семья должна восстановить нормальную семейную иерархию, где родители должны управлять процессом воспитания ребенка, а не ребенок должен диктовать им, как поступать.

При воспитании детей в семьях с этим подходом могут быть очень полезны различные формы воспитательного консультирования: личные, семейные, а также технологии имитационных и ролевых игр, при которых можно провести содержательный пересмотр разных социальных ролей участников.

Для эффективной организации современного семейного воспитания применяются также арт-технологии, которые в какой-то мере являются как развлекательными, так и воспитательно-консультативными. Одной из таких форм является технология совместной реализации проектов – совместное рисование, театральная постановка и другие, где

---

<sup>265</sup> Мардахаев Л.В. Социальная педагогика, Москва, Гардарики, 2005, стр. 149.



родителю и ребенку отведены отдельные функции, роли, и успех одного зависит от выполненной работы другого.

К современным методам семейного воспитания относится также анкетирование. Цель данного метода заключается в том, что при его использовании участники заполняют соответствующие бланки с различными вопросами. В результате применения этого метода возможно получение содержательной информации, касающейся степени соответствия жизнедеятельности семьи представлению о действиях, взглядах и жизненных ценностях родителей и ребенка.

Современные методы воспитания детей в семье являются такими педагогическими путями, посредством которых становится возможным целенаправленное педагогическое влияние родителей на сознание и поведение детей. Как мать, так и отец должны обладать родительской компетенцией для эффективной организации процесса воспитания и социализации личности ребенка.

При использовании современных методов семейного воспитания не менее важен и вопрос выбора родителем воспитательной модели, которая обуславливается его стилем. Они представляют собой три модели воспитания: свободного или демократического, авторитарного и либерального воспитания. Из представленных трех моделей, в частности, демократическая модель считается наиболее эффективной и современной с гуманистической точки зрения своих воздействий на личность. Таким образом, воспитание, организованное по этой модели, развивает в человеке качества саморегулирования, самоконтроля, саморазвития и самовоспитания, выявляет в ребенке элементы индивидуальности, формирует творческие подходы в разработке собственной поведенческой модели.

Заметим, что немало случаев, когда родители не могут оценить воспитательную ситуацию, исходя из социально-педагогической точки зрения, не представляют критерии отбора методов, обусловленных возрастными особенностями ребенка, результатом чего и являются неудачи, которые становятся очевидными на уровне индивидуальных и социальных поведенческих проявлений ребенка.

Выбор современных методов семейного воспитания в первую очередь зависит от общей культуры родителей, их жизненного опыта, педагогической подготовки и способов организации жизнедеятельности. При выборе современных методов семейного воспитания отдают предпочтение поставленным родителями целям и задачам воспитания, учитывая некоторые нюансы: взаимоотношения членов семьи, родственные связи, эмоции в семье и т.д.

Важную роль играют также индивидуальные особенности родителей, их способность оценивать нравственные и духовные ценности, опыт и желание излишне идеализировать и преувеличивать возможности и способности своих детей, а также совместное применение современных и традиционных методов семейного воспитания, учитывая возрастные, психологические и физиологические особенности ребенка.

Современные методы семейного воспитания, как способы взаимодействия родителей с детьми, помогающие ребенку развивать свое сознание, чувства и волю, активно стимулируют формирование опыта в поведении родителя, самостоятельную детскую жизнедеятельность, а также полноценное моральное и духовное развитие личности ребенка.

Современные методы семейного воспитания направлены на:

- создание максимально благоприятных условий для роста и развития ребенка,
- обеспечение социально-экономической и психологической защиты прав ребенка,
- передачу опыта создания и сохранения семьи, воспитания детей и отношения к старшим,
- обучение детей полезным прикладным навыкам и умениям, направленным на самообслуживание и помощь близким,

- воспитание у ребенка чувства собственного достоинства, ценность собственного «Я»<sup>266</sup>.

Таким образом, для получения более продуктивного результата в области семейного воспитания ребенка необходимо применение родителями большой тактичности, обладание умением и желанием организовать правильный исход процесса семейного воспитания, а также дальнейшее углубление познаний в данной сфере.

Итак, как традиционные, так и современные методы семейного воспитания играют важную роль в процессе формирования и развития личности ребенка, и лишь в их комплексном использовании можно добиться успехов.

## **ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ**

### **ՄԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան,  
մանկավարժության և կրթության վարչազման կենտրոն,  
մանկավարժության ամբիոնի դասախոս,  
մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ,  
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում են ընտանիքի, ընտանիքում երեխաների դաստիարակության վերաբերյալ մի շարք հասկացություններ, ինչպես նաև ներկայացվում են երեխաների ընտանեկան դաստիարակության տարբեր կառուցողական մոտեցումներ և ընտանեկան դաստիարակության մի շարք ժամանակակից մեթոդներ:

Հոդվածի նպատակն է երեխաների ընտանեկան դաստիարակության նկատմամբ տարբեր մոտեցումների ուսումնասիրությունը՝ շեշտադրելով երեխայի անձի սոցիալականացման գործում նրանց կարևորությունը և դրանց համապատասխան ընտանեկան դաստիարակության ժամանակակից մեթոդների բացահայտումը, որոնցից են՝ խաղային տեխնոլոգիաները, սոցիալական ու մանկավարժական դասընթացները, մանկավարժական խորհրդատվությունը և մի շարք այլ մեթոդներ:

Այս նպատակներին հասնելու համար հեղինակի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել ընտանեկան դաստիարակության տարբեր մոտեցումները և բացահայտել դրանց համապատասխան ընտանեկան դաստիարակության ժամանակակից մեթոդները:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ նկարագրություն, համադրում, գիտական վերլուծություն, ընդհանրացում:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ընտանեկան դաստիարակության ժամանակակից մեթոդները, նպաստելով երեխայի գիտակցության, զգացմունքների ու կամքի զարգացմանը, ակտիվորեն խթանում են ինչպես ծնողի, այնպես էլ երեխայի վարքագծի ձևավորումը, երեխաների կենսական ակտիվությունը, ինչպես նաև երեխայի անձի լիարժեք բարոյական ու հոգևոր

<sup>266</sup> <https://nsportal.ru/detskii-sad/vospitatelnaya-rabota/2017/12/15/metody-izucheniya-osobennostey-semeynogo-vospitaniya/> Редченко М.А., Методы изучения особенностей семейного воспитания (Дата доступа: 20/02/2020, 12.00).

զարգացումը:

Ընտանեկան դաստիարակության ժամանակակից մեթոդների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, ընտանեկան կապերն ու զգացմունքները: Երեխայի տարիքի, հոգեբանական ու ֆիզիոլոգիական առանձնահատկություններից զատ կարևոր դեր են խաղում նաև ծնողների անհատական բնութագրերը, նրանց փորձը և իրենց երեխաների կարողությունները անհարկի իդեալականացնելու և ուռճացնելու ցանկությունը՝ ընտանեկան դաստիարակության ժամանակակից ու ավանդական մեթոդների համատեղ օգտագործմամբ:

*Հիմնաբառեր՝ ընտանիք, ընտանեկան դաստիարակության ժամանակակից մեթոդներ, ընտանեկան դաստիարակության մոդելներ, ընտանեկան կառուցողական մոտեցումներ, ծնողական ռեֆլեկսիա, խաղային տեխնոլոգիաներ, սոցիալ-մանկավարժական թրեյնինգ, մանկավարժական խորհրդատվություն, արտ-տեխնոլոգիա:*

## **THE USE OF MODERN METHODS OF UPBRINGING IN FAMILIES WITH DIFFERENT APPROACHES TO THE PROCESS OF SOCIALIZATION OF A CHILD'S PERSONALITY**

**MERI AVETISYAN**

*Yerevan State University, Department of Pedagogy, Ph.D., Lecturer,  
Yerevan, Republic of Armenia*

This article discusses some concepts related to the family, upbringing of children in the family, and also presents various constructive approaches to the upbringing of children and a number of modern methods of upbringing.

The research aims to study various constructive approaches to family upbringing of children, importance of socializing the child's personality and identifying the relevant modern methods of upbringing through gaming technologies, social and pedagogical trainings, pedagogical counseling etc.

The study used the following methods: description, comparison, scientific analysis, generalization.

To achieve these goals, the author solved the problems of exploring various constructive approaches to family upbringing and identified its relevant modern methods.

As a result of the study, we came to the conclusion that modern methods of family upbringing, contributing to the development of a child's consciousness, feelings and wills, actively stimulate the formation of experience in the behavior of both a parent and a child, children's vital activity, as well as the full moral and spiritual development of the child's personality.

When choosing modern methods of family upbringing, it is necessary to take into account the relationships of family members, family ties, and emotional backgrounds in the family. Considering the age of a child, as well as his/her psychological and physiological characteristics, individual features of parents, their experience and desire to unnecessarily idealize and exaggerate the abilities of their children, along with modern and traditional methods of family upbringing, play a very important role.

**Keywords:** *family, modern methods of family upbringing, models of family upbringing, constructive family approaches, parental reflection, game technology, social and pedagogical training, pedagogical counseling, art technology.*

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

*ԵՊՀ-ի մանկավարժության և կրթության պարզացման կենտրոն,  
մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ  
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[lusine.hayrapetyan@ysu.am](mailto:lusine.hayrapetyan@ysu.am)*

*Մանկավարժական արտ-տեխնոլոգիաները և մեթոդները դիտարկվում են իբրև մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիներ՝ դրսևորվելով որպես ավանդական մանկավարժական մոտեցումների այլընտրանքներ:*

*Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակն է բացահայտել արտ-տեխնոլոգիաների և մեթոդների ներգրավման կարևորությունը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման գործում, մեկնաբանել դրանց դերն ուսուցման գործընթացի բարելավման տեսանկյունից:*

*Հոդվածում բացահայտվել են մանկավարժական գործընթացն առավել ստեղծագործական դարձնելու նոր մոտեցումներ, որոնց շնորհիվ կարելի է լուծել մանկավարժական բնույթի մի շարք խնդիրներ, այդ թվում՝ ուսուցման գործընթացի սոցիալականացման, դաստիարակության կապակերպման և այլն:*

*Հետազոտության իրականացման համար օգտագործվել են մի շարք գիտամանկավարժական հետազոտությունների մեթոդներ՝ վերլուծություն, համադրում, վերացարկում, ընդհանրացում, համակարգում:*

*Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մանկավարժական արտ-մեթոդներն ու տեխնոլոգիաները յուրահատուկ մանկավարժական այլընտրանքներ են, որոնք կարող են լուծել ոչ միայն ուսուցման գործընթացն առավել ակտիվ, ստեղծագործական և արդյունավետ դարձնելու հիմնախնդիրը, այլև նպաստել անձի ստեղծագործական ներուժի պարզացմանը, ինքնաբացահայտմանն ու ինքնարնկալմանը, ինչպես նաև՝ օգտակար լինել կենսաբանորեն առողջ ու հատուկ կարիքներով երեխաների համատեղ ուսումնական գործունեության կապակերպման հարցում որպես հոգեկարգավորման յուրահատուկ մեխանիզմներ՝ դարձնելով ուսուցման գործընթացը առավել ներառական, համագործակցային ու կառուցողական:*

*Հիմնաբառեր՝ մանկավարժական արտ-տեխնոլոգիաներ, արտ-մեթոդներ, իդիոթերապիա, գրեթատերապիա, երաժշտաթերապիա, ուսուցման գործընթաց, մանկավարժական գործընթաց:*

Ուսուցումն իմացական գործընթացների համակարգ է, որն ուղղված է անձի մտավոր ու հոգեկան համակողմանի զարգացմանը: Այն զուտ փաստերի փոխանցման ու յուրացման գործընթաց չէ, այլև ուսուցանվող առարկայի տրամաբանության բարդ միախյուսվածք, որի արդյունքում ձևավորվում են նախկինում ունեցած գիտելիք և նորի, առարկաների միջև եղած կապերի համակարգեր: Այն մտքի հոսք է կամ շարժում՝ դրանց միջև եղած տրամաբանական կապերի տիրույթում: Ուսումնական նյութի փոխանցումը

\* Հոդվածը ներկայացվել է 17.03.2020թ., գրախոսվել՝ 23.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

սովորեցնողից սովորողին իրականացվում է հատուկ կազմակերպված ներգործությունների միջոցով: Որևէ նոր բան արդեն եղածին ավելացնելու համար պետք է ապահովել նյութի ընկալման կազմակերպում, դրա իմաստավորում, ապա նաև հետադարձ կապ: Սովորողի կողմից ինքնուրույն մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պարզ է դառնում նոր նյութի ընկալման արդյունավետությունը, ինչն էլ պայմանավորված է ակնկալիքի ու վերջնարդյունքի միջև ընկած գործընթացների հաջող իրականացմամբ:

Հայտնի է, որ սովորողին ուսումնական գործունեության մեջ ներգրավելու շարժառիթները տարբեր են, ինչը ևս կարող է ունենալ ակնկալվող արդյունքի վրա ազդեցություն: Պակաս կարևոր չէ ուսուցանողի մանկավարժական վարպետությունը, որը դրսևորվում է մանկավարժական օրինաչափությունների հստակ գիտակցման, երեխայի անձի համակողմանի ուսումնասիրման, ուսուցման գործընթացում դրանց ակտիվ ներառման մեջ: Այսպիսով՝ ուսուցումը, որպես բազմակողմ փոխազդեցությունների գործընթաց, ապահովում է երեխայի անձի համակարգում պահանջմունքների ձևավորմանը, ձգտումների, իմացական ու մտածողական եղանակների փոփոխությանը, օբյեկտիվ աշխարհի մասին պատկերացում կազմելուն, հասարակության մեջ սեփական դերն ու տեղը գիտակցելուն: Կարևորվում են հատկապես անձի ինքնուրունության զարգացումը, ստեղծագործականության խթանումը, անձի հոգեբանական ենթակառուցվածքի զարգացումը: Ուսուցման գործընթացի հաջողությունը ուսուցանողի կողմից սովորողին բոլոր կողմերից հետազոտելու, ճանաչելու, նրա ձիրքերը բացահայտելու մեջ է: Դրա շնորհիվ է, որ երեխայի մեջ որևէ երևույթի հանդեպ ձևավորվում են պատկերացումներ, այնուհետև՝ վերաբերմունք: Որքան ամբողջական է կազմակերպված ուսուցման գործընթացն իր բովանդակության անձնակենտրոն, արժեքային կառուցվածքով, այնքան սովորողի մեջ աշխարհմասնաչողության գործընթացի ճանաչողականության, ընկալման խորության, ինքնուրույն մեկնաբանության, ստեղծագործականության զարգացման գործընթացներն օրինաչափ և արագ են տեղի ունենում:

Այսօր ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման նոր մեկնաբանություններ են պահանջվում, ինչն էլ առաջարկում է մանկավարժության երիտասարդ գիտաճյուղը՝ արվեստի մանկավարժությունը: Վերջինիս բնորոշ է սովորողի ակտիվ ներգրավվածությունը գեղարվեստական պրակտիկ գործունեության մեջ, արվեստի, առողջագիտության, հոգեբանության, մշակույթի տարրերով հագեցած ուսուցման փոխներգործուն մոդելների մշակումը և դրանց կիրառումը լսարանային ուսուցման, ինչպես նաև՝ սովորողի արտալսարանային գործունեության մեջ:

Գեղարվեստական գործունեությունը համակցելով ուսուցման գործընթացին՝ սովորողի մեջ սկսվում է ստեղծագործականության բացահայտման, ինքնագիտակցության ինտենսիվ գործընթաց, որի շրջանակներում նրա մեջ մշակվում է աուտենտիկ ինքնատիպ ընկալում՝ զգայարանների միջնորդությամբ: Արդյունքում արվեստը միջնորդ է դառնում սովորողի, ուսուցանողի, ուսուցանվող նյութի միջև՝ գտնելու նոր կապեր (զգայական, սոցիալական և այլն) արդեն իմացածի և նորի միջև: Ստեղծվում է ստեղծագործական միջավայր, դրսևորվում է մտածողական ճկունություն, որն էլ օգնում է ուսուցումը հոգնեցուցիչ և մեծ լարում պահանջող գործընթացից վերածելու ճկունություն և ազատ ստեղծագործականություն ապահովող աջկիսազնդային գործունեության: Գեղարվեստական գործողությունների, տարրերի, միջոցների ներառումն ուսուցման գործընթացում օգնում է, որպեսզի սովորողները կարողանան նախաձեռնել, վերլուծել, մեկնաբանել, փոխանցել մատուցվող նյութը մեխանիկորեն այն վերարտադրելու փոխարեն: Այլ կերպ ասած՝ արվեստի մանկավարժությունը գեղարվեստական մանկավարժության ոլորտ է, որը դիտարկվում է որպես արվեստի ու մանկավարժության համադրություն, ի հայտ է բերում

գեղարվեստական դիդակտիկայի սկզբունքներ, որոնք ուղղված են սովորողի ստեղծագործական ակտիվության բարձրացմանը, ինքնուրույնության, ինքնատիպության նոր բովանդակության սահմանմանը:

Օգտագործելով արվեստի միջոցների և կրթական տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորությունները, դրանք համակցելով միմյանց հետ՝ արդյունքում ծնվում են արտ-մեթոդներ և արտ-տեխնոլոգիաներ, որոնք հաճախ թերապևտիկ բնույթ ունեն, ուստի դրանք մանկավարժական բարդ խնդիրների լուծման նոր բանաձևեր են:

Մեր ուսումնասիրության կենտրոնում ուսուցման կազմակերպման արդյունավետությունը բարձրացնող արտ-տեխնոլոգիաներն ու մեթոդներն են, որոնք առանձնանում են իրենց բնութագրերով, ունեն շեշտված մանկավարժական բովանդակություն, կիրառելի են մանկավարժական տարբեր խնդիրներ լուծելու համար:

Գեղարվեստա-գեղագիտական և ստեղծագործական ուղղվածությունից կախված՝ տարբերում ենք արտ-մեթոդների հետևյալ տեսակները.

1. գեղարվեստական ընթերցանություն,
2. երաժշտության ունկնդրում,
3. իրավիճակի դերային բեմականացում, ասմունք,
4. թղթերի, թելերի միջոցով աշխատանքների պատրաստում,
5. ծեփամածիկի, կավի, գիպսի հետ աշխատանք,
6. նկարչություն, գունաներկում, ուրվանկարի գունային լիցքավորում և այլն:

Արտ-մեթոդները ոչ միայն ուսուցման կազմակերպման արդյունավետ ուղիներ են, այլև ուսուցողական զրույցների, խորհրդատվության, մանկավարժական սիրո ու հոգատարության, երեխայի հանդեպ ունեցած հարգանքի վառ դրսևորման միջոցներ: Դրանք միջանձնային հարաբերությունների յուրատեսակ կառուցվածների հիմքեր կարող են դնել սերը, հոգատարությունը, իրար ճանաչելու հնարավորությունը սովորողի մասին լրացուցիչ տեղեկատվություն հավաքագրելու, նրան ուսումնական նյութի շրջանակներից դուրս տեսնելու, ունեցած խնդիրները հասկանալու հնարավորություն կտան մանկավարժին:

Գեղարվեստա-գեղագիտական և ստեղծագործական ուղղվածությունից կախված՝ տարբերում ենք արտ-տեխնոլոգիաների հետևյալ տեսակները.

1. Գրքաթերապիա,
2. Երաժշտաթերապիա,
3. Դրամաթերապիա,
4. Հեքիաթաթերապիա,
5. Իզոթերապիա:

Գրքաթերապիան, որպես արտ-տեխնոլոգիա, հիմնվում է խոսքի, դրա ազդեցիկ ուժի վրա: Այս արտ-տեխնոլոգիան կարելի է կիրառել թե՛ կենսաբանորեն առողջ, թե՛ հատուկ կարիքներով երեխաների հետ տարվող սոցիալ-մանկավարժական բնույթի աշխատանքներում: Այն ունի մի քանի ձևեր, որոնց կիրառման առանձնահատկությունները բխում են սովորողի ունեցած խնդրի առանձնահատկություններից: Գրքաթերապիայի հիմնական միջոցը ընթերցանությունն է, գրավոր ու բանավոր խոսքը: Գրքաթերապիա իրականացնելու համար ուսումնական նյութ կարող ենք համարել գրական տարբեր ժանրերի ստեղծագործությունները՝ փոքր արձակից մինչև պոեզիա և այլն:

Երաժշտաթերապիան իր բոլոր ձևերով՝ ռիթմաթերապիա, երգելը, երաժշտություն հորինելը, նույնպես արտ-տեխնոլոգիաների համակարգում առանձնակի տեղ ունեն: Դրանք օգնում են անձին մշակելու սթրեսակայունության համակարգ, զարգացնելու ասոցիատիվ մտածողություն, հանգստացնելու նյարդային համակարգը, ձևավորելու մանկավարժական գործընթացի սուբյեկտների առողջապահական էկոհոգեբանական մշակույթ և այլն:

Դրամաթերապիան և իմագոթերապիան (կերպարային թերապիան) դերախաղային գործունեության տեսակներ են, երբ առանձին-առանձին կարևորում են ձայնը, բեմական պլաստիկան, էտյուդները, երևակայության, զգացմունքերի բեմականացումը, հիմնախնդրի իրավիճակային թատերականացումը<sup>267</sup>: Դրանք կարելի է կիրառել թե՛ դպրոցական թատրոնում, թե՛ դասի ժամանակ: Ավանդական թատերական ներկայացումներից տարբերվում են նրանով, որ այս տեխնոլոգիայի ժամանակ իբրև թատերականացված նյութի ատաղձ կարող է համարվել տվյալ անձի հոգեվիճակը, նրա վախերը կամ այլ անձանց հետ միջադեպերը և այլն:

Յեֆիաթաթերապիայի համար ընտրվում են մի քանի տիպի հեֆիաթներ՝ ռեցեպտորային, հրաշապատում, դիդակտիկական և այլն: Կարելի է նաև նկարել հեֆիաթ, հորինել տեղում, օգտագործել արդեն պատրաստի հեֆիաթը՝ սովորեցնելու կայացնել այլընտրանքային որոշումներ իրավիճակային լուծում պահանջող դեպքերում, լինել առավել ճկուն ու հնարամիտ: Յեֆիաթը ևս օգնում է ուսուցման գործընթացում բարձրացնել անձի ակտիվությունը, խթանել ինքնուրույնությունը, երևակայությունը:

Իզոթերապիան կենսաբանորեն առողջ անձի ստեղծագործականության խթանման ձևերից է, սակայն որոշ դեպքերում հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնդիրը թեթևացնելու միջոց է, մանկավարժի կողմից իրականացվող շտկողավերականգնողական արտ-տեխնոլոգիա: Դրա տեսակներից են՝ նկարչությունը, կուլաժը, քանդակագործությունը, ծեփամածիկով աշխատանքը, արվեստի պատրաստի գործերը և այլն<sup>268</sup>:

Արտ-տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսուցման գործընթացում ներառելու երեխային բազմակողմանիորեն՝ վեր հանելով նրա ներքին տազնապները, ցուցաբերելով հոգեբանա-մանկավարժական բնույթի օգնություն և աջակցություն՝ առավել կառուցողական դարձնելով երեխայի սոցիալականացման գործընթացը, նպաստելով հոգևոր-բարոյական չափանիշների ակտիվ յուրացմանը:

Արտ-տեխնոլոգիաներն առավել արդյունավետ են ներգործում հատկապես երբ հենված են արվեստի մանկավարժության մի քանի մոտեցումների վրա.

1. Նախ՝ երեխայի կատարած աշխատանքի գնահատումը պետք է լինի առանց թվանշանի, փոխարենը մեծահասակը՝ ուսուցիչը, ծնողը, պետք է ապրումակցի, քաջալերի նրան: Այդ հանգամանքը երեխային դարձնում է անկաշկանդ, նրա համար ստեղծում է ապահովության զգացողություն, ձևավորում է հոգեբանական ինքնահոս ազատության միջավայր, որի ընթացքում երեխան սկսում է իր ներսում կուտակված անհանգստությունները վերածել պատկերների, գույների, սիմվոլների: Այդ ընթացքում ուսուցանողը ռեֆլեքսիայի միջոցով պետք է փորձի ընկալել երեխայի ապրումները, կիսել զգացմունքերը, կարեկցել նրան, ինչն էլ հանգեցնում է սոցիալական հարաբերությունների, կապերի ստեղծման ու ամրապնդման կառուցողականության, նպաստում ուսուցման համար առավել ազատ ու նպաստավոր, վստահության վրա հիմնված միջավայր ստեղծելուն:

2. Հաջորդը ուսուցման գործընթացում արտ-տեխնոլոգիաների կիրառման ժամանակ դաստիարակության գործընթացի կազմակերպումն է արտթերապևտիկ գրույցների միջոցով:

Արտ-տեխնոլոգիաներն ունեն ազդեցության ուղղվածություն.

1. Անձնակողմնորոշիչ և անձնակենտրոն. անձի տարիքային և հոգեբանական հնարավորությունների հաշվի առնումը, երեխայի պահանջմունքերի կարևորումը ուսուցման գործընթացում, դրանց բացահայտումը

<sup>267</sup> **Медведева Е.А.**, Арт-педагогика и арт-терапия в специальном и инклюзивном образовании, Москва, «Юрайт», 2019, էջ 174.

<sup>268</sup> **Лебедева Л. Д.**, Практика арт-терапии: подходы, диагностика, система занятий. СПб: «Речь», 2003. Серия «Психологический практикум», стр. 106.

2. Արժեքանական-արժեկողմնորոշիչ. անձի ինքնակառավարման հմտությունների ձևավորումը,
3. Մարդաբանական. անձի հոլիստիկ զարգացումը
4. Գեղարվեստական. անձի գեղարվեստա-գեղագիտական զարգացումը,
5. Հերմենևտիկական. անձի կողմից իրավիճակի գնահատման կարողությունը, արտ-աշխատանքում ստեղծած սիմվոլների ապակողավորումը:

Նման մոտեցումը ցույց է տալիս արտ-տեխնոլոգիաների բազմամակարդակ ազդեցությունը<sup>269</sup>:

Մանկավարժական արտ-տեխնոլոգիաների կառուցվածքի տրամաբանությունը զարգանում է 3 փուլով.

1. Ախտորոշման փուլ: Այս փուլում որոշվում է անձի զգացմունքայնության աստիճանը, դրա դրսևորման կարողության չափը որպես ներքին վիճակ, անձի՝ մանկավարժական օգնություն պահանջող թույլ կողմերի հստակեցումը:
2. Պատկերանշանային փուլ: Այս փուլում երեխան վերարտադրում է իրեն տվյալ պահին հուզող երևույթը գեղարվեստական-փորձարարական ձևերի միջոցով: Դրանք ներքին հոգեվիճակների պրոեկցիաներ են,, որոնք հոգեբանամանկավարժական տարատեսակ, նշանակալից խնդիրների լուծման համար իբրև այդ խնդրի մոդելավորված տարբերակ կարող են օգտագործվել:
3. Ռեֆլեկտիվ-արժեքանական: Այս փուլում տեղի է ունենում անձի կողմից ոչ վերբալ զգացմունքային գործունեության գիտակցում, դրա խոսքային ձևակերպումը, տրվում են արդեն ծանոթ մոտեցումների փոխարեն նոր, այլընտրանքային ցուցումներ, ոչ ուղղակիորեն, սակայն ուղղորդում անձին դեպի նոր արժեքային դիրքորոշումների հետ ադապտացմանը:

Հատուկ պետք է կարևորել արտ-տեխնոլոգիաներ կիրառող ուսուցանողի պատրաստվածությունը, քանի որ նրա աշխատանքային վարպետությունից է կախված առանձնահատուկ մանկավարժական տեխնոլոգիաներով այս աշխատանքի վերջնարդյունքի ամբողջական ու դրական ելքը:

Այսօր գեղարվեստա-մանկավարժական հայեցակարգերի զարգացման տեմպն աշխարհում արագացել է, ինչն էլ դասավանդողից պահանջում է ոչ միայն զուտ կատարողական վարպետություն, այլև արվեստի միջոցների անմիջական կիրառում դասավանդման գործընթացում՝ որպես սովորողի զգայական ակտիվության խթանման միջոց, ինչպես նաև մանկավարժի վարպետության դրսևորման նոր մոտեցում<sup>270</sup>:

Անհրաժեշտ է տարբերակել արվեստի ուսուցման մեթոդիկան արվեստի մանկավարժության մեթոդներով ուսուցման գործընթաց կազմակերպելուց: Վերջինս, համակցվելով մանկավարժական առողջագիտության առողջապահական բանաձևին, դուրս է բերել արվեստաբուժության մեթոդիկաներ՝ սովորողի անձնային, ինչպես նաև զարգացման առանձնահատկություններին համապատասխանեցնելով նրա՝ կրթությունն ստանալու իրավունքի իրացումը:

Արվեստի մանկավարժության արտ-մեթոդիկաները, տեխնոլոգիաներն ու մեթոդները կիրառվում են երեք ուղղությամբ. առաջինն արվեստի տարբեր ճյուղերի ուսուցման մեթոդիկաներն են, երկրորդ դեպքում արվեստը միջնորդ է մանկավարժական գործընթացում գեղարվեստական տարրերի ներառման, ինչպես նաև արակտիկ գործունեության վրա հիմնված ուսուցման գործընթաց կազմակերպելու համար, երրորդ դեպքում այն շտկողավերականգնողական տեխնոլոգիաների համակարգ է՝ կախված երեխայի ունեցած խնդրից, դրա բարդության աստիճանից, ուսուցման գործընթացում

<sup>269</sup> **Анисимов В.П., Скворцова Т.П.** Арт-педагогическая профилактика негативизма детей: монография. Тверь: Твер. гос. ун-т, 2017, стр.97–98

<sup>270</sup> **Тяглова С. А.,** Творческая технология арт-педагогического подхода в подготовке учителя, Pedagogical journal, N6, 2015, стр.70.



Նրա ներառման հնարավորությունից, ներառված լինելու չափից, սոցիալականացման խոչընդոտների հաղթահարման բարդություններից: Երեխայի անձի հոլիստիկ կառուցվածքը կարիք ունի համաչափ զարգացման, որը հաճախ միակողմանի կամ ոչ լիարժեք է բացահայտվում անձի սոցիալականացման ու դաստիարակության գործընթացներում: Երբեմն դպրոցում (հաճախ նաև ընտանիքում) երեխայի անձի ներքին կարողությունների ոչ ամբողջական մեկնաբանվածության, ոչ լիարժեք բացահայտվածության փաստը կարող է կոնֆլիկտայնության, հոգեկան լուրջ փոփոխությունների պատճառ դառնալ: Արվեստի մանկավարժության մեթոդները, որպես գեղարվեստական դիդակտիկայի ձևավորման պայման, կարևոր ներդրումներ են, քանի որ դրանք կարող են եսպես փոխել մանկավարժական գործընթացի բնույթը հատկապես ներառական ուսուցմամբ կրթություն կազմակերպելիս: Դրանք սուբլիմացիաների բանաձևեր են, որոնք օգնում են անձին փոխակերպել վախը, ընկճվածությունը, կուտակած վատ հույզերը դրական հույզերի, ինքնուրույն դուրս բերել պաշտպանական մեխանիզմներ՝ ընդդեմ բացասական ցանկությունների:

Արտ-մեթոդները և տեխնոլոգիաները կարող են կատարողականից ստեղծագործականի վերածել ուսուցման գործընթացը՝ հագեցնելով այն կենդանի շնչով, գույներով ու ձայնով, մարմնի շարժմամբ ու խոսքի մշակույթով: Դրանց շնորհիվ ուսուցման գործընթացն ունենում է մշակութային համատեքստ, ինչն էլ սովորողների շրջանում զարգացնում է դրականի վրա հենված զգայական ուղղորդվածություն<sup>271</sup>:

Արվեստի մանկավարժության մեթոդները անձի անհատական զարգացման համակարգում ինքնաբացահայտման շարժառիթներ կարող են դառնալ: Դրանք նաև համագործակցային բնույթ ունեն, օգնում են զարգացնել սոցիալական հմտությունները և ձևավորում են թիմում աշխատելու ունակություն, ինչպես նաև այդ մեթոդներից մի քանիսը թույլ են տալիս սովորողին ձեռք բերել գեղարվեստական գործունեության միջնորդությամբ որևէ բան սովորելու անհատական փորձ:

Ուսուցման գործընթացում արտ-մեթոդներ ու տեխնոլոգիաներ օգտագործելիս ուսուցանողը թեև կարող է ստեղծել գեղարվեստական միջավայր, ձևավորել երեխայի մեջ գեղագիտական ճաշակ, գեղարվեստական հաղորդակցման մշակույթ, այնուամենայնիվ, այդքանը բավարար պայման չէ երեխայի ստեղծագործականության խթանման, կառուցողական մտածողության ձևավորման և դրանց դրսևորումների համար: Արտ-մեթոդներն ու տեխնոլոգիաներն ունեն առավելություններ. դրանք կարող են ներգործել երեխայի ենթագիտակցության և գիտակցության վրա տարբեր կողմերից, տարբեր զգայությունների առաջացման ու զգայարարների խթանման միջոցով՝ լսողական, տեսողական, շոշափելիքի և այլն՝ փոխանցելով երեխային աշխարհմանաչողության ակտիվություն, նոր փորձ, հաճելի զգայություններ:

Այսպիսով՝ մանկավարժական արտ-մեթոդներն ու տեխնոլոգիաները կարող են նպաստել անձի ստեղծագործական ներուժի զարգացմանը, ինքնաբացահայտմանն ու ինքնաընկալմանը, ինչպես նաև նպաստել կենսաբանորեն առողջ ու հատուկ կարիքներով երեխաների համատեղ ուսումնական գործունեության կազմակերպմանը՝ որպես հոգեկարգավորման յուրահատուկ մեխանիզմներ՝ դարձնելով ուսուցման գործընթացն առավել ներառական, համագործակցային ու կառուցողական:

<sup>271</sup> Медведева Е. А. Арт-педагогика и арт-терапия в специальном и инклюзивном образовании, Москва, «Юрайт», 2019, стр. 88.

## FEATURES OF APPLICATION OF ART TECHNOLOGIES AND METHODS IMPLEMENTED IN INCREASING THE EFFICIENCY OF TEACHING

**LUSINE HAYRAPETYAN**

*Yerevan State University, Pedagogy and Education Development,  
Department of Pedagogy,  
Ph.D., Lecturer  
Yerevan, Republic of Armenia*

Pedagogical art-technologies and methods for enhancing the effectiveness of teaching progress are viewed as ways of enhancing the effectiveness of pedagogical process being alternatives to traditional pedagogical approaches.

The purpose of this article is to identify the importance of involving art technologies and methods in enhancing the effectiveness of teaching process and to interpret their role from the perspective of teaching process improvement.

The article explores new approaches to making the pedagogical process more creative which can solve a number of pedagogical problems not only in the field of personal education but also in socialization and upbringing.

A number of scientific-pedagogical research methods have been used to carry out the research, such as analysis, compilation, abstraction, generalization and coordination.

As a result it can be concluded that pedagogical art methods and technologies are unique pedagogical alternatives that can form an inclusive, tolerant and coherent environment and solve the problem of making the teaching process more creative and effective.

**Key words:** *Pedagogical Art Technologies, Art Methods, Isotherapy, Music Therapy, Bibliotherapy, Teaching Process, Pedagogical Process.*

## ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ АРТ-ТЕХНОЛОГИЙ И МЕТОДОВ ПРИ ПОВЫШЕНИИ ЭФФЕКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ

**ЛУСИНЕ АЙРАПЕТЯН**

*Ереванский государственный университет,  
Центр педагогики и развития образования,  
преподаватель кафедры педагогики, канд. пед. наук, ассистент,  
г.Ереван, Республика Армения*

Педагогические арт-технологии и методы рассматриваются как способы повышения эффективности педагогического процесса, являясь альтернативными по отношению к традиционным педагогическим подходам.

Целью исследования, проводимого в рамках статьи, является выявление важности привлечения арт-технологий и методов при повышении эффективности процесса обучения, а также интерпретирование их роли с точки зрения улучшения процесса обучения.

В данной статье выявлены новые подходы по приданию педагогическому процессу более творческого характера, благодаря которым можно решить ряд задач педагогического плана, в том числе не только в направлении обучения личности, но и в его социализации и воспитании.

Для проведения исследования был использован ряд методов научно-педагогических исследований, таких как анализ, сопоставление, абстракция, обобщение, координация.

В результате можно сделать вывод о том, что педагогические арт-методы и технологии являются своеобразными педагогическими альтернативами, которые способны решить проблему, касающуюся не только более активного, творческого и эффективного процесса обучения. Они также могут способствовать развитию творческого потенциала личности, самопознанию и самовосприятию, а также быть полезными в вопросе организации совместной учебной деятельности как биологически здоровых детей, так и детей с особыми потребностями в качестве уникальных механизмов психорегулирования, превращая процесс обучения в более инклюзивный, совместный и конструктивный.

**Ключевые слова:** педагогические арт-технологии, арт-методы, изотерапия, музыкотерапия, библиотерапия, процесс обучения, педагогический процесс.

**ՀՄԱՅԱԿ ՄԱՆՈՒԿՅԱԼ**

*Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական  
համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,  
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[hmayakmanukyan@gmail.com](mailto:hmayakmanukyan@gmail.com)*

*Հոդվածում առաջադրված նպատակի համաձայն ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության (մեղիացիայի) ինստիտուտի վերաբերյալ իրավեկվածության մակարդակը քաղաքացիների շրջանում, ինչպես նաև ներկայացվել հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունների համախումբն ըստ տվյալ ծառայության պոտենցիալ օգտատերերի: Մեր խնդիրն է ուսումնասիրել միջնորդության դերը քաղաքացիաիրավական հարաբերություններում, հետապոտել քաղաքացիների վերաբերմունքը և հաշտարարության ինստիտուտի վերաբերյալ իրավեկվածության աստիճանը, ուսումնասիրել վերջինիս արդի կարգավիճակը ՀՀ-ում, ինչպես նաև նկարագրել միջնորդների մասնագիտական կարևոր հատկությունները:*

*Հետապոտության ընթացքում իրականացվել է հիմնախնդրի վերաբերյալ տեսական վերլուծություն և կիրառվել են հարցման, կոնտեստ վերլուծության և ռանգավորման մեթոդները: Հաշտարարի մասնագիտական հատկությունների և հաշտարարության սոցիալ-հոգեբանական գործառույթների վերաբերյալ հարցումներին մասնակցել են ՀՀ բուհերի ուսանողներ ու դասախոսներ (ընդամենը 76 մարդ):*

*Հետապոտության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ հաշտարարության ինստիտուտի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր աշխատանքներ՝ կապված և՛ հաշտարարների ընտրության, և՛ քաղաքացիների վստահության հետ: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հետապոտվողների մեծամասնությունը տեղեկացված չէ հաշտարարության (մեղիացիայի) ինստիտուտի դերի և գործառույթների մասին: Առկա է անվստահության բարձր աստիճան միջնորդության այդ տիպի ինստիտուտի նկատմամբ:*

*Ներկայացրել ենք հաշտարարների (մեղիատորների) մասնագիտական կարևոր կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են արդյունավետ հաշտարարություն իրականացնելու համար:*

*Հիմնաբառեր՝ հաշտարարություն, մեղիացիա, կոնֆլիկտ, անձ, տեղեկացվածություն, քաղաքացիաիրավական հարաբերություններ, հարցում, դասակարգում, մասնագիտական, հոգեբանական կարևոր հատկություններ:*

**Արդիականությունը**

*ՀՀ-ում մեղիացիայի ինստիտուտի զարգացումը կապվում է վերջին տասնամյակի հետ, ընդ որում՝ առավել շատ զարգացել է ֆինանսական հաշտարարության*

---

\* Հոդվածը ներկայացվել է 17.02.2020թ., գրախոսվել՝ 18.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

ինստիտուտը, որն իր գործառնություններով ավելի շատ նման է խորհրդատվական ու տեղեկատվական գրասենյակի, քան մեդիացիայի ինստիտուտի:

Վերջին տարիներին փորձեր արվեցին կայացնելու և զարգացնելու վերոնշյալ ինստիտուտը նույն սկզբունքով, ինչ գործում է ամբողջ աշխարհում: Արդարադատության նախարարության կողմից իրականացվեցին վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակիցները մեծամասամբ գործող փաստաբաններ, իրավաբաններ էին: Այսօր Հաստատվում գործում են 55 արտոնագրված հաշտարար և մշտապես գործող 2 հաշտարարական հաստատություն<sup>272</sup>: Վերոնշյալ ռեեստրում գրանցված հաշտարարները իրականացնում են աշխատանքներ բաղաբացիաիրավական, առևտրային, կորպորատիվ, ընտանեկան, աշխատանքային ոլորտներում: Եվ չնայած այն հանգամանքին, որ որոշակի քայլեր կատարվել են մեդիացիայի ինստիտուտի ձևավորման ու զարգացման ուղղությամբ, որպես այդպիսին մեդիացիայի ինստիտուտը ՀՀ-ում կարելի է համարել դեռևս չկայացած: Սակայն դրա անհրաժեշտությունն ու հրատապությունը կասկած չի հարուցում հաշվի առնելով փոխակերպվող հասարակությունում ծագող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներն ու կոնֆլիկտները մի կողմից՝ անձ-անձ, անձ-կազմակերպություն, կազմակերպություն-կազմակերպություն հարաբերություններում, մյուս կողմից՝ դատարան դիմելու և ողջ գործընթացի ֆինանսական և հուզական մեծ ծախսերը, ինչպես նաև նույնիսկ դրական ելքի ժամանակ այդ գործընթացի շարունակական լինելը, տևականությունը: Արձանագրելով հաշտարարության կարևոր դերն ու նշանակությունը ժամանակակից հասարակությունում, կարելի եզրակացնել, որ այնուամենայնիվ դեռ արդիական են մնում գիտական ու հանրամատչելի գրականության հրապարակման հարցը, ինչպես նաև միասնական գիտական հիմնավորված հայեցակարգի մշակման խնդիրը:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված հաշտարարները կրթությամբ իրավաբաններ են<sup>273</sup>: Միանշանակ է, որ մեդիացիայի արդյունավետության ապահովման համար կարևոր է իրավաբանական կրթությունը, սակայն քիչ կարևոր չէ նաև հաշտարարի հոգեբանական պատրաստվածության աստիճանը, ինչպես նաև անձնային ու հոգեկան առանձնահատկությունները, որոնք անհերքելի մեծ նշանակություն ունեն մեդիացիայի ողջ գործընթացում: Անհրաժեշտ է շեշտել, որ մեդիատորի կարևոր գործառնություններից է երկու հակամարտող կողմին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնել կարողանալը, ինչպես նաև մասնակիցների շրջանում իրական պահանջմունքների գիտակցման մակարդակը բարձրացնելը, որն ընկած է կոնֆլիկտների լուծման հիմքում:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ մեդիացիայի ինստիտուտի կայացման ու զարգացման համար անհրաժեշտ աշխատանքներ պետք է տարվեն տարբեր ուղղություններով: Նախ և առաջ հրատապ պետք է բարձրացնել բաղաբացիների իրազեկվածության մակարդակը մեդիացիայի ինստիտուտի և դրա գործառնությունների վերաբերյալ: Բացի այդ, նույնքան կարևոր է մեդիատորների ընտրությունն ու հավատարմագրումը կառուցել մասնագիտական հիմքերի վրա՝ հաշվի առնելով հոգեբանական դիմանակարի համապատասխանությունը մասնագիտությանը: Չնայած այս հիմնախնդրի կարևորությանն աշխարհում և մասնավորապես ՀՀ-ում՝ բավարար չեն այն աշխատանքները, որոնք նվիրված են մեդիատորի անձնային ու հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություններին: Օ. Ալլախվերդյանը նշում է, որ իր հետազոտություններում՝ նվիրված որոշ հոգեբանական առանձնահատկությունների դերին մեդիացիայի գործընթացում, նշանակալի կապեր հայտնաբերված չեն: Ըստ Օ.

<sup>272</sup> <http://www.justice.am/page/582>, Արտոնագրված հաշտարարներ ռեեստր: Մշտապես գործող հաշտարարական հաստատությունների ռեեստր:

<sup>273</sup> <http://www.justice.am/page/582>, Արտոնագրված հաշտարարներ ռեեստր:

Ալախվերդովայի՝ հնարավոր է այն պայմանավորված լինի հատկությունների սխալ ընտրությունով<sup>274</sup>: Մեդիատորների գործունեության ուսումնասիրությունները առավել շատ ծավալվում են նրանց կատարած գործառույթների, մեդիացիայի գործընթացի, պայմանների և այլ բնութագրիչների շուրջ<sup>275</sup>: Այսպես՝ ՌԴ-ի մեդիատորների լիգայի կողմից առաջարկվող մասնագիտական ստանդարտում մեծ տեղ են զբաղեցնում մասնագիտական գիտելիքներն ըստ ուղղությունների և մասնագիտական կարողությունները<sup>276</sup>:

Հիմնվելով տեսական կյուբի վերլուծության վրա՝ մեր **Նպատակն է** ուսումնասիրել ՀՀ-ում հաշտարարության (մեդիացիայի) ինստիտուտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը քաղաքացիների շրջանում, ինչպես նաև ներկայացնել հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունների համախումբն՝ ըստ տվյալ ծառայության պոտենցիալ օգտատերերի:

Նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**՝

1. Տեսական վերլուծության հիման վրա ուսումնասիրել հաշտարարության դերը քաղաքացիաիրավական հարաբերություններում,
2. Կոնտենտ (բովանդակային) վերլուծություն միջոցով հետազոտել հաշտարարության ինստիտուտի արդի կարգավիճակը ՀՀ-ում,
3. Ուսումնասիրել մեր հանրապետության քաղաքացիների վերաբերմունքը և իրազեկվածության աստիճանը մեդիացիայի ինստիտուտի վերաբերյալ,
4. Հետազոտել հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունները՝ ըստ այդ ծառայության պոտենցիալ օգտատերերի:

#### **Հետազոտության ընտրանքը և մեթոդները**

Հետազոտությանը մասնակցել են 18-55 տարեկան 76 ՀՀ քաղաքացի, որոնք ունեն տարբեր մասնագիտություններ և գտնվում են մասնագիտական կայացման տարբեր փուլերում: Ընտրանքը ձևավորվել է պատահականության սկզբունքով: Հարցման մասնակիցների ընտրությունը հիմնավորվում է նրանով, որ բարձրագույն կրթության համակարգում ներգրավված մարդիկ ունեն իրազեկման համեմատաբար լայն հնարավորություններ:

Հետազոտության համար կիրառվել է հարցման մեթոդը, կոնտենտ վերլուծության և ռանգավորման մեթոդները: Հարցումը իրականացվել է 2019թ.-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

#### **Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը**

Ընտրանքը կազմել են 76 հոգի՝ տարբեր բուհերի ուսանողներ, իրավաբաններ, տնտեսագետներ, լեզվաբաններ և այլ մասնագետներ: Ընտրանքի 50 հոգին (1-ին խումբ, 18-24 տարեկան) եղել են ուսանողներ, 26-ը (2-րդ խումբ, 25-55 տարեկան)՝ տարբեր բնագավառների դասախոս-մասնագետներ: Այն հարցին, թե վստահում եք արդյոք հաշտարարության ինստիտուտին, 1-ին խմբի հարցվածների գերակշռող մեծամասնությունը (28 հոգի) պատասխանել է, որ իրենք իրազեկված չեն դրա առկայության և գործառույթների մասին: 9-ը հոգին տվել են դրական պատասխան, որ իրազեկված են և վստահում են: Հարկ է նշել, որ իրազեկված ուսանողները մասնագիտանում են իրավաբանության և միջազգային հարաբերությունների ոլորտում:

Հարցված 26 մասնագետներից 18-ը վստահում են հաշտարարության ինստիտուտին, և 22-ը կղիմեն անհրաժեշտության դեպքում: Այստեղ հետաքրքրական է այն փաստը, որ դրական պատասխան տված մասնագետների մեծամասնությունը

<sup>274</sup> **Аллахвердова О. В.** Обучение медиаторов и формирование компетенций. // Вестник СПбГУ. Сер. 16. 2012. Вып. 3.

<sup>275</sup> Медиация. Учебник. / Под ред. А. Д. Карпенко, А.Д. Осинковского. СПб: Третьейский суд. М. Статут, 2016, էջ 470.

<sup>276</sup> Նույն տեղում, 432-470 էջեր:

բիզնես ֆինանսական ոլորտի աշխատակիցներ են: Հարցման ընթացքում. նկատել ենք կանանց ու տաղամարդկանց միջև վերաբերմունքի տարբերությունը: Ե՛վ ուսանողների, և՛ մասնագետների շրջանում վստահող և այդ ծառայությանը անհրաժեշտության դեպքում դիմող քաղաքացիների թիվն անփոփոխ էր այն դեպքում, երբ իգական սեռի ներկայացուցիչների կողմից հաշտարարին դիմելու հավանականությունը ավելի մեծ է, քան վստահելու:

Ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ Հայաստանում այսօր հաշտարարության ինստիտուտի առկայության և դրա գործառնությունների մասին հասարակության իրազեկվածությունը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա: Իսկ այն սակավաթիվ քաղաքացիները, որոնք իրազեկված են և վստահում են այդ ինստիտուտին, այս կամ այն կերպ մասնագիտորեն կապված են դրան:

Այսպես՝ ուսանողների շրջանում իրազեկվածությունը բարձր է իրավաբանների ու միջազգայնագետների շրջանում, ինչը նրանց մասնագիտական կոմպետենցիաների առումով օրինաչափ է: Աշխատող քաղաքացիների շրջանում իրազեկվածությունը բարձր էր ֆինանսական ոլորտի աշխատակիցների շրջանում, ինչը պայմանավորված է ՀՀ-ում ֆինանսական հաշտարարության ինստիտուտի կայացվածության հետ:

Սակայն, ինչպես նշում է Հ. Հովհաննիսյանն «Արմենիա Սպուտնիկին» (լրատվական գործակալություն) տված հարցազրույցում, ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ՝ կապված և՛ հաշտարարների ընտրության, և՛ քաղաքացիների վստահության հետ: «Քաղաքացիների հետ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է շեշտադրել հաշտարարության ժամանակ զաղտնիության սկզբունքը, ժամանակի ծախսը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հաշտարարության ժամանակ քաղաքացին ինքն է որոշում կայացնում և յուրաքանչյուր պահի կարող է հրաժարվել մեղիացիայից միակողմանի»<sup>277</sup>:

Այժմ ամփոփելով քաղաքացիների հարցման արդյունքները՝ անդրադառնանք հաշտարարների այն հատկություններին, որոնք նշանակալի դերակատարություն ունեն մեղիատորների մասնագիտական կայացման մեջ: Մեր կողմից կազմված հարցարանի պատասխանների հիման վրա ռանգավորվել են այն հատկություններն ու ունակությունները, որոնք, ըստ հարցվածների, անհրաժեշտ են հաշտարարների արդյունավետ գործունեության ապահովման համար (ՏԵ՛ս աղ. 1):

Աղյուսակ 1.

**Հաշտարարների (մեղիատորների) մասնագիտական կարևոր հատկությունների ռանգավորման արդյունքները(n=76)**

№	Հմտություններ	Ռանգավորման սանդղակ պ.մ.
1.	Իրավիճակի օբյեկտիվ գնահատում	1,84
2.	Գաղտնապահություն	1,82
3.	Վերլուծական մտածողություն	1,78
4.	Ռացիոնալ որոշումների ընդունում	1,76
5.	Մտքերի հստակ ձևակերպում	1,76
6.	Լսելու հմտություններ	1,76
7.	Հետևողականություն	1,74
8.	Ծրագրավորված որոշումների ընդունում	1,64
9.	Համբերատարություն	1,62

<sup>277</sup> Մեղիացիան նոր բառ է հայկական իրավագիտության մեջ: <https://armeniasputnik.am/society/20170321/6759008/armenia-iravaban-mediacia.html>:

10.	Այլոց հույզերի ճանաչում և գնահատում	1,58
11.	Սեփական հույզերի ճանաչում	1,54
12.	Անաչառություն	1,52
13.	Կանխատեսում	1,44
14.	Այլոց հնարավորությունների գնահատում	1,38
15.	Իրավիճակային որոշումների ընդունում	1,32
16.	Ժամանակի կառավարում	1,3
17.	Տարածության կառավարում	1,3
18.	Ներագոյան ունակություն	1,2
19.	Ոչ վերբալ/խոսքային հաղորդակցման հմտություններ	1,06
20.	Ինտուիտիվ որոշումների ընդունում	0,72
21.	Չույզերի վրա հիմնված որոշումների ընդունում	0,62

Ինչպես երևում է աղյուսակից, հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունների շարքում առաջնային տեղ են զբաղեցնում օբյեկտիվությունը, ռացիոնալիզմը, տրամաբանությունը, ինչպես նաև հաղորդակցման հմտությունները, մասնավորապես մտքերը հստակ ձևակերպելու, լսելու կարողությունները և այլն: Ամենացածր միավորներ հավաքել են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ հույզերի վրա հիմնված և ինտուիտիվ որոշումներ ընդունելու հմտությունները:

Ստացված արդյունքների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում խոսելու այն մասին, որ մեդիացիայի ինստիտուտի պոտենցիալ օգտատերերի համար կարևորվում են մասնագիտական կոմպետենցիաները, տրամաբանական, ռացիոնալ որոշումների ընդունման հատկությունները: Ուշադրություն չի դարձվում հաշտարարի արտաքին տեսքին, բանավոր խոսքի կառուցման, ոչ վերբալ հաղորդակցման հմտություններին, որոնք, սակայն, քիչ կարևոր չեն բանակցությունների վարման ընթացքում: Ց. Շամլիկաշվիլիի և Ս. Խարիտոնովի աշխատանքում նշվում է, որ մեդիացիայի ինստիտուտի պոտենցիալ օգտատերերի համար կարևորվում է նաև հաշտարարի ընտանեկան կարգավիճակը, պրոֆեսիոնալիզմը, ինչպես նաև արտաքին տեսքը: Ընդ որում, նրանց կողմից իրականացված հետազոտության մեջ ցույց է տրված, որ ընտանեկան վեճերը հանգուցալուծող հաշտարարների համար կարևոր է ընտանեկան կարգավիճակն այն դեպքում, երբ քաղաքացիաիրավական վեճերի լուծման համար կարևորվում է մեդիատորների պրոֆեսիոնալիզմը, տարիքը<sup>278</sup>:

Մինևույն ժամանակ հետքերական է այն, որ անկախ մասնագիտական կայացման փուլից՝ իզական սեռի ներկայացուցիչներն առավել հակված են մեդիացիայի ինստիտուտին վստահելու և անհրաժեշտության դեպքում դիմելու: Սեռային տարբերություններ գրանցվել են նաև այն պատասխաններում, որոնք վերաբերում են գաղտնապահության, համբերատարության և անաչառության հատկություններին:

Այսպիսով՝ ամփոփելով վերնշաղը, կարելի է եզրակացնել, որ Չայաստանի Չանրապետությունում հաշտարարության ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործնական միջոցառումներ քաղաքացիների

<sup>278</sup> **Шамликашвили Ц.В., Харитонов С.В.** Качества специалиста по урегулированию споров в представлениях потенциальных потребителей такого рода услуг и медиаторов. // Глобальный научный потенциал. Материалы для дискуссии. N10 (43), 2014, стр. 113-120, <http://fedim.ru/wp-content/uploads/2014/10/SHamlikashvili-i-dr-Globalnyj-nauchnyj-potentsial-2014-10.pdf>



իրագրվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, հետազոտության արդյունքների վերլուծությամբ պարզորոշվեց ռացիոնալ, վերլուծական, ծրագրավորված որոշումների ընդունման կարողությունների, ինչպես նաև վերբալ հաղորդակցման հմտությունների նշանակալի դերը հաշտարարների աշխատանքի արդյունավետության բարձրացման մեջ՝ ըստ հաշտարարության ծառայությունից պոտենցիալ օգտվողների:

## **A STUDY OF THE AWARENESS OF THE SOCIAL PSYCHOLOGICAL FUNCTIONS OF MEDIATION**

**H MAYAK MANUKYAN**

*PhD student, Department of Applied Psychology,  
Armenian State Pedagogical University after Kh.Abovyan,  
Yerevan, Republic of Armenia*

In accordance with the goal, the article explores the level of awareness of citizens of the intermediary institution in the Republic of Armenia, as well as, based on the opinion of respondents, identifies the totality of the most important professional qualities. Our task is to study the role of mediation in civil law relations, and to study the attitude of citizens and their degree of awareness of this institution, to study its current status in the Republic of Armenia, as well as to describe the important professional qualities of mediators.

In the process of research, a theoretical analysis of the problem was carried out, as well as polling methods - content analysis and ranking - were used. The survey on the professional qualities of the mediator and the socio-psychological functions of mediation was attended by teachers and students of higher educational institutions of the Republic of Armenia (a total of 76 people).

In accordance with the results of the study, it was concluded that it is necessary to implement a set of measures to select mediators and increase the level of trust among the population. The results of the survey recorded the following features: most respondents are not aware of the role and functions of the institution of mediation. A high degree of distrust in the institution of mediation was found. The professionally important qualities of intermediaries that are necessary for effective mediation have also been identified. According to the survey, important professional skills needed for effective mediation were identified.

**Keywords:** *mediation, reconciliation, awareness, conflict, persona, civil law relations, interrogation, ranking, psychological, professionally important qualities.*

**ИССЛЕДОВАНИЕ ОСВЕДОМЛЕННОСТИ О СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ФУНКЦИЯХ МЕДИАЦИИ****АМАЯК МАНУКЯН**

*аспирант кафедры прикладной психологии Армянского государственного педагогического университета имени Х.Абовяна, г. Ереван, Республика Армения*

В статье в соответствии с поставленной целью исследован уровень осведомленности граждан об институте медиации в Республике Армения, а также на основании мнения респондентов выявлен комплекс важнейших профессиональных качеств. Наша задача состоит в изучении роли медиации в гражданско-правовых отношениях и исследовании отношения граждан и степени их осведомленности о данном институте, изучении его текущего статуса в РА, а также в описании важных профессиональных качеств медиаторов.

В процессе исследования проведен теоретический анализ по проблеме, а также использованы методы опроса, контент-анализа и ранжирования. В опросе о профессиональных качествах медиатора и социально-психологических функциях медиации участвовали преподаватели и студенты вузов Республики Армения (всего 76 человек).

В соответствии с результатами исследования получены выводы о том, что необходимо реализовывать комплекс мероприятий для отбора медиаторов и для повышения уровня доверия у населения. Результаты опроса зарегистрировали следующие особенности: большинство респондентов не осведомлены о роли и функциях института медиации. Обнаружена высокая степень недоверия к институту медиации. Также выявлены профессионально важные качества медиаторов, которые необходимы для реализации эффективного посредничества. По результатам опроса выявлены профессиональные важные навыки, необходимые для эффективного посредничества.

**Ключевые слова:** примирение, медиация, осведомленность, конфликт, личность, гражданско-правовые отношения, опрос, ранжирование, психологические, профессионально важные качества.

**ԼԵՉԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**LINGUISTICS, LITERATURE STUDY, JOURNALISM**  
**ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ, ЖУРНАЛИСТИКА**



**ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ**  
**ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՉ\***

**ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[h.baghdasaryan@ysu.am](mailto:h.baghdasaryan@ysu.am)*

**ՏԱԹԵՎԻԿ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս, ասպիրանտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[tatevik-90@mail.ru](mailto:tatevik-90@mail.ru)*

**Հոդվածի նպատակն է քննել թարգմանաբանության մեջ ազգամշակութային նշույթավորվածությունն ունեցող տարրերի՝ իրակությունների սահմանման ու դասակարգման խնդիրը, որը դեռևս չի գտել իր գիտական սպառիչ լուծումը: Լեզվաբանության արդի՝ լեզվամշակութային հարացույցում տեքստը դիտարկվում է որպես աշխարհի ազգային-լեզվական պատկերի մի մաս, որի թարգմանության ժամանակ առանձնահատուկ խնդիրներ են առաջադրում իրակությունները՝ ի ցույց դնելով համընդհանուրի, ազգայինի ու անհատականի հակադրամիասնությունը՝ որպես թարգմանական գործընթացի մեթոդաբանական հենք: Հոդվածում քննվում են ռուս, արևմտաեվրոպական և ամերիկյան թարգմանաբանական դպրոցներում իրակությունների Էոլթյան, սահմանման ու դասակարգման շուրջ մի շարք առավել հայտնի տեսություններ ու մոտեցումներ: Հարցի քննությունը կատարվում է ոչ միայն թարգմանաբանական, այլև համեմատական-լեզվաբանական, լեզվամշակութաբանական և լեզվաերկրագիտական տեսանկյունից: Հոդվածում կիրառվել են վերլուծական ու համեմատական քննության մեթոդները:**

**Հարցի տեսության ամփոփ քննությունը ցույց է տալիս, որ, չնայած խնդրի կարևորությունը թարգմանության տեսության և պրակտիկայի համար, դեռևս չկա հայեցակարգային ու տերմինաբանական համաձայնություն տարբեր տեսաբանների միջև: Հոմանիշ ելրոյթների բավմապանությունը, ինչպես նաև ազգամշակութային տարրերի քննության տարբեր սկզբունքների առկայությունը մեծ խնդիրներ է առաջադրում իրակությունների սահմանման ու դասակարգման հարցում:**

\* Հոդվածը ներկայացվել է 11.02.2020թ., գրախոսվել՝ 17.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

**Ղիմնաբաներ՝ թարգմանաբանություն, իրականություն, լեզվաերկրագիտություն, լեզվամշակութաբանություն, թարգմանաբանական դպրոց, իրականությունների սահմանում և դասակարգում, հայեցակարգային և տերմինաբանական անհամաձայնություն:**

Վերջին տասնամյակներում լեզվի ու մշակույթի փոխհարաբերության խնդիրը դարձել է մի շարք գիտակարգերի՝ էթնոլեզվաբանության, մարդաբանության, թարգմանաբանության, լեզվամշակութաբանության, լեզվաերկրագիտության, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և այլն, քննության առարկան:

Գիտական տարբեր ուսումնասիրություններում լեզվամշակութային տարրերը բնորոշելու համար առաջադրվել են տարբեր եզրույթներ, որոնք տարբերվում են ինչպես իրենց հասկացական բովանդակությամբ, այնպես էլ գործածության հաճախականությամբ և գիտական հանրության կողմից ընդունելիության աստիճանով: Լայն առումով, ազգամշակութային տարրերը դիտարկվում են որպես տվյալ լեզվամշակութային համայնքի ուրույն նյութական ու հոգևոր մշակույթի կրողներ, որոնք պահպանում և սերնդեսերունդ փոխանցում են «ժողովրդի հիշողությունը»՝ ի ցույց դնելով, թե «կողորինատների որ ցանցով» է տվյալ ժողովուրդն ընկալում ու մեկնաբանում աշխարհը և կառուցում աշխարհի իր առանձնահատուկ պատկերը:

Թարգմանաբանական տարբեր աշխատություններում ազգամշակութային տարրերը բնորոշելու, դրանց էությունը մեկնաբանելու և դասակարգելու համար առաջադրվել են մի շարք եզրույթներ ու կապակցություններ՝ «ազգային գունավորում», «իրականություն» (Ա. Ֆեոդորով), «իրականություն» (Ս. Վլախով, Ս. Ֆլորին), «կուլտուրեմա» (Վ. Գակ, Զ. Նորդ), «մշակութային բառ» (Պ. Նյումարկ) և այլն<sup>279</sup>: Իսպանագիտական աղբյուրներում ազգամշակութային տարրերն այսօր նույնպես դարձել են լայն քննության առարկա, և դրանք դիտարկվում են նաև որպես «մշակույթին հատուկ տարր» (Խ. Ֆրանկո Աիբեսելա), «մշակութային առումով նշույթավորված տեքստային հատված» (Ռ. Մայորալ Ասենսիո, Ռ. Մունյոս Մարտին), «մշակութային վերաբերություններ» (Գրանադայի թարգմանաբանական դպրոցը, Ռ. Մայորալ Ասենսիո) և այլն, թեև առավել տարածված եզրույթներից է *կուլտուրեման* (Լ. Մոլինա Մարտինես)<sup>280</sup>: Տարբեր թարգմանաբանական դպրոցներում ազգամշակութային տարրերի անվանման ու տերմինային բազմազանության խնդիրը մանրամասն քննում է Ռ. Մայորալ Ասենսիոն<sup>281</sup>:

Ռուս թարգմանաբանական դպրոցում առաջիններից մեկը Ա. Ֆեոդորովն է, որն անդրադառնում է ազգամշակութային տարրերին՝ քննելով գեղարվեստական գրականության թարգմանության մեջ ազգային գունավորման պահպանման խնդիրը, որը մեծ դժվարություններ է ստեղծում ինչպես գործնական լուծման, այնպես էլ տեսական վերլուծության հայեցակերպում: Ըստ Ա.Ֆեոդորովի՝ ազգային գունավորումը գեղարվեստական ստեղծագործության կոնկրետ առանձնահատկություններից է, որը կարող է դրսևորվել ինչպես նրա պատկերային համակարգում, այնպես էլ տեքստի

<sup>279</sup> Տե՛ս **Ֆեօդորով Ա. Յ.** Основы общей теории перевода (лингвистические проблемы). М.: Высшая школа, 1983; **Влахов С., Флорин С.** Непереводимое в переводе. М.: Высшая школа, 1980; **Гак В. Г.** Языковые преобразования. М.: Школа «Языки русской культуры», 1998; **Nord C.** El funcionalismo en la enseñanza de traducción // Mutatis Mutandis. Vol. 2, N 2, 2009, pp. 209-243; **Newmark P.** Manual de traducción (versión española de Virgilio Moya). Madrid: Ediciones Cátedra, 1992.

<sup>280</sup> Տե՛ս **Franco Aixelá J.** Culture-Specific Items in Translation // Translation, Power, Subversion. Ed. Román Álvarez and M. Carmen-África Vidal. Topics in Translation 8. Clevedon: Multilingual Matters, 1996, pp. 52-78; **Mayoral Asensio R., Muñoz Martín R.** Estrategias comunicativas en la traducción intercultural // Fernández P.; Bravo J. M<sup>a</sup> (eds.) Aproximaciones a los estudios de traducción. Valladolid: Servicio de Apoyo a la Enseñanza, Universidad de Valladolid, 1997, pp. 143-192; **Mayoral Asensio R.** La traducción de referencias culturales // Sendebarr 10/11, 1999/2000, pp. 67-88; **Molina Martínez L.** Análisis descriptivo de la traducción de los culturemas árabe-español (Tesis doctoral). Universitat Autònoma de Barcelona, 2001.

<sup>281</sup> Տե՛ս **Mayoral Asensio R.**, նշվ. աշխ.:

հատկաբանական բնույթում, ընդ որում, ինչքան տվյալ ստեղծագործությունն իր արծարծած թեմաներով մոտ է ժողովրդի կյանքին, նրա կենցաղին, իսկ ոճով՝ բանահյուսությանը, այնքան ավելի ցայտունորեն է դրսևորվում ազգային գունավորումը: Ա. Ֆեոդորովը արդարացիորեն նշում է, որ ազգային երանգավորումը չի կարող առնչվել սոսկ գեղարվեստական ստեղծագործության որևէ ձևական առանձնահատկության հետ (օրինակ՝ բառապաշարի որևէ տարր կամ առանձին քերականական երևույթ), այլ ընդգրկում է ստեղծագործության առանձնահատկությունների մի ամբողջություն<sup>282</sup>: Այնուամենայնիվ, ինչպես և նկատում է Ա. Ֆեոդորովը, խնդիրը դեռևս քիչ է ուսումնասիրված, տեսական ու գործնական հայեցակերպում այն բավականին բարդ է և պահանջում է հաշվի առնել լեզվական միջոցների ողջ համակարգը:

Ռուս թարգմանաբանական դպրոցի ձևավորման սկզբնափուլում մշակութային տարրերի սահմանումը փորձել են ներկայացնել նաև այլ լեզվաբաններ՝ դրանք քննելով որպես «իրակություններ» (Լ. Սոբոլև), «անհամարժեք բառապաշար» (Գ. Չերնով), «տարաշխարհիկ բառապաշար» (Ա. Սուկրուն) և այլն<sup>283</sup>: Ռուս լեզվաբան Օ. Ախմանովան իր հայտնի «Լեզվաբանական եզրույթների բառարանում» իրակությունները սահմանում է որպես տարբեր գործոններ, որոնք ուսումնասիրվում են արտաքին լեզվաբանության կողմից, ինչպիսիք են օրինակ՝ տվյալ երկրի պետական կառուցվածքը, տվյալ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, տվյալ լեզվակիրների լեզվական շփումները և այլն, որոնք արտացոլվում են լեզվում: Բացի այդ, այս եզրույթի տակ հասկացվում են նաև նյութական մշակույթի առարկաները<sup>284</sup>:

Լեզվաերկրագիտության՝ որպես լեզվադիդակտիկայի առանձին ճյուղի հիմնադիրներ Ե. Վերեչագինայի և Վ. Կոստոմարովի տարբեր աշխատություններում մանրամասն քննության առարկա են դարձել լեզվի և այն կրող ժողովրդի ազգային մշակույթի փոխհարաբերության հարցերը: Լեզվաերկրագիտության մեջ իրակությունների քննության մեկնակետը լեզվի այն գործառույթն է (ըստ այս հեղինակների՝ кумулятивная функция), որի շնորհիվ բառում արտացոլվում, պահպանվում և սերնդեսերունդ փոխանցվում է արտալեզվական իրականության վերաբերյալ տեղեկատվությունը: Մի կողմից՝ լեզուն հասարակական երևույթ է, որը պահպանում է այն տեղեկատվությունը, որը բնորոշ է տվյալ լեզվամշակութային համայնքին, մյուս կողմից՝ այն անհատական բնույթ ունի և պահպանում է անհատի անկրկնելի, ուրույն կենսափորձը: Այնուամենայնիվ, հիմնվելով լեզվում համընդհանուրի և անհատականի անբաժանելի հակադրամիասնության վրա, որը կարևորվում է նաև հաղորդակցական ակտում, հեղինակները պնդում են, որ անհատական գիտակցությունը «իսկական համագիտելիք է, համատեղ գիտելիք, այն մեծամասամբ մարդու «սոցիալիզացիայի» արդյունք է, նրա կողմից լեզվում պահպանվող հասարակական փորձի յուրացում»<sup>285</sup>: Բառի բովանդակային կառուցվածքը բառային հասկացությունից բացի ընդգրկում է նաև *բառային ֆոն*, որն արձանագրում և պահպանում է տվյալ

<sup>282</sup> Ст'у Фёдоров А. В. Основы общей теории перевода (лингвистические проблемы). М.: Высшая школа, 1983, с. 279-280.

<sup>283</sup> Ст'у Соболев Л. Н. Пособие по переводу с русского языка на французский. М.: Изд. лит. на иностр. яз., 1952; Чернов Г. В. К вопросу о передаче безэквивалентной лексики при переводе советской публицистики на английский язык // Ученые записки 1-го МГПИИЯ, т. XVI, М., 1958; Супрун А. Е. Экзотическая лексика // ФН, М., 1958, № 2, с. 50-54.

<sup>284</sup> Ст'у Ахманова О. С. Словарь лингвистических терминов. М.: Советская энциклопедия, 1966, с. 381.

<sup>285</sup> Верещагин Е. М., Костомаров В. Г. Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980, с. 7.

լեզվամշակութային համայնքի հոգևոր և կյուրական արժեքները<sup>286</sup>: Բառային ֆոնը ավելի լայն է, քան բառային հասկացությունը, այսինքն՝ բառային հասկացությունը մտնում է բառային ֆոնի մեջ, ինչպես մասը ամբողջի մեջ: Խոսքն անհամարժեք բառերի մասին է, որոնք չունեն իմաստային համապատասխանություններ այլ լեզուներում: Հիմնվելով ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման սեփական փորձի վրա՝ Ե. Վերեշչագինան և Վ. Կոստոմարովը ռուսերենի բառապաշարում առանձնացնում են ֆոնային ու անհամարժեք բառապաշարի յոթ խումբ՝ խորհրդային բառապաշար, կոր կենցաղի բառեր, ավանդական կենցաղի առարկաների և երևույթների անվանումներ, պատմաբառեր, դարձվածապաշար, բանասիրական բառեր և ոչ ռուսերեն ծագում ունեցող բառեր (пельмени, харчо, чайхана, аул, караван, кумыс և այլն): Թարգմանության՝ որպես միջլեզվական և միջմշակութային հաղորդակցության ակտի առումով կարևորվում է նաև այս հեղինակների առաջադրած տեսության մեջ հաղորդակցության մասնակիցների գիտելիքների՝ այսպես կոչված *ֆոնային գիտելիքների* (фоновые знания, background knowledge) առանձնացումը, որի արդյունքում տարբերակվում են համամարդկային, տարածաշրջանային ու երկրագիտական (տվյալ էթնիկական և լեզվական հանրույթին բնորոշ) գիտելիքները<sup>287</sup>: Ազգամշակութային կամ լեզվաերկրագիտական նշույթավորվածություն ունեցող բառապաշարի համակարգման գլխավոր սկզբունքը, ըստ այս հեղինակների, արտալեզվական (թեմատիկ) սկզբունքն է, որի հիման վրա նրանք առաջադրում են իրակությունների տարբեր տեսակներ՝ հատուկ անդրադարձ կատարելով նաև հատուկ անունների քննությանը<sup>288</sup>: Հատկանվանական բառապաշարը նույնպես իր իմաստում կրում է ազգամշակութային բաղադրիչ: Թեև վերջիններիս հատուկ չէ բառային հասկացությունը, այնուամենայնիվ, դրանց բառային ֆոնը ընդգրկում է և որակապես բավականին բարդ:

Իրակությունների ամբողջական ու համակողմանի տեսությունը թարգմանաբանության տեսանկյունից առաջադրել են հայտնի բուլղարացի թարգմանաբաններ Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը ազգային ու պատմական կոլորիտը կրող տարրերը անվանում են *реалия* «իրակություն»: Այս թարգմանաբանների հայտնի «Անթարգմանելի թարգմանության մեջ» գիրքն ամբողջովին նվիրված է իրակությունների սահմանման, հարակից հասկացություններից սահմանազատման, դասակարգման և թարգմանության խնդիրներին: Գրքում մանրամասն քննության առարկա են դարձել ազգամշակութային տարրեր անվանող մի շարք եզրույթներ՝ անհամարժեք բառապաշար, տարաշխարհիկ բառեր (բառապաշար), աղճատաբանություններ, տեղաբանություններ, ազգագրական բառեր, ֆոնային բառեր, հարանշանակային, մշակութային բաղադրիչ պարունակող բառեր, բացեր (lacune) և այլն: Նշված հասկացությունները խմբավորվում են մի իմաստային դաշտում ըստ իրենց պատմական, ազգային ու տեղական երանգավորման, ինչպես նաև թիրախ լեզվում համարժեքների բացակայությամբ: Այս հիմնարար աշխատության մեջ առանձնացվում են նշված «անթարգմանելի տարրերի» էական տարբերակիչ հատկանիշները, կատարվում տերմինային ճշգրտումներ: Ս. Վլախովի և Ս. Ֆլորինի կարծիքով՝ իրակությունները «բառեր են (և բառակապակցություններ), որոնք անվանում են այնպիսի առարկաներ, որոնք բնորոշ են մի ժողովրդի կյանքին (կենցաղ, մշակույթ, հասարակական ու պատմական զարգացում) և օտար են այլ ժողովուրդների համար:

<sup>286</sup> **Տե՛ս Верещагин Е. М., Костомаров В. Г.** Язык и культура. Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык, 1976, с. 74-83; **Верещагин Е. М., Костомаров В. Г.** Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980, с. 20-27.

<sup>287</sup> **Տե՛ս Верещагин Е. М., Костомаров В. Г.** Язык и культура. Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык, 1976, с. 210.

<sup>288</sup> **Տե՛ս Верещагин Е. М., Костомаров В. Г.** Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980, с. 170-177.

Լինելով ազգային և (կամ) պատմական երանգավորման կրող՝ իրակությունները, որպես կանոն, չունեն ճշգրիտ համապատասխանություններ (համարժեքներ) այլ լեզուներում, հետևաբար և չեն թարգմանվում «ընդհանուր հիմունքներով»՝ պահանջելով հատուկ մոտեցում»<sup>289</sup>: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը ներկայացնում են իրակությունների նոր դասակարգում՝ կարևորելով դրանց առարկայական, տեղական, ժամանակային և թարգմանական բաժանման սկզբունքները: Ըստ առաջին բաժանման՝ տարբերակվում են աշխարհագրական, ազգագրական և հասարակական-քաղաքական իրակություններ՝ յուրաքանչյուր խմբում մանրամասն ներկայացնելով մի շարք ենթախմբեր: Այս գրքում իրակությունները դիտարկվում են ինչպես մի լեզվի տիրույթում (այսինքն՝ սեփական և օտար իրակություններ), այնպես էլ լեզուների որևէ զույգի տիրույթում՝ զանազանվելով ներքին ու արտաքին իրակությունների: Սեփական են ազգային, տեղական և միկրոիրակությունները, օտար՝ միջազգային ու տարածաշրջանային իրակությունները<sup>290</sup>: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինն անդրադառնում են նաև հարակից այլ հասկացությունների, ինչպիսիք են՝ դարձվածային միավորները, հատուկ անունները, հապավումները, եզրույթները, գրական նորմայից շեղումները (բարբառներ, ժարգոն, արգո և այլն), կոչական բառերը, բնածայնություններն ու ծայնարկությունները, բառախաղերը, արտալեզվական տարրերը և այլն, որոնք նույնպես պատկանում են անհամարժեք բառապաշարին:

Լինելով իրակությունների մասին ծավալուն ու համակարգված առաջին աշխատությունը, որը զարգացնում և խորացնում է իրակությունների վերաբերյալ լեզվաերկրագիտական տեսությունը, «Այլթարգմանելին թարգմանության մեջ» աշխատությունն ի ցույց է դնում նաև իրակությունների բազմահայեցակարգային բնույթը, դրանց սահմանման, դասակարգման ու թարգմանության ժամանակ ծագող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրները: Հարկ է նշել, որ Վլախովը ու Ֆլորինն առաջին անգամ ներկայացնում են իրակությունների՝ որպես ազգային երանգավորման «տեսանելի» տարրերի ամբողջական, համակարգված տեսություն, որում առաջադրվում են նաև իրակությունների դասակարգման տարբեր սկզբունքներ: Այդ ուսումնասիրությունը խորհրդային և հետխորհրդային շրջանում դարձավ դասական մի ուսումնասիրություն, որի վրա են հիմնվեցին հետագայում առաջարկված տարբեր դասակարգումները: Թեև հետագա ուսումնասիրություններում հիմնականում ռուս թարգմանաբանական դպրոցում օգտագործվում է «իրակություն» եզրույթը, բայց միաժամանակ հստակորեն սահմանազատում են նաև *իրակությունը*՝ որպես արտալեզվական իրականության առարկա կամ երևույթ, և *բառ-իրակությունը*՝ որպես լեզվական նշան, որի շնորհիվ տվյալ առարկան կամ երևույթը ստանում են լեզվական կերպարանք:

Լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրության տեսանկյունից իրակությունների խնդիրը մանրամասն քննվել է ռուս հայտնի ռոմանագետ Վ. Գակի աշխատություններում: Քննելով մշակույթի բնագավառում ի հայտ եկող անհամաչափությունները (асимметрия)՝ հեղինակը նախ հստակորեն զանազանում է իրակություններն ու կուլտուրեմաները: Նա մշակույթը դիտում է որպես որոշակի նշանների (կուլտուրեմաների) ամբողջություն: Յուրաքանչյուր նշան ներկայացնում է ձևական ու բովանդակային կողմերի կապ և հարաբերակցվում արտալեզվական իրականության որոշակի տարրի հետ՝ որևէ իրակություն՝ առարկա կամ իրադրություն արտահայտելու կամ նշանակելու համար, ընդ որում, հեղինակը քննում է միայն այն կուլտուրեմաները, որոնք ունեն լեզվական արտահայտություն՝ գրավոր կամ բանավոր: Նման կուլտուրեմաներում լեզվական նշանը նշանակիչն է, իսկ իրակությունը՝

<sup>289</sup> Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М.: Высшая школа, 1980, с. 47.

<sup>290</sup> Նույն տեղում, էջ 51-65:

Նշանակյալը: Վ. Գակը իրակություն է համարում այն ամենը, ինչն առնչվում է մշակույթին՝ առարկա, գործառույթ, սովորույթ, վարքագծի տարբեր դրսևորումներ և այլն<sup>291</sup>: Երկու լեզուների կուլտուրեմաները քննելիս երևան են գալիս համաչափություններ և անհամաչափություններ: Առաջին դեպքում թարգմանական խնդիրներ չեն առաջանում, մինչդեռ անհամաչափությունները կարող են դրսևորվել երեք հայեցակերպով՝ նշանագիտական, հարացուցային ու շարակարգային<sup>292</sup>:

Նշանագիտական պլանում դիտարկվում է նշանային հարաբերությունների որևէ բաղադրիչի՝ նշանակիչի կամ նշանակյալի բացակայություն: Հեղինակը, հիմնվելով ռուսերեն-ֆրանսերեն լեզվանյութի վրա, առանձնացնում է երկու դեպք. նախ՝ որևէ իրակություն գոյություն ունի շփման մեջ գտնվող մշակույթներից մեկում, մինչդեռ մյուս մշակույթում, հետևաբար և լեզվում չունի հատուկ անվանում (կերակրատեսակներին, հագուստին, կենցաղին վերաբերող մի շարք իրակություններ, ինչպես օրինակ՝ *fin de série* (հագուստի խանութներում), *livres d'analogie* (դեղատներում), *fin de zone bleu* (*zone bleu*՝ մեթենաների կայանման սահմանափակ ժամանակով տարածք) և այլն), երկրորդ՝ որևէ իրակություն գոյություն ունի շփման մեջ գտնվող երկու մշակույթներում, սակայն նրանցից մեկում այն չունի բառային անվանում: Այս առումով հեղինակը գտնում է, որ ֆրանսիական մշակույթային միջավայրը ավելի «տեղեկատվական» է, քան ռուսականը, որտեղ հաճախ նմանատիպ երևույթների համար չկան հատուկ անվանումներ, օրինակ՝ *escalier roulant* o *mécanique* (մետրոյում), *tête de station* (տաքսիների կայանման սկզբնամասը) և այլն: Այս դիտարկումը վերաբերում է նաև հայերենին, որը տվյալ պարագայում նույնպես նվազ «տեղեկատվական» է:

Հարացուցային անհամաչափությունները դիտարկվում են այն դեպքում, երբ կան տարբերություններ նշանային հարաբերությունների որևէ մակարդակում (իրակությունների, իմաստների կամ հենց նշանների), իսկ շարակարգային անհամաչափությունների դեպքում առարկայական շարքն իր շարունակական ձևում տարբեր ձևով է տարբերակվում երկու լեզվական հանրություններում (*hidun. la Descente de Croix* և *la Déposition de Croix* արտահայտությունները ֆրանսերենում, որոնք ռուսերենում արտահայտվում են մեկ բառով՝ *снятие с креста*):

Իր «Լեզվական փոխակերպումներ» հսկայածավալ աշխատության մեջ Վ. Գակը փաստացի մեծ նյութի հիման վրա ցույց է տալիս, որ կուլտուրեմաներն ու իրակությունները, լինելով սերտ հարաբերակցության մեջ, այնուամենայնիվ նույնական չեն: Հեղինակը մանրամասն ներկայացնում է մշակույթի կառուցվածքում նշանային հարաբերությունների հիմնական տիպերը, ինչպես նաև ուսումնասիրում այս բնագավառում դիտարկվող միջլեզվական անհամապատասխանությունները: Այնուամենայնիվ, ինչպես նշում է հեղինակը, կուլտուրեմայի հասկացությունը ճշգրտումների կարիք ունի, քանի որ որոշիչ է համարվում ոչ թե անվանման ձևը, այլ նշված հասկացության կոնկրետ կառուցվածքն ու գործառույթը, լեզվակիրների գիտակցության մեջ նրա հետ կապված որոշակի զուգորդումների առկայությունը<sup>293</sup>:

Իրակությունների դասակարգման ժամանակ ծագող խնդիրները, ինչպես նաև դասակարգման տարբեր սկզբունքների գոյությունը ևս մեկ անգամ ի ցույց են դնում, թե ինչ խորությամբ և չափով է մշակույթը ներթափանցում ազգային լեզվի մեջ և նրանում արտացոլվում: Լեզուն, իր հերթին լինելով ազգային մշակույթի անբախտելի մաս, պահպանում և սերնդեսերունդ փոխանցում է ազգային արժեքները, մշակույթային անկրկնելի կոդերը:

<sup>291</sup> St'u Гак В. Г. Языковые преобразования. М.: Школа «Языки русской культуры», 1998, с. 142.

<sup>292</sup> Նույն տեղում, էջ 145-150:

<sup>293</sup> Նույն տեղում, էջ 145:



Իրակությունների խնդրի շուրջ տարբեր տեսություններ ու մոտեցումներ ուսումնասիրելիս հարկ է կարևորել ռուս հայտնի իսպանագետ ու թարգմանաբան Վ. Վինոգրադովի ավանդը, որն իր ուսումնասիրություններում ընդլայնում է իրակությունների սահմանները՝ դրանք դիտարկելով որպես ֆոնային տեղեկատվություն պարունակող բառապաշար: Ըստ Վ. Վինոգրադովի՝ ֆոնային տեղեկատվությունը որոշակի ազգի կամ ազգության բնորոշ հանրամշակութային տեղեկություններ են, որոնք յուրացվել են դրանց ներկայացուցիչների կողմից և արտացոլվել տվյալ ազգամշակութային համայնքի լեզվում<sup>294</sup>: Հիմնվելով Ս. Վլախովի և Ս. Ֆլորինի դասակարգման վրա՝ նա կատարում է որոշ փոփոխություններ և իր դասակարգման մեջ ներառում նաև հատկանվանական ու զուգորդական իրակությունները (կենդանական, բուսական, գունային խորհրդանիշեր, բանահյուսական, պատմական, գրական-գրքային ակնարկներ, լեզվական ակնարկներ): Վերջիններս կապված են ամենատարբեր ազգային, պատմամշակութային երևույթների հետ և արտացոլվում են ոչ թե իրակություններում կամ անհամարժեք բառապաշարում, այլ սովորական բառերում, որոնք աչքի են ընկնում հուզարտահայտչական և գնահատողական հարանշանակություններով, ուրույն ներքին ձևով՝ ի ցույց դնելով համեմատական պլանում հասկացական բովանդակությամբ նման բառերի ֆոնային տեղեկատվության անհամապատասխանությունները (օրինակ՝ արև, լուսին, ծով բառերի հետ կապված ֆոնային տեղեկատվությունը տարբեր ժողովուրդների շրջանում):

Արևմտաեվրոպական և ամերիկյան թարգմանաբանական դպրոցներում նույնպես ազգամշակութային տարրերի սահմանման ու դասակարգման խնդիրը եղել է տարբեր քննությունների առարկա, բայց դեռևս չի գտել գիտական սպառիչ լուծում, և չի ձևավորվել հարցի քննության միասնական կարծիք: Մշակութային տարրերի համակարգման ու դասակարգման առաջին փորձը կատարել է Յու. Նայդան իր հայտնի «Linguistics and Ethnology in Translation problems» հոդվածում, որում հիմնվելով Աստվածաշնչի թարգմանության իր բազմամյա փորձի վրա՝ առանձնացնում է մշակութային վերաբերությունների 5 տիրույթ, որոնք առաջադրում են թարգմանական ամենամեծ խնդիրները. 1. Էկոլոգիա, 2. Նյութական մշակույթ, 3. սոցիալական մշակույթ (հասարակական կազմակերպման տարբերություններ, սովորույթներ ու ավանդույթներ), 4. կրոնական մշակույթ, 5. լեզվամշակույթ<sup>295</sup>:

Ավելի ուշ Պ. Նյումարկը, ազգամշակութային նշույթավորվածություն ունեցող լեզվական միավորները քննարկում է «մշակութային բառ» հասկացության ներքո, զանազանում համընդհանուր, մշակութային ու անձնական (անհատական) լեզուներ: Նյումարկը շեշտը դնում է մշակութային լեզվի վրա՝ վեր հանելով այն հատուկ բառերն ու եզրույթները, որոնք խնդիրներ են առաջ բերում թարգմանության ժամանակ՝ ելակետային ու թիրախ լեզուների միջև ստեղծելով մշակութային «բացեր» ու «հեռավորություն»: Հիմնվելով Յու. Նայդայի դասակարգման վրա՝ նա առանձնացնում է *մշակութային բառերի* հետևյալ հինգ խմբերը. 1. Էկոլոգիա, 2. Նյութական մշակույթ, 3. սոցիալական մշակույթ, 4. կազմակերպություններ, գործունեության տարբեր տեսակներ և այլն, 5. ժեստեր և սովորույթներ: Այսպիսով՝ ի տարբերություն Յու. Նայդայի դասակարգման՝ այստեղ ներառված չէ լեզվական մշակույթը, քանի որ Նյումարկը լեզուն չի դիտարկում որպես մշակութային բաղադրիչ կամ առանձնահատկություն՝ նկատի

<sup>294</sup> Ст'ю Виноградов В. С. Перевод: Романские языки: общие и лексические вопросы. М.: КДУ, 2009, с. 37:

<sup>295</sup> Ст'ю Nida E. Linguistics and ethnology in translation problems // Nida E. (eds.), Exploring Semantic Structures. Munich: Wilhelm Fink Verlag, 1975, pp. 194-208. Ст'ю նաև Nida E., Taber Ch. La traducción: Teoría y práctica. Madrid: Ediciones Cristiandad, 1986.

ունենալով, որ այդ դեպքում ամեն մի թարգմանություն լայն իմաստով անհնար կլինի<sup>296</sup>: Կարելի է նկատել, որ Նյումարկի դասակարգման Նորոյթը ոչ խոսքային տարրերի՝ ժեստերի ներառումն է: Զեդինակը կարևորում է նաև «մշակութային օջախ» հասկացությունը, որը ներառում է այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք ունեն առանձնահատուկ նշանակություն տվյալ լեզվամշակույթում, ինչպես օրինակ՝ ցլամարտը՝ Իսպանիայում, պանիրն ու գինին՝ Ֆրանսիայում, ձյունը՝ Եսկիմոսների կյանքում, ուղտը՝ արաբների համար և այլն:

Թարգմանական ուսումնասիրություններում մշակութային տարրերի առավել ընդունված ու տարածված անվանումներից է *կուլտուրեման*, որը, ինչպես սահմանում է արդի հայտնի թարգմանաբան Նորդը, «որևէ Ա մշակույթին պատկանող մշակութային երևույթ է, որը համարվում է էական տարբերակիչ այդ մշակույթի անդամների համար, և եթե այն համեմատենք որևէ Բ մշակույթի նմանատիպ հասարակական երևույթի հետ, այն հատուկ կլինի Ա մշակույթին»<sup>297</sup>: Ըստ տեսաբանի՝ մշակութային նշոյթավորվածություն ունեն այն երևույթները, որոնք որոշակի ձևով ու գործառնությամբ գոյություն ունեն համեմատվող մշակույթներից միայն մեկում: Նման քննության դեպքում *կուլտուրեման* նույնականանում է զուտ արտալեզվական երևույթների հետ:

Հարցի քննությանը այլ դիտանկյունից է մոտենում իսպանացի թարգմանաբան Լ. Մոլինա Մարտինեսը, որը նորովի է մեկնաբանում կուլտուրեման՝ այն դիտարկելով որպես «խոսքային կամ հարախոսքային տարր, որը մի մշակույթում ունի հատուկ մշակութային ծանրաբեռնվածություն և այլ լեզվում հաղորդելիս կարող է առաջ բերել զրոյական կամ բնագրից տարբեր փոխադրում»<sup>298</sup>: Ի տարբերություն Նորդի մոտեցման՝ Լ. Մոլինա Մարտինեսը ազգամշակութային տարրերի գործածությունը դիտարկում է լեզվական երևույթների տիրույթում: Զեդինակը քննադատում է նաև ազգամշակութային տարրերի՝ որպես լեզվի ստատիկ տարրերի դիտարկումը՝ շեշտադրելով դրանց դինամիկ բնույթը և համատեքստից անմիջական կախվածությունը: Ազգամշակութային տարրերը չեն կարող գոյություն ունենալ համատեքստից դուրս, այլ առաջ են գալիս երկու մշակույթների միջև մշակութային փոխադրման խաչմերուկում, այն է՝ թարգմանության մեջ, որի ընթացքում կարևորվում են այնպիսի գործոններ, ինչպես օրինակ՝ իրադրային համատեքստը, շփման մեջ գտնվող լեզուները, տեքստի գործառնությոը և այլն: Հիմնվելով կուլտուրեմանների դինամիկ բնույթի վրա՝ նա փորձում է իր դասակարգման մեջ զանազանել մշակութային առումով լայն հասկացություններ, որոնք ունակ են հաղթահարելու նախկին՝ առավել սահմանափակ դասակարգումների թերությունները և ներառել մշակութային առավել բազմազան իրադրություններ, որոնք առաջ են գալիս երկու մշակույթների շփման խաչմերուկում: Հիմնվելով Յու. Նայդայի տերմինաբանության վրա՝ հեղինակը առաջարկում է ազգամշակութային տարրերի չորս խումբ, որոնք ներառում են մշակութային բազմաբնույթ հասկացություններ<sup>299</sup>:

1. բնական միջավայր (բուսական ու կենդանական աշխարհ, մթնոլորտային երևույթներ, կլիմա, տեղանուններ և այլն),
2. մշակութային ժառանգություն (իրական ու մտացածին կերպարներ, պատմական փաստեր, կրոնական գիտելիքներ, տոնակատարություններ, ժողովրդական հավատալիքներ, խորհրդանշական հուշարձաններ և ստեղծագործություններ,

<sup>296</sup> S t e ´ u Newmark P. Manual de traducción (versión española de Virgilio Moya). Madrid: Ediciones Cátedra, 1992, p. 134.

<sup>297</sup> Nord C. El funcionalismo en la enseñanza de traducción // Mutatis Mutandis. Vol. 2, N 2, 2009, p. 217.

<sup>298</sup> Molina Martínez L. Análisis descriptivo de la traducción de los culturemas árabe-español (Tesis doctoral). Universitat Autònoma de Barcelona, 2001, p. 89.

<sup>299</sup> Նույն տեղում, էջ 92-96:

գրական գործեր, երաժշտություն, կինո, հատուկ անուններ, գործիքներ, տրանսպորտային միջոցներ և այլն),

3. հասարակական մշակույթ (հասարակական պայմանականություններ և սովորույթներ, վարվելակերպ, քաղաքավարություն, ժեստերի լեզու, բարոյական արժեքներ և այլն),
4. լեզվաբանական մշակույթ (առած-ասացվածքներ, բառային ու հնչունական խնդիրներ, խորհրդանշանային զուգորդումներ և այլն):

Չարկ է նշել, որ ազգամշակութային տարրերի սահմանման ու դասակարգման Լ. Մոլինա Մարտինեսի սկզբունքները լայն ընդունելություն են գտել իսպանական թարգմանաբանական դպրոցում, որի հիման վրա կատարվել են մի շարք ուսումնասիրություններ:

Այսպիսով՝ ամփոփ քննելով վերջին տասնամյակներում մշակութային տարրերի ուսումնասիրության շուրջ տարբեր տեսաբանների մոտեցումները՝ կարելի է փաստել, որ միասնական գիտական սկզբունքների բացակայությունը դժվարացնում է տվյալ խնդրի իմաստավորման, այն է՝ իրականությունների բնորոշման, սահմանման ու դասակարգման քննությունը: Այնուամենայնիվ, առկա են նաև համընդհանուր մոտեցումներ: Այսպես, եթե համեմատենք Ս. Վլախովի, Ս. Ֆլորինի և Լ. Մոլինա Մարտինեսի առաջարկած դասակարգումները, կարող ենք որոշ զուգահեռներ կատարել: Ինչպես արդեն նշել ենք, Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը առաջարկում են իրականությունների երեք խումբ (աշխարհագրական, ազգագրական, քաղաքական-հասարակական), իսկ լեզվաբանական իրականությունները ուսումնասիրում են առանձին: Լ. Մոլինա Մարտինեսը իր դասակարգման մեջ առաջարկում է չորս մեծ մշակութային տիրույթներ (բնական միջավայր, մշակութային ժառանգություն, հասարակական մշակույթ և լեզվաբանական մշակույթ)՝ ներառելով նաև լեզվաբանական կարգերը, թեև այս հարցի շուրջ տարածայնություններն ակնհայտ են նաև իսպանական թարգմանաբանական դպրոցում<sup>300</sup>:

Չարցի տեսության քննությունը ցույց է տալիս, որ ոչ միայն թարգմանաբանական, այլ նաև համեմատական-տիպաբանական, լեզվաերկրագիտական, լեզվամշակութաբանական և այլ հայեցակերպերում ազգամշակութային տարրերը դարձել են համակողմանի ուսումնասիրության առարկա: Այնուամենայնիվ, չնայած խնդրի կարևորությանը թարգմանության տեսության ու պրակտիկայի համար, դեռևս չկա հայեցակարգային ու տերմինաբանական համաձայնություն տարբեր տեսաբանների միջև: Չոմանիշ եզրույթների բազմազանությունը, ինչպես նաև ազգամշակութային տարրերի քննության ընդհանուր սկզբունքների բացակայությունը բարդացնում է դրանց սահմանման ու դասակարգման խնդիրը:

<sup>300</sup> S t ' u Luque Nadal L. Los culturemas, ¿unidades lingüísticas, ideológicas o culturales? // Language Design 11, 2009, p. 104.

**HASMIK BAGHDASARYAN**

*Head of the Chair of Romance Philology  
at the Faculty of European Languages and Communication,  
Yerevan State University, Doctor of Philology, Associate Professor,  
Yerevan, Republic of Armenia*

**TATEVIK EGHIAZARYAN**

*Lecturer, PhD student of the Chair of Romance Philology  
at the Faculty of European Languages and Communication,  
Yerevan State University,  
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to analyse the problem of definition and classification of the realia - ethnoculturally marked elements in the translation studies - which has not found yet its final scientific solution. In the linguocultural paradigm of modern linguistics the text is viewed as a fragment of the national-linguistic picture of the world and during its translation realias cause specific problems manifesting the dialectal unity of the universal, the national, and the individual as a methodological basis for the translation process. The article examines some of the most prominent theories and approaches to the nature, the definition and the classification of realias in Russian, Western European and American translation schools. The problem is examined not only from the translational but also comparative-linguistic, linguistic-cultural and linguistics and area studies perspectives. In the article, analytical and comparative examination methods are employed.

A brief examination of the theory of this issue shows that despite the importance of the problem for translation theory and practice, there is still no conceptual and terminological consensus between various theorists. The varieties of synonymous terms, as well as the existence of different principles of the study of ethnic and cultural elements, pose major challenges for the definition and classification of the realias.

**Key words:** *Translation Studies, realia, linguistics and area studies, linguoculturology, translation school, definition and classification of realias, conceptual and terminological disagreement.*

## К ПРОБЛЕМЕ ОПРЕДЕЛЕНИЯ И КЛАССИФИКАЦИИ РЕАЛИЙ В ПЕРЕВОДОВЕДЕНИИ

**АСМИК БАГДАСАРЯН**

*Заведующая кафедрой романской филологии факультета европейских языков и коммуникации Ереванского государственного университета,  
доктор филологических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

**ТАТЕВИК ЕГИАЗАРЯН**

*Преподаватель, аспирант кафедры романской филологии факультета европейских языков и коммуникации Ереванского государственного университета,  
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение проблемы определения и классификации языковых единиц этнокультурной маркированности – реалий в переводоведении, которая ещё не имела достаточно исчерпывающего научного решения. В современной лингвокультурной парадигме лингвистики текст рассматривается как часть национально-языкового образа мира, при переводе которого возникают определённые проблемы диктуемые реалиями, которые подчёркивают диалектическое единство всеобщего, национального и индивидуального в качестве методологической основы процесса перевода. В данной статье рассматриваются некоторые из наиболее известных теорий и подходов в классификации, сущности и определении реалий в русской, западноевропейской и американской переводческих школах. Вопрос рассматривается не только с точки зрения переводоведения, но и с точки зрения сравнительной лингвистики, лингвокультурологии и лингвострановедения. В статье используются аналитические и сравнительные методы исследования.

Краткий анализ теории вопроса показывает, что, несмотря на важность проблемы для теории и практики перевода, до сих пор нет концептуального и терминологического единства между различными теоретиками. Разнообразие синонимичных терминов, а также существование различных принципов изучения этнокультурных элементов порождают проблемы при определении и классификации реалий.

**Ключевые слова:** *переводоведение, реалия, лингвострановедение, лингвокультурология, переводческая школа, определение и классификация реалий, концептуальные и терминологические разногласия.*

# МЕДИЙНЫЙ ПЕЧАТНЫЙ ТЕКСТ КАК ОБЪЕКТ ПРОВЕДЕНИЯ ЛИНГВИСТИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ (НА МАТЕРИАЛЕ СТАТЬИ ГАЗЕТЫ «ВАШИНГТОН ПОСТ»)\*

**ТАМАРА ДАНИЕЛЯН**

*Арцахский государственный университет,  
аспирант кафедры иностранных языков,  
г. Степанакерт, Республика Арцах (НКР)  
[tamara\\_danielyan@yahoo.com](mailto:tamara_danielyan@yahoo.com)*

*В данной статье мы рассматриваем медийный текст как объект лингвистической экспертизы. Целью исследования является распознавание ряда языковых средств, которые встречаются в политическом дискурсе медийного текста и перед которыми поставлены определенные прагматические задачи, такие как дискредитация, негативная оценка событий, диффамация, ложная денонсация и т.д. В качестве объекта анализа представлена статья газеты «Вашингтон Пост» «Мир в Нагорном Карабахе спустя 20 лет после распада Советского Союза по-прежнему хрупок». Целостного метода лингвистической экспертизы еще не выработано, однако применение комплекса языковых приемов с различных ракурсов позволяет уточнить признаки объекта исследования, значимые для правовой квалификации речевых преступлений. В частности, среди различных способов речевого воздействия оказывается возможным выделение приемов речевой провокации, а среди высказываний с имплицитным смыслом – приемов, нацеленных на маскировку их содержания. В статье используется прагматический анализ, как один из методов лингвистической экспертизы. Проанализировав статью с прагматической стороны, мы можем сказать, что ЛЭ нацелена на распознавание и исследование определенных прагматических намерений.*

**Ключевые слова:** *интертекстуальность, импликатура, диффамация, денонсация, обсценизмы, инвективы.*

Печатные СМИ являются одним из наиболее важных **объектов** ЛЭ, т.к. СМИ используют все способы манипулирования и воздействия на массы, которые позволяют корректировать и проектировать массовое сознание и психику человека. В результате освещения событий у читателей складывается определенное представление об описываемых в статьях событиях, делах, личностях и т.д. Аккумуляция освещенных таким образом событий формирует у читателя собирательный образ той или иной страны. СМИ, используя различные языковые средства, продуктивно формируют имидж страны. Отсюда следует, что СМИ обладают значительным числом приемов воздействия на общественное сознание, к которым относятся и языковые методы манипулирования сознанием. Таким образом, эти материалы могут создавать негативное представление в отношении страны или определенной национальной группы, заниматься дискредитацией репутации этой страны. Одной из серьезных задач, стоящих перед издательством, работающим в жанре политического дискурса, является формирование образа страны и ее населения. Как правило, за этим стоят вполне прагматические цели, нередко весьма четко поставленные

---

\* Հոդվածը ներկայացվել է 06.03.2020թ., գրախոսվել՝ 10.03.2020թ., տպագրութայն ընդունվել՝ 10.04.2020թ.:

руководством той или иной страны. Различные принципы могут быть положены в делении текстов СМИ на различные жанры:

- интенция (описание, информирование, реклама, высмеивание и т.п.),
- композиционные формы речи,
- образ автора (человек социальный – человек частный),
- модалность (объективная – субъективная),
- оценочность (скрытая – открытая).

Акцентируя наше внимание на публицистическом стиле, мы соотносим к нему такие жанры как аналитический, художественно-публицистический жанр, сатирический и рекламные жанры. Среди базовых тем, которые рассматривают современные СМИ, можно выделить политическую, социальную, экономическую, спортивную, медицинскую и пр.

Горшков отмечает, что каждая тема имеет свои строевые лексемы, которые в процессе создаваемого журналистом публицистического текста укладываются в определенную последовательность языковых единиц.<sup>301</sup>

Одной из задач ЛЭ является выявление манипулятивных техник в печатных СМИ, с помощью которых автор пытается воздействовать на читателя. В жанре массовой коммуникации выделяются такие универсальные черты, характерные для публицистического стиля, как оценочность. Оценочность выступает в выборе и распределении фактов и феноменов действительности, в их описании с определенной точкой зрения, в соотношении позитивных и негативных составных частей, а также в специфических лингвистических средствах<sup>302</sup>.

Различают имплицитные (включающиеся в значение слова) и эксплицитные (подходящие к употреблению слова) формы оценочности. Имплицитные оценки в публицистике – это метафоры, эвфемизмы. Солганик утверждает, что оценочные метафоры в публицистике должны организовывать общественное мнение, создавать у читателя нужный продуценту образ.<sup>303</sup> В публицистических статьях мы часто встречаем языковые оценочные метафоры. Например, в статье «Вашингтон Пост» «*In Nagorno-Karabakh, peace elusive 20 years after Soviet fall*»<sup>304</sup> автор дает метафоричную оценку мира в Нагорном Карабахе, прилагательным «*elusive*» прямо в заголовке, что означает нечто «хрупкое» и «ненадежное». В негативно окрашенном предложении «*Since then, no one on either side has had the will to hammer out a settlement*», присутствует *оценочная метафора «to hammer out a settlement»*. Адресант мог бы использовать «*to reach a settlement*», «*to make a settlement agreement*», но намеренно использует «*to hammer out*», чтобы показать на трудность урегулирования конфликта. В статье мы встречаем такие метафоры, как «*flourished corruption*», «*inflamed passion*», где метафоричность их стерта, и они не настолько яркие и непосредственны, как авторские оценочные метафоры. Авторские метафоры настолько красочны и неподдельны, что в газетном тексте они сразу привлекают внимание читателя. К примеру: «*But with snipers on both sides shooting at one another every day, occasionally causing casualties, and plenty of saber-rattling rhetoric, the chances of stumbling into a war of miscalculation, or a war of hotheadedness, are considerable*». Автор хочет отметить, что есть большая вероятность начала войны из-за безрассудства или по ошибке, несмотря на бессмысленность угроз о войне. В медиатексте их сразу детектируют, поскольку для

<sup>301</sup> Горшков А.И., Русская стилистика. М.: Астрель, 2001. с. 160.

<sup>302</sup> Клушина Н.И., Общие особенности публицистического стиля // Язык СМИ как объект междисциплинарного исследования: учеб. пособие / отв. ред. М.Н. Володина. М.: Изд-во МГУ, 2003. сс.269–289.

<sup>303</sup> Солганик Г.Я., О специфике газетно-публицистической метафоры // Журналистика и культура русской речи. М.: Изд-во МГУ, 2002. № 2. с. 36.

<sup>304</sup> [https://www.washingtonpost.com/world/20-years-after-soviet-fall-peace-elusive-in-karabakh/2011/07/20/gIOA8SFE8I\\_story.html](https://www.washingtonpost.com/world/20-years-after-soviet-fall-peace-elusive-in-karabakh/2011/07/20/gIOA8SFE8I_story.html)

формирования образа в них используются двусмысленные, нелогичные, яркоокрашенные понятия.

Использование эвфемизмов – еще один публицистический прием нейтрализации негативного представления у читателя путем замены грубых слов на нейтральные. В газете с политическим дискурсом часто встречаются эвфемизмы для смягчения острых ситуаций. Их также называют политической корректностью. Политическая корректность – запрет оскорбительных слов или замена на нейтральные эквиваленты. Например, использование таких слов и словосочетаний как «*opposition*» вместо «*enemies*», «*escalation of conflict*» вместо «*conflict aggravation*». Также в газете мы можем встретить «*to take casualties*» вместо «*killed/murdered*». В предложении «*the subject remains, from politicians' point of view, a useful sore point*» выражение «*a sore point*» заменяет неприличный аналог «*disgusting subject that makes you embarrassed*».<sup>305</sup>

Основными отличительными чертами современного языка публицистики являются интертекстуальность, языковая игра, ирония. Интертекстуальность – это свойство текстов, заключающееся в наличии между ними связей, благодаря которым тексты могут разными способами эксплицитно или имплицитно ссылаться друг на друга. Горшков определяет *интертекстуальность* как межтекстовые связи, содержащиеся в том или ином конкретном тексте, и которые выражены с помощью определенных словесных приемов отсылки к другому конкретному тексту.<sup>306</sup> Клушина добавляет, что интертекстуальность успешна при условии, что фоновые знания адресата пересекаются с фоновыми знаниями адресанта. В этом случае и возникает эффект «узнавания» закодированного смысла.<sup>307</sup>

Как полагает Н.О. Гучинская, интертекстуальность – это также средство текстопорождения.<sup>308</sup> Абсолютное истолкование текста невозможно реализовать в стопроцентном порядке, но задачей интерпретатора является максимально приблизиться к объяснению текста. И если любой текст – это одновременно «генератор новых смыслов и конденсатор культурной памяти»,<sup>309</sup> то мы можем добавить, что любые идеи, зарождающиеся в тексте авторов, ссылаются на «культурный багаж» читателей, которые впоследствии интерпретируются ими же. Иными словами, взаимосвязанные идеи в тексте, которые понимаются, а затем и трактуются читателем, называется интертекстуальностью. Например, «*A renewal of the war would be a disaster for all concerned, unless it were very quick*», «*The two sides are much more heavily armed than they were in 1991*», «*It might be very difficult for Iran, Turkey and Russia to remain uninvolved*», все эти тезисы узнаваемы читателем и пассивно трактуются у него в голове. И хотя вывод из этих тезисов со стороны автора не предложен, для реципиента они считаются вескими аргументами, чтобы считать, что война между сторонами не устраивает не только тех, кто вовлечен в этот конфликт непосредственно, но и тех, кто косвенно с этим связан.

Другой прием публицистического стиля, на что обращает свое внимание лингвист-эксперт – *языковая игра*. Языковая игра заключается в привлечении внимания читателя через языковые шутки, юмор и остроту.<sup>310</sup> Парономазия – также популярный элемент

<sup>305</sup> <https://dictionary.cambridge.org/dictionary/english/sore-point>.

<sup>306</sup> Горшков А.И., Русская стилистика. М.: Астрель, 2001. с. 160.

<sup>307</sup> Клушина Н.И., Общие особенности публицистического стиля // Язык СМИ как объект междисциплинарного исследования: учеб. пособие / отв. ред. М.Н. Володина. М.: Изд-во МГУ, 2003. сс.269–289.

<sup>354</sup> Նիկոլ Փաշինյանի ելույթը Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կազմակերպված հանրահավաքին, Հայաստանի Հանրապետության վարչապետ, 05.08.2019 <https://www.primeminister.am/hy/Artsakh-visits/item/2019/08/05/Nikol-Pashinyan-visit-to-Artsakh/>

<sup>355</sup> Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը Ստեփանակերտում, Հայաստանի Հանրապետության վարչապետ, 09.05.2018, <https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2018/05/09/Prime-Minister-Nikol-Pashinyans-press-conference/>:

Հատկանշական է նաև այն, որ չնայած Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակմանը, անցած ավելի քան 25 տարիները եղել են Արցախի տնտեսության վերականգնման, պետական, քաղաքական և քաղաքացիական ինստիտուտների կայացման, ամրապնդման և կայուն զարգացման ժամանակաշրջան: Լեռնային Ղարաբաղի իշխանություններն ուշադրություն են դարձնում մասնավորապես ԼՂՀ-ում իշխանության ինստիտուտների ձևավորմանն ազատ ժողովրդավարական ընտրությունների հիման վրա, որը տարբերվում է հարևան Ադրբեջանում գոյություն ունեցող ներքաղաքական իրականությունից:

Վերջին 25 տարում Ադրբեջանը հայկական կողմի վրա ճնշում գործադրելու նպատակով որդեգրել է ԱՀ-ին և ՀՀ-ին տարածաշրջանային բոլոր տնտեսական ծրագրերից մեկուսացնելու հստակ քաղաքականություն և իրաժարվում է վերջիններիս հետ միացնող տրանսպորտային բոլոր ուղիների շահագործումից:

Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ տարածաշրջանի զարգացման և դարաբաղյան հակամարտության լուծման միակ իրատեսական ուղին համագործակցությունն սկսելն է, համատեղ տնտեսական ծրագրերի իրականացումը, այդ թվում նաև Էներգետիկ և ճանապարհատրանսպորտային բնագավառներում:

Հաշվի առնելով հարավկովկասյան աշխարհաքաղաքականության մասնակից երկրների շահերի մրցակցությունը՝ ՀՀ-ն պետք է կոմպլեմենտար դիվանագիտություն վարի: Դրա նպատակն է հավասարակշիռ հարաբերություններ ունենալ գերտերությունների հետ՝ չհայտնվելով դրանց շահերի բախման կիզակետում: Մի երկրի հետ լավ հարաբերություններ ունենալը դեռևս չի բացառում այլ երկրների հետ դրական հարաբերությունների հավասարակշռության պահպանմանը:

Առկա հակամարտություններով են պայմանավորված նաև տարածաշրջանային և արտատարածաշրջանային պետությունների միջև հարաբերությունները, որոնք նույնպես անվտանգ միջավայր ձևավորելու կարևոր բնորոշիչներ են: Մասնավորապես, տարածաշրջանային անվտանգությունը ապակայունացնող գործոններ են հայադրբեջանական, հայ-թուրքական, ռուս-վրացական, իրանա-ամերիկյան լարված հարաբերությունները, որոնց հիմնա վրա մշակվում է այդ պետությունների արտաքին և տնտեսական քաղաքականությունը:

Տարածաշրջանում տարբեր ուժերի շարքում առավել ազդեցիկ դեր ունի Ռուսաստանը, քանի որ ունի տնտեսական, ռազմաքաղաքական ազդեցության տարբեր լծակներ: Ռուսաստանը, որպես ԽՍՀՄ ժառանգորդ, ցանկացած գնով պատրաստ է իր դիրքերը պահել տարածաշրջանում: Հարավային Կովկասը Ռուսաստանի համար հանդիսանում է ուղղակի ազդեցության գոտի և, բնականաբար, Ռուսաստանն արձագանքում է այն արտաքին զարգացումներին, որոնք սպառնալիք են ներկայացնում իր ազգային անվտանգությանը: Հայ-ռուսական ռազմական համագործակցությունն ամրապնդում է Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում, և այստեղ Հայաստանի ու Ռուսաստանի շահերը համընկնում են: Ռուսաստանը, տարածաշրջանում ունենալով ռազմաբազա, հակակշիռ է ոչ միայն Թուրքիայի և Իրանի համար, այլև ամրապնդում է իր դիրքերը ցանկացած արտաքին խաղացողի դեմ: Ռուսաստանը մեծ ներդրում ունի տարածաշրջանում անվտանգության ապահովման հարցում, մինչդեռ ժողովրդավարական գործընթացների ուղղորդման գործում ազդեցիկ է ԱՄՆ-ի և ԵՄ-ի դերը: Տարածաշրջանում Արևմուտքի շահագրգիռ քաղաքականության գլխավոր պատճառը այստեղ առկա Էներգետիկ պաշարների շահագործումն է: Իր Էներգետիկ շահերի բավարարման համար ԵՄ-ն Հարավային Կովկասում կարևորում է տարածաշրջանային կայունության և համագործակցության ապահովումը, որն էլ իր հերթին ապահովագրված կարող է լինել միայն տարածաշրջանում ժողովրդավարական և արդյունավետ կառավարվող, շուկայական տնտեսության վրա հիմնված երկրների կառուցմամբ: Այս հանգամանքն իր հերթին

պայմանավորում է ԵՄ-ի շահագրգռվածությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման, տարածաշրջանային կայունության և խաղաղության մեջ՝ որպես տարանցիկ ուղիների՝ խողովակաշարերի անվտանգության միակ երաշխիքի<sup>356</sup>:

Հարավային Կովկասը Թուրքիայի համար մեծ կարևորություն ունի: Նախ և առաջ Թուրքիայի սահմանների մոտ տեղի ունեցող իրադարձություններն անմիջական ազդեցություն են ունենում Թուրքիայի անվտանգության վրա: Տարածաշրջանն անվտանգային երաշխիք լինելուց բացի ունի աշխարհատնտեսական կարևոր դերակատարում, այն միջանցք է դեպի ածխաջրածնային պաշարներով հարուստ կասպիական շրջաններ: Թուրքիայի համար տարածաշրջանը նաև տարանցիկ ուղի է Մեծ Թյուրքական աշխարհ ձևավորելու համար: Թուրքիայի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ Թուրքիան միշտ աջակցելու է եղբայրական Ադրբեջանին ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության հարցում<sup>357</sup>: Ինչպես նաև տարածաշրջանի վրա ազդեցության հաստատումը կարևորվում է տարածաշրջանային գերտերություն դառնալու համար:

Արցախը ևս շահագրգիռ է տարածաշրջանում անվտանգության և կայունության պահպանմամբ:

Արցախի Հանրապետության համար բանակցային գործընթացի կարևոր բաղադրիչ է այն, որ Արցախի սահմանների հարցում թեկուզև մեկ շրջանից ղարաբադյան ստորաբաժանումների դուրսբերումը կթուլացնի պաշտպանության գիծը: Խաղաղության վերջնական համաձայնագրի բացակայության պայմաններում Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսումը դառնում է ավելի իրատեսական:

Ինչպես նշել ենք, Հայաստանը բազմիցս է հայտարարել, որ տարածաշրջանի զարգացման և ղարաբադյան հակամարտության լուծման միակ իրատեսական ուղին համագործակցություն սկսելն է, համատեղ տնտեսական ծրագրերի իրականացումը, այդ թվում նաև էներգետիկ և ճանապարհատրանսպորտային բնագավառներում: Արցախն այս հարցում համակարծիք է Հայաստանի հետ: Հարավային Կովկասը ռիսկային տարածաշրջան է, և այստեղ խաղաղության պահպանումը բխում է տևական կայունություն ստեղծելու հրամայականից: Այսինքն՝ պետք խթանել տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը և քաղաքակրթական երկխոսության ձևավորումը:

Ամփոփենք. եթե ներտարածաշրջանային երկրները, մակրոտարածաշրջանային և համաաշխարհային տերություններն իրապես շահագրգռված են Հարավային Կովկասում անվտանգության և կայունության ապահովման հարցով, ապա դրան հասնելու հիմնական ուղղությունը տարածաշրջանում ուժերի հավասարակշռության համակարգ ձևավորելն է, որը աշխարհաքաղաքական վերափոխումների համատեքստում կնվազեցնի տարածաշրջանային անկայունության միտումները:

<sup>356</sup> **Գալստյան Ն.**, Եվրոպական Միության հարավկովկասյան քաղաքականության պատճառականները, [https://www.researchgate.net/publication/329029256\\_Evropakan\\_Miutyan\\_haravkovkasyan\\_kagakanutyan\\_patcarakanner](https://www.researchgate.net/publication/329029256_Evropakan_Miutyan_haravkovkasyan_kagakanutyan_patcarakanner):

<sup>357</sup> **Чавушоглы М.**, Турция всегда будет поддерживать Азербайджан во всех сферах, Trend, <https://www.trend.az/azerbaijan/karabakh/3100772.html>.

## THE ARTSAKH ISSUE IN THE CONTEXT OF REGIONAL SECURITY AND STABILITY ENSURANCE

**ZARUHI ZAKARYAN**

*Leading specialist of the Central Information Department  
of the Artsakh Republic President's Office, Member of UYSSA,  
Master of Regional Policy Program at the Faculty of International Relations  
in the Yerevan State University,  
Stepanakert, Republic of Artsakh*

The purpose of the article is to show that the peaceful settlement of the Artsakh conflict is one of the keystones of the security in South Caucasus.

The task of the article is to identify the mosaic of complex relations in the South Caucasus, to present in detail the situation in the region, the obstacles and problems as well as the vision of Artsakh regarding them.

During the research, analyses of historical and legal materials, as well as interviews and articles by Artsakh state officials were used.

Important conclusions of the research are as follows:

Artsakh is also interested in maintaining security and stability in the region.

Artsakh insists that borders should not be changed in the Nagorno Karabagh conflict settlement process, as the liberated territories are vital to Artsakh.

The process of Azerbaijani-Karabakh conflict settlement can be successful if Artsakh, as a full party, participates in the negotiation process. In addition, Artsakh considers that the implementation of joint economic programs, including the energy and transport sectors, is the only realistic way of regional development and the Nagorno Karabagh conflict settlement.

**Keywords:** *Regional Security, Azerbaijani-Karabagh Conflict, South Caucasian Geopolitics, Peaceful Conflict Settlement, Conflict of Interest, Energy Resources, Water Security.*



## АРЦАХСКИЙ ВОПРОС В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ РЕГИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ И СТАБИЛЬНОСТИ

**ЗАРУИ ЗАКАРЯН**

*Специалист первой категории в Главном информационном управлении аппарата Президента Республики Арцах, член ОМУСА, магистр Программы региональной политики факультета международных отношений Ереванского государственного университета, г. Степанакерт, Республика Арцах (НКР)*

Цель статьи – показать, что мирное решение Арцахского вопроса является одним из краеугольных камней безопасности Южного Кавказа.

Задача статьи – выявить мозаику сложных отношений, имеющую место на Южном Кавказе, подробно представить существующее в регионе положение, имеющиеся барьеры и проблемы, а также видение Арцаха по поводу последних.

В ходе исследования были использованы аналитические обзоры исторических и правовых материалов, а также интервью и статьи государственных должностных лиц Арцаха.

Важнейшими выводами, полученными в результате исследования, являются: Арцах также заинтересован в сохранении безопасности и стабильности в регионе; Арцах настаивает на том, что в процессе урегулирования карабахского конфликта не должно быть изменения границ; освобожденные территории имеют для Арцаха жизненно важное значение.

Процесс урегулирования азербайджано-карабахского конфликта может быть успешным только в том случае, если Арцах будет участвовать в переговорном процессе в качестве полноправной стороны переговоров. Кроме того, единственным реалистичным сценарием регионального развития и решения карабахского конфликта Арцах считает совместную реализацию экономических программ, в том числе в области энергетики и дорожно-транспортной сфере.

**Ключевые слова:** *региональная безопасность, азербайджано-карабахский конфликт, геополитика Южного Кавказа, мирное урегулирование конфликта, столкновение интересов, энергетические ресурсы, водная безопасность.*



**ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՏԱՐՐԱԿԱՆ  
ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**(Ձուլիետա Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա,  
Ե., Չանգակ, 2018թ., 344 էջ)**



Լույս է տեսել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ձուլիետա Գյուլամիրյանի «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» ուսումնական ձեռնարկը մանկավարժական բուհերի՝ տարրական դպրոցի ուսուցիչներ պատրաստող բաժինների ուսանողների, տարրական դասարանների ուսուցիչների, ինչպես նաև կրտսեր դպրոցականների կրթադաստիարակչական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Հեղինակն անդրադարձել է տարրական դպրոցում «Մայրենի» դասընթացի չորս հիմնական խնդիրներին, դրանց լուծման ուղիներին.

1. Ի՞նչ սովորեցնել տարրական դպրոցում ստեղծված դասագրքերով:

2. «Ինչպե՞ս սովորեցնել» հարցի ոլորտում դիտարկվում են մանկավարժության մեջ ընդունված սկզբունքները, ավանդական և ժամանակակից

մեթոդները, եղանակները, հնարները, մոտեցումները, կիրառվող վարժությունների համակարգերը, որոնք այսօր արդյունավետորեն կիրառվում են ուսումնական գործընթացում:

Հեղինակն «Ինչպե՞ս սովորեցնել» հարցի շրջանակում չափազանց կարևորում է ուսուցման գործընթացում իրականացվող աշակերտական նպատակները:

1. «Ե՞րբ սովորեցնել» հարցի պատասխանի հիմքում ընկած են սովորողների տարիքային առանձնահատկությունները:

2. Ինչո՞ւ այդպես և ոչ մեկ այլ կերպ սովորեցնել: Այս խնդիրների լուծման համատեքստում նախատեսված են այն չորս հիմնական ուղղությունների լուծման մեթոդական ուղիները, որոնք ներկայացված են քառամյա տարրական դպրոցում մայրենիի առարկայական ծրագրով: Դրանց համապատասխան՝ ուսումնական նյութը ներկայացված է հետևյալ բաժիններով.

1. **Գրաճանաչության մեթոդիկա**
2. **Բացատրական ընթերցանության մեթոդիկա**
3. **Քերականության ուսուցման մեթոդիկա**
4. **Խոսքի զարգացման մեթոդիկա**

Նշված չորս բաժիններում ներկայացված են տարրական դպրոցում մայրենիի դասավանդման գործընթացի օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները, միջոցներ ու տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց ընտրության մանկավարժահոգեբանական սկզբունքները, հայոց լեզվի ուսուցման գործընթացի տեսությունն ու պրակտիկան:

«Գրաճանաչության մեթոդիկա» բաժնում հեղինակը ներկայացնում է հայ դպրոցում պատմականորեն կիրառված գրաճանաչության պատմական մեթոդները և դրանց՝ այսօր էլ շահեկանորեն կիրառելի գրաճանաչության տարրերը:

Գրաճանաչության ժամանակակից մեթոդներին անդրադառնալով՝ Չ. Գյուլամիրյանը Նորովի և Ներկայացնում վերլուծական-համադրական հնչույթավանկային և հնչույթաբառային մեթոդների առավելություններն ու դրանց կիրառման մեթոդական ինքնատիպությունը վաղ կրթության պայմաններում:

Չ. Գյուլամիրյանը օրինաչափորեն խմբավորել է գրաճանաչության գործընթացի այն առանձնահատկությունները, որոնց իմացությամբ միայն կարելի է արդյունավետորեն և նպատակասլաց կեպով իրականացնել 6 տարեկան երեխաների կրթադաստիարակչական գործընթացը:

Կարևորելով դպրոց ընդունվող երեխաների ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակը՝ ձեռնարկում ներկայացված են այն հիմնական բնութագրիչները, որոնցով պայմանավորված են առաջին դասարանցու հիմնական հաջողությունները: Դրանց համախմբում հեղինակը մասնավորապես կարևորել է երեխայի՝

1. խառնվածքն ու բնավորության առանձնահատկությունները,
2. ճանաչողական հետաքրքրությունների շրջանակը,
3. միջանձնային հարաբերությունները տարեկիցների հետ,
4. ուսումնական-աշխատանքային կարողությունները,
5. գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները,
6. հոգեկան գործընթացների զարգացածության աստիճանը և այլն:

Վեց տարեկան երեխաների կարդալու, գրելու նախնական կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը Չ. Գյուլամիրյանը պայմանավորում է երեխայի հնչյունային լսողության զարգացման մակարդակով և ներկայացնում է այդ կարողության զարգացման մեթոդական քայլաշարը:

Բժախնդիր մանրակրկիտությամբ է ձեռնարկում ներկայացված տառուսուցման և կարդալու տարրական կարողության ձևավորման մեթոդական շղթան, այդ ընթացքը խաղերով և փոխգործուն մեթոդներով կազմակերպելու անհրաժեշտության հիմնավորումն ու կազմակերպման հետաքրքրաշարժ ձևերը:

Դասագրքի առավելությունների շարքում կարևորում ենք տեսության և գործնականի կապի ապահովման հեղինակի միտումը. մեթոդիկայի բոլոր բաժիններում ներկայացված են ոչ միայն քննարկվող մեթոդների գիտական հիմնավորումները, այլև ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնող դիդակտիկ խաղերը, փոխգործուն մեթոդները, զույգերով ու խմբային, նախագծային ու որոնողական գործունեությունն պահանջող առաջադրանքներ:

Երկրորդ՝ «Ընթերցանության մեթոդիկա» բաժնում ներկայացվում են ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում, բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը և գրական տարբեր ժանրերի ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները:

Յեղինակը մանրամասն ու հետաքրքիր հարցադրումներով է ընթերցողի ուշադրությանը ներկայացնում ԽԻԿ համակարգով կազմակերպվող մայրենիի դասի բաղադրիչները, դրանց արդյունավետությանը նպաստող փոխգործուն մեթոդական հնարների կիրառման մեթոդիկան: Նա առաջարկում է նաև բնագիր ընթերցմանը նպաստող կարդալու տարրական կարողության ձևավորման միջոցներ ու հնարներ, ինչպես նաև ներկայացնում կարդալու որակական հատկանիշների մեթոդական հնարներ:

«Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական ձեռնարկում կարևորվում են «Աշխատանք բնագրի շուրջ» խորագրով ներկայացված ծավալուն ցուցումները, որոնք

դիտարկվում են հինգ հիմնական ուղղություններով: Այդ ուղղությունների շուրջ աշխատանքը հեղինակն առաջարկում է իրականացնել ոչ թե որպես մայրենիի դասի առանձին բաղադրիչ, այլ վերլուծահամադրական գործընթաց, որի խնդիրները լուծվում են ոչ միայն կարդալու և կարդացածը վերարտադրելու, բառային աշխատանքի երեք նպատակները լուծելիս, այլև մայրենիի դասի բոլոր փուլերում:

Այդ խնդիրների լուծման համար ևս Չ. Գյուլամիրյանն առաջարկել է ուսուցման ժամանակահատվածի մեթոդներ ու հնարներ՝ դրանց կիրառման նպատակներն ու ձևերը համապատասխանացրելով ԽԻԿ համակարգով կազմակերպվող մայրենի դասի կառուցվածքին: Մայրենիի ուսուցման մեթոդիկայում ուշագրավ նորություն է գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման ու յուրացման մեթոդական համակարգի ներկայացումը, որը ևս հեղինակն առաջարկում է կազմակերպել անձնակողմնորոշված կրթության համատեքստում: Մեթոդական այս մոտեցումների համակարգը տարրական դարձնում դասավանդող ուսուցիչներին կոգնի իրականացնելու չափորոշչահեն կրթություն, քանի որ աշակերտների կողմից գրական տարրական գիտելիքների իմացությունը չափորոշչային պահանջ է:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ընթերցած ստեղծագործության բովանդակությունը պատմելու ուսուցման մեթոդիկան: Պատմելու տեսակները, որոնք ներկայացված են եղել ավանդական մեթոդիկայում, Չ. Գյուլամիրյանն առաջարկում է կազմակերպել փոխգործուն մեթոդական հնարների կիրառմամբ, որոնք մեծապես կնպաստեն հասկանալով պատմելու և կապակցված խոսքի զարգացմանը:

Կարևորում ենք մասնավորապես հարցաշար կազմելու, հարցաշարով պատմելու կարողությունների ու մեթոդների զարգացման ներկայացումը, որը վաղ կրթության պայմաններում դժվարություն է ներկայացնում: Ի թիվս պատմելու ավանդական տեսակների՝ Չ. Գյուլամիրյանն առաջարկել է նաև «Պատմել որպես մասնակից» և «Պատմել որպես ականատես» տեսակները, որոնք նպաստում են առաջին և երրորդ դեմքով պատմելու՝ աշակերտների կարողության ձևավորմանը:

Ուշադրության է արժանի նաև ձեռնարկում քննարկվող «Բնագիր, կառուցվածքը» թեման: Այդ թեմայի իմացությունը ուսուցչին մեծապես կօգնի բարձրացնել նաև «խոսք և հարդրակցություն» դասերի արդյունավետությունն ու հետաքրքրությունը:

Չեղինակը բավականին մանրամասնորեն ու հետաքրքիր մեթոդներով է կարդացողի ուշադրությանը ներկայացնում հեքիաթի, պատմվածքի, ոտանավորի, առակի, առածների, ասացվածքների, շուտասելուկների և սուտասելուկների դասավանդման մեթոդական շղթան: Այս բաժնի բոլոր թեմաներն ավարտվում են դրանց գիտակցական յուրացմանը և մտապահմանը նպաստող ակտիվ մեթոդների ներկայացմամբ:

**«Քերականության մեթոդիկա»** բաժնում հեղինակն անդրադառնում է մայրենիի ծրագրով նախատեսված լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների յուրացմանը նպաստող մեթոդներին:

Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրության գործընթացը Չ. Գյուլամիրյանը ներկայացնում է երկու փուլով՝ լեզվական նախագիտելիքների ուսումնասիրում և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրում: Ընդ որում, կարևորվում է գործնականության սկզբունքի ապահովումը: Ձեռնարկում առաջադրված են վարժությունների տեսակներ և մեկնաբանված դրանց առանձնահատկությունները, համակարգվածությունն ու կիրառման գործընթացի ինքնատիպությունը:

Մեր մանկավարժական փորձը, ուսումնասիրությունները, ուսուցիչների հետ հարցազրույցները վկայում են այն մասին, որ աշակերտները սիրում են լեզվական վարժությունների կիրառումը: Խմբավորելուց ու համակարգելուց բացի հեղինակը կարծում է, որ լեզվական վարժություններ կատարելիս պետք է կարևորել այդ

գործընթացում աշակերտների ինքնուրույնությունն ու ակտիվությունը, ստեղծագործական-որոնողական գործունեությանը:

Ինքնատիպ ու արդիական մոտեցումներով են ներկայացված **«խոսքի զարգացում»** բաժնի տեսական դրույթներն ու դրանք գործնականում իրականացնելու մեթոդները: Այս բաժնի գիտական սկզբունքներն ու դրանցից բխող տեսական ու գործնական ցուցումներն ըստ էության ուշագրավ ու կիրառելի են տարրական դպրոցի բոլոր դասարաններում: Մենք մասնավորապես արժևորում ենք սովորողների գրավոր խոսքի զարգացմանը միտված հեղինակի մեթոդական համակարգն ու վարժություններին ներկայացվող պահանջները: Գյուլամիրյանը համոզված է, որ տարրական դպրոցում գրավոր աշխատանքի բոլոր տեսակներն էլ պիտի ունենան ուսուցողական նպատակներ և իրականացվեն հենց այդ նպատակին հասնելու մեթոդական քայլաշարով:

Հետաքրքիր ու բովանդակային գծակարգերով են ներկայացված խոսքի տեսակներն ըստ գործառնությանի ու նշանակության: Տրված է պատմողական, նկարագրական, դատողական և գնահատող խոսքի ուսուցման մեթոդական շղթան, ինչը նպաստում է սովորողների պատմելու, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը:

Սովորաբար մեր տարածաշրջանում թույլ է զարգացած սովորողների բանավոր խոսքը: Հեղինակը տալիս է բանավոր խոսքին ներկայացվող պահանջները, կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման համապատասխան մեթոդները, խոսքի որակական հատկանիշները:

Բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում կրտսեր դպրոցականների բառապաշարի զարգացման մեթոդները: Մեր մանկավարժական փորձն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն ուսուցիչները, որոնք իրենց դասագործընթացում պարբերաբար կիրառում են այդ մեթոդները, արձանագրում են փայլուն արդյունքներ:

Կրտսեր դպրոցականների խոսք կառուցելու կարողությունը հմտության վերածելու նպատակով Ջ. Գյուլամիրյանը ներկայացնում է խոսքային վարժությունների տարաբնույթ ու հետաքրքիր տեսակներ:

Արժևորելի է նաև կրտսեր դպրոցականների ուղղագրական կարողությունների ձևավորման մեթոդիկան, որ ներառում է.

- **Ուղղագրական հմտությունների ձևավորման մեթոդները,**
- **Ուղղագրական վարժությունների համակարգը:**

Էական է նշել ու կարևորել, որ Ջ.Գյուլամիրյանի «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական ձեռնարկով են աշխատում ոչ միայն Հայաստանի և Արցախի Հանրապետությունների ապագա մանկավարժներն ու տարրական դասարանների ուսուցիչները, այլև Սփյուռքի հայկական դպրոցներում աշխատող մեր գործընկերները:

**Աննա Դետրոյան**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

# ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱԼՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ НАУЧНАЯ ЖИЗНЬ В АРЦАХЕ

## В СТЕПАНАКЕРТЕ СОСТОЯЛОСЬ ПЕРВОЕ ЗАСЕДАНИЕ СОВЕТА ПОПЕЧИТЕЛЕЙ ФОНДА «НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ «АРЦАХ»

*15 марта в малом конференц-зале гостиничного комплекса Валлекс Гарден состоялось первое заседание Совета попечителей фонда «Научно-исследовательский институт «Арцах».*



Учредителем научно-исследовательского института является общественная организация **«Объединение молодых ученых и специалистов Арцаха»**, результаты пятилетней деятельности которой стали устойчивыми предпосылками для создания новой научно-организационной структуры и осуществления исследовательской деятельности по конкретным стратегическим направлениям.

В Совет попечителей фонда входят ученые из Арцаха, Армении и Российской Федерации. Четверо из них — доктора наук, пятеро — кандидаты наук.

Приветствуя членов попечительского совета, инициатор учреждения института и его директор, кандидат юридических наук, доцент **Аветик Арутюнян** рассказал о предыстории создания фонда, мотивах, целях и задачах, заверив, что фонд будет действовать, прежде всего, как мозговой центр с механизмом прочной связи науки и практики, функцией которого является не только проведение традиционных, фундаментальных и прикладных исследований, но и установление связи, с одной стороны, между знаниями и властью,

наукой и техникой, с другой стороны, между другими сферами, представляющими общественно важное значение. Определив данные приоритеты, научно-исследовательский институт «Арцах», локализуя опыт ведущих мозговых центров мира, будет решать конкретные стратегические задачи. Институт считает своей миссией «развивать науку в Арцахе, внедрять результаты в сферах, имеющих стратегическое значение для жизнедеятельности страны, укрепляя армянскую государственность, и посредством дипломатии науки способствовать повышению узнаваемости Республики Арцах и международному признанию».

Председатель совета попечителей фонда, доктор политологии, доцент ЕГУ **Хачик Галстян**, говоря о необходимости и важности создания подобного института в Арцахе, коснулся вопросов повестки дня и предложил обсудить и уточнить стратегические направления, созвучные миссии и целям института.

Круг обсуждаемых вопросов касался создания базы данных армянских и иностранных ученых, занимающихся различными проблемами Нагорно-Карабахского конфликта и жизнедеятельности Республики Арцах, целевого использования их потенциала, осуществления научных исследований по конкретным направлениям (арменоведческие/ арцаховедческие, региональные, междисциплинарные), подготовки, печати и распространения научно-аналитических и информационных материалов, организации научных конференций, семинаров, круглых столов и научно-практических семинаров, выявления проблем общин Республики Арцах, развития дипломатии науки, сбора и распространения электронных ресурсов, взаимного эффективного сотрудничества с армянскими и зарубежными научно-исследовательскими структурами, мозговыми центрами, выполнения заказов на научные исследования, анализы, консультации и разработки для юридических и физических лиц, расширения эффективного сотрудничества с предпринимателями, общественными и благотворительными организациями, с среднесрочным и краткосрочным планированием осуществления действий, что даст возможность в конкретные сроки зафиксировать осязаемые результаты с применением четких механизмов и инструментария.

Одними из предстоящих важных инициатив станут создание официального сайта [www.artsakhinstitute.org](http://www.artsakhinstitute.org) и основание издательства «Арцах», которые будут способствовать реализации стратегических целей института.

В соответствии со своей миссией институт придает особую важность противодействию осуществляемой Азербайджаном на высоком государственном уровне антиармянской пропаганде и распространяемым им лживым научным тезисам, осуществлению научно-образовательных программ для молодежи, посвященных карабахскому конфликту, реализации исследовательских программ в социально-экономической сфере и политике безопасности РА, созданию и распространению трёхязычного (армянского, английского, русского) содержания в международном научном сообществе и интернет-пространстве, поиск возможных вариантов решения общественно-значимых проблем и т.д.

Долгосрочным планированием будет обеспечено также трёхязычное издание журнала «**Научный Арцах**» ОМУСА (не менее 4 номеров за год), создание обществоведческой и научно-аналитической литературы с целью распространения и популяризации достижений арменоведения (в том числе арцаховедения).

Ценные замечания и предложения по обсуждаемым вопросам сделал член Совета попечителей, доктор социологических наук, профессор **Максим Васьяков**, выразив готовность внедрить свой опыт и знания в дело реализации стратегических целей института и, как ученый, представляющий академическую среду РФ, всеми возможными способами способствовать интернационализации института и повышению узнаваемости Арцаха.

По мнению членов совета, научно-исследовательские работы в академиях и университетах обычно обобщаются теоретико-методологическими дискурсами, которые зачастую носят абстрактный характер, далекий от проблем государства.

С этой точки зрения еще более важно создание фонда, который значительно восполнит существующий пробел, особенно в контексте международного признания Арцаха, а должностные лица в звеньях государственного управления, обычно будучи загруженными текущими делами, не имеют времени на методологическую разработку международных проблем. Поэтому мозговые центры восполняют пробел между идеями и действиями.

На заседании совета была обсуждена и утверждена организационная структура научно-исследовательского института «Арцах». Фонд будет иметь Ученый совет, отделы арцаховедческих, региональных и междисциплинарных исследований, одноименное издательство, а также научную библиотеку, которая будет иметь скоординированную коллекцию и параллельно с Электронной библиотекой Арцаха будет способствовать осуществлению исследований с установленными приоритетами.



Первыми дарителями профессиональной литературы стали члены Совета попечителей во главе с председателем Хачиком Галстяном. Будут проведены работы по диверсификации источников комплектации библиотеки.

По случаю основания и первого заседания научно-исследовательского института «Арцах» директора фонда Аветика Арутюняна, председателя Хачика Галстяна и членов Совета попечителей принял предводитель Арцахской епархии архиепископ **Паргев Мартиросян**.

Поздравив с учреждением института, он сказал слова благословения и выразил готовность всячески содействовать становлению фонда и осуществлению уставных целей.

Решением Совета попечителей духовному лидеру Арцаха присвоено звание «Почетный член Совета попечителей».

**Теймина Марутян**



## **«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները**

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՍ) հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան առնվազն 2 անգամ:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական դեկլարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված:

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են [www.aegmm.org](http://www.aegmm.org) կայքի «Գիտական Արցախ» պարբերականի բաժնում ծանոթանալ գիտական հրատարակումների Էթիկային և խստորեն հետևել դրան:

1-ին համարը լույս է տեսնում ապրիլին (հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը), 2-րդ համարը՝ հուլիսին (հոդվածներն ընդունվում են մինչև մայիսի 15-ը), 3-րդը՝ հոկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև օգոստոսի 15-ը), իսկ 4-րդ համարը՝ դեկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև նոյեմբերի 1-ը):

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՍ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում ([www.artsakhlib.am](http://www.artsakhlib.am)), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել [scientific.artsakh@gmail.com](mailto:scientific.artsakh@gmail.com) էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

### **Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.**

**Համակարգչային շարվածքը՝** MS Word 2003-2010 ծրագիր:

**Էջի ֆորմատը՝** 170\*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 18 մմ:

**Ճավալը՝** 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

**Տեքստի տառատեսակը՝** հայերեն՝ Arian AMU, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:

**Հոդվածի ներկայացման լեզուն՝** հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով տողի

մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական ելքահանգումները: Ամփոփագիրը պետք է իրենից ներկայացնի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է գրել «Հիմնաբառեր» և նշել 7-10 բանալի բառեր:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, ածման կարգով՝ 10 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (Alignment: Justify): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (Bold), այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., ողջենտ Ավետիք Հարությունյանի հետ՝ գրելով [avetiqa.hh@gmail.com](mailto:avetiqa.hh@gmail.com) էլեկտրոնային փոստին կամ պանգահարելով +37497277770 հեռախոսահամարին:

## The requirements for «Scientific Artsakh» journal

The «Scientific Artsakh» journal of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published at least twice a year.

*High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.*

*All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal.*

*Before submitting the article, the authors are required to become familiar with the ethics of scientific publications set on the website [www.aegmm.org](http://www.aegmm.org) in the «Scientific Artsakh» journal section and strictly follow it.*

*The 1st issue is published in April (articles are accepted until February 15), the 2nd issue – in July (articles are accepted until may 15), the 3rd issue – in October (articles are accepted until August 15), and the 4th issue – in December (articles are accepted until November 1).*

*The articles published in the «Scientific Artsakh» journal are placed on Artsakh E-Library website ([www.artsakhlib.am](http://www.artsakhlib.am)), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.*

*Articles should be sent to the [scientific.artsakh@gmail.com](mailto:scientific.artsakh@gmail.com) e-mail, with the obligatory indication of the mobile number of the author and the actual address (postal code is required).*

### **Technical requirements for works:**

**Computer typing:** program MS Word 2003-2010.

**Page format:** 170\*240 mm, margins (left, right, top, bottom) 18 mm.

**Volume:** 7-20 pages (summary inclusive).

**Text font:** Armenian-Arian AMU, Russian and English – Times New Roman.

**Language of articles:** Armenian, Russian, English.

*On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree, title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided.*

*Over a line, font size 12, bold, italic an abstract (ախփնփնու, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.*

*Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.*

*Over a line, the main text of the work with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB:*

*Tables should be numbered and have titles.*

*Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.*

*Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.*

*References required are listed in the bottom of the page, on the rise, font size 10 pt with line spacing 1pt. The link text must be aligned on both sides (Alignment: Justify). Paragraphs begin with a space of 1 cm, using the TAB: The link indicates the name and the first letter of the author's name of the source used (Bold), then the title of the work, volume, place of publishing, year and page.*

*For more information, please contact the editor-in-chief of «Scientific Artsakh» journal, PhD in Law, Associate Professor Avetik Harutyunyan, e-mail at [avetiq.hh@gmail.com](mailto:avetiq.hh@gmail.com) or by phone +37497277770.*

## **Требования к оформлению статей журнала «Научный Арцах»**

*Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается не менее двух раз в год.*

*К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи, рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.*

*Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью.*

*До предоставления статьи авторы обязаны ознакомиться с этикой научных публикаций на сайте [www.aegtm.org](http://www.aegtm.org) в разделе журнала «Научный Арцах» и неукоснительно следовать ей.*

*1-ый номер публикуется в апреле (статьи принимаются до 15-го февраля), 2-ой номер – в июле (статьи принимаются до 15-го мая), 3-ий номер – в октябре (статьи принимаются до 15-го августа), а 4-ый номер – в декабре (статьи принимаются до 1-го ноября).*

*Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха ([www.artsakhlib.am](http://www.artsakhlib.am)), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.*

*Статьи должны быть присланы на электронный адрес [scientific.artsakh@gmail.com](mailto:scientific.artsakh@gmail.com), с обязательным указанием номера мобильного телефона автора и фактического адреса (почтовый индекс обязателен).*

**Технические требования к оформлению работ:**

**Компьютерный набор:** программа MS Word 2003-2010.

**Формат страницы:** 170\*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее)՝ 18 мм.

**Объем:** 7-20 страниц (резюме включительно).

**Шрифт текста:** армянский – Arjan AMU, русский и английский – Times New Roman.

**Язык представления статей:** армянский, русский, английский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (աղբյուրակ, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, описывающий основные результаты исследования без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB:

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны, указываются в конце страницы по нарастающей кеглем 10 с межстрочным интервалом 1 пт. Текст ссылки должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзацы начинаются с отступом в 1 см, используя TAB. В ссылке указываются фамилия и первая буква имени автора использованного источника (Bold), затем название работы, том, место издательства, год и страница.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту Аветику Арутюняну, написав по электронному адресу [avetiq.hh@gmail.com](mailto:avetiq.hh@gmail.com) или позвонив по телефону +37497277770.

**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ**  
**SCIENTIFIC ARTSAKH**  
**НАУЧНЫЙ АРЦАХ**

**№ 1(4), 2020**

*«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն 2 անգամ:  
 Հրատարակվում է 2018 թվականից:*

*The «Scientific Artsakh» journal is published at least twice a year. It has been published since 2018.*

*Журнал «Научный Арцах» выходит не менее двух раз в год. Издается с 2018 года.*

Գլխավոր խմբագիր՝  
 Editor-in-Chief:  
 Главный редактор:

**Ավետիգ Հարությունյան**  
**Avetik Harutyunyan**  
**Аветик Арутюнян**

Գլխավոր խմբագրի տեղակալ,  
 հայերեն լեզվի պատասխանատու  
 Deputy Editor-in-Chief,  
 Responsible for Armenian  
 Заместитель главного редактора,  
 Ответственный за армянский язык

**Թեմինա Մարությունյան**

**Tehmina Marutyan**

**Теймина Марутян**

Անգլերեն լեզվի պատասխանատու՝  
 Responsible for English  
 Ответственный за английский язык

**Ալվինա Ներսեսյան**  
**Alvina Nersesyan**  
**Альвина Нерсесян**

Ռուսերեն լեզվի պատասխանատու՝  
 Responsible for Russian  
 Ответственный за русский язык

**Աշոտ Բեգլարյան**  
**Ashot Beglaryan**  
**Ашот Бегларян**

Համակարգչային շարվածքը, ոճը,  
 տառաձևերը և էջադրումը՝  
 Computer set, style, font and layout  
 Компьютерный набор, стиль, шрифт  
 и верстка

**«Արցախ» հրատարակչության  
 Publishing House «Artsakh»**

**Издательство «Арцах»**

Շապիկի ձևավորումը՝  
 Cover design  
 Дизайн обложки

**Արմինե Զոչարյան**  
**Armine Kocharyan**  
**Армине Кочарян**

Website: [www.aegmm.org](http://www.aegmm.org).

E-mail: [scientific.artsakh@gmail.com](mailto:scientific.artsakh@gmail.com),

[avetiq.hh@gmail.com](mailto:avetiq.hh@gmail.com).

Tel. (+374) 97277770.

Ստորագրված է տպագրության՝ 10.04.2020թ.:

Չափսը՝ 70\*100/16: Թուղթը՝ օֆսետ:

Ծավալը՝ 15,25 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ: